

Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան



Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության օժանդակության շնորհիվ: Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....	5
ԲԱԺԻՆ 1	5
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	5
ԲԱԺԻՆ 2	60
Ամփոփ առաջարկություններ.....	60
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	67
ԲԱԺԻՆ 1	67
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	67
ԲԱԺԻՆ 2	121
Ամփոփ առաջարկություններ.....	121
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	128
ԲԱԺԻՆ 1	128
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	128
ԲԱԺԻՆ 2	133
Ամփոփ առաջարկություններ.....	133
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	135
ԲԱԺԻՆ 1	135
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	135
ԲԱԺԻՆ 2	172
Ամփոփ առաջարկություններ.....	172
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	176
ԲԱԺԻՆ 1	176
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	176
ԲԱԺԻՆ 2	201
Ամփոփ առաջարկություններ.....	201
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴՍՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	204
ԲԱԺԻՆ 1	204
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	204
ԲԱԺԻՆ 2	219
Ամփոփ առաջարկություններ.....	219
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ	221
ԲԱԺԻՆ 1	221
Խնդիրների վերահանում և վերլուծություն.....	221
ԲԱԺԻՆ 2	233
Ամփոփ առաջարկություններ.....	233

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	235
ԲԱԺԻՆ 1	235
Խնդիրների վերահանում և վերլուծություն	235
ԲԱԺԻՆ 2	254
Ամփոփ առաջարկություններ	254
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	257
ԲԱԺԻՆ 1	257
Խնդիրների վերահանում և վերլուծություն	257
ԲԱԺԻՆ 2	263
Ամփոփ առաջարկություններ	263

Ներածություն

Սույն զեկույցը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության խթանմանն ուղղված ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացրել է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել և վեր հանել տեղեկատվության ազատության ոլորտում առկա օրենսդրական և գործնական խնդիրները և առաջարկել համապարփակ լուծումներ: Արձանագրենք, որ տեղեկատվության ազատության ոլորտի բարեփոխման անհրաժեշտությունն ու տրամաբանությունը բխում են նաև 2018 թ.-ի հեղափոխության պահանջներից, որոնք, ի թիվս այլնի, ներառում են ժողովրդավարության հաստատումը, դրանից բխող հանրային հաշվետվողականությունը և թափանցիկ կառավարումը, հանրային իշխանության մարմինների նկատմամբ վստահության ձևավորումն ու բարձրացումը:

Բացի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից՝ ծրագրի փորձագետներն ուսումնասիրել են այն հարակից ոլորտները և իրավական ակտերը, որոնցում տեղեկատվության մատչելիության հարցն առանցքային դեր ունի: Խոսքը հատկապես վերաբերում է պետական և ծառայողական գաղտնիքի, օպերատիվ-հետախուզական գործունեության, արխիվային բնագավառներին, քրեական դատավարության, անձնական տվյալների պաշտպանության, գնումների, հանրային ծառայության ոլորտներին:

Զեկույցն ամփոփում է ուսումնասիրության արդյունքները, ըստ ոլորտների և թեմաների ներկայացնում բացահայտված խնդիրները, միջազգային չափանիշները, լավագույն միջազգային փորձը և վերլուծության հիման վրա առաջարկում լուծումներ:

Քանի որ ծրագրի նպատակն է նպաստել անհրաժեշտ փոփոխությունների իրականացմանը, հայտնաբերված խնդիրները զեկույցում ներկայացված են մատչելի ձևաչափով, ինչը հնարավորություն կտա պատկան մարմիններին ավելի արագ կողմնորոշվելու և միանգամից տեսնելու իրենց ոլորտին առնչվող դիտարկումներն ու եզրակացությունները:

Հույս ունենք, որ զեկույցը կհասնի իր արդյունքին՝ իրավասու պետական մարմիններին և պաշտոնատար անձանց մղելով տեղեկատվության ազատության բնագավառում արձանագրված խնդիրները լուծելուն ուղղված գործողությունների:

**«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդիր 1

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, տեղեկատվություն տնօրինողների ցանկում ներառելով տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին, հանրային նշանակության կազմակերպություններին, որպես տեղեկատվություն տնօրինող չի սահմանում պետության կամ համայնքի կողմից հիմնադրված բոլոր կազմակերպություններին (անկախ գործունեության բնույթից), ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունները իրականացնող իրավաբանական անձանց (վերոնշյալ հետևությունը հիմնված է նաև իրավակիրառ պրակտիկայում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին տրված մեկնաբանության վրա): Տեղեկատվություն տնօրինողների ցանկում ներառված չեն նաև հանրային ռեսուրս օգտագործող կազմակերպությունները:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով տեղեկատվություն տնօրինող են հանդիսանում.

1. պետական մարմինները,
2. տեղական ինքնակառավարման մարմինները,
3. պետական հիմնարկները,
4. բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
5. հանրային նշանակության կազմակերպությունները¹:

Նույն օրենքի շրջանակներում հանրային նշանակության կազմակերպություններ են հանդիսանում.

1. ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող

¹ Ցանկը ներառում է նաև համապատասխան սուբյեկտների պաշտոնատար անձանց:

կազմակերպությունները,

2. առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների շրջանակը ուրվագծելու համար անհրաժեշտ ենք համարում վեր հանել ձևավորված իրավակիրառ պրակտիկան այս ցանկում ընդգրկված կազմակերպությունների ընտրության չափանիշների վերաբերյալ: Այսպես, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության՝ թիվ N-054/08/19 վարչական վարույթով 19.09.2019 թ.-ին կայացրած որոշմամբ անդրադարձ է կատարվել պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ տեղեկատվություն տնօրինող կազմակերպությունների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու հարցին: Գործակալությունն արձանագրել է հետևյալը. «Ինչ վերաբերում է ՊՈԱԿ-ի՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն լինելուն, ապա պետք է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը: Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը հնարավոր չի եղել գտնել նաև այլ օրենքներում: Տեղեկատվության ազատության ոլորտում քննված դատական գործերում նույնպես հնարավոր չի եղել գտնել բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը. դատական միակ գործը, որտեղ քննարկվում է տեղեկություն տնօրինողի՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն լինելու հարցը, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի թիվ ՎԴ/0015/05/14 12 վարչական գործն է, որի շրջանակներում քննարկվել է ՓԲԸ-ի պատկանելությունը տեղեկություն տնօրինողներին, ինչն ինքնին կիրառելի չէ ՊՈԱԿ-ի դեպքում: (...) Գործակալությունը գտնում է, որ անհնար է պատկերացնել, որ օրենսդիրը բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության շրջանակներում նկատի է ունեցել բյուջեներից փաստացի ֆինանսավորվող բոլոր մարմիններին, այդ թվում՝ տեղեկություն տնօրինողների ցանկում ներառված պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին եւ 14 պետական հիմնարկներին: Նման պարագայում հաշվի առնելով նաև սույն կետում նշված իրավական ակտերի դրույթները՝ Գործակալությունը հանգում է այն եզրակացության, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տեղեկատվություն տնօրինողի հասկացության շրջանակում նշված բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպության հասկացությունը վերաբերում է բյուջեներից հատկացում (ֆինանսավորում) ստացող ոչ պետական (մասնավոր)

կազմակերպություններին, իսկ պետական կազմակերպություններն այս կամ այն կերպ արդեն իսկ ներառված են պետական մարմինների կամ պետական հիմնարկների կազմում: Ուստի, Գործակալությունը գտնում է, որ ՊՈԱԿ-ը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն չէ»:

Թիվ ՎԴ/0015/05/14 վարչական գործով Վարչական դատարանը, 14.08.2015 թ.-ի վճռով անդրադառնալով «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության՝ որպես բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն տեղեկություն տնօրինող հանդիսանալու հարցին, արձանագրել է հետևյալը. «Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն օրենքի իմաստով բյուջետային հիմնարկներ են բյուջեներից ֆինանսավորվող պետական և համայնքային հիմնարկները: Օրենքի վերոնշյալ դրույթից հետևում է, որ բյուջեից ֆինանսավորվող կարող է համարվել ոչ թե ընկերության կարգավիճակ ունեցող իրավաբանական անձը, այլ հիմնարկը, սվյալ դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով ստեղծված որևէ հիմնարկ, որը իրեն վերապահված կանոնադրական իրավունքները և գործառույթները իրականացնելու համար անմիջապես ֆինանսավորվում է Երևան համայնքի բյուջեից: Ընկերության կարգավիճակ ունեցող որևէ իրավաբանական անձ, եթե նույնիսկ այն ստեղծված լինի համայնքային մարմնի կողմից, սվյալ դեպքում՝ Երևան համայնքի կողմից, որպես առևտրային կազմակերպություն, իր գործունեությունն իրականացնում է իր գործընկեր իրավաբանական անձանց համար այս կամ այն գործունեությունը (սպրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում) կատարելու դիմաց՝ պայմանագրային հիմունքներով ստացված դրամական միջոցների հաշվին: Տվյալ դեպքում, Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակով առևտրային կազմակերպություն է, որը Երևանի քաղաքապետարանի հետ կնքված վերոնշյալ թիվ ԵԲ-ՄԵԾՁԲ-12/2 պայմանագրի հիման վրա կազմակերպում է Երևան քաղաքում ավտոկայանատեղերի ծառայությունների մատուցում, որի դիմաց ստանում է համապատասխան վարձատրություն՝ ավտոկայանատեղերի համար սահմանված և փաստացի հավաքագրված տեղական տուրքի և գանձված վարչական տուգանքի հանրագումարի 70%-ի չափով: Դրանից հետևում է, որ Ընկերությունը Երևանի քաղաքապետարանից ոչ թե բյուջետային ֆինանսավորում է ստանում, այլ իր կողմից կատարված ծառայությունների դիմաց վարձատրություն կամ հատուցում է ստանում: Իսկ Երևանի քաղաքապետարանը իրավաբանական կամ այլ անձանց հետ քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների դիմաց վճարումներ կարող է կատարել միայն համայնքային բյուջեի միջոցներից, քանի որ որևէ համայնք, ինչպես նաև Երևան համայնքը, այլ միջոցներ չունի: Այսինքն՝ գուտ այն փաստը, որ Ընկերության հետ

կնքված քաղաքացիաիրավական պայմանագրից բխող իր պարտավորությունները կատարելու համար Երևանի քաղաքապետարանը նրան համապատասխան վճարումներ է կատարում համայնքային բյուջեի միջոցներից, ինքնաբերաբար չի հանգեցնում նրան, որ Ընկերությունը բյուջեից ֆինանսավորվող համայնքային հիմնարկ է»:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 19.04.2016 թ.-ին կայացրած որոշմամբ անփոփոխ է թողել սույն գործով Վարչական դատարանի որոշումը՝ արձանագրելով հետևյալը. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում, ոչ էլ նույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում չի օգտագործվում «որևէ կերպ ֆինանսավորում ստացող կազմակերպություն» եզրույթը, այլ օգտագործվում է «բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն» եզրույթը (...): Վերաքննիչ դատարանի կարծիքով կազմակերպությունը կարող է համարվել բյուջեից ֆինանսավորվող, եթե տվյալ /սույն վեճի դեպքում՝ համայնքային/ բյուջեում ի սկզբանե նախատեսված է եղել կոնկրետ կազմակերպության ֆինանսավորումը կոնկրետ նպատակային ծախսերի մասով, որոնք ի սկզբանե նախատեսված են բյուջեի ելքային մասով: Գործում առկա չեն տվյալներ, որ կազմակերպությանը վճարվող գումարները որպես բյուջետային ելքային գումարներ ի սկզբանե նախատեսված են եղել համայնքային բյուջեով, որի պարագայում միայն Ընկերությունը կարող էր դիտվել որպես բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն: Այսինքն, կազմակերպությանը վճարվող համապատասխան վճարումների կատարման հիմքը ոչ թե համայնքային բյուջեով նախատեսված բյուջետային ելքերն են, այլ կողմերի միջև կնքված քաղաքացիաիրավական համատեղ գործունեության պայմանագիրը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ որպես տեղեկատվություն տնօրինող կարգավիճակ ունենալու վերաբերյալ առկա են հետևյալ մեկնաբանությունները.

1. Պետական ոչ առևտրային կազմակերպությունը չի հանդիսանում բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն, քանի որ *բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն* հասկացությունը վերաբերում է բյուջեներից հատկացում (ֆինանսավորում) ստացող ոչ պետական (մասնավոր) կազմակերպություններին, իսկ պետական կազմակերպություններն այս կամ այն կերպ արդեն իսկ ներառված են պետական մարմինների կամ պետական հիմնարկների կազմում (Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության՝ թիվ N-054/08/19 վարչական վարույթով 19.09.2019 թ.-ին կայացրած որոշում):
2. Կազմակերպությունը կարող է համարվել բյուջեից ֆինանսավորվող, եթե տվյալ բյուջեում ի սկզբանե նախատեսված է եղել կոնկրետ կազմակերպության ֆինանսավորումը կոնկրետ նպատակային ծախսերի մասով, որոնք ի սկզբանե նախատեսված են բյուջեի ելքային մասով (ՀՀ

վարչական վերաքննիչ դատարանի՝ 19.04.2016 թ.-ին կայացրած թիվ ՎԴ/0015/05/14 որոշում):

Ինչպես տեսնում ենք, իրավակիրառ պրակտիկայում առկա են հակասական դիրքորոշումներ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների շրջանակի, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների ցանկում ընդգրկված լինելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ անձական տվյալների պաշտպանության գործակալության դիրքորոշմանն առ այն, որ պետական կազմակերպություններն այս կամ այն կերպ արդեն իսկ ներառված են պետական մարմինների կամ պետական հիմնարկների կազմում, ինչի արդյունքում վերջինների կարգավիճակը՝ որպես տեղեկատվություն տնօրինող, նույնացվել է պետական մարմնի կամ հիմնարկի կարգավիճակի հետ, ապա այս մեկնաբանությունը, մեր գնահատմամբ, խնդրահարույց է, քանի որ այն չի բխում ՀՀ օրենսդրությունից, այդ թվում՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից: Մեր գնահատմամբ՝ պետական ոչ առևտրային կազմակերպության՝ պետական մարմնի ենթակայությանը հանձնված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ նրանց կարգավիճակների նույնականացման համար:

Պատահական չէ, որ 31.03.2017 թ.-ին հանրային քննարկման դրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծով² հստակեցվել էր տեղեկություն տնօրինողների շրջանակը՝ որպես տեղեկություն տնօրինող սահմանելով տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, պետական հիմնարկներին և կազմակերպություններին, համայնքային կազմակերպություններին, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին, հանրային կազմակերպություններին:

Այսինքն՝ տեղեկություն տնօրինողների շարքում որպես առանձին սուբյեկտ նախատեսվել են պետական և համայնքային կազմակերպությունները, որոնք չեն նույնացվել ո՛չ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների, ո՛չ էլ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտ ենք համարում տեղեկատվություն տնօրինողների շարքում ընդգրկել նաև պետության կամ համայնքի կողմից հիմնադրված կազմակերպությունները՝ անկախ գործունեության բնույթից: Իրավակիրառ պրակտիկայում այս կազմակերպությունների՝ որպես տեղեկատվություն տնօրինողի կարգավիճակի (այդ թվում՝ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների շրջանակում) վերաբերյալ առկա մեկնաբանությունները ևս վկայում են տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների ցանկում օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Այսպես, թիվ ՎԴ/0015/05/14 վարչական գործով Վարչական դատարանն արձանագրել է. **«Ընկերության կարգավիճակ ունեցող որևէ**

² Տե՛ս <https://www.e-draft.am/projects/151/about>:

իրավաբանական անձ, եթե նույնիսկ այն ստեղծված լինի համայնքային մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ Երևան համայնքի կողմից, որպես առևտրային կազմակերպություն, իր գործունեությունն իրականացնում է իր գործընկեր իրավաբանական անձանց համար այս կամ այն գործունեությունը (ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում) կատարելու դիմաց պայմանագրային հիմունքներով ստացված դրամական միջոցների հաշվին: Դրանից հետևում է, որ Ընկերությունը Երևանի քաղաքապետարանից ոչ թե բյուջետային ֆինանսավորում է ստանում, այլ իր կողմից կատարված ծառայությունների դիմաց վարձատրություն կամ հատուցում է ստանում»: Վերոգրյալ մեկնաբանության համաձայն՝ համայնքի (կամ պետության) կողմից ստեղծված առևտրային կազմակերպությունը չունի տեղեկատվություն տնօրինողի կարգավիճակ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև պատվիրակված լիազորություններ իրականացնող կազմակերպություններին/ընկերություններին տեղեկատվություն տնօրինողների ցանկում ներառելու անհրաժեշտության հարցին: Իրավակիրառ պրակտիկայում թիվ ՎԴ/0015/05/14 դատական գործով քննարկման առարկա էր դարձել «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության՝ տեղեկատվություն տնօրինողի կարգավիճակ ունենալու հարցը: Վարչական և վերաքննիչ վարչական դատարանները հանգել էին այն եզրակացության, որ ընկերությունը չի հանդիսանում տեղեկատվություն տնօրինող՝ նշելով, որ Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակով առևտրային կազմակերպություն է, որը Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա կազմակերպում է Երևան քաղաքում ավտոկայանատեղերի ծառայությունների մատուցում, որի դիմաց ստանում է համապատասխան վարձատրություն՝ ավտոկայանատեղերի համար սահմանված և փաստացի հավաքված տեղական տուրքի և գանձված վարչական տուգանքի հանրագումարի 70%-ի չափով:

Մինչդեռ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպում է համայնքի ղեկավարը կամ համայնքային ենթակայության կազմակերպությունը: Համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք գանձում են վճարը՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրին համապատասխան: Ակնհայտ է, որ սույն դեպքում գործ ունենք մասնավոր ընկերությանը տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հետ, և հետևաբար որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, թե կոնկրետ հանրային գործառույթը իրականացնում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, թե՞ մասնավոր ընկերությունը՝ պատվիրակված

լիազորությունների շրջանակներում:

Անհրաժեշտ ենք համարում տեղեկատվություն տնօրինողների ցանկում ընդգրկել նաև հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին³:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ *պետական մարմին* հասկացությունը ներառում է կառավարությունը և կառավարման մարմինները ներպետական, տարածքային և տեղական մակարդակով, օրենսդիր և դատական մարմիններն այնքանով, որքանով նրանք իրականացնում են վարչական գործառույթներ, ֆիզիկական և իրավաբանական անձանց այնքանով, որքանով վերջիններս իրականացնում են վարչական լիազորություններ:

ԵՄ Վենետիկի հանձնաժողովի՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2008 թվականի նախագծի վերաբերյալ ներկայացրած թիվ 511/2009 կարծիքով⁴ (2009 թ. մարտի 6) առաջարկվել է այս բնագավառում լավագույն օրենսդրական փորձին համապատասխան տեղեկատվություն տնօրինողների ցանկում ներառել պետության կողմից զգալի չափով ֆինանսավորվող, կառավարվող կամ վերահսկվող մարմիններին:

Մոնտենեգրոյի՝ տեղեկատվության մատչելիության մասին օրենքի նախագծի վերաբերյալ ԵՄ Վենետիկի հանձնաժողովի՝ 31.05.2012 թ.-ին տված թիվ 666/2012 կարծիքով⁵ արձանագրվել է հետևյալը. «9-րդ հոդվածը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածին: Պետական մարմնի սահմանումը ներառում է ցանկացած հիմնարկ, ընկերություն, որևէ այլ իրավաբանական անձ, որը ֆինանսավորվում կամ համաֆինանսավորվում է պետության կողմից, կամ պետության կամ համայնքի՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող իրավաբանական անձինք, հիմնականում պետական միջոցներից ֆինանսավորվող իրավաբանական անձինք, ինչպես նաև ֆիզիկական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է հանրային գործառույթներ կամ վերահսկում է պետական միջոցներ»: Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ պետական մարմնի նման լայն սահմանումը ողջունելի է, քանի որ կարևոր է, որ բոլոր մարմինները, որոնք վերահսկվում են պետության կողմից կամ իրականացնում են պատվիրակված հանրային գործառույթներ, ընդգրկված լինեն տեղեկատվության մատչելիության իրավունքի կիրառման դաշտում:

Աֆղանստանի՝ (Տեղեկատվության ազատության օրենքների միջազգային

³ Հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին տեղեկատվություն տնօրինողների ցանկում ներառելու վերաբերյալ առաջարկը ներկայացրել է նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

⁴ St`u CDL(2009)019-e, Draft Opinion on the Draft Laws on freedom to receive information and on making amendments to the Code of administrative violations of the Republic of Armenia, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2009\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2009)019-e):

⁵ St`u CDL(2012)041, Draft Opinion on the Draft Law on free access to information of Montenegro, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL\(2012\)041-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2012)041-e):

վարկանիշավորման /the RTI Rating/ համակարգում Աֆղանստանը զբաղեցնում է առաջին տեղը) տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների ցանկում ընդգրկված են նախագահի գրասենյակը, Ազգային ժողովը, դատական համակարգը, նախարարությունները, անկախ մարմինները, անկախ պետական հանձնաժողովները, մունիցիպալ վարչակազմերը, խորհուրդները, վարչական շրջանները, գյուղական խորհուրդները, համայնքները, պետությանը պատկանող ընկերությունները, կորպորացիաները, համատեղ ձեռնարկությունները և օրենքի հիման վրա ստեղծված բոլոր մարմիններն ու հիմնարկները: Այս սահմանումը ներառում է նաև ցանկացած կազմակերպություն կամ հիմնարկ, որը ղեկավարվում (owned), վերահսկվում կամ էապես ֆինանսավորվում է վերը թվարկված հիմնարկներից որևէ մեկի կողմից, ինչպես նաև ցանկացած այլ մարմին, որն իրականացնում է հանրային գործառույթ:

Բոսնիա և Հերցեգովինայի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ *պետական մարմին* հասկացությունը ներառում է ցանկացած մարմին կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ օրենսդիր, գործադիր, դատական, վարչական մարմիններ, հանրային գործառույթ իրականացնող իրավաբանական անձինք, պետության կամ համայնքի կողմից կառավարվող (owned) կամ վերահսկվող իրավաբանական անձինք կամ պետական մարմնի կողմից ղեկավարվող իրավաբանական անձինք:

Բուլղարիայի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը կիրառելի է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային իրավունքի բնագավառում գործող մարմինների, ներառյալ հանրային իրավունքի իրավաբանական անձանց, անհատների և իրավաբանական անձանց նկատմամբ, եթե վերջիններիս գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից, ԵՄ սուբսիդիաներից և ծրագրերից:

Խորվաթիայի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ *պետական մարմին* հասկացությունն ընդգրկում է պետական մարմիններին, կառավարության տեղական և ռեզիդնալ ստորաբաժանումներին, հանրային ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց, պետական կամ կառավարության տեղական և ռեզիդնալ ստորաբաժանումների բյուջեներից ֆինանսավորվող իրավաբանական անձանց, պետության կամ կառավարության ռեզիդնալ և տեղական ստորաբաժանումների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերություններին:

Մակեդոնիայի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնարկները և հանրային ծառայությունները, պետական ձեռնարկությունները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են օրենքով սահմանված հանրային գործառույթներ:

Մոնտենեգրոյի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը կիրառելի է պետության կամ համայնքի կողմից հիմնադրված կամ պետական միջոցներից ֆինանսավորվող պետական մարմինների, տեղական

ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ձեռնարկությունների կամ առևտրային կազմակերպությունների նկատմամբ, որոնց վերապահված է հանրային լիազորությունների/գործառույթների իրականացման իրավունք:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի փոփոխություն և տեղեկատվություն տնօրինողների ցանկում նախատեսել նաև պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններին, պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ստեղծած հիմնադրամներին, պետական և համայնքային կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող իրավաբանական անձանց, հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը չի պարունակում կարգավորում տեսողության կամ լսողության խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության տրամադրման եղանակների առանձնահատկությունների մասով, ինչը այդ տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանափակում է փնտրվող տեղեկատվության մատչելիությունը:

Վերլուծություն (այդ թվում՝ միջազգային իրավունք և փորձագիտական փաստաթղթեր)

«Ցվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթղթի 24-րդ սկզբունքը ամրագրում է, որ պետական մարմինները պետք է հնարավորության սահմաններում տեղեկատվությունը տրամադրեն այն հայցող անձի համար նախընտրելի ձևաչափով, այդ թվում՝ պարտավոր են պատշաճ միջոցներ ձեռնարկել տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի ձևաչափով տրամադրելու ուղղությամբ:

Նշված սկզբունքը հիմնված է գլխավորապես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 21-րդ հոդվածի վրա, որի համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրացնել խոսքի ու կարծիքի

ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կարգով, այդ թվում՝ ա) հաշմանդամություն ունեցող անձանց ճիշտ ժամանակին ու առանց հավելյալ ծախսերի տրամադրելով հասարակության համար նախատեսված տեղեկատվություն մատչելի ձևաչափերով և հաշմանդամության տարբեր տեսակներին հատուկ տեխնոլոգիաներով, բ) պաշտոնական հարաբերություններում ընդունելով շարժուձևերի լեզվի, Բրայլի համակարգի, հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրած հաղորդակցության այլ մատչելի միջոցների, տեսակների ու ձևաչափերի օգտագործումը և նպաստելով դրան, գ) պահանջելով հասարակությանը ծառայություններ մատուցող մասնավոր ձեռնարկություններից հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն տրամադրել և ծառայություններ մատուցել նրանց համար մատչելի և կիրառելի ձևաչափերով, նաև համացանցի միջոցով»:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 48-րդ նստաշրջանի թիվ 48/96 բանաձևով ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոններ»-ի⁶ 5-րդ կանոնի համաձայն՝ պետությունները պետք է ճանաչեն հասարակության բոլոր շերտերում հնարավորությունների հավասարեցման գործընթացում մատչելիության ընդհանուր կարևորությունը: Ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար պետությունները պետք է ներկայացնեն գործողությունների ծրագրեր, որպեսզի հասանելի դարձնեն ֆիզիկական միջավայրը, և միջոցներ ձեռնարկեն տեղեկությունների և հաղորդակցության մատչելիությունն ապահովելու համար:

- Հաշմանդամություն ունեցող անձինք, ըստ անհրաժեշտության՝ նրանց ընտանիքները և փաստաբանները պետք է ամբողջական հասանելիություն ունենան ախտորոշմանը, իրավունքներին և հասանելի այլ ծառայություններին ու ծրագրերին վերաբերող տեղեկություններին բոլոր փուլերում: Նման տեղեկությունները պետք է ներկայացվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևերով:

- Պետությունները պետք է մշակեն ռազմավարություններ տեղեկատվական ծառայությունները և փաստաթղթերը հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար հասանելի դարձնելու նպատակով: Բրայլի գրեր, ձայներիզային ծառայություններ, մեծ չափերով տպագրություն և այլ համապատասխան տեխնոլոգիաներ պետք է գործածվեն տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց հասանելիությունը գրավոր տեղեկություններին և փաստաթղթերին ապահովելու համար: Նույն կերպ պետք է գործածվեն

⁶ St' u The Standard Rules on the Equalization of Opportunities for Persons with Disabilities, <https://www.un.org/esa/socdev/enable/dissre00.htm>:

համապատասխան տեխնոլոգիաներ՝ ապահովելու խոսքային տեղեկությունների հասանելիությունը լսողական կամ ընկալման դժվարություններ ունեցող անձանց համար:

- Պետությունները պետք է ապահովեն, որ նոր թվայնացված տեղեկությունները և հասարակությանն առաջարկված ծառայությունների համակարգերը կա՛մ ի սկզբանե լինեն մատչելի, կա՛մ ադապտացվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Article 19» հասարակական իրավապաշտպան կազմակերպության մշակած սկզբունքների համաձայն՝ անհրաժեշտ է նախատեսել լիարժեք հասանելիություն տեղեկատվությանը նաև այն անձանց համար, որոնք ունեն այնպիսի հաշմանդամություն, ինչպիսին է, օրինակ, կուրությունը (տե՛ս 5-րդ սկզբունքը):

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Տեղեկություններ ստանալու ազատությունը ամրագրում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը ևս ամրագրում է անձի՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև, իսկ 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, **հաշմանդամությունից**, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Խտրականության արգելման սկզբունքը ամրագրում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան 14-րդ հոդվածում և թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածում:

Նշված իրավական դրույթներից, միջազգային պայմանագրերից և միջազգային չափորոշիչներից հստակ բխում է պետության դրական պարտավորությունը՝ ապահովելու յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձի

տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունքի իրացումը, այն է՝ հայցված տեղեկատվության տրամադրումը այն հայցող անձին հասանելի ձևաչափով:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի փոփոխություն՝ նախատեսելով լրացուցիչ դրույթ, ըստ որի՝ տեղեկատվություն տնօրինող անձը պարտավոր է հայցված տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել հասանելի ձևաչափով:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը գործող խմբագրությամբ վտանգ է ստեղծում այն փաստաթղթի տրամադրումը ոչ իրավաչափորեն մերժելու համար, որում միաժամանակ զետեղված է տրամադրման ենթակա և ոչ ենթակա տեղեկատվություն:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Երբ օրենքով սահմանափակված տեղեկատվությունը զետեղված է չսահմանափակված տեղեկատվություն հետ միասին նույն փաստաթղթում, այդ պարագայում հասանելի տեղեկատվության տրամադրման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության՝ 2015 թ.-ի թիվ 1204-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետով, համաձայն որի՝ նման դեպքում տեղեկությունը (տրամադրման ենթակա փաստաթուղթը) պետք է տրամադրվի մերժման ենթակա տեղեկություններն անընթեռնելի դարձնելու (ծածկելու, սևացնելու կամ ջնջելու) միջոցով՝ չխմբագրելով տեղեկության (փաստաթղթի) մնացած մասը: Ըստ նույն կետի, եթե տեղեկատվություն տնօրինողի կողմից տրամադրվող տեղեկության նշանակալի (տասնհինգ և ավելի տոկոս) մասը պետք է անընթեռնելի դարձվի, ապա տեղեկությունը կարող է տրամադրվել թույլատրելի էջերի կամ քաղվածքի տեսքով:

Գործնականում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը պարունակում է կամայական մեկնաբանման ռիսկ այն դեպքերի նկատմամբ կիրառելիության մասով, երբ տեղեկատվությունը, որի մի մասը պարունակում է մերժման ենթակա տվյալներ, **զետեղված է միևնույն փաստաթղթում**: Այլ կերպ ասած՝ առկա է վտանգ, որ պրակտիկայում այն դեպքերում, երբ մեկ փաստաթղթում զետեղված է ն՝ տրամադրման ենթակա, և՛ ոչ

ենթակա տեղեկատվություն, այդ փաստաթղթի տրամադրումը կմերժվի դրանում օրենքով պաշտպանված տեղեկատվության առկայության պատճառաբանությամբ: Մինևույն ժամանակ նշված կարգավորման սահմանումը թողնելով ենթաօրենսդրական ակտերին՝ կրկին վտանգ է ստեղծվում տեղեկատվության հասանելիությունը թերի ապահովող տարատեսակ ակտերի ընդունման համար: Եվ դրա ապացույցը հենց ներկայումս գործող՝ վերը մեջբերված Կառավարության որոշման կարգավորումներն են. մասնավորապես դրանք թերի են այնքանով, որքանով տարածվում են միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների՝ տեղեկություններ տրամադրելու վրա, այնինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է նաև տեղեկատվությունը տնօրինող այլ սուբյեկտների վրա: Այլ կերպ ասած՝ Կառավարության մեջբերված որոշումը չի սահմանում պարտադիր կանոններ մի շարք տեղեկատվություն տնօրինողների, օրինակ՝ հանրային նշանակության կազմակերպությունների համար:

Միաժամանակ Կառավարության վերը նշված որոշմամբ սահմանվող «Եթե տեղեկատվություն տնօրինողի կողմից տրամադրվող տեղեկության նշանակալի (տասնհինգ և ավելի տոկոս) մասը պետք է անընթեռնելի դարձվի, ապա տեղեկությունը կարող է տրամադրվել թույլատրելի էջերի կամ քաղվածքի տեսքով» կարգավորումը ոչ իրավաչափ է, ամրագրում է ակնհայտ սխալ չափորոշիչ, այն է՝ սահմանափակում է չսահմանափակված տեղեկատվության տրամադրումը բացառապես կախված փաստաթղթում դրա տոկոսային ծավալից. ավելին, դրույթից պարզ չէ, թե ինչպես է հաշվարկվում տեղեկատվության տոկոսը՝ ըստ բառաքանակի՞, էջաքանակի՞, թե՞ որևէ այլ չափորոշիչով: Նշվածի հետ մեկտեղ քաղվածք տրամադրելու իրավասությունը տեղեկատվության միայն ցանկալի մասը տրամադրելու լայն հնարավորություն է ստեղծում տեղեկատվությունը տնօրինող սուբյեկտների համար:

Քննարկվող կարգավորումը օրենքում ամրագրելու անհրաժեշտությունը արձանագրել է նաև ՀՀ կառավարությունը՝ ներկայիս Կառավարության որոշման կարգավորումները զետեղելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2017 թ.-ի նախագծում (նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մաս): Հատկանշական է նաև, որ պաշտպանված և չպաշտպանված տեղեկությունները մեկ փաստաթղթում զետեղված լինելու դեպքում տեղեկատվության չպաշտպանված մասի չտրամադրման՝ գործող կարգավորումներից բխող ռիսկը ևս արձանագրվել է ՀՀ արդարադատության նախարարության՝ 2016 թ.-ին մշակված տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգում⁷, մասնավորապես արձանագրվել է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ

⁷ Տե՛ս

<http://www.justice.am/legal/view/article/969?fbclid=IwAR13z81PKzYY9gs5rFPRJBkcDKdoTZz35ISSCibkOKO89714U8h-gOUffOI>:

հողվածի 2-րդ մասի դրույթը հաճախ մեկնաբանվում է տեղեկատվության մատչելիության իրավունքն անհարկի սահմանափակելու համար, օրինակ, եթե փաստաթղթում առկա մի տվյալն է միայն գաղտնիք պարունակում, մերժվում է ամբողջ տեղեկության տրամադրումը:

Միջազգային չափանիշներ

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե փաստաթուղթը պարունակում է տվյալ, որի տրամադրման մասով առկա է սահմանափակում, ապա պետք է տրամադրվի փաստաթղթի այն մասը, որի վրա այդ սահմանափակումը չի տարածվում: Որպես այս կանոնից բացառություն՝ նախատեսված են այն դեպքերը, երբ մնացյալ՝ չսահմանափակված տեղեկատվությունը կարող է մոլորության մեջ գցել կամ իմաստագուրկ է:

Նույն դրույթն է պարունակում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ N Rec (2002)2 հանձնարարականը (հանձնարարականի 7-րդ կետի 2-րդ ենթակետը):

Ի հավելումն վերոգրյալի՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցի 57-րդ կետի համաձայն՝ նշված դեպքերում պետք է հստակ նշվի, թե որտեղ և ինչքան տեղեկություն է ջնջվել: Հնարավոր ամեն դեպքում որոշման մեջ պետք է նշվի նաև յուրաքանչյուր ջնջում հիմնավորող սահմանափակման մասին:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի փոփոխություն՝ նախատեսելով 8-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը փոխլրացնող դրույթ, որը չսահմանափակված տեղեկատվության մասի տրամադրման պարտականությունը կսահմանի նաև այն դեպքերում, երբ այն սահմանափակված տեղեկատվության հետ մեկտեղ զետեղված է մեկ փաստաթղթում, ինչպես նաև նախատեսել դրույթ, որի համաձայն՝ փաստաթղթում որևէ տեղեկատվություն ջնջելու/ծածկելու դեպքում պետք է հստակ արձանագրվի, թե որտեղ և ինչքան տեղեկություն է ջնջվել՝ նշելով այն հիմնավորող սահմանափակման մասին:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենսդրական ակտերում առկա են կարգավորումներ, որոնք ուղղակիորեն հակասում են «Տեղեկատվության

ազատության մասին» ՀՀ օրենքին և միջազգային չափանիշներին տեղեկատվության տրամադրման վճարովիության արգելքի առումով:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դրույթ, համաձայն որի՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս: Հատկանշական է, որ օրենքը որևէ բացառություն այս առումով չի նախատեսում, այնինչ օրենսդրական այլ ակտեր սահմանում են որոշ տեսակի տեղեկատվության տրամադրման համար որոշակի գանձումներ պետական տուրքերի կամ ծառայությունների վճարների տեսքով: Այսպես, օրինակ, որոշ տեսակի տեղեկատվության (այդ թվում՝ տեղեկանքների տեսքով) տրամադրման համար վճարման պարտականություն է սահմանում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը 12-րդ, 14-րդ, 15-րդ, 18-րդ և 20-րդ հոդվածներում (օրինակ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար, իրավաբանական անձանց վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման, հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձանց անհատական հաշվի քաղվածքը փաստաթղթային տեսքով մեկ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամից ավելի տրամադրելու համար և այլն), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը՝ 73-րդ հոդվածում (օրինակ՝ անշարժ գույքի միավորի վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար, անշարժ գույքի մեկ միավորի վերաբերյալ այլ տեղեկատվության, ինչպես նաև միևնույն սուբյեկտին պատկանող գույքի առկայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար, շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար և այլն): Օրենսդրությամբ սահմանված են նաև արխիվային նյութերի տրամադրման վճարովիությունը ամբողջով դրույթներ (մանրամասն տե՛ս «Տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող խնդիրները արխիվային նյութերի մատչելիության ապահովման բնագավառում» բաժինը), ինչպես նաև տեղեկատվության տրամադրման վճարովիության վերաբերյալ այլ իրավակարգավորումներ: Նշված բոլոր դեպքերում տեղեկատվության տրամադրումը փաստացի վճարովի է՝ անկախ այն հանգամանքից՝ այն գերազանցում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 10 էջի սահմանաչափը, թե ոչ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մեջբերված դրույթից, ինչպես նաև միջազգային փաստաթղթերում ամրագրված չափորոշիչներից բխում է, որ ընդհանուր կանոն է տեղեկատվության տրամադրման համար վճար չգանձելը, իսկ վճար տեղեկատվությունը հայցողից կարող է գանձվել բացառապես այն դեպքերում, երբ տրամադրվող տեղեկատվության ծավալը մեծ է, և անհրաժեշտ է կատարել նյութական կրիչների հետ կապված համապատասխան չափից ավել որոշակի ծախսեր: Այլ կերպ ասած՝ վճարը (ցանկացած անվան տակ՝ պետական տուրք, ծառայության վճար և այլն) տեղեկատվություն տնօրինողի կողմից կարող է գանձվել

բացառապես օրենքով սահմանված չափից ավել, լրացուցիչ ծախսեր կատարելու դեպքում և չի կարող հետապնդել եկամուտ ստանալու նպատակ: Ուստի ՀՀ օրենսդրության կարգավորումներն այնքանով, որքանով սահմանում են վճարման պարտականություն 10 էջից քիչ ծավալով տեղեկատվության տրամադրման դիմաց, ուղիղ հակասության մեջ են գտնվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և միջազգային չափորոշիչների հետ և իրավաչափ չեն:

06.03.2020 թ.-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ հայտ ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողները: Այնուամենայնիվ, այս օրենսդրական նախաձեռնությամբ հաստատված և ոչ համակարգային մոտեցում է ցուցաբերվում տեղեկատվության տրամադրման վճարովիության ոչ իրավաչափության խնդրին՝ պայմանավորելով վճարի բացակայությունը միայն որոշակի տեսակի տեղեկատվությամբ և այն հայցող սուբյեկտների նեղ շրջանակով:

Հանրային իշխանության՝ գործող օրենսդրության թերի լինելը արձանագրելու փաստի մասին է վկայում նաև 2017 թ.-ին ՀՀ կառավարության՝ շրջանառության մեջ դրած «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքի նախագծի 9-րդ հոդվածում գործածված ձևակերպումն առ այն, որ տեղեկատվություն հայցողը պետք է հատուցի միայն տեղեկության **վերարտադրման և առաքման իրական ծախսերը**:

Վերոգրյալից բացի՝ խնդրահարույց է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում այնպիսի կարգավորման բացակայությունը, որը կսահմաներ վճարման պարտականությունից ազատում այն դեպքերում, երբ տեղեկատվության տրամադրումը հայցվել է էլեկտրոնային կրիչով, և համապատասխան տարողունակությամբ կրիչ տեղեկատվության հայցողը ներկայացրել է այն տնօրինողին: Նման դրույթը կփոխլրացներ ՏԱ մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, ըստ որի՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս:

Միջազգային իրավունք և փորձագիտական փաստաթղթեր

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաթղթի պատճեններ տրամադրելու համար վճար կարող է գանձվել, սակայն այն պետք է սահմանվի ինքնարժեքի հաշվառմամբ և լինի ողջամիտ, իսկ պետական մարմինները չպետք է դրանից օգուտ ստանան:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ N Rec (2002)2 հանձնարարականի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պաշտոնական փաստաթղթի պատճենը տրամադրելու համար պետք է գանձվի չափավոր գումար, որը չպետք է գերազանցի պետական մարմնի՝ դրա պատճենահանման համար կատարած ծախսը:

Տեղեկատվություն ստանալու համար վճար գանձելու հարցի կապակցությամբ իր

դիրքորոշումն է հայտնել նաև Վենետիկի հանձնաժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2008 թ.-ի նախագծի կապակցությամբ 2009 թ.-ին ներկայացված կարծիքում: Մասնավորապես կարծիքի 65-րդ կետում հղում անելով «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետին՝ հանձնաժողովը գտել է, որ նախագծում շարադրված ինքնարժեքի սկզբունքի մասով պետք է հստակ պարզաբանվի, որ վճարները կարող են գանձվել միայն պատճենման իրական ծախսերի համար, ոչ թե տեղեկատվություն տնօրինողի աշխատակազմի աշխատանքի:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1/ կատարել փոփոխություններ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում՝ ուժը կորցրած ճանաչելով բոլոր այն դրույթները, որոնք սահմանում են տեղեկատվության տրամադրման համար վճարման պարտականությունը՝ չպայմանավորված դրա ծավալով, ավելի հստակ՝ էջաքանակով կամ հատուկ ծառայությունների մատուցմամբ.

2/ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում կատարել լրացում՝ սահմանելով դրույթ այն մասին, որ տեղեկատվություն հայցող անձը ազատվում է վճարման պարտականությունից այն դեպքերում, երբ տեղեկատվության տրամադրումը հայցվել է էլեկտրոնային կրիչով, և համապատասխան տարողունակությամբ կրիչ ներկայացվել է տեղեկատվությունը տնօրինողին:

Խնդիր 5

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, սահմանելով տեղեկատվության տրամադրման ընդհանուր կարգը և ժամկետները, այն է՝ 5 օր և լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում՝ 30 օր (9-րդ հոդված, 7-րդ մաս), չի նախատեսում հատուկ առավել կարճ ժամկետներ այն դեպքերի համար, երբ տեղեկատվություն հայցողը գրավոր հարցմամբ հիմնավոր փաստարկում է, որ այն անհրաժեշտ է մարդու կյանքի կամ անձնական ազատության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով: Օրենքը չի սահմանում նաև *լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն* եզրը: Մինևույն ժամանակ օրենքը չի նախատեսում տեղեկատվությունը տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ դիմողին հայցվող տեղեկատվությունը տրամադրելու համար վճարում կատարելու անհրաժեշտության և այդ վճարման չափի մասին տեղեկացնելու ընթացակարգ՝ փոխարենը սահմանելով տեղեկատվությունը տնօրինողի իրավասությունը վճարում չկատարելու դեպքերում մերժելու տեղեկատվության տրամադրումը (11-րդ հոդված, 1-ին մաս):

Վերլուծություն

«Ցվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթղթի 25-րդ սկզբունքի Բ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ առկա է տեղեկատվությունը հրատապ տրամադրելու ակնհայտ անհրաժեշտություն, օրինակ, երբ տվյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է անձի կյանքը կամ ազատությունը պահպանելու համար, պետք է կիրառվեն այն տրամադրելու կարճ ժամկետներ:

Մարդու կյանքի և անձնական ազատության իրավունքները թե՛ միջազգային իրավական ամենահեղինակավոր փաստաթղթերով (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա), թե՛ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքներ են: Դրանք նաև յուրահատուկ են այն առումով, որ ըստ էության ուղղակիորեն անվերականգնելի են, ինչն էլ ակնհայտ է դարձնում դրանց ապահովման և պաշտպանության հրատապությունը: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ իրավաչափորեն արդարացված կլինի նաև նշված իրավունքների պաշտպանության նպատակով, գրավոր հարցման դեպքում, տնօրինողի համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման առավել սեղմ ժամկետների սահմանումը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ կլինի սահմանել տեղեկատվությունը հայցողի պարտականությունը՝ հիմնավորելու այս տեսակի հարցումների՝ կյանքի և անձնական ազատության իրավունքների պաշտպանության առումով հրատապությունը:

Ինչ վերաբերում է օրենքում *լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն* հասկացության սահմանման բացակայությանը, ապա դա ևս լայն չարաշահումների հնարավորություն է ստեղծում: Այս առումով հատկանշական է, որ խնդիրը դիտարկվել է նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2017 թ.-ի նախագծով, և առաջարկվել է հավասարակշռված լուծում, մասնավորապես համաձայն նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերության՝ «Որպես տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ *լրացուցիչ աշխատանք* է դիտվում տեղեկության արդիականությունը ճշտելու, վերլուծություն կատարելու, տեղեկություն տնօրինողի ստորաբաժանումներից տեղեկությունը հավաքելու անհրաժեշտությունը»⁸:

Ինչ վերաբերում է մյուս խնդրին՝ տեղեկատվությունը տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ դիմողին հայցվող տեղեկատվությունը տրամադրելու համար վճարում կատարելու անհրաժեշտության մասին ծանուցելու ընթացակարգի բացակայությանը օրենքում, ապա հարկ է արձանագրել, որ այս կարգավորումը հիմք է տալիս տեղեկատվությունը տնօրինող կազմակերպությանը պարզապես մերժելու դիմումը՝ համապատասխան վճարը չվճարված լինելու պատճառաբանությամբ: Այս առումով հատկանշական է, որ Կառավարության 2015 թ.-ի 1204-Ն որոշմամբ՝ պետական և տեղական կառավարման մարմինների և կազմակերպությունների համար այս ծանուցման պարտականությունը սահմանված է:

⁸ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/151/about>:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1/ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ նախատեսելով տեղեկատվության տրամադրման համար սահմանված ընդհանուր ժամկետներից ավելի կարճ՝ 2-օրյա ժամկետ այն դեպքերի համար, երբ տեղեկատվություն հայցողը գրավոր հարցմամբ հիմնավոր փաստարկում է, որ հայցվող տեղեկատվությունը անհրաժեշտ է մարդու կյանքի կամ անձնական ազատության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով.

2/ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և նախատեսել տեղեկատվություն տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ տեղեկատվություն հայցողին վճարում կատարելու անհրաժեշտության մասին ծանուցելու պարտականությունը և սահմանել *լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն* հասկացությունը:

Խնդիր 6

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրում տեղեկատվությանը արդյունավետորեն ծանոթանալու հնարավորության ապահովման երաշխիքները:

Վերլուծություն

Գոյություն ունեն տեղեկատվություն ստանալու տարբեր եղանակներ, օրինակ՝ գրավոր, բանավոր հարցում, փաստաթղթի պատճենի տրամադրման պահանջ ներկայացնել կամ ծանոթանալ կոնկրետ փաստաթղթին, այդ թվում՝ դրա բնօրինակին այն տնօրինողի գտնվելու վայրում: Դիմողի՝ տեղեկատվությանը, այդ թվում՝ համապատասխան փաստաթղթին տեղում՝ տեղեկատվությունը տնօրինողի մոտ ծանոթանալու հնարավորությունը սահմանող միակ դրույթը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասն է, համաձայն որի՝ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով **տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը**: Սակայն առավել մանրամասն կարգավորում չի սահմանվում ո՛չ նշված օրենքով, ո՛չ որևէ այլ օրենսդրական ակտով, ո՛չ էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի տրամադրման կարգը սահմանող ՀՀ կառավարության 15.10.2015 թ.-ի թիվ 1204-Ն որոշմամբ, ուստի և բացակայում են տեղում տեղեկատվությանը արդյունավետորեն ծանոթանալու հնարավորության երաշխիքները:

Առկա օրենսդրական կարգավորումների շրջանակում ստեղծվում է իրավիճակ, երբ ամրագրվում է տեղեկատվություն հայցող անձի իրավունքը տեղում ծանոթանալու իր փնտրած տեղեկատվությանը, սակայն չեն սահմանվում այն տնօրինողի համապատասխան պարտականությունները, այն է՝ ապահովել ողջամիտ

պայմաններ ծանոթացման իրավունքի լիարժեք իրացման համար: Գործնականում դա կարող է բերել իրավիճակի, երբ տեղեկատվություն տնօրինողը կամայականորեն կսահմանափակի հայցվող տեղեկատվությանը ծանոթանալու ողջամիտ ժամկետները, չի ապահովի ծանոթացման համար նվազագույն պայմաններ: Միննույն ժամանակ դրական առաջընթաց կլինի տեղեկատվությունը հայցողի՝ իր միջոցներով տեղեկատվության/փաստաթղթերի պատճենահանման հնարավորության օրենսդրական ամրագրումը, ընդ որում, առանց որևէ գումարի գանձման՝ անկախ տեղեկատվության ծավալից: Օրինակ՝ ակնհայտ է, որ որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում տեղեկատվությունը հայցող անձին թույլ չտալը իր տեխնիկական միջոցներով լուսանկարահանման, տեսանկարահանման կամ ձայնագրառման եղանակով պատճենել այն տեղեկատվությունը, որին նա հնարավորություն ունի ծանոթանալու:

Միջազգային չափանիշներ

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և դրա բացատրական զեկույցի 55-րդ կետի համաձայն՝ պետական մարմինները պետք է բոլոր հնարավոր դեպքերում հնարավորություն տան ծանոթանալու հայցվող փաստաթղթերին՝ սահմանելով ողջամիտ աշխատանքային ժամեր և տրամադրելով բավարար նյութատեխնիկական միջոցներ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ N Rec (2002)2 հանձնարարականի 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ փաստաթղթի բնօրինակին ծանոթանալը պետական մարմնի շենքի ներսում պետք է լինի առհասարակ անվճար:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ ամրագրելով տեղեկատվություն տնօրինողի պարտականությունը՝ ապահովելու հայցվող տեղեկատվությանը ծանոթանալու նվազագույն ողջամիտ պայմանները, այդ թվում՝ ողջամիտ ժամանակ և նյութատեխնիկական միջոցներ, ինչպես նաև սահմանելով հնարավորություն տեղեկատվությունը հայցողի համար՝ իր տեխնիկական միջոցներով պատճենահանելու իր փնտրած տեղեկատվությունը/փաստաթղթերը, այդ թվում՝ լուսանկարահանման, տեսանկարահանման կամ ձայնագրառման եղանակով՝ առանց որևէ վճարում կատարելու կամ պետական տուրք վճարելու պարտականության՝ անկախ տեղեկատվության ծավալից:

Խնդիր 7

Խնդրի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում

տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած անկախ մարմնի ստեղծում:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան: Միննույն ժամանակ օրենքը, ինչպես և այլ օրենսդրական ակտեր չեն նախատեսում տեղեկատվության ազատության ոլորտին վերաբերող վեճերի լուծման մասնագիտացած որևէ մարմնի ստեղծում, իսկ տեղեկության տրամադրման մերժման բողոքարկումը, ըստ գործող օրենսդրության (տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածը), բացի դատական կարգից, հնարավոր է բացառապես կոնկրետ պաշտոնատար անձի գործողությունները/անգործությունը կամ որոշումները վերադասության կարգով բողոքարկելու եղանակով:

Հետևաբար ներկայումս գործող իրավակարգավորումները չեն նախատեսում տեղեկատվության ազատության ոլորտը վերահսկող որևէ առանձին անկախ մարմին, որը կունենար իրավասություն՝ վերանայելու տեղեկատվության տրամադրումը մերժելու վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև այլ՝ օրենքի իմաստով տեղեկատվություն տնօրինող համարվող սուբյեկտների կայացրած որոշումները: Փոխարենը այս գործառույթը պետությունը վերապահել է նույն մարմնի ավելի վերադաս պաշտոնատար անձանց, ինչն առաջին հերթին բացառում է վերանայող մարմնի անկախությունը, ինչպես նաև լուծում չի տալիս այն հարցին, թե ով պետք է վերանայի համապատասխան մարմնի ամենաբարձրաստիճան պաշտոնատար անձի որոշումները:

Դրա հետ միասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի կարող համարվել տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության տեսանկյունից արդյունավետ արտադատական մարմին՝ հաշվի առնելով իմպերատիվ լիազորությունների բացակայության խնդիրը: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետությանը տեղեկատվության ազատության օրենքների միջազգային վարկանիշավորման /the RTI Rating/ համակարգում 0 միավոր է տրվել հենց այդ ցուցիչով (ցուցիչ 42-անկախ վերահսկող մարմնի որոշումները պարտադիր իրավաբանական ուժ ունեն)⁹:

Այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Մակմիլանը (Ավստրալիայի նախկին մարդու իրավունքների պաշտպան), ինչպես նաև Հոլսենն ու Պասքեն, նախանշել են մասնագիտացված վերահսկող մարմնի ստեղծումից բխող մի շարք դրական կողմեր՝

⁹ Տե՛ս <https://www.rti-rating.org/country-data/by-indicator/42/>:

միննույն գործառույթներն արդեն իսկ գոյություն ունեցող հաստատությանը վերապահելու համեմատությամբ¹⁰: Հիմնական փաստարկները հետևյալն են.

- Պարտադիր կատարման ենթակա որոշումների իրավասությունը: Օմբուդսմենի հաստատությունները, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, համարյա երբեք չեն ունենում պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելու իրավասություն: Նրանց դերն ավելի շատ նման է քաղաքացիների և կառավարության միջև միջնորդի, որի նպատակն է խնդիրը լուծել այնպես, որ լուծումը բավարար լինի երկու կողմերի համար: Ի տարբերություն վերոգրյալի՝ ՏԱ բողոքներն իրենց բնույթով ավելի հակասական են, և կարող ենք արձանագրել, որ վերահսկող մարմինը պետք է պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնելու իրավասություն ունենա, որպեսզի կարողանա լուծել այս հարցերը: Հակառակ դեպքում ամենայն հավանականությամբ նրանց առաջարկությունները կանտեսվեն: Որպես հիմնավորում՝ առկա է մի շարք երկրների փորձը, որտեղ վերահսկող մարմինները՝ մասնագիտացված կամ ոչ, չունեն իմպերատիվ բնույթ ունեցող որոշումներ ընդունելու լիազորություն: Նման իրավասություն չունենալու միջին արդյունքը կարող է լինել այն, որ դիմողները չեն ցանկանա դիմել նման կառույցին, քանի որ չեն ուզենա ժամանակ վատնել այդ կառույցից դրական առաջարկություն ստանալու համար, եթե այն անտեսվելու է համապատասխան պետական մարմնի կողմից:
- Հեռու պահել Օմբուդսմենի հաստատությունը քաղաքական լարվածություններից, որոնք կարող են կապված լինել տեղեկատվության ազատությանն առնչվող խնդրահարույց գործառույթի հետ: Օմբուդսմենի դեպքում նման իրավիճակը կարող է բացասաբար ազդել աշխատանքի հիմնական մասի վրա, որը հիմնված է վարչական մարմինների հետ լավ հարաբերությունների և խնդիրների լուծմանը հետամուտ լինելու համատեղ աշխատանքի վրա:
- Տեղեկատվության ազատության իրավունքի կարևորության բարձրացումը: Հատուկ մարմնի ստեղծումն անշուշտ կարևորություն կհաղորդի այս իրավունքին թե՛ նախնական փուլում և թե՛ հետագայում, երբ հաստատությունը միջոցներ և ջանքեր կգործադրի այս իրավունքը ջատագովելու համար: Ոչ մասնագիտացած ՏԱ մարմինները հազվադեպ են շատ ժամանակ ծախսում տեղեկատվության ազատության հիմնախնդիրները վեր հանելու ուղղությամբ:
- Գրասենյակի իրավասությունների ընդլայնումը: Օմբուդսմենի գործունեության շրջանակը սահմանափակ է: Նրա իրավասությունը չի տարածվում տեղեկատվության ազատության օրենքի գործողության դաշտում ընդգրկված բոլոր տեղեկատվություն տնօրինողների վրա:
- ՏԱ ոլորտում փորձագիտության զարգացում: ՏԱ գծով մասնագիտացած

¹⁰ «Տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող օրենսդրական շրջանակի վերլուծություն-Հայաստան», Թոբի Մենդել:

մարմինները զարգացնում են ոլորտի մասնագիտական փորձառությունը: Հիմնականում նրանք իրենց երկրներում տեղեկատվության ազատության վերաբերյալ գիտելիքի կենտրոնն են: Դրա պատճառն այն է, որ նրանք կենտրոնացած են բացառապես տեղեկատվության ազատության հարցերի վրա: Ի տարբերություն մասնագիտացած մարմինների՝ այնպիսի կառույցներում, ինչպիսին Օմբուդսմենի գրասենյակն է, որտեղ տեղեկատվության ազատությանն առնչվող հարցերը կցվել են հիմնական գործառնություններին, ոլորտի վերաբերյալ խորը փորձագիտական գիտելիքների պակասը լուրջ խնդիր է¹¹:

Ուստի, հիմնվելով նաև միջազգային չափորոշիչների վրա, կարող ենք փաստել, որ տեղեկատվության ազատության ոլորտում տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ստեղծումն անհրաժեշտ է առնվազն հետևյալ լիազորություններով՝ 1) տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկատվության տրամադրումը մերժելու որոշումների վերանայում՝ տեղեկատվություն հայցող մասնավոր անձանց ներկայացրած բողոքների հիման վրա, 2) ոլորտի մշտադիտարկում, այդ թվում՝ վերահսկողություն տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ, 3) աջակցություն տեղեկատվություն տնօրինողներին տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հարցում:

Միննույն ժամանակ նշված մարմինը պետք է լինի անկախ, ձևավորվի ներկայացուցչական մարմնի, այն է՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ձայների բարձր ցենզի հաղթահարմամբ:

Հաշվի առնելով այն, որ թե՛ տեղեկատվության ազատության և թե՛ անձնական տվյալների պաշտպանության ոլորտները մշտապես բախվող և միմյանց հավասարակշռող իրավակարգավորումներ են պարունակում, և գործակալությունն իր լիազորություններն իրականացնելիս հաճախ անդրադառնում է տեղեկատվության ազատության սահմանափակմանը վերաբերող հարցերին, ինչպես նաև նկատի ունենալով պետական ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ կարող է քննարկվել տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության մեկ միասնական լիազոր մարմին ստեղծելու հնարավորությունը:

Հատկանշական է, որ դեռևս 2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարության մշակած «Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգ»-ով քննարկվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի և տեղեկատվության ազատության

¹¹ «Տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող օրենսդրական շրջանակի վերլուծություն-Հայաստան», Թոբի Մենդել:

հանձնակատարի գործառույթների միացումը մեկ միասնական լիազոր մարմնում¹²: Միասնական մարմնի ստեղծման գաղափարը ողջունվել է ինչպես Գործակալության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք կարևորել են թե՛ պետական ռեսուրսը խնայելու փաստը, թե՛ երկու ոլորտներում առաջացող խնդիրների արդյունավետ լուծման ու համապատասխան իրավունքների կիրառման արդյունքում դրական պրակտիկայի զարգացման անհրաժեշտությունը, որի հետևանքով միասնական լիազոր մարմինը կկարողանա հավասարակշռել այս երկու կարևորագույն իրավունքները՝ գտնելով արդարացի լուծում:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
2009 թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև դրա բացատրական զեկույցի 64-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ անձը, որի հարցումը մերժվել է ամբողջությամբ կամ մասնակի, պետք է ունենա դատարանի կամ արտադատական կարգով անկողմնակալ և անկախ մարմնի կողմից այդ որոշման վերանայման հնարավորություն արագ և ոչ թանկարժեք ընթացակարգով: Արտադատական մարմինը պետք է ունենա լիազորություն կամ ինքնուրույն վերանայելու կայացված որոշումը, կամ պահանջելու համապատասխան մարմնից վերանայելու իր դիրքորոշումը:

Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ N Rec (2002)2 հանձնարարականը (հանձնարարականի 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը):

Վերը նշվածին համահունչ սկզբունք է ամրագրում նաև «Ցվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթուղթը. մասնավորապես 24-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվության հարցում ներկայացրած անձն իրավունք ունի դիմելու տեղեկատվությունը տրամադրելու մերժումը կամ հարցմանն առնչվող հարցերն անկախ մարմնի կողմից արագ և ոչ մեծ վճարով վերանայելու համար: Անկախ մարմինն էլ պետք է ունենա անհրաժեշտ իրավասություն և ռեսուրսներ արդյունավետ վերանայման համար, այդ թվում՝ նրան պետք է լիարժեք հասանելի լինեն բոլոր անհրաժեշտ, ներառյալ գաղտնի տեղեկությունները:

Վենետիկի հանձնաժողովը Հունգարիայի տեղեկատվական ինքնորոշման և տեղեկատվության ազատության մասին 2011 թ.-ի CXII ակտի վերաբերյալ տված կարծիքում որպես թերություն արձանագրել է այն, որ SU ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարության նշանակումը կատարում է նախագահը, այլ ոչ խորհրդարանը՝ կարևորելով խորհրդարանի կողմից ձևավորումը որպես այս մարմնի անկախության երաշխիք:

«Article 19» իրավապաշտպան հասարակական կազմակերպության մշակած սկզբունքների համաձայն՝ օրենքը պետք է նախատեսի հանրային մարմնի՝ տեղեկատվության հրապարակման մերժումը անկախ մարմին բողոքարկելու իրավունք: Բոլոր դեպքերում այդ մարմինը պետք է լինի անկախ և ընտրված

¹² Մանրամասն տե՛ս <http://moj.am/legal/view/article/969>:

ներկայացուցչական մարմնի կողմից, օրինակ՝ բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներից բաղկացած խորհրդարանական հանձնաժողովի: Նշված մարմին դիմելու ընթացակարգը պետք է լինի հնարավորինս արագ և ոչ ծախսատար: Մարմինն պետք է տրվի լիարժեք լիազորություն՝ քննելու ներկայացված բողոքները. նա պետք է հնարավորություն ունենա պահանջելու հանրային մարմնից ցանկացած տեղեկատվություն քննարկման նպատակով, իսկ քննության արդյունքում պետք է լիազորություն ունենա հանրային մարմնից պահանջելու տրամադրել տեղեկությունները, ինչպես նաև տուգանք կիրառելու նրա նկատմամբ (տես 5-րդ սկզբունքը):

Համաշխարհային բանկի ինստիտուտի կատարած «Խորհրդարանն ու տեղեկատվության մատչելիությունը. ձգտելով թափանցիկ կառավարման» հետազոտությունը ևս անդրադարձել է տեղեկատվության ազատության ոլորտում առանձին անկախ մարմնի անհրաժեշտության հարցին և արձանագրել մի շարք կարևոր պայմաններ¹³: Այսպես.

- Թեպետ փոքր երկրների համար նոր մարմին ստեղծելը կարող է շոշափելի ծախս լինել, սակայն դա հնարավորություն կտա զարգացնելու մասնագիտական փորձառությունը տվյալ ոլորտում, ինչն անհրաժեշտ է մարմնին վերապահված գործառույթների պատշաճ կատարման համար: Տեղեկատվության ազատության ոլորտի նոր լինելով պայմանավորված՝ աշխատանքի մեծ ծավալը և արդարացնում է առանձին մարմնի ստեղծումը: Ամենակարևորը, սակայն, այն է, որ այս մարմինները պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնելու լիազորություն ունենան:
- Տեղեկատվության ազատության ոլորտի մասնագիտացած մարմնի սահմանադրական կարգավիճակը նրա անկախության երաշխիքներից մեկն է:
- Անկախության համատեքստում կարևորվում է նաև մարմնի ղեկավարի և անհատների նշանակման կարգը: Որպես լավագույն փորձ է դիտարկվում մարմնի ձևավորումը խորհրդարանի կողմից, հատկապես ճնշող մեծամասնության քվեով, որպեսզի նվազեցվի մեծամասնություն ունեցող կուսակցության՝ իր կամ կառավարության թեկնածուին նշանակելու հնարավորությունը:
- Կարևոր է նաև բաց և մասնակցային նշանակման գործընթացը քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: Սա կօգնի հովանավորչական նշանակումները կանխարգելելուն:
- Ոչ մի դեպքում մարմնի ֆինանսավորումը չպետք է իրականացվի կոնկրետ նախարարության կողմից:
- Անկախ վարչական մարմինը պետք է կարողանա պարտադրել պետական մարմնին բացահայտել պահանջված տեղեկությունը, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել օրենքի պահանջները պատշաճ չկատարող պետական մարմիններին: Որպես այս լիազորության բաղադրիչ՝ վարչական մարմինը պետք է հնարավորություն ունենա ուսումնասիրելու վիճարկվող

¹³ «Պառլամենտն ու տեղեկատվության մատչելիությունը», Համաշխարհային բանկի ինստիտուտ, Թոբի Մենդել:

տեղեկությունը:

- Մարմինը կարող է ունենալ նաև այլ լիազորություններ:

Հունգարիայի Հանրապետությունում «Տեղեկատվական ինքնորոշման իրավունքի և տեղեկատվության ազատության մասին» օրենքով¹⁴ անձնական տվյալների և տեղեկատվության ազատության պաշտպանության մարմինը վերահսկողություն է իրականացնում անձնական տվյալների պաշտպանության և հանրային հետաքրքրություն ներկայացնող տվյալների մատչելիության նկատմամբ, ի պաշտոնե վերահսկողություն է իրականացնում տվյալների գաղտնագրման օրինականության նկատմամբ և այլն: Այն անկախ մարմին է, որը ղեկավարվում է միայն օրենքով: Մարմնի ղեկավարը նշանակվում է հանրապետության նախագահի կողմից վարչապետի առաջարկությամբ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Տեղեկատվության ազատության»¹⁵ և «Անձնական տվյալների պաշտպանության»¹⁶ օրենքներով սահմանվում են տեղեկատվության ազատության դաշնային հանձնակատարի մասին դրույթները:

Առաջին օրենքով սահմանվում է, որ տեղեկատվության ազատության դաշնային հանձնակատարի պարտականությունները կատարում է տվյալների պաշտպանության դաշնային հանձնակատարը:

Միացյալ Թագավորությունում տեղեկատվության հանձնակատարի գրասենյակը անկախ ինքնակարգավորվող մարմին է, որը ղեկավարվում է հանրության շահով և նրա տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության պատասխանատուն է: Գրասենյակն իր գործունեությամբ վերահսկողություն է իրականացնում հետևյալ ակտերի կիրառման նկատմամբ՝

- անձնական տվյալների պաշտպանության մասին օրենք,
- տեղեկատվության ազատության մասին օրենք,
- կոնֆիդենցիալության և էլեկտրոնային հաղորդակցության կանոններ (PECR),
- էկոլոգիական տեղեկատվության կանոններ,

-Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի մարտի 14-ի 2007/2/ԵՀ հրահանգ Եվրոպական համայնքում տարածական տեղեկատվության համար ենթակառուցվածքների ստեղծման մասին (INSPIRE) կանոններ և այլն¹⁷:

Սլովենիայի Հանրապետությունում «Տեղեկատվության հանձնակատարի մասին» օրենքով¹⁸ տեղեկատվության լիազորը (հանձնակատարը) ինքնավար և անկախ պետական մարմին է, որն իրավասու է.

-որոշումներ կայացնելու այն բողոքների առնչությամբ, երբ պետական մարմինները մերժել են տեղեկատվության տրամադրումը կամ խախտել են տեղեկատվության

¹⁴ St' u Act CXII of 2011 on the right to informational self-determination and on the freedom of information, http://njt.hu/translated/doc/J2011T0112P_20190426_FIN.pdf:

¹⁵ St' u Federal Act Governing Access to Information held by the Federal Government (Freedom of Information Act), http://www.gesetze-im-internet.de/englisch_ifg/englisch_ifg.html#p0072:

¹⁶ St' u Federal Data Protection Act, https://www.gesetze-im-internet.de/englisch_bds/englisch_bds.html#p0012:

¹⁷ St' u <https://www.kefron.com/blog/role-of-the-information-commissioners-office/>:

¹⁸ St' u Information Commissioner Act, <https://www.ip-rs.si/en/legislation/information-commissioner-act/>:

ազատության իրավունքը, կամ որևէ այլ կերպ խախտվել է հանրային տեղեկատվության մատչելիության մասին օրենսդրությունը.

-իրականացնելու հսկողություն անձնական տվյալների պաշտպանության կամ մշակման կամ այլ երկիր փոխանցման նկատմամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պարտականություններ.

-որոշումներ կայացնելու անձնական տվյալներին վերաբերող բողոքների շրջանակում:

Օրենքը հստակեցնում է նաև, որ այլ օրենքներում գործածվող *գլխավոր ազգային հսկողություն, անձնական տվյալների պաշտպանության ազգային հսկողական մարմին* կամ *հանրային տեղեկատվության մատչելիության լիազոր* հասկացությունների տակ պետք է հասկանալ տեղեկատվության հանձնակատարին:

Շվեյցարիայի Համադաշնության տվյալների պաշտպանության և տեղեկատվության հանձնակատարը նշանակվում է Դաշնային խորհրդի կողմից չորս տարի ժամկետով: Նշանակմանը պետք է հավանություն տա Դաշնային ժողովը: Հանձնակատարն իր լիազորություններն իրականացնում է ինքնուրույն, ենթակա չէ իշխանության որևէ մարմնի: Նա ունի մշտական աշխատակազմ և սեփական բյուջե, ինքն է նշանակում իր աշխատակազմը¹⁹: Անձնական տվյալների պաշտպանության մասով Հանձնակատարն ունի հետևյալ գործառույթները՝ հաշտարարության գործընթացի իրականացում, գործընթացը չհաջողելու դեպքում՝ համապատասխան որոշման ընդունում, տեղեկատվության ի պաշտոնե (ex officio) տրամադրում կամ առանձին անձանց/մարմինների խնդրանքով տեղեկատվության տրամադրում պաշտոնական փաստաթղթերի մատչելիության պայմանների վերաբերյալ, եզրակացություն է տալիս ոլորտի օրենսդրական նախագծերի վերաբերյալ, որոնք կարող են հիմնարար ազդեցություն ունենալ տեղեկատվության ազատության սկզբունքի վրա: Հաշտարարության ընթացքում Հանձնակատարին մատչելի են դարձվում բոլոր պաշտոնական փաստաթղթերը, այդ թվում՝ գաղտնագրված: Պետական գաղտնիքի մասին օրենսդրությունը տարածվում է Հանձնակատարի և իր աշխատակազմի վրա նույն աստիճանով, ինչ որ պետական մարմինների, որոնց փաստաթղթերը նրանք ստուգում կամ որոնցից տեղեկատվություն են ստանում²⁰:

Որպես բավականին հաջողված միասնական լիազոր մարմնի փորձ՝ դիտարկվում է նաև **Էստոնիայի** տվյալների պաշտպանության տեսչությունը, որը հանդես է գալիս և՛ որպես տեղեկատվության ազատության ոլորտի, և՛ անձնական տվյալների պաշտպանության ոլորտի պատասխանատու²¹:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենքի ընդունում, որով նախատեսել.

- տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ

¹⁹ Տե՛ս Federal Act on Data Protection, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19920153/index.html#id-5>:

²⁰ Տե՛ս Federal Act on Freedom of Information in the Administration, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/20022540/index.html>:

²¹ Տե՛ս <https://www.aki.ee/en/inspectorate/legislation>:

վերահսկողություն իրականացնող անկախ մարմնի ստեղծում, որը կձևավորվի ՀՀ Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով և այդ մարմնին օժտել 1/ տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկատվության տրամադրումը որևէ կերպ մերժելու վերաբերյալ որոշումների, անգործության բողոքի հիման վրա վերանայման, տեղեկատվության տրամադրումը պարտադրելու (մարմինը պետք է իրավասու լինի ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման), ինչպես նաև տեղեկատվության տրամադրման կապակցությամբ ծագած վեճը լուծելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը այն տնօրինողից պահանջելու, 2/ ոլորտի մշտադիտարկման, այդ թվում՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ վերահսկողության, 3/ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտներին տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության կիրառման հարցում աջակցության լիազորություններով:

- սահմանել նշված մարմնին դիմելու և նրա կողմից բողոքը քննելու ողջամտորեն հնարավոր առավել արագ և մատչելի ընթացակարգ՝ ընդհուպ դիմողին ազատելով պետական տուրք վճարելու պարտականությունից.
- անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության միասնական մարմին ստեղծելու դեպքում՝ լիազոր մարմնի իրավասության շրջանակներում ընդգրկել նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտի լիազորությունները:

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին՝

- Սահմանադրության փոփոխությունների նախագծում ընդգրկել տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմնի ստեղծում՝ վերոգրյալ ձևավորման կարգով և լիազորություններով:

Խնդիր 8

Խնդրի նկարագրություն

Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հատուկ առավել սեղմ դատավարական ժամկետներ և ընթացակարգեր, ինչի հետևանքով նշված խմբի գործերի տևական քննությունը հաճախ գրկում է անձին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից:

Վերլուծություն

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը²² ցույց է տալիս, որ տեղեկատվության տրամադրման մերժումը դատական կարգով վիճարկելու

²² Վերլուծությունն իրականացվել է www.datalex.am կայքում հրապարակված դատական գործերի տվյալների հիման վրա:

դեպքում դատական գործերի մի մասի քննությունը միայն Վարչական դատարանում տևել է 1-4 տարի, իսկ բողոքարկման պարագայում առանձին դեպքերում նույնիսկ գերազանցել է այդ ժամանակահատվածը: Ակնհայտ է, որ նման իրավակիրառ պրակտիկան անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում բովանդակագրկում է տեղեկատվության ազատության իրավունքը և անձին զրկում տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի հնարավորությունից, քանի որ տեղեկատվության մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացումը պայմանավորված է առաջին հերթին տեղեկատվության տրամադրման սեղմ ժամկետներով:

Մինևույն ժամանակ ամիսներ կամ տարիներ անց դատական կարգով տեղեկատվության մատչելիության իրավունքի խախտումը վերացնելուց հետո արդեն վերացած է լինում նաև հայցված տեղեկատվության անհրաժեշտությունը, հետևաբար իրավունքի վերականգնում ըստ էության տեղի չի ունենում: Տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության հետ կապված խնդիրները արձանագրվել են նաև ՀՀ արդարադատության նախարարության մշակած՝ տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգում /2016 թ./: Մասնավորապես մատնանշվել է. «Դատական պաշտպանության առաձևահատկությունները հնարավորություն չեն տալիս գործնականում հիմնավոր կերպով լուծել տեղեկատվության ազատության ոլորտի խնդիրները: Նախ՝ դատական գործերը ժամանակատար են՝ տեղեկատվությունը շատ շուտ հնանում է, իսկ դատաքննության երկարաժամկետ լինելու դեպքում այն այլևս անհրաժեշտ չի լինում բողոքարկող կողմին»:

2009 թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև դրա բացատրական զեկույցի 64-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ անձը, որի հարցումը մերժվել է ամբողջությամբ կամ մասնակի, պետք է ունենա **դատարանի** կամ արտադատական կարգով՝ անկողմնակալ և անկախ մարմնի կողմից այդ որոշման վերանայման հնարավորություն՝ **արագ** և ոչ թանկարժեք ընթացակարգով:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և ՀՀ վարչական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերում ամրագրել տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը որպես առանձին վարույթի տեսակ՝ սահմանելով հայցադիմումի քննության 30-օրյա ժամկետ, ինչը զգալիորեն կնպաստի տեղեկատվության ազատության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների հետագա խախտումների կանխարգելմանը:

Խնդիր 9

Խնդրի նկարագրություն

Պրոակտիվ հրապարակվող տեղեկատվության ցանկը չի ներառում մի շարք հանրային նշանակություն ունեցող տեղեկություններ և ենթակա է համալրման այդ թվում գնումների գործընթացին վերաբերող ամփոփ տեղեկատվությամբ, գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով, բյուջեի և դրա կատարողականի վերաբերյալ մատչելի և միասնական ձևաչափով ներկայացվող տեղեկատվությամբ, իրականացվող ծրագրերի և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններով:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր բյուջեն, սակայն ո՛չ օրենքով, ո՛չ որևէ ենթաօրենսդրական ակտով չի կարգավորվում, թե ինչ մանրամասնությամբ և կառուցվածքով այն պետք է հրապարակվի: Օրենքում չկա նաև պահանջ, որ տեղեկատվություն տնօրինողը հրապարակի նախորդող տարվա բյուջեի կատարողականը: Նման պահանջ առկա է միայն «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.12.2013 թ.-ի թիվ 1524-Ն որոշմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Այսպիսով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենսդրության մեջ բավարար չափով կարգավորված չեն տեղեկատվություն տնօրինողի և հատկապես պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների տարեկան բյուջեների ու դրանց կատարողականների հրապարակման սկզբունքները, կարգը և այլ մանրամասները: Արդյունքում փաստացի պետական և տեղական ինքնակառավարման մարմինները միշտ չէ, որ հրապարակում են բյուջեները, իսկ հրապարակելու դեպքում հրապարակվում են ըստ էության կամայականորեն՝ տարբեր մանրամասնությամբ և ձևաչափով²³. նույնը վերաբերում է բյուջեի կատարողականներին: Նման իրավիճակը խիստ խնդրահարույց է այն առումով, որ հանրությունը փաստացի զրկված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ֆինանսական կառավարման կապակցությամբ տեղեկատվության հասանելիությունից, ինչի արդյունքում պարզապես չունի գործուն միջոց վերահսկելու պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը և չարաշահումների ռիսկերը: Հատկանշական է, որ 2017 թ.-ին շրջանառության մեջ դրված «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսվել է դրույթ, որով, ի տարբերություն գործող

²³ Տե՛ս <http://www.mes.am/hy/gerakaxndirner/>, <https://www.mfa.am/hy/budget/>, <http://moj.am/page/statistics>:

օրենքի, մանրամասնեցվում է տեղեկատվություն տնօրինողի պարտականությունը հրապարակելու իր բյուջեն, բյուջեի նախագիծը, բյուջեի կատարման հաշվետվությունը, աուդիտի հաշվետվությունները:

Անհրաժեշտ ենք համարում պրոակտիվ հրապարակվող տեղեկությունների ցանկը համալրել նաև գնումների գործընթացի վերաբերյալ որոշակի ամփոփ տեղեկատվությամբ: Թեև գնումների գործընթացին վերաբերող մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ գնումների տարեկան հաշվետվությունը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, կնքված պայմանագրի մասին հայտարարությունը, գնումների պլանը, գնումների հայտարարությունը, հրավերը, հրապարակվում են տեղեկագրում, և հանրությունը հնարավորություն ունի համապատասխան կայք(եր)ի միջոցով մանրամասն ծանոթանալու գնման գործընթացին առնչվող փաստաթղթերին, անհրաժեշտ ենք համարում յուրաքանչյուր մարմնի պաշտոնական կայքում գնման ընթացակարգի վերաբերյալ առավել հակիրճ և ամփոփ տեղեկատվության հրապարակումը, որը կներառի նաև **գնման ձևի ընտրության հիմնավորումը**:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը, ի թիվս այլ տեղեկությունների, պարունակում է պատվիրատուի անվանումը, գնման անհրաժեշտությունը և **գնման ձևի ընտրության հիմնավորումը**, հրավերը, հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները, հայտերով ներկայացված գները, հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները, գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը և այլ տեղեկություններ: Նշված արձանագրությունը պարունակում է էական և հանրային վերահսկողության տեսանկյունից այն անհրաժեշտ տեղեկությունները, որոնք պրոակտիվ հրապարակելու դեպքում հնարավորություն կտան հանրային վերահսկողություն իրականացնելու տվյալ մարմնի/կազմակերպության գործունեության նկատմամբ գնումների իրականացման գործընթացում: Արձանագրենք նաև, որ գնման ընթացակարգի արձանագրությունը տեղեկագրում հրապարակելու պահանջ նախատեսված չէ նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով (պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում («Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, մաս 4/), մինչդեռ գնման ձևի ընտրության հիմնավորման հրապարակումը էական նշանակություն ունի արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնելու համար:

Անհրաժեշտ ենք համարում պրոակտիվ հրապարակվող տեղեկությունների ցանկը համալրել նաև գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով:

Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (հոդված 16) սահմանում է, որ օրենքով նախատեսված պահպանման ժամկետները լրանալուց հետո գաղտնիք կազմող տեղեկությունները սահմանված կարգով գաղտնագերծվում և համարվում են ծանոթանալու համար բաց կամ ոչնչացվում են սահմանված կարգով: Այս կարգավորումը, սակայն, չի ապահովում գաղտնագերծված տեղեկատվության լիարժեք մատչելիությունը հանրության համար: Խնդիրն առաջին հերթին այն է, որ հասարակությունը հնարավորություն չունի հանրամատչելի կերպով տեղեկանալու տեղեկատվության գաղտնագերծման մասին (մանրամասն տե՛ս «Տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող խնդիրները պետական և ծառայողական գաղտնիքի ապահովման բնագավառում» բաժինը):

Արդյունավետ հանրային վերահսկողության, ինչպես նաև հանրային մարմինների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով անհրաժեշտ ենք համարում պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը համալրել նաև համապատասխան մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությամբ:

Միջազգային իրավունք և փորձագիտական փաստաթղթեր

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին եվրոպական կոնվենցիայի» 10-րդ հոդվածի և դրա բացատրական զեկույցի 71-րդ կետի համաձայն՝ պետական մարմինն իր նախաձեռնությամբ և ըստ անհրաժեշտության պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հրապարակելու իր մոտ առկա պաշտոնական փաստաթղթերը թափանցիկությունն ու արդյունավետ կառավարումը ապահովելու և հասարակությանը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուծման գործում օգնելու համար. կոնվենցիան խրախուսում է ազգային այնպիսի օրենսդրության ընդունումը, որը նախատեսում է պաշտոնական փաստաթղթերի հրապարակում սեփական նախաձեռնությամբ:

«Ցվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթղթի 10-րդ սկզբունքի 2 կետի համաձայն՝ հանրությանը պետք է հասանելի լինի անվտանգության ոլորտին, դրանում գործող մարմիններին վերաբերող տեղեկատվություն, որը պետք է ի թիվս այլնի ներառի գերատեսչության և պատկան մարմնի բյուջեները և դրանց տարեվերջյան ֆինանսական հաշվետվությունները՝ յուրաքանչյուրն իր հիմնական տողերով:

«Article 19» իրավապաշտպան հասարակական կազմակերպության մշակած սկզբունքների համաձայն՝ պետական մարմինները պարտավոր են, ի թիվս այլ տեղեկատվության, հրապարակել տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է գործում պետական մարմինը, ներառյալ **ծախսերը** (տե՛ս 2-րդ սկզբունքը):

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը համալրել գնումների գործընթացին վերաբերող ամփոփ տեղեկատվությամբ, գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով, բյուջեի և դրա կատարողականի

վերաբերյալ մատչելի և միասնական ձևաչափով ներկայացվող տեղեկատվությամբ (մանրամասնեցված կարգը կարող է սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ), իրականացվող ծրագրերով և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններով:

Խնդիր 10

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգի այլ խախտումները առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Միննույն ժամանակ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվությունը խիստ անհամաչափ է և չի ներառում տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների՝ տեղեկատվության մատչելիության ապահովման պարտականությունը չկատարելու բոլոր դեպքերը:

Վերլուծություն

Վարչական և քրեական օրենսդրությունները ներկայումս սահմանում են պատասխանատվության հետևյալ դեպքերը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդված. Տեղեկություն տալու պարտականությունը չկատարելը

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեններից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 97⁵ և 97⁶ հոդվածներ. Հոդված 97⁵. Վթարի փաստը թաքցնելը, վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելը

«Միջուկային տեղակայանքում, ռադիոակտիվ թափոնների տեղակայանքում, իոնացնող ճառագայթման աղբյուրում վթարի փաստը թաքցնելը կամ վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը, շրջակա միջավայրի ճառագայթային աղտոտվածությանը վերաբերող տեղեկությունները թաքցնելը, իրավասու կազմակերպություններին ճառագայթային իրավիճակի վերաբերյալ

սխալ տեղեկություններ հաղորդելը առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:

Հոդված 97՝ Միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը կամ աղավաղելը

«Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը կամ աղավաղելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի չափով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդված. Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը

«1. Պաշտոնատար անձի կողմից բնակչությունից մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անգուշությամբ պատճառել է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 278-րդ հոդված

«1. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երևույթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը կամ աղավաղելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝
- 1) կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով,
 - 2) անգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

ա/ Անդրադառնալով տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվություն նախատեսող ՎԻՎՕ 189⁷ հոդվածին՝ պետք է արձանագրենք, որ այն ունի մի շարք թերություններ.

1/ պատասխանատվություն է նախատեսում միայն հայցված տեղեկատվությունը չտրամադրելու համար և պատասխանատվություն չի նախատեսում այդ տեղեկատվությունը թերի տրամադրելու, ինչպես նաև սահմանված ժամկետում չտրամադրելու համար,

2/ պատասխանատվություն չի նախատեսում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու համար (այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գործողություններում բացակայում է պաշտոնեական կեղծիքի հանցակազմը),

3/ պատասխանատվություն չի նախատեսում օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար, ինչը նվազ կարևոր չէ, քան հայցված տեղեկատվությունը տրամադրելը,

4/ վերջապես նշված հոդվածով նախատեսված սանկցիաները ակնհայտ անհամաչափ են արարքի վտանգավորությանը: Օրինակ՝ հոդվածի 1-ին մասով սահմանվող պատասխանատվության նվազագույն շեմը 10.000 ՀՀ դրամն է, ինչն ակնհայտորեն չի կարող զսպող և պատժիչ նշանակություն ունենալ նման հանրային կարևորություն ունեցող հարցում տեղեկատվություն տնօրինողի ապօրինի վարքագիծը կանխելու առումով: Ավելին, կարևոր է այն հանգամանքը, որ նշված դրույթը, այդ թվում՝ պատժամիջոցը, սահմանվել է 16 տարի առաջ և այլևս փոփոխության չի ենթարկվել, այնինչ 2003 թվականի համեմատությամբ ՀՀ-ում գրանցվել է շուրջ 64 տոկոս գնաճ, և համապատասխանաբար դրամն արժեզրկվել է առնվազն նույն չափով, նույնիսկ եթե անտեսենք այլ տնտեսական ցուցանիշները:

Մինևնույն ժամանակ եթե նշված տուգանքի չափը համեմատենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նույն գլխում («Կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ») նախատեսված այլ զանցակազմերի և հատկապես տեղեկատվության հանրամատչելիության հետ փոխկապակցված որոշ զանցակազմերի համար սահմանված տուգանքների չափերի հետ, առավել ակնհայտ կդառնա դրա անհամաչափ ցածր լինելը: Այսպես, օրինակ, այնպիսի զանցանքի համար, ինչպիսին է պաշտոնական ու հանրային միջոցառումների ժամանակ ոչ հայերեն էլույթների համաժամանակյա հայերեն թարգմանությունը չապահովելը, նախատեսված է տուգանք՝ քաղաքացիների նկատմամբ՝ 100000-200000 ՀՀ դրամի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200000-300000 չափով (ՎԻՎՕ օրենսգրքի 189⁴ հոդված), իսկ ՀՀ պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից)

գործավարությունը ոչ հայերեն վարելը, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները և գովազդները ոչ հայերեն ձևավորելը, գովազդի ընդհանուր պահանջները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 200000-250000 ՀՀ դրամի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 250000-300000 ՀՀ դրամի չափով (ՎԻՎ օրենսգրքի 189³ հոդված):

Հատկանշական է, որ քննարկվող զանցակազմի համեմատ մի քանի անգամ ավելի մեծ տուգանք է նախատեսվում նաև պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ օրենքով նախատեսված տեղեկությունը (տվյալը) չտրամադրելու կամ սահմանված ժամկետում չտրամադրելու կամ ոչ լրիվ ծավալով տրամադրելու կամ աղավաղված տեսքով տրամադրելու կամ կեղծ տվյալ տրամադրելու համար՝ 100000 ՀՀ դրամ (ՎԻՎ օրենսգրքի 189¹⁰ հոդված):

Նույն կերպ խիստ անհամաչափ պատասխանատվություն են նախատեսում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 97⁵ և 97⁶ հոդվածները: Ինչպես բխում է նշված հոդվածների դիսպոզիցիաներից, դրանք կարգավորում են միջուկային և ճառագայթային անվտանգությանն առնչվող տվյալների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի անվտանգության ապահովման համար: Ուստի նշված տեղեկատվությունը թաքցնելն ու աղավաղելը պարունակում է խիստ վտանգավոր հետևանքների վրա հասնելու մեծ ռիսկ, և ակնհայտ է, որ սահմանված վարչական պատասխանատվությունը համաչափ չէ և չի կարող ապահովել այս բնագավառում իրավախախտումները կանխարգելելու նպատակի իրականացումը: Հետևաբար անհրաժեշտ է խստացնել նշված իրավախախտումների համար սահմանված պատժաչափերը, որոնք պետք է լինեն ավելի խիստ, քան այլ տեսակի տեղեկատվության տրամադրման պարտականությունները խախտելու համար (189⁷ հոդված):

բ/ Թե՛ օբյեկտիվ կողմի, թե՛ սուբյեկտային կազմի, թե՛ նախատեսված պատժի ակնհայտ մեղմ լինելու տեսանկյունից թերի է նաև ՀՀ քրեական օրենսգրքի՝ շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելու կամ դրանք դիտավորյալ աղավաղելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթը (հոդված 282): Այսպես, քննարկվող հոդվածը.

1/ պատասխանատվություն չի նախատեսում մարդկանց կյանքի և առողջության համար ինքնին վտանգ չներկայացնող, սակայն շրջակա միջավայրի /կենդանական և բուսական աշխարհի/ համար վտանգավոր նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու համար, ինչն առհասարակ անտրամաբանական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 282-րդ հոդվածն ընդգրկված է շրջակա միջավայրի անվտանգության, այլ ոչ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում, ինչը փաստում է, որ հանցագործության հիմնական օբյեկտը շրջակա միջավայրի անվտանգությունն է, իսկ մարդկանց առողջությունը կարող է հանդիսանալ միայն ֆակուլտատիվ

օբյեկտ.

2/ պատասխանատվություն չի նախատեսում շրջակա միջավայրին **սպառնացող վտանգի** մասին տեղեկություններ թաքցնելու կամ աղավաղելու համար, այնինչ հնարավոր են դեպքեր, երբ նման տեղեկատվությունը հասու է այն տնօրինողին դեռևս մինչև վտանգավոր հետևանքների վրա հասնելը, շրջակա միջավայրի փաստացի աղտոտումը, իսկ դրա հրապարակումը կամ իրավասու մարմնին ժամանակին հայտնելը ակնհայտորեն ավելի արդյունավետ միջոց է հետևանքներից խուսափելու տեսանկյունից.

3/ պատասխանատվություն չի նախատեսում տեղեկատվություն տնօրինող այն սուբյեկտների համար, որոնք, գործող քրեական օրենսդրության համաձայն, չեն հանդիսանում «պաշտոնատար անձ», օրինակ՝ մասնավոր հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար, որոնք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պարտավոր են անհապաղ հրապարակել այն տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է կանխել շրջակա միջավայրին սպառնացող վտանգը, ինչպես նաև այն կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար, որոնց գործունեությունը կարող է անմիջական կապ ունենալ բնական ռեսուրսների շահագործման, ինչպես նաև առավել վտանգի այնպիսի օբյեկտների շահագործման հետ, որոնց շահագործումը կամ շահագործման կանոնների խախտումը կարող է պարունակել շրջակա միջավայրի աղտոտման ռիսկ:

Հիմք ընդունելով նշվածը՝ ակնհայտ է, որ քննարկվող հոդվածը պետք է սահմանի պատասխանատվություն ոչ միայն մարդկանց կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող, այլ նաև շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու համար, ինչպես նաև սահմանի պատասխանատվություն ոչ միայն շրջակա միջավայրի աղտոտման, այլ նաև շրջակա միջավայրին անմիջականորեն սպառնացող վտանգի մասին տեղեկատվությունը թաքցնելու կամ աղավաղելու համար: Դրա հետ միասին անհրաժեշտ է պատասխանատվություն սահմանել ոչ միայն պաշտոնատար անձանց համար, այլև ընդլայնել սուբյեկտների կազմը՝ որպես սուբյեկտ նախատեսելով բոլոր անձանց, որոնք վերը նշված տեղեկատվությունը բնակչությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգը չեզոքացնելու կամ աղտոտման հետևանքները վերացնելու լիազորություն ունեցող մարմնին հայտնելու պարտականություն ունեն:

Կարևոր ենք համարում նաև քննարկվող հոդվածով նախատեսված պատժաչափի խստացումը, քանի որ գործող կարգավորման համաձայն՝ թե՛ հանրության առողջության պահպանման, թե՛ բնապահպանության տեսանկյունից խիստ կարևոր այս տեղեկատվությունը թաքցնելու կամ աղավաղելու համար նախատեսված է բացառապես ազատագրկման հետ չկապված պատիժ, ավելին, տուգանքի մասով նախատեսված է ընդամենը 300000–500000 ՀՀ դրամի չափը: Այլ կերպ ասած՝ նշված տեղեկատվությունը տնօրինողը, թաքցնելով այն և այդպիսով անմիջական վտանգի տակ դնելով հնարավոր է մի ողջ էկոհամակարգ և ազգաբնակչության առողջությունն ու կյանքը, կարող է պատժվել ընդամենը 300000

ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, ինչն ակնհայտ ոչ բավարար միջոց է հանցագործության կանխարգելման նպատակի իրագործման տեսանկյունից:

Առավել անհամաչափ է քննարկվող հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվությունը, որը նախատեսված է այն դեպքերի համար, երբ շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը առաջացնում է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ, որոնց տակ կարող ենք հասկանալ նաև մարդկանց զանգվածային մահ, բուսական աշխարհի զանգվածային ոչնչացում և այլն: Այս արարքի համար սահմանված ազատազրկման տեսքով պատժի չափը առավելագույնը 6 տարի է: Այլ կերպ ասած՝ տեղեկատվությունը թաքցրած սուբյեկտի գործողությունը կարող է հանգեցնել ընդհուպ էկոցիդի կամ մարդկանց զանգվածային մահվան դեպքերի, մինչդեռ վերջինս պատասխանատվություն կկրի առավելագույնը 6 տարի ժամկետով:

Հատկանշական է, որ նման պատժաչափ կարող է կիրառվել գործող քրեական օրենսգրքով այնպիսի արարքների համար, ինչպիսիք են թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը երկու կամ ավելի անձանց կամ անչափահասին հակելը (հոդված 272), թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելը (հոդված 269), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը (հոդված 267¹⁾), իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը (հոդված 266) և այլն: Թեև նշված հանցագործություններն ուղղված են բնակչության առողջության դեմ և դրսևորվում են միայն ուղղակի դիտավորությամբ, սակայն քննարկվող արարքների համեմատ կարող են գնահատվել որպես առավել նվազ վտանգավոր: Հետևաբար գտնում ենք, որ հիմնական պատիժը պետք է էականորեն խստացվի:

Վերոգրյալի հետ մեկտեղ նույն հիմնավորմամբ անհրաժեշտ է համաչափորեն խստացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 278-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1/ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդվածը փոփոխել՝

ա) նախատեսելով պատասխանատվություն տեղեկատվությունը թերի տրամադրելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու (այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գործողություններում բացակայում է պաշտոնական կեղծիքի հանցակազմը), տեղեկատվությունը սահմանված ժամկետում չտրամադրելու, ինչպես նաև օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար.

բ) սահմանելով առավել համաչափ պատիժներ, այն է՝ հոդվածի 1-ին մասով սահմանվող պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 30000 ՀՀ դրամ, իսկ

առավելագույնը՝ մինչև 150000 ՀՀ դրամ, հոդվածի 2-րդ մասով սահմանվող պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 150000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 300000 ՀՀ դրամ:

2/ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 97⁵ և 97⁶ հոդվածները փոփոխել՝ սահմանելով առավել համաչափ պատիժներ, այն է՝ սահմանվող տուգանքի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 150000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 300000 ՀՀ դրամ:

3/ ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածը փոփոխել.

ա) 282 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ կերպ.

«Շրջակա միջավայրի համար վտանգ ստեղծող իրադարձությունների, փաստերի, երևույթների, մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ վտանգավոր կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը այն անձի կողմից, որն ուներ պարտականություն՝ այդ մասին տեղեկացնելու բնակչությանը կամ նշված վտանգները չեզոքացնելու կամ աղտոտման հետևանքները վերացնելու լիազորություն ունեցող մարմին».

բ) հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված տուգանքի տեսքով պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 3.000.000 ՀՀ դրամ, սահմանել նաև հիմնական պատժի այլ տեսակ, այն է՝ պատիժ՝ 1-3 տարի ազատազրկման տեսքով.

գ) հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված ազատազրկման տեսքով պատիժը սահմանել 4-10 տարի:

4/ ՀՀ քրեական օրենսգրքի 278-րդ հոդվածը փոփոխել և.

ա) 278-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված տուգանքի տեսքով պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 3.000.000 ՀՀ դրամ, սահմանել նաև հիմնական պատժի այլ տեսակ, այն է՝ 1-3 տարի ազատազրկման տեսքով.

բ) հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված ազատազրկման տեսքով պատիժը սահմանել 4-10 տարի:

Խնդիր 11

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությունը չի սահմանում դրույթ, որով կարգելվի որևէ պարագայում մերժել դատարանում քննվող վեճին առնչվող ապացուցողական նշանակություն ունեցող ցանկացած տեղեկատվության տրամադրումը դատավարության կողմերին:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը

սահմանում է այն դեպքերը, երբ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը:

Մինևույն ժամանակ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է մի շարք դեպքեր, երբ տեղեկատվության հասանելիությունը, հետևապես նաև վերը նշված տեղեկությունների տրամադրումը չի կարող սահմանափակվել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմը չի սահմանում դրույթ այն մասին, որ որևէ պարագայում չի կարող մերժվել դատարանում քննվող վեճին առնչվող ապացուցողական նշանակություն ունեցող ցանկացած տեղեկատվության տրամադրումը դատավարության կողմերին:

«Ցվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթղթի 27-րդ սկզբունքը ամրագրում է, որ ազգային անվտանգության վկայակոչումը չի կարող հիմք լինել իրավասու դատարանի կողմից արդար դատաքննության հիմնարար իրավունքը խախտելու համար, և այն դեպքերում, երբ պետական մարմինը փորձում է դատաքննության ընթացքում որևէ տեղեկություն գաղտնի պահել ազգային անվտանգության հիմքով, դատարանը պետք է լիազորված լինի քննելու այդ տեղեկությունը՝ որոշելու համար, թե արդյոք այն կարելի է չիրապարակել: Դատարանը չպետք է պարզապես մերժի առարկությունը՝ առանց տեղեկատվությունն ուսումնասիրելու:

Փաստաթղթի 29-րդ սկզբունքը ամրագրում է, որ դատարանը չի կարող ազգային անվտանգության հիմքով արգելել ամբաստանյալին մասնակցել իր գործով դատաքննությանը և ոչ մի դեպքում չի կարող մեղադրական դատավճիռ կայացնել մեղադրյալի նկատմամբ կամ ազատազրկել նրան այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք նա հնարավորություն չի ունեցել ուսումնասիրելու և հերքելու:

ՀՀ օրենսդրությամբ դրույթ չսահմանելը այն մասին, որ դատարանում քննվող վեճին առնչվող ապացուցողական նշանակություն ունեցող ցանկացած տեղեկատվության տրամադրումը դատարանին և դատավարության կողմերին որևէ պարագայում չի կարող մերժվել, պարունակում է դատական վեճի լուծման համար անհրաժեշտ գաղտնի տեղեկատվությունը այն տիրապետողի՝ դատարան ներկայացնելուց հրաժարվելու ռիսկ, այդ թվում՝ հենց տեղեկատվություն տրամադրելը մերժելու կապակցությամբ հարուցված դատական գործերով: Մինևույն ժամանակ դա հանգեցրել է դատավարական օրենսգրքերում իրարից տարբերվող և որոշ դեպքերում ոչ իրավաչափ օրենսդրական կարգավորումների առկայության:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանները և մյուս ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք, որոնց ծանոթացման համար ներկայացվում կամ այլ կերպ հաղորդվում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, պետք է նախապես ստորագրություն տան այդպիսի տվյալների չիրապարակման մասին: **Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում պաշտպանը և մյուս ներկայացուցիչը, բացի օրինական ներկայացուցչից, զրկվում են քրեական դատավարությանը մասնակցելու իրավունքից, իսկ մյուս անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ չեն ստանում**»: Այսինքն՝ ամբաստանյալը կամ տուժողը կարող են ընդհուպ զրկվել ապացուցողական նշանակություն ունեցող նյութերի հասանելիությունից, եթե չեն ստորագրում պարտավորագիր պետական գաղտնիք պարունակող

տեղեկությունները չհրապարակելու մասին: Նման եղանակով՝ պայմանով, ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվության տրամադրումը բացառապես ոչ իրավաչափ է, քանի որ այդպես խախտվում է ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև տուժողի՝ խախտված իրավունքը վերականգնելու և արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունքը: Մինևույն ժամանակ այս միջոցը գործուն և պիտանի համարվել չի կարող, քանի որ դատավարության մասնակցի ստորագրություն տալը չէ, որ երաշխավորում է օրենքով պահպանվող տեղեկատվության չտարածումը, այլ նման երաշխիք կարող է հանդիսանալ բացառապես օրենքով նախատեսված պատասխանատվությունը: Միաժամանակ լիովին իրավաչափ կլինի, որ դատարանը դատավարության մասնակիցներին նախազգուշացնի օրենքով պահպանվող, այս դեպքում՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը տարածելու համար սահմանված պատասխանատվության մասին, այդ թվում՝ ստորագրություն վերցնելու կամ պարզապես բանավոր նախազգուշացնելու միջոցով:

Ինչ վերաբերում է մյուս դատավարական օրենսգրքերին, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության, ապա դրանք համապատասխանաբար 17-րդ և 8-րդ հոդվածներում սահմանում են ոչ միայն պետական գաղտնիքի, այլ նաև օրենքով պահպանվող այլ տվյալներ պարունակող տեղեկատվության հասանելիությունը դատավարության կողմերին և իրավաչափորեն չեն պարունակում այդ հասանելիությունը սահմանափակող դրույթներ՝ փոխարենը նախատեսելով օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ դրույթ:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և դատավարական օրենսգրքերով նախատեսել լրացուցիչ երաշխիքներ, երբ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, այն է՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարությունների շրջանակում գործի էլքի համար ապացուցողական նշանակություն ունեցող նյութերի/ապացույցների տրամադրումը դատավարության մասնակիցներին՝ վերջիններիս արդար դատաքննության հիմնարար իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու նպատակով:

Խնդիր 12

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և փոխկապակցված օրենսդրությունը չեն նախատեսում օրենքով պաշտպանված, այդ թվում՝ անձնական կյանքի գաղտնիք պարունակող տեղեկատվություն ստանալու առումով որևէ արտոնություն փաստաբանների համար:

Վերլուծություն

Թեև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով, սակայն այդ դրույթին հաջորդող դրույթը նախատեսում է, որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են** տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները՝ **բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում:**

Այլ կերպ ասած՝ նշված օրենքի իմաստով փաստաբանի հարցմանը պատասխանելու պարտականություն ունեն միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել այն դեպքում, երբ այն օրենքով պահպանվող գաղտնիք է պարունակում, ճիշտ այնպես, ինչպես կմերժվեր այլ քաղաքացու հարցումը. մինևույն ժամանակ օրենսդրությամբ սահմանված չէ պատասխանատվություն վերը նշված սուբյեկտների՝ փաստաբանական հարցմանը չպատասխանելու, թերի կամ սահմանված ժամկետից ուշ պատասխանելու համար (չհաշված Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով տեղեկատվություն տնօրինող համարվող սուբյեկտների համար սահմանված ընդհանուր պատասխանատվությունը):

ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի ընդունած «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի 21-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինները պարտավոր են իրավաբանների համար ապահովել իրենց տրամադրության կամ իրենց վերահսկողության տակ գտնվող անհրաժեշտ տեղեկությունների, գործերի ու փաստաթղթերի բավականաչափ վաղօրոք մատչելիությունը, որպեսզի իրավաբանները հնարավորություն ունենան արդյունավետ իրավաբանական օգնություն ցույց տալու իրենց հաճախորդներին:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: 2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Նշված սահմանադրական իրավադրույթի միջոցով փաստաբանությանը վերապահվում է սահմանադրաիրավական կարգավիճակ՝ այն դիտարկելով որպես անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման՝ պետության պոզիտիվ պարտականության հիմնական կառուցակարգ: «2015 թ.-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս....: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ

իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես **որակյալ իրավաբանական օգնություն** տրամադրող ինստիտուտի դերը»²⁴:

Փաստաբանի տեղեկատվություն պահանջելու իրավունքը փաստաբանի սահմանադրական կարգավիճակի գործնական իրացման անօտարելի տարրերից է, առանց որի արդյունավետ գործառման՝ անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդյունավետությունը էականորեն նվազում է: Ուստի որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելու իրատեսության առումով շատ կարևոր է փաստաբանական հարցման ինստիտուտի արդյունավետության բարձրացումը, հատկապես որոշ՝ օրենքով պահպանվող անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության անխոչընդոտ տրամադրումը փաստաբանին՝ իր վստահորդին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով: Ընդգծենք նաև, որ այդ տվյալների անխոչընդոտ տրամադրումը փաստաբանին արդարացված է նաև այն առումով, որ գործող օրենսդրությունը փաստաբանի համար սահմանում է ձեռք բերված տվյալները չհրապարակելու պարտականություն՝ այդ կերպ սահմանելով այդ տվյալների բավարար պաշտպանության մակարդակ («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է չհրապարակել փաստաբանական գաղտնիքը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գաղտնիք են համարվում այդ թվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն):

Ինչպես նշվեց, գործող իրավակարգավորումները տեղեկատվության մատչելիության ապահովման առումով որևէ տարբերակում չեն դնում փաստաբանի և տեղեկատվություն հայցող այլ սուբյեկտների միջև. այսպիսի մոտեցումը առերևույթ չի համապատասխանում փաստաբանական հարցման հանրային նշանակությանը և փաստաբանության սահմանադրական ինստիտուտի հանրային-իրավական կարգավիճակի առանձնահատկություններին, ուստի այս առումով անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որոնք կկարգավորեն առնվազն այն շրջանակի խնդիրները, որոնց պրակտիկորեն բխվում է փաստաբանական համայնքը իրավաբանական օգնություն տրամադրելիս:

Այս առումով հարկ է ընդգծել ՀՀ փաստաբանների պալատի դիրքորոշումը. այն արդեն հանդես է եկել մի շարք օրենսդրական փոփոխություններ իրականացնելու նախաձեռնությամբ և շրջանառության մեջ է դրել «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմինների» մասին օրենքում լրացում կատարելու մասին և

²⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 05.04.2016 թ. թիվ ՍԴՈ-1263 որոշում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1263.pdf>:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը²⁵: Փաստաբանների պալատը առաջարկում է վերը նշված օրենքներով սահմանել փաստաբանական հարցումներին պատասխանելու պարտականությունը, հստակ ժամկետները և մերժման հիմքերը, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանել որակյալ զանցակազմ, որը վարչական պատասխանատվություն կնախատեսի տեղեկատվություն տնօրինողի փաստաբանական հարցմանն ապօրինաբար չպատասխանելու համար: Որպես նախաձեռնության հիմնավորում՝ Փաստաբանների պալատը նշում է, որ տեղեկատվության մատչելիության առումով օրախնդիր է հատկապես քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների և պետական ռեգիստրի գործակալության, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների՝ փաստաբանական հարցումների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի հարցը, քանի որ փաստաբաններից ստացվող բողոքները հիմնականում վերաբերում են հատկապես նշյալ մարմինների՝ փաստաբանների հետ ոչ պատշաճ հաղորդակցվելուն:

Հաշվի առնելով այն, որ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքը չի նախատեսում պատասխանատվություն փաստաբանական հարցմանը ապօրինաբար չպատասխանելու, թերի կամ ուշացմամբ պատասխանելու համար, ինչպես նաև այն, որ փաստաբանական հարցմանը պատասխանելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, ավելի լայն է, քան «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկատվություն տնօրինողների շրջանակը, անհրաժեշտ է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նախատեսել նոր զանցակազմ:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1/ «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» և «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքներում կատարել լրացումներ՝ նախատեսելով ՔԿԱԳ մարմինների, իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող գործակալության և ազգային անվտանգության մարմինների պարտականությունը՝ 5-օրյա ժամկետում պատասխանելու փաստաբանի ներկայացրած հարցմանը և տրամադրելու նրան հայցվող փաստաթուղթը/տեղեկատվությունը, եթե հարցման մեջ փաստաբանը նշել է այն վստահորդի անունը, ազգանունը (անվանումը), որին իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով է կատարվել հարցումը:

²⁵ Տե՛ս http://advocates.am/images/khorhri_voroshumner/2019/lramshakvac_ViVO-Amendment.pdf:

2/ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարել լրացում՝ նախատեսելով պատասխանատվություն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում թվարկված՝ փաստաբանական հարցման հասցեատեր հանդիսացող սուբյեկտների համար՝ նրանց՝ փաստաբանական հարցմանն ի պատասխան տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելու, տեղեկատվության տրամադրումը ապօրինաբար մերժելու, այն թերի տրամադրելու կամ ժամկետի խախտմամբ՝ տրամադրելու համար: Որպես վարչական պատասխանատվության միջոց առաջարկվում է նախատեսել տուգանք 50.000-150.000 ՀՀ դրամի չափով, իսկ նույն արարքը վարչական տույժ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար՝ 150.000-300.000 ՀՀ դրամի չափով:

Խնդիր 13

Խնդրի նկարագրություն

Քննչական մարմիններն ու ոստիկանությունը գործնականում մերժում են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը, ինչպես նաև կարճված քրեական գործի նյութերը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրելու վերաբերյալ հարցումները, մինչդեռ վարույթի ավարտից հետո վերջիններս պետք է առաջնորդվեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կանոններով:

Վերլուծություն

Ուսումնասիրության շրջանակում կատարված հարցումների պատասխաններից պարզվել է, որ քննչական մարմիններն ու ոստիկանությունը քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը, ինչպես նաև կարճված քրեական գործի նյութերը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրելու հարցում առաջնորդվում են բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ մերժելով նման հարցումները՝ պայմանավորված օրենսգրքով նման կարգավորման բացակայությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը իսկապես վարույթին մասնակից չդարձած կամ հաղորդում ներկայացնող անձ չհանդիսացող անձանց այդ նյութերը տրամադրելու կարգ չի նախատեսում):

Այսպես, քննչական մարմիններ, ոստիկանություն և դատախազություն կատարվել են հարցումներ՝ խնդրելով պարզաբանել, թե ինչպես են վարվում և ինչ կարգավորումներով են առաջնորդվում նրանք քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը կամ կարճված քրեական գործի նյութերը կամ դրանց կապակցությամբ տեղեկատվություն տրամադրելու մասին վարույթի մասնակից չհանդիսացած անձանցից դիմումներ ստանալիս: Հարցումներին ի պատասխան՝ Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունը, Քննչական կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը և Գլխավոր դատախազությունը հայտնել են, որ առաջնորդվում են ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքով և գործի նյութերը չեն տրամադրում գործին մասնակից չհանդիսացող անձանց, քանի որ նման կարգ սահմանված չէ, իսկ Ոստիկանությունը նշել է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդումը ներկայացնող անձին: Միաժամանակ նման հարցումներ ստանալու կապակցությամբ քննչական մարմինները հաշվառում չեն վարում:

Խնդիրն այն է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը, ինչպես նաև կարճված քրեական գործի նյութերը, առնվազն այդ որոշումներն անբողոքարկելի դառնալու պահից սկսած՝ այլևս չեն կարող համարվել նախաքննության գաղտնիք, քանի որ հայտարարված է նախաքննության ավարտ: Միաժամանակ նշված նյութերի՝ վարույթի մասնակիցներից բացի այլ անձանց տրամադրելու կարգ սահմանված չլինելը քրեական դատավարության օրենսգրքով տրամաբանական է և հիմնավոր՝ հաշվի առնելով այն, որ քրեական դատավարության օրենսդրությունը գործում է քրեական վարույթի շրջանակում և ոչ դրանից դուրս:

Ոստի վարույթից դուրս ժամանակահատվածում քննարկվող նյութերի, դրանցում առկա տեղեկատվության տրամադրման կանոնների նկատմամբ գործում է առաջին հերթին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն իր սահմանափակումներով, և ակնհայտ է, որ վարույթ իրականացնող մարմինները գործով վարույթն ավարտված լինելու պայմաններում պետք է առաջնորդվեն նշված օրենսդրությամբ՝ տեղեկատվության որևէ այլ հարցման նկատմամբ կիրառման ենթակա ընդհանուր օրենսդրական կարգավորումներով:

Այլ կերպ ասած՝ քննչական մարմինը կամ ոստիկանությունը, ստանալով հարցում, առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կանոններով, հաշվի առնելով նաև տեղեկատվության ազատության՝ մասնավոր կյանքի, առևտրային գաղտնիքի, պետական գաղտնիքի և այլ հիմքերով սահմանափակումների հնարավոր առկայությունը, պետք է որոշում կայացնի տեղեկատվությունը/նյութը ամբողջությամբ կամ մասնակի (այդ թվում՝ որոշակի ծածկագրմամբ) տրամադրելու կամ մերժելու մասին, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում նշված սահմանափակումները կիրառելու հարցը որոշելիս հաշվի առնի նաև հանրային շահի և մյուս շահերի հավասարակշռման սկզբունքը:

Ավելին, կարծում ենք, որ ցանկացած և հատկապես մասնավոր կյանքի հիմքով սահմանափակում պետք է հաղթահարվի, և տեղեկատվությունը/նյութը տրամադրվի հայցողին բոլոր այն դեպքերում, երբ հարցումը վերաբերում է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ իրականացված վարույթներին: Այս մոտեցումը բխում է նաև կոռուպցիոն երևույթներին վերաբերող տեղեկությունների մատչելիության մասին ընդունված միջազգային չափորոշիչներից²⁶: Միաժամանակ

²⁶ Այսպես, Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տրված կարծիքում նշել է, որ կարող են լինել ծայրահեղ իրավիճակներ, երբ պաշտոնյաները պետք է կարողանան ՋԼՄ-ների համար բացահայտել նույնիսկ շատ գաղտնի տեղեկություններ, օրինակ՝ անվտանգության գործակալության կատարած խոշոր իրավախախտումների դեպքերին առնչվող տվյալներ: Նույն կերպ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Գուջան ընդդեմ Մոլդովայի» գործով կայացված որոշմամբ,

հարկ է ընդգծել նաև, որ ՀՀ գլխավոր դատախազի «Քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները հաստատելու մասին» 2012 թ.-ի հրամանով ևս առանձնահատուկ կարևորվել է տեղեկատվության առավել մատչելիության ապահովման անհրաժեշտությունը նույնիսկ քննության փուլում գտնվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով: Մասնավորապես հրամանի 14-րդ կետի համաձայն՝ հանրային շահի առկայության պայմաններում դատախազությունը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու կոռուպցիոն հանցագործությունների կապակցությամբ քննվող քրեական գործերի մասին տեղեկատվության հասանելիությունը հասարակության առավել լայն շրջանակներին:

Առաջարկություններ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին, Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետին, Ոստիկանության պետին՝ արձակել հրամաններ/շրջաբերականներ, որոնցով իրենց ենթակայության տակ գտնվող իրավասու, այդ թվում՝ արխիվացված գործերի նյութերի համար պատասխանատու պաշտոնատար անձանց կկարգադրվի.

1/ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը («նախապատրաստված նյութերը»), ինչպես նաև կարճված քրեական գործի նյութերը և դրանց կապակցությամբ հայցված տեղեկատվությունը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրել ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ այդ թվում հաշվի առնելով տեղեկատվության մատչելիության օրենքով նախատեսված սահմանափակումները.

2/ ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում (Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ) ընդգրկված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը և կարճված քրեական գործի նյութերը և դրանց կապակցությամբ հայցված տեղեկատվությունը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրել անկախ դրանցում տեղեկատվության մատչելիության սահմանափակման հիմքով

անդրադառնալով խնդրո առարկա հարցին, ճանաչել է պաշտոնատար անձանց՝ ազդարարման հիմնարար իրավունքը: Դատարանը նշում է, որ քաղաքացիական ծառայողին իր աշխատանքի ընթացքում կարող է հասանելի լինեն ներքին, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ, որոնց հրապարակումը համապատասխանում է հասարակության մեծ հետաքրքրությանը, ուստի պետական ծառայողի՝ աշխատավայրում ապօրինի կամ ոչ իրավաչափ գործողությունների մասին ազդարարումը որոշ հանգամանքներում պետք է պաշտպանվի: Հանրային հետաքրքրությունը կարող է լինել այնքան մեծ, որ գերակայի նույնիսկ օրենքով սահմանված գաղտնիության պահպանման պարտականությանը: «Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթում ևս (սկզբունք 37) կարևորվում է պետական մարմինների աշխատակիցների՝ հանրային շահ ներկայացնող տեղեկությունների իրավական պատասխանատվություն չառաջացնող բացահայտման իրավասությունը, հատկապես տեղեկությունների արդեն կատարված, ներկայումս կատարվող կամ ապագայում հավանաբար կատարվելիք իրավախախտումների մասին:

պաշտպանված որևէ տեղեկատվության առկայությունից՝ բացառությամբ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների, որոնք ուղղակիորեն չեն պարունակում հանցավոր արարքի մասին տեղեկություններ:

Խնդիր 14

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությամբ բավարար հստակությամբ սահմանված չէ *առևտրային գաղտնիք* հասկացությունը, ինչը պարարտ հող է ստեղծում կամայական մեկնաբանությունների և տեղեկատվության ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման համար:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե այն պարունակում է առևտրային գաղտնիք (հոդված 8): Միաժամանակ օրենքով չի բացահայտվում առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը:

Առևտրային գաղտնիք հասկացությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ «Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»²⁷:

Որոշ իրավական ակտերով փորձ է կատարվել հստակեցնելու առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը: Մասնավորապես նման հստակեցում է կատարվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որի 16-րդ հոդվածը անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանություն է սահմանել չբացահայտված տեղեկատվության նկատմամբ: Հոդվածում նշված է այն տեղեկատվությունը, որը համարվում է *չբացահայտված*.

- տեխնիկական, կազմակերպչական կամ առևտրային տեղեկությունները, այդ թվում՝ արտադրության գաղտնիքները (նոու-հաու), այն պայմանով, որ «երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր որոշակի առևտրային արժեք, բայց բացակայում են օրինական հիմքերով դրանց ազատորեն ստանալու հնարավորությունները», և «օրինականորեն տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռնարկվել են տեղեկատվությունն առկա հանգամանքներում գաղտնի պահելու ողջամիտ քայլեր, որոնք կարող են արտահայտված լինել համապատասխան պայմանագրի կնքման և (կամ) դրա պայմանների ապահովման,

²⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր (այսուհետ՝ ՀՀՊՏ) 1998.08.10/17(50), 05.05.1998 թ.:

նախագգուշական այլ միջոցների ձեռնարկման տեսքով՝ պահպանելով այն նույնականացման տեղեկակիրներում՝ փաստաթղթերի, համակարգչային ֆայլերի, տեսագրման և ձայնագրման ժապավենների, տվյալ տեղեկատվությունը մարմնավորող իրի տեսքով և այլն.

- արտադրության եղանակները, քիմիական բանաձևերը, գծագրերը, փորձնական նմուշները, ապրանքի վաճառքի և բաշխման եղանակները, պայմանագրի ձևերը, գործարար ծրագրերը, պայմանագրային գների մանրամասնությունները, սպառողների մասնագիտական գործունեության ոլորտները (պրոֆիլները), գովազդման ռազմավարությունը, մատակարարների կամ հաճախորդների ցուցակները, համակարգչային ծրագրային ապահովումները, տվյալների հիմնապաշարները (բազաները) և այլն:

Նույն հոդվածը սահմանում է, որ չբացահայտված տեղեկատվություն չեն կարող համարվել վարչական բնույթի դիտարկումների միջոցով հավաքված հաշվետվություններում ընդգրկված նյութերը և տեղեկությունները²⁸:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն տեղեկությունների շրջանակը, որոնք առևտրային գաղտնիք չեն համարվում: Դրանք են՝

1) գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում գրառման ենթակա տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

2) հողամասի և շինությունների կադաստրային արժեքի (գուտ եկամտի) և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող տվյալները²⁹:

«Առուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը որպես առևտրային գաղտնիք է սահմանում առուդիտորի աշխատանքային փաստաթղթերը (հոդված 13, մաս 3) և առուդիտորական հաշվետվությունը (հոդված 16, մաս 2):

Բոլոր վերոգրյալ օրենսդրական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ՀՀ օրենսդրությամբ բավարար հստակությամբ սահմանված չէ *առևտրային գաղտնիք* հասկացությունը, իսկ տարբեր իրավական ակտերում ամրագրված սահմանումների և տեղեկությունների շրջանակի հակասությունները պարարտ հող են ստեղծում կամայական մեկնաբանությունների և տեղեկատվության ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման համար:

Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից ստացված տվյալների՝ 2009 թ.-ից մինչև 2020 թ.-ը վարչական և քաղաքացիական դատարանները քննել են առևտրային գաղտնիքին առնչվող ընդհանուր առմամբ թվով 36 գործ: Քննված 36 գործերից 17-ը քննվել է Վարչական դատարանում, իսկ մնացյալը՝ ընդհանուր իրավասության դատարանում: Այս գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանները և կողմերը թեև հաճախ են հղում կատարում վերը թվարկված իրավական ակտերի նորմերին, սակայն առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակի վերջնական հստակեցում այդպես էլ չի կատարվում:

²⁸ Տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128), 06.11.2000 թ.:

²⁹ Տե՛ս ՀՀՊՏ 1999.05.06/11(77), 14.04.1999 թ.:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ՀՀ օրենսդրությամբ հստակեցնել *առևտրային գաղտնիք* հասկացությունը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը: Միաժամանակ անհրաժեշտ է սահմանել այն տեղեկությունների սպառիչ ցանկը, որոնք չեն կարող համարվել առևտրային գաղտնիք, այն դեպքերը և պայմանները, երբ առևտրային գաղտնիքը կարող է բացահայտվել, ինչպես նաև առևտրային գաղտնիքի պաշտպանության միջոցները:

Խնդիր 15

Խնդրի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, սահմանելով տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը, չի նախատեսում *հանրային շահի թեստի* ապահովման պահանջը, որը իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռնի հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները սահմանող նորմերը տեղեկատվության տրամադրման/հրապարակման գործընթացում:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա.

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները»:

Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա.

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
- 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության

սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Այնուամենայնիվ, օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բացառությունների շրջանակը սահմանափակ է և չի ապահովում յուրաքանչյուր դեպքում տեղեկատվության հրապարակման հանրային շահի և պաշտպանվող շահին պատճառվող վնասի հավասարակշռման պահանջը:

Մասնավորապես նույնիսկ այն դեպքերում, երբ տեղեկության հրապարակումը զգալի վնաս կպատճառի կոնկրետ պաշտպանվող շահին/իրավաչափ նպատակին, տեղեկատվությունը, մինևույն է, պետք է հրապարակվի, եթե դրա հրապարակման հանրային շահը կգերակայի վնասին:

Արձանագրենք, որ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2016 թ.-ին մշակած տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգը սահմանել է նշված սկզբունքը՝ ամրագրելով, որ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այն տվյալ իրավիճակում կարող է ունենալ հանրային իրական նշանակություն, և այն չհրապարակելը ավելի մեծ վնաս կհասցնի հանրային շահին, քան հրապարակելը: Իսկ 31.03.2017 թ.-ին հանրային քննարկման դրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծով ամրագրվել էր հանրային շահի թեստի նույնաբովանդակ պահանջը: Մասնավորապես նախատեսվել էր, որ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե տեղեկությունը չհրապարակելը տվյալ իրավիճակում ավելի մեծ վնաս կհասցնի հանրային շահին, քան հրապարակելը:

Հարկ է նշել, որ ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2008 թվականի նախագծի վերաբերյալ ներկայացված թիվ 511/2009 կարծիքով³⁰ (6 մարտի, 2009 թ.) արձանագրվել է Նախագծի 8-րդ հոդվածում վնասի կամ հանրային շահի թեստի պահանջի բացակայությունը՝ որպես տվյալ հոդվածից բխող ընդհանուր խնդիր: Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ դա հակասում է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին և Նախագծի լրջագույն թերություններից մեկն է:

Այնուամենայնիվ, առայսօր գործող օրենսդրությամբ տեղեկատվություն տնօրինողի՝ տեղեկատվության հրապարակման հանրային շահի և տեղեկության տրամադրման մերժման հիմքում դրված իրավաչափ շահին պատճառվելիք վնասի գնահատման պահանջ նախատեսված չէ:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկատվության հասանելիությունը կարող է մերժվել, եթե դրա հրապարակումը կվնասի կամ կարող է վնասել նույն հոդվածի 1-ին մասում թվարկված շահերից որևէ մեկը, քանի դեռ առկա չէ տեղեկությունը

³⁰ Sté u CDL(2009)019-e, Draft Opinion on the Draft Laws on freedom to receive information and on making amendments to the Code of administrative violations of the Republic of Armenia, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2009\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2009)019-e):

հրապարակելու գերակայող հանրային շահ:

Տեղեկատվության և կարծիքի ազատության իրավունքի պաշտպանության և խթանման գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի կողմից 2013թ. սեպտեմբերի 4-ին հրապարակված զեկույցով ամրագրվել է հետևյալը. «Ազգային օրենսդրությունները պետք է պարունակեն հստակ և նեղ մեկնաբանվող բացառությունների ցանկ: Բացառությունները կարող են կիրառվել միայն այն դեպքերում, երբ առկա է պաշտպանվող շահին էական վնաս հասցնելու ռիսկ և երբ այդ վնասը գերակայում է համապատասխան տեղեկատվությանը հասանելիություն ունենալու հանրային շահի նկատմամբ»:

Տեղեկատվության ազատության օրենքների միջազգային վարկանիշավորման /the RTI Rating/ թիվ 30 ցուցիչի համաձայն՝ վնասի թեստը կիրառելի է տեղեկատվության տրամադրման բոլոր բացառությունների նկատմամբ, որպեսզի տեղեկատվության տրամադրման մերժումը հնարավոր լինի միայն այն դեպքում, երբ դրա հրապարակումը պաշտպանվող շահին իրական վնաս պատճառելու ռիսկ է պարունակում:

Շվեյցարիայի Համադաշնության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով³¹ սահմանվում է, որ տեղեկատվության մատչելիության իրավունքը պետք է սահմանափակվի, կասեցվի կամ մերժվի, եթե պաշտոնական փաստաթղթի հասանելիությունը կարող է վնաս հասցնել երրորդ անձի անձնական կյանքի անձեռնմխելիությանը՝ բացառությամբ միայն այն դեպքի, երբ հանրային շահը չի գերակայում դրա նկատմամբ:

Իռլանդիայի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը³² բովանդակում է մի շարք դրույթներ, որոնց համաձայն՝ համապատասխան մարմինն իրավասու է գնահատելու, թե հանրային շահի համար ինչն է ավելի գերադասելի՝ հայցվող տեղեկատվությունը տրամադրելը, թե՛ տրամադրումը մերժելը:

Մոլդովայի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը³³ սահմանում է, որ տեղեկատվության մատչելիության վրա որևէ սահմանափակում չի կարող դրվել, եթե տեղեկատվություն տրամադրողը հիմնավոր կերպով չի ապացուցում, որ այդպիսի սահմանափակումը նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում անձի իրավունքների, օրինական շահերի կամ ազգային անվտանգության պաշտպանության համար, և, որ այդ շահերին պատճառվող վնասն ավելի մեծ կլինի, քան հանրային շահը՝ այդ տեսակ տեղեկատվության բացահայտմամբ:

Միաժամանակ օրենքը նախատեսում է դրույթ, ըստ որի՝ ոչ ոք չի կարող տուգանվել (պատասխանատվության ենթարկվել) սահմանափակ մատչելիության տեղեկատվությունը հրապարակելու համար, եթե դա չի վնասել կամ չի վնասի ազգային անվտանգության հետ կապված շահերը, կամ եթե հասարակության

³¹ Տե՛ս Federal Act on Freedom of Information in the Administration, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/20022540/index.html>, article 7:

³² Տե՛ս Freedom of Information Act, <http://www.irishstatutebook.ie/eli/2014/act/30/enacted/en/pdf>:

³³ Տե՛ս The law on access to information, <https://www.access-info.org/wp-content/uploads/Moldova.pdf>, article 7, p. 4, 5:

տեղեկացվածությամբ պայմանավորված շահն ավելի մեծ է, քան վնասը, որը կարող է հասցվել այդ տեղեկության հրապարակմամբ:

Աֆղանստանի Իսլամական Հանրապետության «Տեղեկատվության մատչելիության մասին» օրենքի³⁴ 16-րդ հոդվածը սահմանում է սահմանափակ մատչելիության տեղեկատվության տեսակները՝ միաժամանակ նախատեսելով այդ տեղեկությունների տրամադրման անհրաժեշտությունը, եթե դա բխում է հանրային շահից:

«Հանրային նշանակության տեղեկատվությունն անվճար տրամադրելու մասին» **Սերբիայի Հանրապետության օրենքի**³⁵ 14-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինը չի կարող իրականացնել հայցողի՝ հանրային տեղեկատվության նկատմամբ մատչելիության իրավունքը, եթե դա խախտում է անձի անձնական կյանքի անձեռնմխելիության, բարի համբավի կամ ցանկացած այլ իրավունք, որին վերաբերվում է տեղեկատվությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ.

1. առկա է տվյալ անձի համաձայնությունը.
2. հայցվող տեղեկատվությունը վերաբերում է այնպիսի անձի, երևույթի կամ իրադարձության, որը ներկայացնում է հասարակական հետաքրքրություն, հատկապես եթե անձը պետական կամ քաղաքական գործիչ է, և տեղեկատվությունը վերաբերում է այդ անձի պարտականությունների կատարմանը.
3. անձն իր վարքագծով է հրահրել իր մասին տեղեկատվություն հայցելու անհրաժեշտությունը:

Խորվաթիայի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով³⁶ սահմանվում է, որ համապատասխան մարմինները նախքան տեղեկատվությունը տրամադրելու մասին որոշում կայացնելը իրականացնում են համաչափության և հանրային շահի ստուգում:

Ստուգման ընթացքում պետական մարմինները պետք է պարզեն. ա) կարո՞ղ է արդյոք տեղեկատվության մատչելիությունը սահմանափակվել որևէ այլ պահպանվող շահի՝ պաշտպանության նպատակով, բ) կարո՞ղ է արդյոք այդ տեսակ տեղեկատվության յուրաքանչյուր առանձին դեպքում տրամադրումը էական վնաս հասցնել պաշտպանվող շահին, և գ) ո՞րն է գերակա՝ տեղեկատվությունը տրամադրելու՞, թե՞ այն սահմանափակելու շահը:

Այն դեպքերում, երբ տեղեկատվությունը մատչելի դարձնելու հանրային շահը գերակայում է պաշտպանվող այլ շահերի նկատմամբ, տեղեկատվությունը պետք է հասանելի լինի: Ընդ որում, պետական ռեսուրսների կառավարման մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի առանց նշված ստուգման գործընթացն

³⁴ St' u Islamic Republic of Afghanistan Access to Information Law, https://www.rti-rating.org/wp-content/uploads/2020/01/Afghan.RTI_.Decree.May18.Amend_.Oct19.pdf:

³⁵ St' u Law on free access to information of public importance, <https://www.rti-rating.org/wp-content/uploads/Serbia.pdf>:

³⁶ St' u Right of access to information act, <https://www.rti-rating.org/wp-content/uploads/Croatia.pdf>, article 16:

իրականացնելու, եթե այն չի բովանդակում գաղտնի տեղեկատվություն:

Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի³⁷ 5-րդ հոդվածի համաձայն՝ չնայած սահմանափակումներին՝ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այդ տեղեկատվությունը բացահայտելու հանրային շահն ավելի մեծ է, քան այն վնասը, որը կարող է հասցվել դրա բացահայտմամբ:

Վնասի կամ հանրային շահի թեստին վերաբերող պահանջներ առկա են պետությունների մեծ մասի ազգային օրենսդրություններում:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ՀՀ օրենսդրությամբ սահմանել այն չափանիշները, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռեն հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները սահմանող նորմերը տեղեկատվության տրամադրման/հրապարակման գործընթացում: Այսպիսով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախատեսել հանրային շահի թեստը, որը կապահովի սահմանափակ մատչելիության տեղեկատվության տրամադրումը/հրապարակումը բոլոր այն դեպքերում, երբ այդ տեղեկատվության բացահայտման հանրային շահը կգերակայի պաշտպանվող այլ շահին պատճառվող վնասի նկատմամբ (տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այդ տեղեկատվությունը բացահայտելու հանրային շահը գերակայում է այն վնասի նկատմամբ, որը կարող է հասցվել դրա բացահայտմամբ):

Խնդիր 16

Խնդրի նկարագրություն

Գրավոր հարցմանն առաջադրվող պահանջները, որոնք նախատեսված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, մի շարք դեպքերում որևէ իրավաչափ նպատակ չեն հետապնդում և անհրաժեշտ չեն հարցմանը պատշաճ ընթացք տալու համար:

Վերլուծություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են գրավոր հարցմանն առաջադրվող պահանջները, մասնավորապես գրավոր հարցման մեջ նշվում են դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

Միևնույն ժամանակ հարցման մեջ վերոգրյալ բոլոր տվյալները չներառելը հանգեցնում է տեղեկատվություն տնօրինողի՝ հարցմանը չպատասխանելու իրավական հետևանքի (հոդված 9, 3-րդ մաս):

³⁷ Տե՛ս Right to information act, <https://www.rti-rating.org/wp-content/uploads/Sri-Lanka.pdf>:

Մինչդեռ ակնհայտ է, որ դիմողի քաղաքացիությունը, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը հարցման մեջ նշելու որևէ անհրաժեշտություն չկա, քանի որ այս տվյալները որևէ դեր չեն խաղալու հարցմանը պատասխանելու կամ պատասխանն առաքելու հնարավորությունն ապահովելու համար: Հետևաբար գտնում ենք, որ բավարար է հարցման մեջ նշել անձի անունը, ազգանունը և բնակության կամ հարցման պատասխանի առաքման հասցեն: Ավելորդ և որևէ կերպ չհիմնավորված է նաև դիմողի քաղաքացիության վերաբերյալ նշում կատարելու պահանջը, քանի որ օրենքը քաղաքացիությամբ չի պայմանավորում տեղեկատվության հարցման իրավունքը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է քննարկել նաև հարցումը բոլոր դեպքերում ստորագրելու պահանջը վերացնելու հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան հանրային նշանակության տեղեկատվությունը ենթակա է տրամադրման ցանկացած անձի, և ստորագրությամբ անձի նույնականացման անհրաժեշտությունը բացակայում է:

Միջազգային իրավունք և փորձագիտական փաստաթղթեր

Տեղեկատվության ազատության օրենքների միջազգային վարկանիշավորման /the RTI Rating/ համակարգում նախատեսված 14-րդ ցուցիչը սահմանում է հետևյալ չափանիշը. «Հարցում ներկայացնող անձինք պետք է տրամադրեն միայն վերջիններիս նույնականացնելու և տեղեկությունը առաքելու համար անհրաժեշտ տվյալներ (առաքման հասցե)»: Այս ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության ՏԱ օրենսդրությունը գնահատվել է 0 միավոր՝ հիմք ընդունելով այն պահանջները, որոնք ներկայացված են գրավոր հարցմանը:

18.06.2009 թ.-ի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են դիմողին անանուն մնալու իրավունք վերապահել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ինքնության բացահայտումը էական է հարցմանը ընթացք տալու համար: Հարցմանն առաջադրվող ձևական պահանջները չպետք է գերազանցեն հարցմանը ընթացք տալու համար էական տվյալների ծավալը:

Կոնվենցիայի բացատրական զեկույցով արձանագրվել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ մասը անդամ պետություններին խրախուսում է նվազագույնի հասցնել ձևական պահանջները: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է սահմանել իր ընթացակարգերը, բայց նպատակը հնարավորինս քիչ և պարզ պահանջների սահմանումն է:

ԵՄ Վենետիկի հանձնաժողովը «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2008 թվականի նախագծի վերաբերյալ ներկայացված թիվ 511/2009 կարծիքով, անդրադառնալով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ կետերին, արձանագրել է, որ հարցում ներկայացնող անձինք պետք է նշեն իրենց անունները, հասցեները, հարցման ամսաթիվը և ստորագրեն հարցումը: Հանձնաժողովը շեշտել է, որ այս բոլոր պահանջների պահպանումը ավելորդ է և հետևաբար հակասում է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում վերանայել գրավոր հարցմանը օրենքով առաջադրված ձևական պահանջները՝ թողնելով միայն անձի անունը, ազգանունը և բնակության կամ հարցման պատասխանի առաքման հասցեն նշելու պահանջը: Անհրաժեշտ է վերանայել նաև հանրային նշանակության տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը ստորագրելու պահանջը³⁸:

ԲԱԺԻՆ 2

Անփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում տեղեկատվություն տնօրինողների ցանկում նախատեսել նաև պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններին, պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնադրամներին, պետական և համայնքային կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող իրավաբանական անձանց, հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախատեսել լրացուցիչ դրույթ՝ սահմանող տեղեկատվություն տնօրինող անձի պարտականությունը՝ հայցված տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրելու հասանելի ձևաչափով:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախատեսել 8-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը փոխլրացնող դրույթ, որը չսահմանափակված տեղեկատվության մասի տրամադրման պարտականությունը կնախատեսի նաև այն դեպքերում, երբ այն սահմանափակված տեղեկատվության հետ մեկտեղ զետեղված է մեկ փաստաթղթում, ինչպես նաև նախատեսել դրույթ, որի համաձայն՝ փաստաթղթում որևէ տեղեկատվություն ջնջելու/ծածկելու դեպքում

³⁸ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2020 թ.-ի մայիսին հանրային քննարկման է դրվել օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով առաջարկվում է տեղեկատվություն ստանալու հարցմանը ներկայացվող պարտադիր պահանջների շարքից հանել քաղաքացիության նշման և ստորագրության առկայության հետ կապված դրույթները:

պետք է հստակ արձանագրվի, թե որտեղ և ինչքան տեղեկություն է ջնջվել՝ նշելով այն հիմնավորող սահմանափակման մասին:

- ✓ Կատարել փոփոխություններ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում՝ ուժը կորցրած ճանաչելով բոլոր այն դրույթները, որոնք սահմանում են տեղեկատվության տրամադրման համար վճարման պարտականությունը՝ չպայմանավորված դրա ծավալով, ավելի հստակ՝ էջաքանակով կամ հատուկ ծառայությունների մատուցմամբ:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում կատարել լրացում՝ սահմանելով դրույթ այն մասին, որ տեղեկատվություն հայցող անձը ազատվում է վճարման պարտականությունից այն դեպքերում, երբ տեղեկատվության տրամադրումը հայցվել է էլեկտրոնային կրիչով, և համապատասխան տարողունակությամբ կրիչ ներկայացվել է տեղեկատվությունը տնօրինողին:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ նախատեսելով տեղեկատվության տրամադրման համար սահմանված ընդհանուր ժամկետներից ավելի կարճ՝ 2-օրյա ժամկետ այն դեպքերի համար, երբ տեղեկատվություն հայցողը գրավոր հարցմամբ հիմնավոր փաստարկում է, որ հայցվող տեղեկատվությունը անհրաժեշտ է մարդու կյանքի կամ անձնական ազատության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և նախատեսել տեղեկատվություն տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ տեղեկատվություն հայցողին վճարում կատարելու անհրաժեշտության մասին ծանուցելու պարտականությունը և սահմանել *լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն* հասկացությունը:
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ ամրագրելով տեղեկատվություն տնօրինողի պարտականությունը՝ ապահովելու հայցվող տեղեկատվությանը ծանոթանալու նվազագույն ողջամիտ պայմանները, այդ թվում՝ ողջամիտ ժամանակ և նյութատեխնիկական միջոցներ, ինչպես նաև տեղեկատվությունը հայցողի համար սահմանել հնարավորություն իր տեխնիկական միջոցներով պատճենահանելու իր փնտրած տեղեկատվությունը/փաստաթղթերը, այդ թվում՝ լուսանկարահանման, տեսանկարահանման կամ ձայնագրառման եղանակով՝ առանց որևէ վճարում կատարելու կամ պետական տուրք վճարելու պարտականության՝ անկախ տեղեկատվության ծավալից:
- ✓ ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում ամրագրել տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ

գործերի վարույթը որպես առանձին վարույթի տեսակ՝ սահմանելով հայցադիմումի քննության 30-օրյա ժամկետ, ինչը զգալիորեն կնպաստի տեղեկատվության ազատության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների հետագա խախտումների կանխարգելմանը:

- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը համալրել գնումների գործընթացին վերաբերող ամփոփ տեղեկատվությամբ, գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով, բյուջեի և դրա կատարողականի վերաբերյալ մատչելի և միասնական ձևաչափով ներկայացվող տեղեկատվությամբ (մանրամասնեցված կարգը կարող է սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ), իրականացվող ծրագրերով և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններով:
- ✓ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդվածը փոփոխել՝
ա/ նախատեսելով պատասխանատվություն տեղեկատվությունը թերի տրամադրելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու (այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գործողություններում բացակայում է պաշտոնեական կեղծիքի հանցակազմը), տեղեկատվությունը սահմանված ժամկետում չտրամադրելու, ինչպես նաև օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար.
բ/ սահմանելով առավել համաչափ պատիժներ, այն է՝ հոդվածի 1-ին մասով սահմանվող պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 30000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 150000 ՀՀ դրամ, հոդվածի 2-րդ մասով սահմանվող պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 150000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 300000 ՀՀ դրամ:
- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 97⁵ և 97⁶ հոդվածները փոփոխել՝ սահմանելով առավել համաչափ պատիժներ, այն է՝ սահմանվող տուգանքի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 150000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 300000 ՀՀ դրամ:
- ✓ ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածը փոփոխել.
ա) 282-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ կերպ.
«Շրջակա միջավայրի համար վտանգ ստեղծող իրադարձությունների, փաստերի, երևույթների, մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ վտանգավոր կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը այն անձի կողմից, որն ուներ պարտականություն՝ այդ մասին տեղեկացնելու բնակչությանը կամ

նշված վտանգները չեզոքացնելու կամ աղտոտման հետևանքները վերացնելու լիազորություն ունեցող մարմին».

բ) հողվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված տուգանքի տեսքով պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 3.000.000 ՀՀ դրամ, սահմանել նաև հիմնական պատժի այլ տեսակ, այն է՝ պատիժ՝ 1-3 տարի ազատազրկման տեսքով.

գ) հողվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված ազատազրկման տեսքով պատիժը սահմանել 4-10 տարի:

- ✓ ՀՀ քրեական օրենսգրքի 278-րդ հոդվածը փոփոխել և.
ա/ 278-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված տուգանքի տեսքով պատժի նվազագույն շեմը բարձրացնել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ մինչև 3.000.000 ՀՀ դրամ, սահմանել նաև հիմնական պատժի այլ տեսակ, այն է՝ 1-3 տարի ազատազրկման տեսքով.
բ/ հողվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված ազատազրկման տեսքով պատիժը սահմանել 4-10 տարի:
- ✓ Դատավարական օրենսգրքերով նախատեսել լրացուցիչ երաշխիքներ, երբ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, այն է՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարությունների շրջանակում գործի էլքի համար ապացուցողական նշանակություն ունեցող նյութերի/ապացույցների տրամադրումը դատավարության մասնակիցներին՝ վերջիններիս արդար դատաքննության հիմնարար իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու նպատակով:
- ✓ «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» և «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքներում կատարել լրացումներ՝ նախատեսելով ՔԿԱԳ մարմինների, իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող գործակալության և ազգային անվտանգության մարմինների պարտականությունը՝ 5-օրյա ժամկետում պատասխանելու փաստաբանի ներկայացրած հարցմանը և տրամադրելու նրան հայցվող փաստաթուղթը/տեղեկատվությունը, եթե հարցման մեջ փաստաբանը նշել է այն վստահորդի անունը, ազգանունը (անվանումը), որին իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով է կատարվել հարցումը:
- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարել լրացում՝ նախատեսելով պատասխանատվություն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում թվարկված՝ փաստաբանական հարցման հասցեատեր

հանդիսացող սուբյեկտների համար՝ նրանց կողմից փաստաբանական հարցմանն ի պատասխան տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելու, տեղեկատվության տրամադրումը ապօրինաբար մերժելու, այն թերի տրամադրելու կամ ժամկետի խախտմամբ տրամադրելու համար: Որպես վարչական պատասխանատվության միջոց՝ առաջարկվում է նախատեսել տուգանք 50.000-150.000 ՀՀ դրամի չափով, իսկ նույն արարքը վարչական տույժ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար՝ 150.000-300.000 ՀՀ դրամի չափով:

- ✓ ՀՀ օրենսդրությամբ հստակեցնել *առևտրային գաղտնիք* հասկացությունը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը: Միաժամանակ անհրաժեշտ է սահմանել այն տեղեկությունների սպառիչ ցանկը, որոնք չեն կարող համարվել *առևտրային գաղտնիք*, այն դեպքերը և պայմանները, երբ *առևտրային գաղտնիք* կարող է բացահայտվել, ինչպես նաև *առևտրային գաղտնիքի* պաշտպանության միջոցները:
- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանել այն չափանիշները, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռեն հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները սահմանող նորմերը տեղեկատվության տրամադրման/հրապարակման գործընթացում: Այսպիսով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախատեսել հանրային շահի թեստը, որը կապահովի սահմանափակ մատչելիության տեղեկատվության տրամադրումը/հրապարակումը բոլոր այն դեպքերում, երբ այդ տեղեկատվության բացահայտման հանրային շահը կգերակայի պաշտպանվող այլ շահին պատճառվող վնասի նկատմամբ (տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այդ տեղեկատվությունը բացահայտելու հանրային շահը գերակայում է այն վնասի նկատմամբ, որը կարող է հասցվել դրա բացահայտմամբ):
- ✓ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում վերանայել գրավոր հարցմանը օրենքով առաջադրված ձևական պահանջները՝ թողնելով միայն անձի անունը, ազգանունը և բնակության կամ հարցման պատասխանի առաքման հասցեն նշելու պահանջը: Անհրաժեշտ է վերանայել նաև հանրային նշանակության տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը ստորագրելու պահանջը:

Ազգային ժողովին և Կառավարությանը՝

- ✓ Նախաձեռնել օրենքի մշակում/ընդունում, որով նախատեսել.
 - տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմնի ստեղծում, որը կձևավորվի ՀՀ Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով, և այդ մարմնին օժտել 1/ տեղեկատվություն տնօրինողների կողմից

տեղեկատվության տրամադրումը որևէ կերպ մերժելու վերաբերյալ որոշումների, անգործության բողոքի հիման վրա վերանայման, տեղեկատվության տրամադրումը պարտադրելու (մարմինը պետք է իրավասու լինի ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման), ինչպես նաև տեղեկատվության տրամադրման կապակցությամբ ծագած վեճը լուծելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը այն տնօրինողից պահանջելու լիազորություններով, 2/ ոլորտի մշտադիտարկման, այդ թվում՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ վերահսկողության լիազորությամբ, 3/ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտներին տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության կիրառման հարցում աջակցության լիազորությամբ:

- Նշված մարմնին դիմելու և նրա կողմից բողոքը քննելու ողջամտորեն հնարավոր առավել արագ և մատչելի ընթացակարգ, ընդհուպ՝ ազատելով դիմողին պետական տուրք վճարելու պարտականությունից:
- Անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության միասնական մարմին ստեղծելու դեպքում լիազոր մարմնի իրավասության շրջանակներում ընդգրկել նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտի լիազորությունները:

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին

- ✓ Սահմանադրության փոփոխությունների նախագծում ընդգրկել տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմնի ստեղծում՝ վերոնշյալ ձևավորման կարգով և լիազորություններով:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին, Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետին, Ոստիկանության պետին

- ✓ Արձակել հրամաններ/շրջափերականներ, որոնցով իրենց ենթակայության տակ գտնվող իրավասու, այդ թվում՝ արխիվացված գործերի նյութերի համար պատասխանատու պաշտոնատար անձանց կկարգադրվի.
- 1/ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը («նախապատրաստված նյութերը»), ինչպես նաև կարճված քրեական գործի նյութերը և դրանց կապակցությամբ հայցված տեղեկատվությունը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրել՝ ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ այդ թվում

հաշվի առնելով օրենքով սահմանված տեղեկատվության մատչելիության սահմանափակումները.

2/ ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում (Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ) ընդգրկված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված քննության նյութերը և կարճված քրեական գործի նյութերը և դրանց կապակցությամբ հայցված տեղեկատվությունը վարույթի մասնակից չհանդիսացող անձանց տրամադրել՝ անկախ դրանցում տեղեկատվության մատչելիության սահմանափակման հիմքով պաշտպանված որևէ տեղեկատվության առկայությունից՝ բացառությամբ պետական գաղտնիք հանդիսացող արարքի մասին տեղեկությունների:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդիր 1

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է *պետական և ծառայողական գաղտնիքներ* հասկացությունները: Ըստ այդմ, պետական գաղտնիք են համարվում ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկությունները, որոնց տարածումը կարող է **ծանր հետևանքներ** առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Ծառայողական գաղտնիք են համարվում նույն բնագավառների այն տեղեկությունները, որոնց տարածումը կարող է **վնաս** հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը. **որպես կանոն՝** դրանք պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

Միաժամանակ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է գաղտնիության երեք աստիճան՝ ա) հատուկ կարևորության, բ) հույժ գաղտնի (պետական գաղտնիքներ) գ) գաղտնի (ծառայողական գաղտնիքներ)՝ դրանց տարանջատումը պայմանավորելով պաշտպանվող տեղեկությունների կարևորությամբ, բնույթով, դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալով: Նույն հոդվածը սահմանում է, որ պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիության աստիճանը պետք է համապատասխանի նշված տեղեկությունների տարածման հետևանքով պետության անվտանգությանը պատճառվելիք հնարավոր վնասի ծանրության աստիճանին: Նշվածի հետ մեկտեղ, սակայն, օրենքը չի սահմանում որևէ հստակ չափորոշիչ, որով հնարավոր կլինեք որոշել տեղեկատվության կարևորության, ինչպես նաև դրա տարածման հետևանքով պատճառվելիք ծանրության աստիճանը, իսկ օրենքի 15-րդ հոդվածով «հատուկ կարևորության» և «հույժ գաղտնի» աստիճան ունեցող տեղեկությունները գաղտնագրելու համար առհասարակ սահմանվում է մինչև արտաբերության ժամկետը՝ մինչև 30 տարի: Ծառայողական գաղտնիքի պահպանման համար առավելագույն ժամկետ է սահմանված 10 տարին:

Վերլուծություն

Այսպիսով, առաջին լուրջ խնդիրն այն է, որ գաղտնագրման ենթակա տեղեկատվության կարևորության, ինչպես նաև դրա տարածման հետևանքով

պետությանը պատճառվելիք վնասի ծանրության աստիճանի չափման որևէ հստակ չափորոշիչ օրենքը չի նախատեսում, այնինչ առաջին հերթին հենց դրանով պայմանավորված պետք է որոշվի նաև այդ տեղեկատվության գաղտնագրման անհրաժեշտ ժամկետը: Ավելին, գաղտնիության առաջին երկու աստիճանները նախատեսված են միևնույն՝ *պետական գաղտնիք* հասկացության տակ ընկնող տեղեկությունների համար, այն է՝ տեղեկությունների, որոնց տարածումը կարող է **ծանր հետևանքներ** առաջացնել պետության անվտանգության համար, իսկ դրանց գաղտնագրման առավելագույն ժամկետը նույնն է: Դա առավել քան անորոշ է դարձնում այն հարցի պատասխանը, թե կոնկրետ դեպքում ինչպես պետք է որոշվի տեղեկությունը, որի տարածումը ենթադրաբար ծանր հետևանքներ կարող է հասցնել պետության անվտանգությանը. այն պետք է դասակարգվի որպես *հատուկ կարևորություն*², թե՞ որպես *հույժ գաղտնի* տեղեկատվություն: Ողջամիտ է պնդել նաև, որ եթե *հույժ գաղտնի* գաղտնիության աստիճանին համապատասխանող տեղեկությունն ունի նվազ կարևորություն, ինչպես նաև դրա տարածումը ենթադրում է նվազ ծանր հետևանքներ պետության անվտանգության համար՝ «հատուկ կարևորության» գաղտնիության աստիճանին համապատասխանող տեղեկության հետ համեմատ, այն գաղտնի պահելու առավելագույն ժամկետը ևս պետք է լինի նվազ, այլ ոչ հավասար:

Նույն կերպ *պետական և ծառայողական գաղտնիքներ* հասկացությունների տարանջատման հիմքում դրված երկու չափորոշիչները՝ որակական և քանակական, կրկին խիստ անհստակ են: Մասնավորապես 1) պետական գաղտնիք կազմող տեղեկությունների տարածումը ենթադրում է պետության անվտանգության համար **ծանր հետևանքների**, իսկ ծառայողական գաղտնիքի տարածումը՝ **վնասի** առաջացման ռիսկ, 2) ծառայողական գաղտնիքը, **որպես կանոն**, պետական գաղտնիք կազմող տեղեկության մաս է: Ակնհայտ է, որ *ծանր հետևանքներ* և *վնաս* հասկացությունները հնարավոր ամենալայն հասկացություններն են, որոնք կարելի էր նախատեսել, և առկա է գործնականում դրանց խիստ տարածական մեկնաբանման վտանգ: Ինչ վերաբերում է *ծառայողական գաղտնիք* հասկացության սահմանման մեջ *որպես կանոն* բառակապակցությունն օգտագործելուն, ապա այն առավել ևս ուղղակիորեն հնարավորություն է ստեղծում ծառայողական գաղտնիքի շարքին դասելու անորոշ շրջանակի տեղեկություններ, որոնք նույնիսկ չեն հանդիսանում պետական գաղտնիքի մաս: Փաստացի ստեղծվում է տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու լայն իրավասություն և այն լայնորեն չարաշահելու հնարավորություն, հատկապես *ծառայողական գաղտնիք* հասկացության քողի տակ գաղտնագրելու ցանկացած՝ պետական մարմնի համար հրապարակման առումով անհարմար, ոչ ցանկալի տեղեկատվություն, օրինակ՝ պետական մարմնի գործունեությունը ենթադրաբար վնասելու վտանգը կանխելու նպատակով: Հատկանշական է, որ վերջին խնդրի առկայությունը արձանագրել է նաև ՀՀ կառավարությունը՝ 2013 թ.-ի գործունեության միջոցառումների ծրագիրը և

գերակա խնդիրները հաստատելու մասին որոշման մեջ արձանագրելով օրենքում *ծառայողական գաղտնիք* հասկացությունը հստակեցնելու անհրաժեշտությունը³⁹:

Ինչ վերաբերում է պաշտպանվող տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանելու՝ օրենքով սահմանվող առավելագույն ժամկետներին, ապա միջազգային փորձի հաշվառմամբ դրանք համեմատաբար երկար են: Հատկապես խնդրահարույց է *հույժ գաղտնի* և *գաղտնի* տեղեկությունների (ծառայողական գաղտնիքի) պահպանման ժամկետի երկարությունը, եթե դրանք համարենք համապատասխանող եվրոպական տարածաշրջանի մի շարք պետություններում գործող, առաջին դեպքում՝ *գաղտնի*, իսկ երկրորդ դեպքում՝ *կոնֆիդենցիալ* կամ *սահմանափակ օգտագործման* գաղտնիության աստիճաններին:

Ելնելով վերը նշված դիտարկումներից՝ անհրաժեշտ է (այդ թվում՝ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ) սահմանել տեղեկությունները համապատասխան գաղտնիության աստիճաններին դասելու հնարավորինս հստակ չափորոշիչներ՝ դրանով պայմանավորված՝ յուրաքանչյուր դասի համար սահմանելով գաղտնիության առավելագույն, միննույն ժամանակ ողջամիտ ժամկետներ:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Գաղտնիության աստիճանների տարանջատման չափորոշիչների մասով

Ուսումնասիրության առարկա երկրների օրենսդրությունների մեծամասնությունը (Ալբանիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Էստոնիա, Վրաստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Նորվեգիա, Լեհաստան, Սերբիա, Սլովակիա, Սլովենիա) սահմանում է գաղտնիության 3 կամ 4 աստիճան՝ հույժ *գաղտնի* (համապատասխանում է *հատուկ կարևորության* աստիճանին), *գաղտնի* (համապատասխանում է հույժ գաղտնի աստիճանին), *կոնֆիդենցիալ* և *սահմանափակ/պաշտոնական օգտագործման* (համապատասխանում է գաղտնի աստիճանին): Իսկ գաղտնիության աստիճանների տարանջատումն այս երկրներում պայմանավորվում է տեղեկատվության բացահայտման արդյունքում ակնկալվող վնասի աստիճանով՝ հետևյալ չափորոշիչների կիրառմամբ.

• հույժ գաղտնի. տեղեկություն, որի բացահայտումը կամ չարտոնված բացահայտումը.

- կհանգեցնի ազգային անվտանգության համար **բացառիկ ծանր** վնասի (ԱՄՆ).
- կհանգեցնի ազգային անվտանգության համար **բացառիկ ծանր** վնասի (Ալբանիա).
- կարող է հանգեցնել ազգային անվտանգության համար **լրջագույն** վնասի (Բելգիա).
- **բացառիկ բարձր աստիճանի** վտանգ է սպառնում պետության ինքնավարությանը, անկախությանը կամ տարածքային ամբողջականությանը՝ կամ պետության արտաքին քաղաքականությանն ու հարաբերություններին՝ կապված ազգային անվտանգության հետ, կամ կարող է ստեղծել **անդառնալի կամ բացառիկ խոշոր** վնասների առաջացման վտանգ կամ առաջացնել այդպիսի վնասներ ազգային անվտանգության, պաշտպանության, արտաքին

³⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2013.08.09/44(984).1 Հոդ.762.2, 18.07.2013 թ.:

քաղաքականության, սահմանադրական կարգի պաշտպանության ոլորտներում (Բուլղարիա).

- կարող է հանգեցնել **բացառիկ լուրջ** վնասների ազգային անվտանգության և պետության կենսական կարևորության շահերի համար և հատկապես հետևյալ արժեքների՝ պետության սահմանադրական կարգի հիմունքներ, անկախություն, ամբողջականություն և անվտանգություն, պետության միջազգային հարաբերություններ, պաշտպանական կարողություններ և հետախուզության անվտանգության համակարգ, հասարակական անվտանգություն, տնտեսական և ֆինանսական համակարգերի հիմքեր, ազգային անվտանգության համար մեծ նշանակություն ունեցող գիտական հայտնագործություններ, գյուտեր և տեխնոլոգիաներ (Խորվաթիա).
- կարող է հանգեցնել պետության շահերի համար **բացառիկ լուրջ** վնասի (Չեխիա).
- կարող է **էական ազդեցություն** ունենալ պետության շահերի վրա պաշտպանության, տնտեսության, ազգային անվտանգության, իրավապահ գործունեության ոլորտներում և/կամ կարող է **բացառիկ ծանր** հետևանքներ ունենալ ցանկացած պետության կամ կազմակերպության համար, որը Վրաստանի հետ միջազգային պայմանագրի կամ համաձայնագրի կողմ է (Վրաստան).
- կարող է **առանձնապես ծանր** վնաս հասցնել պետության շահերին և/կամ անվտանգությանը (Մոլդովա).
- կարող է **որոշիչ անբարենպաստ** հետևանքներ առաջացնել պետության կամ դաշնակիցների անվտանգության, այլ պետությունների հետ նրա հարաբերությունների և այլ կենսական նշանակություն ունեցող ազգային անվտանգության շահերի համար (Նորվեգիա).
- կարող է **լուրջ** սպառնալիք առաջացնել պետության անկախության կամ տարածքային անձեռնմխելիության, միջազգային հարաբերությունների համար կամ **անդառնալի կամ ծանր** վնասների սպառնալիք է ստեղծում պաշտպանական շահերի, պետության և քաղաքացիների անվտանգության կամ այլ կարևոր պետական շահերի համար (Լեհաստան).
- կարող է **անուղղելի ծանր** վնաս հասցնել պետության շահերին (Սերբիա).
- կարող է **լուրջ** հետևանք ունենալ՝ **վտանգելով** պետության սահմանադրականությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը կամ կարող է **անդառնալի և լուրջ** վնաս պատճառել պաշտպանության, անվտանգության, տնտեսական շահերի, արտաքին քաղաքականության կամ միջազգային հարաբերությունների ոլորտներին՝ դրանով իսկ **չափազանց լուրջ** վնաս հասցնելով պետության շահերին (Սլովակիա).
- **կվտանգի** կամ **անուղղելի** վնաս կհասցնի պետության կենսական շահերին (Սլովենիա).
- կարող է ազգային անվտանգությանը հասցնել **առանձնապես ծանր** վնաս (Ռումինիա):

- Գաղտնի. տեղեկություն, որի բացահայտումը կամ չարտոնված բացահայտումը.
 - կհանգեցնի ազգային անվտանգության համար **ծանր** վնասի (ԱՄՆ).
 - կհանգեցնի ազգային անվտանգության համար **ծանր** վնասի (Ալբանիա).
 - կարող է հանգեցնել ազգային անվտանգության համար **լուրջ** վնասի (Բելգիա).
 - **բարձր աստիճանի** վտանգ է սպառնում պետության ինքնավարությանը, անկախությանը կամ տարածքային ամբողջականությանը կամ պետության արտաքին քաղաքականությանն ու հարաբերություններին կապված ազգային անվտանգության հետ, կամ կարող է ստեղծել **դժվար վերականգնելի կամ խոշոր** վնասների առաջացման վտանգ կամ առաջացնել այդպիսի կորուստներ ազգային անվտանգության, պաշտպանության, արտաքին քաղաքականության, սահմանադրական կարգի պաշտպանության ոլորտներում (Բուլղարիա).
 - կարող է հանգեցնել **լուրջ** վնասների ազգային անվտանգության և պետության կենսական կարևորության շահերի համար (Խորվաթիա).
 - կարող է հանգեցնել պետության շահերի համար **լուրջ** վնասի (Չեխիա).
 - կարող է **անբարենպաստ** հետևանքներ ունենալ պետության պաշտպանության, ազգային անվտանգության, իրավապահ, տնտեսական և քաղաքական շահերի համար, կարող է վնաս հասցնել գաղտնի գործակալների շահերին և/կամ կարող է **ծանր** հետևանքներ ունենալ ցանկացած պետության կամ կազմակերպության համար, որը Վրաստանի հետ միջազգային պայմանագրի կամ համաձայնագրի կողմ է (Վրաստան).
 - կարող է **ծանր** վնաս հասցնել պետության շահերին և/կամ անվտանգությանը (Մոլդովա).
 - կարող է **լրջորեն** վնասել պետության կամ դաշնակիցների անվտանգությունը, այլ պետությունների հետ նրա հարաբերությունները և այլ կենսական նշանակություն ունեցող ազգային անվտանգության շահերը (Նորվեգիա).
 - կարող է **սպառնալիք** առաջացնել պետության միջազգային վարկանիշի, պետության պաշտպանական շահերի, պետության և քաղաքացիների անվտանգության շահերի կամ պետության այլ կարևոր շահերի համար կամ այդ շահերին պատճառել **էական** վնաս (Լեհաստան).
 - կարող է **ծանր** վնաս հասցնել պետության շահերին (Սերբիա).
 - կարող է **վտանգել** երկրի միջազգային հարաբերությունները, պաշտպանությունը, անվտանգությունը, երկրի շահերը տնտեսական և միջազգային հարաբերությունների ոլորտներում՝ դրանով իսկ **լուրջ** վնաս հասցնելով պետության շահերին (Սլովակիա).
 - կարող է **լուրջ** վնաս հասցնել պետության անվտանգությանը կամ շահերին (Սլովենիա).
 - կարող է ազգային անվտանգությանը հասցնել **ծանր** վնաս (Ռումինիա):
- Կոնֆիդենցիալ. տեղեկություն, որի բացահայտումը կամ չարտոնված բացահայտումը.
 - **վնաս** կհասցնի ազգային անվտանգությանը (Ալբանիա).
 - կարող է հանգեցնել ազգային անվտանգության համար **վնասի** (Բելգիա).
 - **վտանգ է** սպառնում պետության ինքնավարությանը, անկախությանը կամ

տարածքային ամբողջականությանը կամ պետության արտաքին քաղաքականությանն ու հարաբերություններին՝ կապված ազգային անվտանգության հետ, կամ կարող է ստեղծել **վնասների** առաջացման վտանգ կամ առաջացնել այդպիսի վնասներ ազգային անվտանգության, պաշտպանության, արտաքին քաղաքականության, սահմանադրական կարգի պաշտպանության ոլորտներում (Բուլղարիա).

- կարող է **վնաս** հասցնել ազգային անվտանգության և պետության կենսական կարևորության շահերին (Խորվաթիա).
- կարող է հանգեցնել պետության շահերի համար **սովորական** վնասի (Չեխիա).
- կարող է **խոչընդոտել** պետության պաշտպանության, ազգային անվտանգության, իրավապահ, տնտեսական և քաղաքական շահերը, կարող է վնաս հասցնել գաղտնի գործակալների շահերին և/կամ կարող է **վնաս** հասցնել ցանկացած պետության կամ կազմակերպության, որը Վրաստանի հետ միջազգային պայմանագրի կամ համաձայնագրի կողմ է (Վրաստան).
- կարող է **վնաս** հասցնել պետության շահերին և/կամ անվտանգությանը (Մոլդովա).
- կարող է **վնասել** պետության կամ դաշնակիցների անվտանգությունը, այլ պետությունների հետ նրա հարաբերությունները և այլ կենսական նշանակություն ունեցող ազգային անվտանգության շահերը (Նորվեգիա).
- **կվնասի** պետության շահերը, հանրային շահը կամ քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող շահերը (Լեհաստան).
- կարող է **վնաս** հասցնել պետության շահերին (Սերբիա).
- կարող է **վնաս** հասցնել պետության շահերին, հանրային շահերին կամ պետական մարմնի՝ օրենքով պաշտպանված շահերին՝ դրանով **ոչ էական** վնաս պատճառելով պետության շահերին (Սլովակիա).
- կարող է **վնաս** հասցնել պետության անվտանգությանը կամ շահերին (Սլովենիա).
- կարող է **վնասել** ազգային անվտանգությունը (Ռումինիա):
- Սահմանափակ/ծառայողական օգտագործման. տեղեկություն, որի բացահայտումը կամ չարտոնված բացահայտումը.
 - վնաս կհասցնի պետական մարմինների գործունեությանը կամ արդյունավետությանը **ազգային անվտանգության ոլորտում** (Ալբանիա).
 - **վնաս** կհասցնի պետական մարմինների գործունեությանը և տեղեկությունների դասակարգման առաջադրանքների կատարմանը.
 - կարող է **ձեռնտու չլինել** պետության շահերի համար (Չեխիա).
 - կարող է **բացասաբար** անդրադառնալ պետության պաշտպանության, ազգային անվտանգության, իրավապահ, տնտեսական և քաղաքական շահերի և/կամ ցանկացած պետության կամ կազմակերպության շահերի վրա, որը Վրաստանի հետ միջազգային պայմանագրի կամ համաձայնագրի կողմ է (Վրաստան).
 - կարող է **բացասաբար** անդրադառնալ պետության շահերի և (կամ) անվտանգության վրա կամ հանգեցնել *հույժ գաղտնի, գաղտնի* կամ *կոնֆիդենցիալ* նշագրվող տեղեկատվության բացահայտմանը (Մոլդովա).

- կարող է **ինչ-որ չափով** վնասակար հետևանքներ ունենալ պետության կամ դաշնակիցների անվտանգության համար, նրա արտաքին հարաբերությունների կամ այլ կենսական նշանակություն ունեցող ազգային անվտանգության շահերի համար (Նորվեգիա)։
- կարող է **վնասել** քաղաքացիների կամ կազմակերպությունների՝ օրենքով պաշտպանված շահերը։
- կարող է **վնաս հասցնել** պետական մարմինների գործունեությանը, նրանց խնդիրների (լիազորությունների) կատարմանը (Մերբիա)։
- կարող է **վնաս** հասցնել իրավաբանական անձանց կամ անհատների՝ օրենքով պաշտպանված շահերին, և դա կարող է նպաստավոր չլինել պետության շահերի տեսանկյունից (Սլովակիա)։
- կարող է **վնաս հասցնել** պետական մարմինների գործունեությանը, նրանց խնդիրների (լիազորությունների) կատարմանը (Սլովենիա)։

Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2007 թ.-ին տված կարծիքում որպես թերություն արձանագրել է դրանում գաղտնիության աստիճանների՝ ըստ տեղեկատվության բացահայտման հետևանքով առաջանալիք վնասի աստիճանի տարանջատման բացակայությունը (նշված նախագծով, ինչպես ՀՀ գործող օրենքով, *հատուկ կարևորության* և *հույժ գաղտնի* գաղտնիության աստիճաններն իրարից տարանջատող չափորոշիչ սահմանված չէր, և երկու դեպքում էլ այդպիսիք են համարվել այն տեղեկությունները, որոնց բացահայտումը ծանր հետևանքներ կհասցնի ազգային անվտանգությանը)։ Հանձնաժողովը նպատակահարմար է գտել սահմանել վնասի երեք չափորոշիչ գաղտնիության երեք աստիճանների համար։ Այսպես, «վնաս է պատճառում ազգային անվտանգությանը», «ծանր վնաս է հասցնում ազգային անվտանգությանը» և «ծայրահեղ ծանր վնաս է հասցնում ազգային անվտանգությանը»։ Նույն կարծիքում, անդրադառնալով նախագծով *հատուկ կարևորության* և *հույժ գաղտնի* տեղեկությունների՝ 25 տարով, իսկ *գաղտնի* տեղեկությունների՝ 10 տարով գաղտնագրման հնարավորության սահմանմանը, հանձնաժողովը նշել է, որ թեև նման ժամկետները բացառիկ չեն միջազգային փորձի համեմատ, սակայն բավական երկար են։

Գաղտնիության աստիճանների տարանջատման չափորոշիչների բացակայության խնդիրն արձանագրել է նաև ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը Մոլդովայի «Պետական և ծառայողական գաղտնիքների» մասին օրենքի նախագծի, ինչպես նաև Ղրղզստանի «Պետական գաղտնիքների պաշտպանության մասին» օրենքի վերաբերյալ 2005 թ.-ին հրապարակված մեկնաբանություններում՝ նշելով, որ *տեղեկատվության դասակարգումը պետք է համապատասխանի վնասի աստիճանին* սկզբունքի արձանագրումը (ՀՀ օրենքում կիրառվում է նույն ձևակերպումը) բավարար որոշակիություն չի կարող ապահովել⁴⁰։

⁴⁰ Stéu Comments on the Moldovan Draft Law on State and Official Secrets, <https://www.osce.org/fom/16548?download=true>:

Փորձագիտական կարծիքում որպես օրինակելի չափանիշներ են նշվում Լեհաստանի, Ռումինիայի, ԱՄՆ օրենսդրությամբ կիրառվող ձևակերպումները (տե՛ս վերևում):

Ծառայողական գաղտնիք հասկացության մասով

Ծառայողական գաղտնիք հասկացությունն առհասարակ կամ այն բովանդակությամբ, որով տեղեկատվություն գաղտնագրելու հնարավորություն կսահմանվեր պարզապես պետական մարմնի գործունեությունը վնասելը կանխարգելելու նպատակով, բացակայում է Եվրոպական տարածաշրջանի երկրների մեծամասնության ոլորտային օրենսդրությունից, և նման հիմքով տեղեկատվության գաղտնագրման հնարավորություն սահմանված չէ Բելգիայի, Չեխիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Միացյալ Թագավորության, Վրաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Մոլդովայի, Լիտվայի, Ռումինիայի, Սլովակիայի, Ալբանիայի, Ռուսաստանի ոլորտային օրենքներով (նախատեսված են Բուլղարիայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի օրենսդրությամբ):

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 3-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվությունը գաղտնի պահելու չհիմնավորված գործոն է համարվում այն, որ տեղեկատվության հրապարակումը անհարմարություն կպատճառի կառավարությանը կամ որևէ պաշտոնյայի կամ կհանգեցնի նրանց նկատմամբ վստահության կորստի կամ կթուլացնի քաղաքական կուսակցությունը կամ գաղափարախոսությունը:

ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը ևս Մոլդովայի «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2005 թ.-ին և «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին հրապարակված մեկնաբանություններում արձանագրել է *ծառայողական գաղտնիք, աշխատանքային գաղտնիք* հասկացությունները օրենք ներմուծելու խնդիրը և նշել, որ պետական մարմինների գործունեության ոլորտի տեղեկությունների գաղտնագրման հնարավորությունը, որոնց բացահայտումը կարող է վնաս պատճառել պետական մարմիններին և (կամ) պետությանը, կարող է հանգեցնել պետական մարմնի տրամադրության տակ գտնվող ցանկացած տեղեկատվության գաղտնագրման և տեղեկատվության մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Փորձագիտական փաստաթղթով առաջարկվում է *ծառայողական գաղտնիք* հասկացությունն ու դրա վերաբերյալ բաժինը առհասարակ հանել նախագծից⁴¹: Նույն թերությունը ներկայացուցիչն արձանագրել է նաև Ալբանիայի «Որպես պետական գաղտնիք դասակարգված տեղեկատվության մասին» օրենքի վերաբերյալ 2006 թ.-ին տված կարծիքում՝ նշելով, որ օրենքում *ծառայողական գաղտնիք* դասի կիրառումն այն իմաստով, որ *ծառայողական օգտագործման* տեղեկատվություն է համարվում ցանկացած տեղեկություն, որի բացահայտումը կարող է վնասել պետական մարմինների գործունեությունը ազգային

⁴¹ Stéu Comments on the Moldovan Draft Law on State and Official Secrets, <https://www.osce.org/fom/16548?download=true>, Comments on Draft Law on State Secret of the Republic of Moldova, <https://www.osce.org/fom/35114?download=true>:

անվտանգության ոլորտում, իրավաչափ չէ և հակասում է օրենսդրության բուն նպատակին, որը ազգային անվտանգությունը հնարավոր վնասներից պաշտպանելն է⁴²:

Տեղեկությունների պահպանության ժամկետի մասով

Թեև տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու առավելագույն ժամկետների մասով որևէ միասնական, հստակ միջազգային չափանիշ չկա, սակայն ուսումնասիրության առարկա երկրների իրավաստեղծ փորձը վկայում է, որ դրանցում մեծամասամբ կիրառվում են Հայաստանի համեմատ ավելի կարճ ժամկետներ: Այսպես.

- Հույժ գաղտնի տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանության ժամկետը Բուլղարիայի, Սերբիայի և Լիտվայի օրենսդրության համաձայն մինչև 30 տարին է, Մոլդովայի օրենսդրության համաձայն՝ մինչև 25 տարի, Լատվիայի և Վրաստանի օրենսդրության համաձայն՝ մինչև 20 տարի, իսկ Խորվաթիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 5 տարի:
- Գաղտնի տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանության ժամկետը Բուլղարիայի, Սերբիայի, Լիտվայի և Մոլդովայի օրենսդրության համաձայն մինչև 15 տարին է, Լատվիայի և Վրաստանի օրենսդրության համաձայն՝ մինչև 10 տարի, իսկ Խորվաթիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 4 տարի:
- Կոնֆիդենցիալ տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանության ժամկետը Լիտվայի և Մոլդովայի օրենսդրության համաձայն մինչև 10 տարին է, Լատվիայի, Վրաստանի, Բուլղարիայի և Սերբիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 5 տարի, իսկ Խորվաթիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 3 տարի:
- Մահմանափակ/ծառայողական օգտագործման տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանության ժամկետը Լիտվայի և Մոլդովայի օրենսդրության համաձայն մինչև 5 տարին է, Վրաստանի օրենսդրության համաձայն՝ մինչև 3 տարի, Սերբիայի և Խորվաթիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 2 տարի, իսկ Բուլղարիայի օրենսդրության համաձայն՝ մինչև 6 ամիս:

Ալբանիայի օրենսդրության համաձայն՝ բոլոր գաղտնիության աստիճանի տեղեկությունների՝ որպես գաղտնիք պահպանության ժամկետը մինչև 10 տարի է, Հնդկաստանի օրենսդրության համաձայն՝ 20 տարի: Նմանօրինակ կարգավորում է սահմանված նաև ԱՄՆ օրենսդրությամբ, որի համաձայն՝ տեղեկությունները գաղտնագրվում են 10 տարի ժամկետով, եթե ավելի նվազ ժամկետ կամ իրադարձություն գաղտնագրողը նշել չի կարող:

Տեղեկություններն ավելի կարճ ժամկետով գաղտնագրելու միջազգային միտումը արձանագրում է նաև ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը Մոլդովայի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ՝ նշելով, որ հասուն կարևորության և հույժ գաղտնի տեղեկությունների՝ որպես գաղտնիք

⁴² St' u Comments on Legal Regulations on Access to Information and State Secrets in Albania, <https://www.osce.org/fom/18934?download=true>:

պահպանության համար սահմանված 25 տարի, իսկ գաղտնի տեղեկությունների համար՝ 10 տարի ժամկետները ժամանակակից աշխարհում չափազանց երկար են, և առաջարկելով գաղտնի տեղեկությունների 3 աստիճանների համար սահմանել համապատասխանաբար 15, 10 և 5 տարվա ժամկետներ⁴³: Վերոգրյալից բացի՝ ներկայացուցիչը Ալբանիայի «Որպես պետական գաղտնիք դասակարգված տեղեկատվության մասին» օրենքի վերաբերյալ 2006 թ.-ին տված կարծիքում արձանագրում է նաև տարբեր աստիճանների գաղտնի տեղեկատվության պահպանման համար մինչև ժամկետի սահմանման խնդիրը՝ առաջարկելով ժամկետները փոխկապակցել դասակարգման աստիճանի հետ⁴⁴:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել գործող օրենքում փոփոխության կատարում, մասնավորապես.

1/ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի՝ գաղտնիության աստիճաններ սահմանող 4-րդ հոդվածում սահմանել տեղեկությունները դրանց համաձայն դասակարգելու չափորոշիչները՝ նախատեսելով, որ.

- *հատուկ կարևորության* աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է առանձնապես ծանր վնաս հասցնել կամ անդառնալի հետևանքներ ունենալ ՀՀ ազգային անվտանգության համար.
- *հույժ գաղտնի* աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է ծանր կամ դժվար վերականգնելի վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը.
- *գաղտնի* աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է էական վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը:

2/ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը» դրույթը վերաշարադրել՝ դրանից հանելով *որպես կանոն* բառերը:

3/ Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները որպես գաղտնիք պահպանելու ժամկետները փոփոխել՝ սահմանելով հետևյալ առավելագույն ժամկետները՝

- *հատուկ կարևորության* գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 20 տարի,
- *հույժ գաղտնի* գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 10 տարի,
- *գաղտնի* գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 5 տարի:

⁴³ St' u Comments on the Moldovan Draft Law on State and Official Secrets, <https://www.osce.org/fom/16548?download=true>:

⁴⁴ St' u Comments on Legal Regulations on Access to Information and State Secrets in Albania, <https://www.osce.org/fom/18934?download=true>:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարությունը, ելնելով անհրաժեշտությունից, իրավասու է սահմանելու պետական գաղտնիքի շարքին դասված տեղեկությունները պահպանելու՝ օրենքով սահմանված ժամկետից ավելի երկար ժամկետ միաժամանակ չսահմանելով որևէ առավելագույն ժամկետ:

Վերլուծություն

Իրավական որոշակիության սկզբունքն ու դրանով պայմանավորված՝ իրավական ակտից լեգիտիմ ակնկալիք ունենալու մարդու և քաղաքացու իրավունքը թելադրում են այդ ակտի բավարար հստակության պահանջ: Մինևույն ժամանակ օրենքով նման, ըստ էության անսահմանափակ ժամանակով տեղեկատվության գաղտնագրման հնարավորություն սահմանող դրույթի առկայությունը նախ՝ ուղղակի խախտում է մարդու և քաղաքացու տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը և երկրորդ՝ իմաստագրվում է դրան նախորդող՝ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների գաղտնագրման առավելագույն ժամկետը սահմանող դրույթը:

Թեև մի շարք այլ պետությունների օրենքներ ևս նախատեսում են տեղեկությունները գաղտնի պահելու ժամանակահատվածը երկարացնելու բացառիկ հնարավորություն, սակայն թե՛ միջազգային փորձագիտական չափորոշիչները, թե՛ նշված պետություններից որոշների օրենքները սահմանում են նաև այդ ժամկետի երկարացման հնարավորությունը չարաշահելու ռիսկը չեզոքացնող գաղտնագրման առավելագույն ժամկետներ (դրանք սահմանելու պարտականություն):

Առավել նպատակահարմար է, այդ թվում՝ այլ երկրների փորձի հաշվառմամբ, տեղեկությունները գաղտնի պահելու ժամկետի երկարացման սահմանաչափը պայմանավորել նախորդիվ որոշված պահպանության ժամկետի տևողությամբ, որն իր հերթին հիմնված է այդ տեղեկատվության կարևորության, դրա բացահայտման արդյունքում հնարավոր վնասի աստիճանի վրա՝ այդ կերպ ապահովելով ժամկետի երկարացման սահմանաչափի համաչափությունը տեղեկատվության կարևորությանը:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝ ոչ մի տեղեկատվություն չի կարող գաղտնիացված մնալ անսահմանափակ ժամանակահատվածով: Ազգային անվտանգության հիմքով տեղեկատվության գաղտնիացման թույլատրելի առավելագույն ժամկետը պետք է սահմանվի օրենքով: Տեղեկատվությունը կարող է գաղտնի պահվել թույլատրելի վերջնաժամկետից երկար միայն **բացառիկ հանգամանքներում**՝ նման որոշում կայացնելու իրավունք ունեցող մեկ այլ պաշտոնյայի կայացրած՝ տեղեկատվությունը գաղտնի պահելու մասին մի նոր որոշման հիման վրա և **սահմանված նոր վերջնաժամկետի պարագայում**:

ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը Ղրղզստանի «Պետական գաղտնիքների պաշտպանության մասին» օրենքի վերաբերյալ 2005 թ.-ին

հրապարակված մեկնաբանություններում արձանագրել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նույնպես տեղ գտած՝ տեղեկությունների գաղտնիության ժամկետը անսահմանափակ երկարացնելու հնարավորություն տվող դրույթի խնդրահարույց բնույթը՝ առաջարկելով սահմանել գաղտնագրման առավելագույն ժամկետ⁴⁵:

Օրենսդրության մեջ տեղեկությունները անժամկետ գաղտնի պահելու հնարավորության բացառման կարևորությունը արձանագրել է նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն շարժում» կազմակերպության հրապարակած «Դասակարգված տեղեկատվություն» զեկույցում, որը հիմնված է 15 երկրների և Եվրոպական միության օրենսդրության ուսումնասիրության վրա⁴⁶:

«Միջազգային ցանց՝ օրենքի գերակայությանը նպաստելու նպատակով» փորձագիտական միավորման մշակած «Անվտանգության համար դասակարգում և տեղեկատվության ազատության իրավունք. միջազգային չափանիշներ և լավագույն փորձ» մասնագիտական զեկույցում խորհուրդ է տրվում տեղեկատվության գաղտնագրման ժամկետի երկարացման հնարավորությունը սահմանափակել՝ որպես երկարացման առավելագույն ժամկետ սահմանելով այդ աստիճանի տեղեկատվության գաղտնագրման համար սահմանված առավելագույն ժամանակահատվածը⁴⁷:

- Գաղտնի տեղեկատվության մասին ԱՄՆ նախագահի հրամանագրի համաձայն՝ գաղտնագրման տևողությունը կարող է երկարացվել մինչև 25 տարի՝ փաստաթղթի ստեղծման օրվանից:
- Ալբանիայի օրենսդրության համաձայն՝ տեղեկատվությունը գաղտնի պահելու ժամկետը կարող է երկարացվել գաղտնագրող մարմնի կողմից սահմանված առավելագույն ժամկետի սահմաններում (10 տարի):
- Բուլղարիայի օրենսդրության համաձայն՝ տեղեկատվությունը գաղտնի պահելու ժամկետը կարող է երկարացվել պատասխանատու մարմնի կողմից, սակայն ոչ ավել, քան նախորդիվ սահմանված ժամկետը:
- Սերբիայի օրենսդրության համաձայն՝ տեղեկատվությունը գաղտնի պահելու ժամկետը կարող է երկարացվել լիազոր մարմնի կողմից, սակայն ոչ ավել, քան օրենքով համապատասխան գաղտնիության աստիճանի համար սահմանված առավելագույն ժամկետի չափը:

Առաջարկություն

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերության «Ելնելով անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նշված ժամկետից ավելի երկար ժամկետներ»

⁴⁵ St' u Kommentarii k zakonu «O zaštite gosudarstvennykh sekretov Кыргызской Республики», <https://www.osce.org/ru/fom/16843?download=true>:

⁴⁶ St' u Classified Information /A review of current legislation across 15 countries and the EU/, <https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/140911-Classified-Information.pdf>:

⁴⁷ St' u International Network to Promote the Rule of Law, Security classification and right to information: international standards and best practices:

դրույթը փոփոխել՝ սահմանելով Կառավարության լիազորությունը՝ երկարացնելու պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունը գաղտնի պահելու ժամկետը, սակայն ոչ ավել, քան նախորդիվ սահմանված ժամկետը:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում տեղեկությունները հնարավոր ամենակարճ ժամկետով գաղտնագրելու սկզբունքը: Գործնականում տեղեկությունները գաղտնագրվում են հնարավոր առավելագույն ժամանակահատվածով:

Վերլուծություն

Թեև օրենքը նախատեսում է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու առավելագույն ժամկետներ (հոդված 15), միննույն ժամանակ չի ամրագրում նվազագույն սահմանափակման սկզբունքը՝ այդ կերպ լայն հայեցողություն տալով իրավասու պաշտոնատար անձանց տեղեկությունները գաղտնագրելու ցանկացած, այդ թվում՝ առավելագույն ժամանակահատվածով՝ հաշվի չառնելով իրական անհրաժեշտությունը: Սրա հետ մեկտեղ տեղեկությունները հնարավոր նվազագույն ժամկետով գաղտնագրելու պարտականություն չսահմանելը բացառում է նաև անհիմն երկար ժամանակով տեղեկությունները գաղտնագրելու տեսքով գաղտնագրման լիազորության չարաշահում թույլ տվող պաշտոնատար անձանց պատասխանատվության կանչելու հնարավորությունը, այնինչ հենց այդ պատասխանատվությունը կարող է լինել չարաշահումներից զերծ մնալու երաշխիքներից մեկը: Կատարված ուսումնասիրությունը վկայում է նաև իրավակիրառ պրակտիկայում այս խնդրի արդիականության մասին: Այսպես, ուսումնասիրության շրջանակում տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքների շարքին դասելու լիազորություն ունեցող մարմիններ կատարված հարցումների պատասխանների վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ նշված մարմիններից շատերում կա արատավոր պրակտիկա այն իմաստով, որ տեղեկությունները գաղտնագրվում են հնարավոր առավելագույն ժամկետով՝ պետական գաղտնիքների դեպքում՝ 30 տարի, իսկ ծառայողական գաղտնիքների դեպքում՝ 10 տարի ժամկետով⁴⁸: Ավելին, որոշ մարմիններ օրենքում սահմանված գաղտնագրման առավելագույն ժամկետը հասկանում են որպես նվազագույն:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվությունը կարող է գաղտնի պահվել ազգային անվտանգության

⁴⁸ Ազգային անվտանգության ծառայությունը, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, Կենտրոնական բանկը նշել են, որ տեղեկությունները գաղտնագրում են նվազագույնը 10 տարով, իսկ Քաղաքաշինության պետական կոմիտեն, Առողջապահության, Պաշտպանության և Արտակարգ իրավիճակների նախարարությունները, Պետական եկամուտների կոմիտեն և Գլխավոր դատախազությունը՝ նվազագույնը 10 և 30 տարով համապատասխանաբար:

հիմքով միայն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է ազգային անվտանգության օրինաչափ շահը պաշտպանելու համար:

Ազգային անվտանգության ապահովման խնդրով թելադրված՝ տեղեկատվությունը հնարավոր ամենակարճ ժամանակով և/կամ գաղտնիության ամենացածր աստիճանին համապատասխան գաղտնագրելու սկզբունքն ամրագրվել է Ալբանիայի, Խորվաթիայի, Նորվեգիայի, Սլովենիայի ոլորտային օրենքներով:

Առաջարկություն

1/ Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը լրացնել տեղեկությունները հնարավոր և իրապես անհրաժեշտ նվազագույն ժամկետով գաղտնագրելու՝ պաշտոնատար անձանց պարտականությունը սահմանող դրույթով:

2/ Տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու լիազորությամբ օժտված բոլոր մարմիններին, դրանց ղեկավարներին՝ փոխել գործող մոտեցումն ու տեղեկատվությունը պետական և ծառայողական գաղտնիքների շարքին դասելիս առաջնորդվել ոչ միայն գաղտնագրման հիմնավորվածության, այլ նաև նվազագույն սահմանափակման սկզբունքով, այլ կերպ ասած՝ տեղեկությունները գաղտնագրել այն նվազագույն ժամկետով, որը բավարար է տեղեկատվության բացահայտման ոչ բարենպաստ հետևանքը չեզոքացնելու համար՝ բացառելով արձանագրված՝ հնարավոր առավելագույն ժամանակահատվածով տեղեկությունները գաղտնագրելու իրավակիրառ փորձը:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն միայն որոշակի ժամանակահատվածով (հոդված 15)՝ այդ կերպ հնարավորություն չընձեռնելով գաղտնագրման տևողությունը և հետագա գաղտնագրեծումը պայմանավորելու կոնկրետ պայմանով (իրադարձությամբ, հանգամանքով):

Վերլուծություն

Նշված կարգավորումների բացակայությունը օրենքում նույն կերպ, ինչպես և, օրինակ, տեղեկությունները հնարավոր նվազագույն ժամանակահատվածով գաղտնագրելու սկզբունքի բացակայությունը, բարձրացնում է տեղեկությունները չհիմնավորված երկար ժամանակով գաղտնի պահելու ռիսկը, ընդ որում, նույնիսկ պարտադիր չէ, որ պաշտոնատար անձն ունենա տեղեկությունները գաղտնագրելու լիազորությունը չարաշահելու դիտավորություն: Մասնավորապես, օրինակ, եթե պաշտոնատար անձը ողջամտորեն չի կարող ենթադրել, թե երբ է վրա հասնելու պայմանը, որով պայմանավորված՝ կվերանա տեղեկությունը գաղտնի պահելու անհրաժեշտությունը, խուսափելու համար հավելյալ պատասխանատվությունից՝ տեղեկությունը կգաղտնագրի հնարավորինս երկար ժամանակահատվածով, այնինչ

Եթե ունենար լիազորություն տեղեկության գաղտնագրման ժամանակահատվածն ու գաղտնագրեծումը պայմանավորելու կոնկրետ պայմանով, իրադարձությամբ, հանգամանքով, պարտավորված կլինեք գաղտնագրել տեղեկությունը հենց մինչև այդ պայմանի վրա հասնելը: Վերը նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է օրենքում նախատեսել հնարավորություն տեղեկությունները գաղտնագրելու ոչ միայն որոշակի ժամկետով, այլ մինչև որոշակի պայմանի վրա հասնելը՝ համապատասխանաբար սահմանելով նաև տեղեկությունը այդ դեպքում անմիջապես գաղտնագրեծելու պատասխանատու պաշտոնատար անձանց իմպերատիվ պարտականությունը:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝ (...) տեղեկատվությունը գաղտնիացնող պաշտոնյան պետք է նշի գաղտնիացման ամսաթիվը, **պայմանները** կամ **գաղտնագրեծման պայմանը**: Տեղեկատվությունը մինչև որոշակի պայմանի (իրադարձության) վրա հասնելը գաղտնագրելու հնարավորությունը սահմանված է ԱՄՆ, Լիտվայի, Սերբիայի, Սլովենիայի, Ղազախստանի ոլորտային օրենսդրությամբ:

Առաջարկություն
Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն, լրացում՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը լրացնել տեղեկությունները մինչև որոշակի պայմանի (իրադարձության, հանգամանքի) վրա հասնելը գաղտնագրելու հնարավորություն սահմանող դրույթով:

Խնդիր 5

Խնդրի նկարագրություն
«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդված 9)՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին (տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառում) կարող են դասվել այդ թվում հետևյալ տեղեկությունները՝
1/ պետական **պաշտպանական պատվերների ծավալների**, ծրագրերի (հանձնարարականների), սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության և մատակարարումների (...) մասին (հոդված 9, մաս 3, **Գ** կետ) (նույն «պետական պաշտպանական պատվերներ» ձևակերպումն օգտագործվում է, և այդ տեղեկատվության գաղտնագրումը սահմանվում է նաև Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի 19-րդ կետում),
2/ պաշտպանական **կամ տնտեսական** կարևոր նշանակություն ունեցող աշխատանքների, տեխնիկական լուծումների մասին (հոդված 9, մաս 3, **Դ** կետ) (այս դրույթից է բխում նաև Կառավարության որոշմամբ սահմանված ցանկի «Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 16-րդ և 21-րդ կետերում ընդգրկված գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող այն տեղեկությունների գաղտնագրումը, որոնք կարող են

օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ **տնտեսության տարբեր բնագավառների** տեխնոլոգիական գործընթացներում, ինչպես նաև **ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության** հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունների գաղտնագրումը),

3/ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, Հայաստանի Հանրապետության պետական պահուստների ու պաշարների, նրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին (հոդված 9, մաս 3, Զ կետ):

Վերլուծություն

Հաշվի առնելով *պաշտպանական պատվերների ծավալներ* հասկացության չափազանց լայն լինելը՝ դրա տակ ցանկության դեպքում կարելի է հասկանալ, ցանկացած պատվերի ծավալ, որն այս կամ այն եղանակով ծառայեցվում է պաշտպանական՝ բանակի ապահովման կարիքներին, այդ թվում, օրինակ, պաշտպանության նախարարության կողմից ձեռք բերվող սննդի քանակի, դրա հետ փոխկապակցված՝ դրանց արժեքային ցուցանիշների մասին կամ ցանկացած այլ՝ ռազմական վերազինմանը չվերաբերող տեղեկություն:

Նույն կերպ *տնտեսական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքներ* հասկացությունը ևս այնչափ լայն է և անորոշ, որ դրա տակ ցանկության դեպքում կարելի է հասկանալ ընդհուպ պետության կողմից տնտեսական քաղաքականության բնագավառում իրականացվող ցանկացած ծրագրի, գործողության, ընդունված որոշման վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն: Եվ նման լայն հասկացության կիրառման արդյունքում են Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի «Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 16-րդ կետում որպես գաղտնագրման ենթակա տեղեկություն ընդգրկվել գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ **տնտեսության տարբեր բնագավառների** տեխնոլոգիական գործընթացներում, ինչն ակնհայտորեն ոչ իրավաչափորեն սահմանափակում է հասարակության տեղեկացվածության իրավունքը երկրում գիտության և տեխնիկայի զարգացման, այդ ոլորտներում պետության կողմից տարվող քաղաքականության արդյունավետության մասին: Միայն ռազմարդյունաբերության ոլորտում նվաճումների մասին տեղեկատվության սահմանափակումը, այն էլ խիստ անհրաժեշտ դեպքերում, կարող է դիտվել մարդկանց տեղեկատվության ազատության իրավունքին իրավաչափ միջամտություն, և այդ սահմանափակումն արդեն իսկ նախատեսված է Կառավարության վերը նշված որոշմամբ հաստատված ցանկի 16-րդ կետի երկրորդ մասում: Օրենքի թերության հետևանքով տեղեկատվության ազատության իրավունքի նույնքան ոչ իրավաչափ սահմանափակում է նախատեսում նաև Կառավարության որոշմամբ սահմանված ցանկի 21-րդ կետում ընդգրկված ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և

գարգացման վերաբերյալ տեղեկությունների գաղտնագրումը: Նշված դրույթը ենթադրում է հնարավորություն՝ գաղտնագրելու երկրի արդյունաբերական և նույնիսկ գյուղատնտեսական ցանկացած կարողության վերաբերող որևէ տեղեկատվություն, քանի որ դրույթը վերաբերում է նաև ընդհանուր օգտագործման հումքերին և նյութերին: Միևնույն ժամանակ ցանկացած հումք կամ նյութ այս կամ այն չափով հնարավոր է համարել նաև *ռազմավարական նշանակության*՝ սկսած մետաղներից և պոլիմեր նյութերից, որոնք օգտագործվում են ցանկացած, այդ թվում՝ ռազմական տեխնիկայի արտադրության մեջ, և վերջացրած ցորենով: Եվ կրկին, գտնում ենք, որ բացառապես ռազմական տեխնիկայի և սպառազինության արտադրության մեջ օգտագործվող հումքերի և նյութերի մասին տեղեկատվության սահմանափակումը կարող է դիտվել որպես մարդու տեղեկատվության ազատության իրավունքին իրավաչափ միջամտություն:

Վերջապես Հայաստանի Հանրապետության ֆինանսների և բյուջետային քաղաքականության մասին տվյալները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու՝ օրենքով սահմանված հնարավորությունն առհասարակ չի կարող ողջամտորեն համարվել տեղեկատվության ազատության համաչափ և իրավաչափ սահմանափակում: Դրանից բխում է, որ կառավարության որոշմամբ գաղտնագրել հնարավոր է պետության ֆինանսական ցուցանիշների և նույնիսկ բյուջետային քաղաքականության մաս կազմող **ցանկացած** տեղեկատվություն: Վերը նշված տեղեկությունների գաղտնագրման այդչափ լայն հնարավորությունը ողջամտորեն հնարավոր չէ անմիջականորեն բխեցնել ազգային անվտանգության ապահովման իրավաչափ անհրաժեշտությունից, ուստի այն խախտում է ժողովրդավարական հասարակությունում մարդու պետության տնտեսական, ֆինանսական քաղաքականության մասին տեղեկացվածության ապահովման իրավաչափ շահը: Միևնույն ժամանակ բյուջետային քաղաքականությունն ի վերջո արտացոլվում է պետական բյուջեում, որն ընդունվում է ԱԺ կողմից որպես օրենք՝ հրապարակային նորմատիվ-իրավական ակտ: Բյուջետային քաղաքականության մասին ցանկացած տեղեկատվության գաղտնագրման հնարավորությունը բացառվում է նաև այդ պատճառով: Նշված տեղեկությունների գաղտնագրումը չի կարող համարվել տեղեկատվության մատչելիության իրավաչափ սահմանափակում, ուստի այն պետք է հանվի գործող օրենքից, կամ պետք է սահմանվեն այդպիսի սահմանափակման հստակ և բացառիկ նախապայմաններ:

Քննարկվող սահմանափակումները նախատեսված չեն ուսումնասիրության առարկա դարձած պետությունների մեծամասնության օրենսդրություններով, ինչպես նաև հակասում են «Յվանեի սկզբունքներ» փորձագիտական փաստաթղթով սահմանված միջազգային չափորոշիչներին:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
«Յվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 3-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ սահմանափակումը ա) նախատեսված է օրենքով, բ) անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում և գ) ազգային անվտանգության

օրինաչափ շահերը պաշտպանելու համար է: Տեղեկատվության բացահայտումը պետք է պարունակի ազգային անվտանգության օրինաչափ շահերին զգալի վնաս հասցնելու իրական և ճանաչելի ռիսկ: Տեղեկատվության տրամադրման հետևանքով պատճառվելիք վնասի ռիսկը պետք է գերակայի տեղեկատվության բացահայտման ընդհանուր հանրային շահին: Սահմանափակումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին և պետք է լինի վնասից պաշտպանվելու համար նախատեսված հասանելի նվազագույն սահմանափակող միջոցը: Սահմանափակման կիրառումը չպետք է խախտի տեղեկատվություն ստանալու իրավունքի բուն էությունը:

ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը 2007 թ.-ին կատարված «Լրատվամիջոցների կողմից տեղեկատվության հասանելիությունը ԵԱՀԿ տարածաշրջանում. միտումներ և առաջարկություններ» ուսումնասիրության արդյունքներով տված հանձնարարականով մասնակից պետություններին առաջարկել է սահմանափակել իրենց՝ գաղտնիքի մասին օրենքների՝ կարգավորումները միայն ազգային անվտանգությանն առնչվող միջոցառումներով՝ նշելով, որ *պետական գաղտնիք* հասկացությունը պետք է սահմանափակվի բացառապես ազգային անվտանգությանն անմիջականորեն վերաբերող տեղեկություններով, որոնց բացահայտումը կարող է շոշափելի և էական հետևանքներ ունենալ ազգային անվտանգության համար⁴⁹:

Նույն առաջարկությունն արել է նաև ԵՄ Խորհրդարանական վեհաժողովը, որը 2007թ.-ի թիվ 1792 բանաձևում անդամ պետություններին կոչ է արել վերանայել ազգային օրենսդրությունը՝ փոխարինելով անորոշ և չափազանց լայն դրույթները ճշգրիտ և հստակ ձևակերպումներով՝ այդ կերպ չեզոքացնելով չարաշահումների ռիսկերն ու չհիմնավորված հետապնդումները:

Վենետիկի հանձնաժողովը, Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում անդրադառնալով պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների տեսակների՝ նախագծում տեղ գտած որոշ լայն սահմանումների կիրառման ռիսկերին, նշել է, որ օրենքում այնպիսի լայն ձևակերպումների օգտագործումը, ինչպիսիք են, օրինակ, *գիտական հետազոտությունները* և *տնտեսական տեղեկատվությունը*, ստեղծում է գործնականում գործադիր մարմինների կողմից չափազանց մեծ քանակի տեղեկատվության չարադրացված գաղտնագրման վտանգ, և միայն սահմանումների հստակեցումը/նեղացումը մինչև *ռազմական-գիտական, ռազմատնտեսական տեղեկատվություն (ռազմարդյունաբերություն, քաղաքացիական պաշտպանություն)* կհամապատասխանի Եվրոպայի խորհրդի պետությունների մեծամասնության փորձին:

ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչն իր հերթին Մոլդովայի «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2005 թ.-ին հրապարակված մեկնաբանություններում խնդրահարույց է համարում

⁴⁹ St' u Access to information by the media in the OSCE region: trends and recommendations, <https://www.osce.org/fom/24892?download=true>:

պաշտպանության և հետախուզության ոլորտների սահմաններից դուրս գտնվող, այդ թվում նաև մեր խնդրո առարկա մի շարք տեղեկությունների գաղտնագրումը՝ պետական պատվերներ, գիտահետազոտություններ, հումքի արդյունահանում, ֆինանսական, դրամավարկային քաղաքականություն⁵⁰:

1/ Ցանկացած պաշտպանական պատվերի ծավալների մասին տեղեկատվության գաղտնագրման հնարավորություն նախատեսված չէ Եվրոպական տարածաշրջանի երկրների մեծամասնության, այդ թվում՝ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի օրենսդրությամբ, ինչպես նաև Գաղտնի տեղեկատվության մասին ԱՄՆ նախագահի հրամանագրով: Նման հնարավորություն սահմանում է Ղազախստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի օրենսդրությունը:

Հարկ է նշել, որ, օրինակ, Լիտվայի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» և Լեհաստանի «Գաղտնագրված տեղեկատվության պաշտպանության մասին» օրենքներով սահմանված է հնարավորություն՝ գաղտնագրելու պետության զինված ուժերի՝ բացառապես զենքի, զինամթերքի և ռազմական տեխնիկայի պատվերների մասին տեղեկատվությունը:

2/ Ցանկացած տնտեսական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքի, տեխնիկական լուծումների և հավասարապես՝ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների (որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ տնտեսության տարբեր բնագավառների տեխնոլոգիական գործընթացներում) էությունը բացահայտող տեղեկությունների գաղտնագրման հնարավորություն նախատեսված չէ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, Ռուսաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ թվարկված որոշ պետությունների օրենսդրությունը թույլ է տալիս գաղտնագրել գիտության և տեխնիկայի նվաճումներին, աշխատանքներին, տեխնիկական լուծումներին վերաբերող տեղեկությունները հատուկ դեպքերում, մասնավորապես.

- Բուլղարիայի «Գաղտնագրված տեղեկությունների պաշտպանության մասին» օրենքը, օրինակ, նախատեսում է տեխնիկական լուծումների վերաբերյալ տեղեկատվության գաղտնագրման հնարավորություն, **եթե դրանց հրապարակումը կարող է վտանգել տնտեսական անվտանգությունը**, ինչպես նաև նախատեսված է գյուտերի գաղտնագրում, **եթե դրանք վերաբերում են անվտանգությանը և պաշտպանությանը**.
- Խորվաթիայի «Տեղեկատվության պաշտպանության մասին» օրենքը նախատեսում է գյուտերի գաղտնագրման հնարավորություն, **եթե դրանք մեծ նշանակություն ունեն ազգային անվտանգության համար**.
- Լատվիայի «Ծառայողական գաղտնիքների մասին» օրենքը թույլ է տալիս

⁵⁰ Stéu Comments on the Moldovan Draft Law on State and Official Secrets, <https://www.osce.org/fom/16548?download=true>:

գաղտնագրել գիտական-հետազոտական գործունեության, բացահայտումների, գյուտերի օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը, **եթե դրանք իրականացվում են պետական աջակցությամբ.**

- Լիտվայի «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել նոր տեխնոլոգիաների, գիտական հետազոտությունների, փորձարկումների և արդյունքների վերաբերյալ **մանրամասն տեղեկությունները, եթե դրանք ունեն հատուկ նշանակություն պետության շահերի համար.**
- Լեհաստանի «Գաղտնագրված տեղեկությունների պաշտպանության մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել գիտական հետազոտությունների պլանավորման, իրականացման և արդյունքների մասին տեղեկությունները **հատուկ նշանակություն ունեցող ազգային անվտանգության և պաշտպանության համար** կամ պետության տնտեսական շահերի համար, **եթե դրանք պատվիրված են պետության կենտրոնական մարմինների կողմից.**
- Ռումինիայի «Գաղտնագրված տեղեկությունների պաշտպանության մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել գիտատեխնիկական և տնտեսական գործունեության և ներդրումների վերաբերյալ այն տեղեկությունները, **որոնք կապված են ազգային անվտանգության կամ պաշտպանության հետ և հատուկ նշանակություն ունեն պետության տնտեսական, տեխնիկական և գիտական շահերի համար.**
- Ռուսաստանի «Պետական գաղտնիքի մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել տեղեկություններ գիտության և տեխնիկայի ձեռքբերումների, գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների մասին, որոնք ունեն կարևոր պաշտպանական կամ տնտեսական նշանակություն և ազդեցություն պետության անվտանգության վրա .
- Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել տեղեկություններ գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների մասին, որոնց հիման վրա հնարավոր է ստեղծվեն նորարար տեխնոլոգիաներ և արտադրանք՝ **նշանակություն ունեցող ազգային անվտանգության և տնտեսության համար** կամ **էապես ազդող պետության արտաքին տնտեսական գործունեության, շահերի և/կամ անվտանգության վրա:** Նույն դրույթն է պարունակում նաև Ուկրաինայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքը:

Միայն Ղազախստանի օրենսդրությունն է («Պետական գաղտնիքների մասին» օրենք) օգտագործում նույնական լայն ձևակերպում, որը տեղ է գտել ՀՀ կառավարության թիվ 173 որոշման 16-րդ կետում՝ թույլ տալով գաղտնագրել գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ տնտեսության տարբեր բնագավառների տեխնոլոգիական գործընթացներում:

Ինչ վերաբերում է ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունների գաղտնագրման հնարավորությանը, ապա նման հնարավորություն ևս նախատեսված չէ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի,

Խորվաթիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, ինչպես նաև Ղազախստանի օրենսդրությամբ: Թվարկված որոշ պետությունների օրենսդրությունը թույլ է տալիս գաղտնագրել միայն ռազմավարական նշանակության հումքերին և նյութերին վերաբերող տեղեկությունները հատուկ դեպքերում, մասնավորապես.

- Էստոնիայի «Պետական գաղտնիքների մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել ռազմավարական հումքի ներմուծման և արտահանման մասին տեղեկատվությունը, **եթե այդ տեղեկատվության հրապարակայնությունը կվնասի ազգային անվտանգությունը.**
- Վրաստանի «Պետական գաղտնիքների մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել ռազմավարական նյութերի և արտադրանքի՝ **ռազմական նպատակներով** մատակարարման ծավալների և պահուստների մասին տեղեկատվությունը.
- Ղազախստանի «Պետական գաղտնիքների մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել տեղեկություններ՝ վերաբերող միայն ռազմավարական հումքերի արտադրության **գորահավաքային կարողություններին:**

Այս առումով միայն Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի օրենքներն են նախատեսում հնարավորություն՝ գաղտնագրելու հումքերի և նյութերի ստեղծման և արտադրության վերաբերյալ տեղեկությունները, այն էլ բացառապես ռազմավարական, այլ ոչ ընդհանուր նշանակության հումքերի և նյութերի:

3/ Ֆինանսների և բյուջետային քաղաքականության մասին տեղեկատվության գաղտնագրման հնարավորություն առհասարակ սահմանված չէ ԱՄՆ-ի, Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ղազախստանի օրենսդրությամբ:

Ֆինանսական քաղաքականության/գործունեության կամ ֆինանսական համակարգի վերաբերյալ տեղեկությունների գաղտնագրման հնարավորություն **բացառիկ դեպքերում** սահմանված է Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի և Ֆինլանդիայի օրենսդրությամբ, մասնավորապես.

- Ռուսաստանի «Պետական գաղտնիքի մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել այլ պետությունների նկատմամբ վարած ֆինանսական քաղաքականության և ՌԴ ֆինանսական և դրամավարկային գործունեության մասին տեղեկությունները, **եթե դրանց հրապարակումը կարող է վնասել պետության անվտանգությունը.**
- Լեհաստանի «Գաղտնագրված տեղեկությունների պաշտպանության մասին» օրենքը թույլ է տալիս գաղտնագրել պետության ֆինանսական համակարգի վերաբերյալ ուղեցույցները **պաշտպանական պատրաստվածության բարձրացման և պատերազմի ժամանակ.**
- Ֆինլանդիայի «Կառավարության գործունեության թափանցիկության մասին» օրենքի համաձայն՝ կարող են գաղտնագրվել պետության ֆինանսական քաղաքականության նախապատրաստմանը վերաբերող որոշումները, **որոնց բացահայտումը կարող է վնաս հասցնել պետության՝** որպես սոցիալական

գործընկերոջ **շահերին**, ինչպես նաև տնտեսության վիճակագրական տվյալները, ֆինանսական քաղաքականության նախաձեռնությունը, գործառնական պլանը և նման այլ փաստաթղթեր՝ այնպիսի տեղեկատվություն պարունակող, որի վաղաժամ հրապարակումն **ակնհայտորեն կարող է ազդել կապիտալի և ֆինանսական շուկաների վրա:**

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել գործող օրենքում և Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշման մեջ փոփոխությունների կատարում, մասնավորապես.

1/ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի **Գ** կետը, իսկ Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի 19-րդ կետը վերաշարադրել՝ դրանցում օգտագործվող *պաշտպանական պատվեր* բառերը փոխարինելով *սպառազինության և ռազմական նշանակության ապրանքների, օբյեկտների պատվերներ* բառերով.

2/ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի **Դ** կետը վերաշարադրել՝ դրանից հանելով *կամ տնտեսական* բառերը (հնարավոր է փոխարենը որպես գաղտնագրման ենթակա տեղեկություն նախատեսել այժմ Կառավարության թիվ 173 որոշման 15-րդ կետում շարադրված դրույթը՝ «պատերազմի ժամանակ ՀՀ տնտեսության կայուն գործունեության նախապատրաստումը բացահայտող ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները»).

2.1./ Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի 16-րդ կետը վերաշարադրել՝ դրանից հանելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները (որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ **տնտեսության տարբեր բնագավառների** տեխնոլոգիական գործընթացներում) գաղտնագրելու հնարավորություն տվող դրույթը.

2.2./ Կառավարության որոշմամբ հաստատված ցանկի 21-րդ կետը վերաշարադրել՝ դրանից հանելով ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն ստեղծող դրույթը կամ այն փոխարինելով ռազմական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն տվող դրույթով.

3/ 9-րդ հոդվածի 3-րդ մասի **Զ** կետը վերաշարադրել՝ դրանից հանելով *նրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից)* բառերը կամ դրանք փոխարինելով *ֆինանսական քաղաքականության նախապատրաստման մասին, որոնց վաղաժամ հրապարակումը կարող է վնաս հասցնել պետությանը կամ բացասաբար ազդել կապիտալի և ֆինանսական շուկաների վրա* բառերով:

Խնդիր 6

Խնդրի նկարագրություն

Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի համաձայն՝ այդպիսի տեղեկություններ են համարվում նաև.

1/ հիդրոոդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների (...) արդյունքները բացահայտող տեղեկությունները («Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 18-րդ կետ),

2/ (...) հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտուրական աշխատանքների հետ կապված ծախսերը բացահայտող տեղեկությունները («Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 20-րդ կետ),

3/ Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային կազմակերպումը (...) բացահայտող տեղեկությունները («Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 25-րդ կետ):

Վերլուծություն

Նշված տեղեկությունների գաղտնագրման հնարավորությունը ողջամտորեն որևէ կերպ հնարավոր չէ բխեցնել ո՛չ միջազգային լավագույն փորձից, ո՛չ էլ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքից. այն չի տեղավորվում դրանով նախատեսված գաղտնագրման ենթակա տեղեկությունների սահմաններում, ուստի նշված դրույթները ուղղակիորեն հակասում են օրենքին, ինչն ինքնին բավարար է Կառավարության որոշման նշված դրույթներն ուժը կորցրած ճանաչելու համար:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 3-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ սահմանափակումը ա) նախատեսված է օրենքով, բ) անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում և գ) ազգային անվտանգության օրինաչափ շահերը պաշտպանելու համար է: Տեղեկատվության բացահայտումը պետք է պարունակի ազգային անվտանգության օրինաչափ շահերին զգալի վնաս հասցնելու իրական և ճանաչելի ռիսկ: Տեղեկատվության տրամադրման հետևանքով պատճառվելիք վնասի ռիսկը պետք է գերակայի տեղեկատվության բացահայտման ընդհանուր հանրային շահին: Սահմանափակումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին և պետք է լինի վնասից պաշտպանվելու համար նախատեսված հասանելի նվազագույն սահմանափակող միջոցը: Սահմանափակման կիրառումը չպետք է խախտի տեղեկատվություն ստանալու իրավունքի բուն էությունը:

1/ Հիդրոոդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների (...) արդյունքները բացահայտող ցանկացած տեղեկության գաղտնագրման հնարավորություն սահմանված չէ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի,

Նիդեռլանդների, Նորվեգիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի օրենսդրությամբ:

- Մոլդովայի և Ուկրաինայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքներով սահմանվում է հնարավորություն՝ գաղտնագրելու հիդրոօդերևութաբանական, գեոդեզիական, քարտեզագրական տեղեկություններն ու հատկանիշները **բացառապես պետության պաշտպանության համար նշանակություն ունենալու դեպքում**, Ղազախստանի «Պետական գաղտնիքների մասին» օրենքով՝ նաև պետության համար **կարևոր տնտեսական նշանակություն ունենալու դեպքում**:

2/ Հատուկ կարևորության օբյեկտների (տարբեր երկրներում գործում են տարբեր սահմանումներ՝ ռազմավարական և ռազմական նշանակության, պետական անվտանգության ապահովման համար նախատեսված և այլն) շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտորական աշխատանքների հետ կապված ծախսերը բացահայտող տեղեկությունների՝ գաղտնագրման հնարավորություն սահմանված չէ ուսումնասիրված որևէ երկրի՝ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի օրենսդրությամբ: Միննույն ժամանակ նշված երկրների օրենքները հնարավորություն են տալիս գաղտնագրելու նման օբյեկտների տեղակայման, նպատակների, նախագծման, շինարարության, շահագործման, դրանց պաշտպանության, դրանց բնութագրերը բացահայտող տեղեկությունները (տե՛ս Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Ռուսաստանի և այլ օրենքներ):

3/ Պետության տնտեսության կառուցվածքային կազմակերպումը բացահայտող տեղեկությունների գաղտնագրման հնարավորություն սահմանված չէ ուսումնասիրված որևէ երկրի՝ Ալբանիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի օրենսդրությամբ:

Առաջարկություններ

1/ Կառավարությանը՝ կատարել փոփոխություն 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի «Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնում՝ ուժը կորցրած ճանաչելով 18-րդ, 20-րդ և 25-րդ կետերի՝ հիդրոօդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների արդյունքները, հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտորական աշխատանքների հետ կապված ծախսերը և Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային կազմակերպումը բացահայտող տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն սովոր դրույթները:

2/ Հիդրոօդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների արդյունքները, ինչպես նաև հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտորական աշխատանքների հետ

կապված տեղեկությունների գաղտնագրման հնարավորությունը ամրագրել օրենքով՝ որպես պարտադիր պայման սահմանելով այդպիսի տեղեկության պետության անվտանգության ապահովման համար կարևոր նշանակություն ունենալը:

Խնդիր 7

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է այն տեղեկությունները, որոնք պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվել չեն կարող.

ա) քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,

բ) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները,

գ) քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները,

դ) այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական և ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական և ճյուղային ծրագրերի իրականացման վրա,

ե) արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում հնարավոր հետևանքները նվազեցնելու ու վերացնելու, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու, մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունները:

Հետևյալ տեղեկություններն օրենքը չի նախատեսում որպես այնպիսիք, որոնք չեն կարող դասվել պետական և ծառայողական գաղտնիքների շարքին.

1/ մարդկանց անվտանգության ու առողջության համար ինքնին վտանգ չներկայացնող, սակայն բնությանն ու շրջակա միջավայրին սպառնացող վտանգների մասին տեղեկությունները,

2/ պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի և հանցավոր գործողությունների վերաբերյալ տեղեկությունները,

3/ հանցավորության մակարդակի մասին տեղեկությունները,

4/ բնակչության կենսամակարդակի մասին տեղեկությունները,

5/ ժողովրդագրական վիճակի/ցուցանիշների մասին տեղեկությունները,

6/բարձրաստիճան պաշտոնատար անձանց առողջական վիճակի մասին տեղեկությունները:

Միննույն ժամանակ օրենքի որոշ դրույթներում օգտագործված ձևակերպումները կարող են հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման ու տեղեկատվության ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման:

7/ Օրենքի 10-րդ հոդվածի **Բ** կետում *տնտեսության ընդհանուր վիճակ, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակ* ձևակերպումների հետ մեկտեղ օգտագործվում են *առողջապահության բնագավառ* և *բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ* ձևակերպումները (ո՛չ *բնակչության առողջության և առողջապահության վիճակ, բնության և շրջակա միջավայրի վիճակ* ձևակերպումները):

8/ Օրենքի 10-րդ հոդվածի **Գ** կետում օգտագործվում է *քաղաքացիներ* եզրը, ինչը կարգավորման շրջանակից դուրս է թողնում քաղաքացի չհանդիսացող անձանց:

Վերլուծություն

1/ Թեև օրենքը նախատեսել է **քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող** արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունների գաղտնագրման արգելք, միշտ չէ, որ աղետն ինքնին անմիջականորեն սպառնում է մարդկանց կյանքին և առողջությանը. հատկապես խոսքն այն դեպքերի մասին է, երբ աղետի գոտին կամ դրա հետևանքների տարածման շառավիղը չի ընդգրկում մարդկանց կողմից բնակեցված տարածքներ: Նման դեպքերում աղետը սպառնում է բնությանը և շրջակա միջավայրին, որոնց պահպանությունը նվազ կարևոր նշանակություն չունի: Ավելին, գործող «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողն անհապաղ պետք է հրապարակի իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել **այդ թվում շրջակա միջավայրին սպառնացող** վտանգը: Ուստի առկա է տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումների շրջանակն ընդլայնելու և քննարկվող առումով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու անհրաժեշտություն:

2/, 3/, 4/, 5/, 6/ Պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի և հանցավոր գործողությունների, պետությունում հանցավորության մակարդակի մասին տեղեկությունների, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի ու ժողովրդագրական վիճակի մասին տեղեկությունների՝ մարդու համար հասանելիության, դրանց մասին տեղեկացված լինելու իրավաչափ շահը նույնքան բարձր է, որքան օրենքով գաղտնագրման սահմանափակում ունեցող մյուս տեղեկությունների: Նույն կերպ բարձրաստիճան պաշտոնատար անձանց առողջական վիճակի մասին տեղեկությունների մատչելիությունը խիստ կարևոր է ժողովրդավարական հասարակություններում, որտեղ ժողովրդի ուղղակի կամ անուղղակի ընտրության արդյունքում պետության ներքաղաքական և արտաքին քաղաքական, ոլորտային քաղաքականության համար կարևորագույն որոշումներ ընդունելու մանդատ ստացած անձանց գործունակության մասին տվյալներ գաղտնագրելը չի կարող արդարացնել նույնիսկ ազգային անվտանգության շահը

հենց այն փաստի ուժով, որ այդ նույն շահն է թելադրում հանրության՝ քննարկվող տեղեկատվությանը տիրապետելու անհրաժեշտությունը:

Նշված փաստարկների օգտին է խոսում նաև մի շարք այլ երկրների իրավաստեղծ փորձը, որոնց պետական գաղտնիքի ոլորտը կարգավորող օրենսդրությունը պարունակում է գաղտնագրման սահմանափակումների մասին կարգավորումներ (տե՛ս հաջորդ բաժինը):

7/ Օրենքում տեղ գտած *առողջապահության բնագավառ, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ* ձևակերպումները կարող են հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման ու տեղեկատվության ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, քանի որ դրանց տառացի մեկնաբանման պարագայում կարող ենք հասկանալ, որ խոսքը վերաբերում է մի դեպքում բացառապես առողջապահությանը, իսկ մյուս դեպքում՝ բնապահպանությանը, այլ կերպ ասած՝ պետության կողմից իրականացվող գործառույթների բնագավառում տիրող իրական վիճակին, այսինքն՝ այդ ոլորտներում իրականացվող գործողություններին, և չի վերաբերում բնակչության առողջության և բնության ու շրջակա միջավայրի իրական վիճակի մասին տեղեկություններին:

Նման պայմաններում նպատակահարմար է փոփոխել օրենքում առկա ձևակերպումները և նախատեսել, որ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել բնակչության առողջության և առողջապահության, բնության և շրջակա միջավայրի, այդ թվում՝ առանձին էկոհամակարգերի, կենսաբանական տեսակների, բնության օբյեկտների իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները:

8/ Օրենքում տեղ գտած *քաղաքացիներ* եզրույթը տեսական հնարավորություն է թողնում պետական գաղտնիքի շարքին դասելու այլ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների սահմանափակումների, խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը լրջագույն խնդիր է առաջին հերթին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով և Սահմանադրությամբ երաշխավորված՝ այդ թվում քաղաքացիության հիմքով խտրականության արգելքի հիմնարար դրույթի տեսանկյունից: Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով այս հարցում այլ պետությունների իրավաստեղծ փորձը՝ առկա է *քաղաքացի* եզրն օրենքում *մարդ* եզրով փոխարինելու անհրաժեշտություն:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

1/ Բնությանը և շրջակա միջավայրին սպառնացող վտանգի մասին տեղեկությունները պետական/ծառայողական գաղտնիքի շարքին դասելու արգելքն ուղղակիորեն սահմանված է Սլովակիայի «Գաղտնագրված տեղեկատվության պաշտպանության մասին» օրենքով, իսկ փաստացի՝ բնության, շրջակա միջավայրի **վիճակի** մասին տեղեկատվության գաղտնագրման արգելքի միջոցով՝ Վրաստանի («Պետական գաղտնիքների մասին» օրենք), Լատվիայի («Ծառայողական գաղտնիքների մասին» օրենք), Մոլդովայի («Պետական գաղտնիքի մասին» օրենք) և

Ուկրաինայի («Պետական գաղտնիքի մասին» օրենք) օրենսդրությամբ:

2/ Հանրային կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի, այդ թվում՝ հանցավոր գործողությունների, իսկ որոշ դեպքերում նաև գործունեության անարդյունավետությունն ու վարչական սխալների վերաբերյալ տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել կամ պետական գաղտնիք չեն համարվում գաղտնագրման սահմանափակումների մասին դրույթներ պարունակող բոլոր ուսումնասիրված պետությունների ոլորտային օրենսդրությամբ, մասնավորապես ԱՄՆ-ի (Գաղտնի տեղեկատվության մասին նախագահի հրամանագիր), Խորվաթիայի («Գաղտնի տեղեկությունների մասին» օրենք), Սերբիայի («Գաղտնի տեղեկությունների մասին» օրենք), Սլովենիայի («Գաղտնագրված տեղեկատվության մասին» օրենք), Ալբանիայի («Որպես պետական գաղտնիք դասակարգված տեղեկատվության մասին» օրենք), Վրաստանի («Պետական գաղտնիքների մասին» օրենք), Սլովակիայի («Գաղտնագրված տեղեկատվության պաշտպանության մասին» օրենք), Լատվիայի («Ծառայողական գաղտնիքների մասին» օրենք), Ուկրաինայի («Պետական գաղտնիքի մասին» օրենք), Մոլդովայի («Պետական գաղտնիքի մասին» օրենք) և Ռուսաստանի Դաշնության («Պետական գաղտնիքի մասին» օրենք):

3/ Հանցավորության մակարդակի/իրավական կարգի վիճակի մասին տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել Վրաստանի, Լատվիայի, Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության օրենքների համաձայն:

4/ 5/ Բնակչության կենսամակարդակի, այդ թվում՝ սոցիալական ապահովության մասին, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական վիճակի/ցուցանիշների մասին տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել Վրաստանի, Լատվիայի, Մոլդովայի և Ուկրաինայի, իսկ ժողովրդագրական վիճակի մասին տեղեկությունները՝ նաև Ռուսաստանի օրենքների համաձայն:

6/ Պաշտոնատար անձանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը պետական գաղտնիքի շարքին չի կարող դասվել Վրաստանի (բոլոր պաշտոնյաների մասով), Լատվիայի (պետության ղեկավարների մասով), Մոլդովայի (պատասխանատու պաշտոններ զբաղեցնող պաշտոնյաների մասով) և Ռուսաստանի Դաշնության (բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով) օրենքների համաձայն:

7/ Բնակչության առողջության մասին տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի օրենքների համաձայն: ՀՀ օրենքում տեղ գտած, այն է՝ *բնապահպանության վիճակի մասին տեղեկություն* ձևակերպումն օգտագործվում է նաև Ռուսաստանի «Պետական գաղտնիքի մասին» օրենքում:

Շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել Վրաստանի, Լատվիայի, Ուկրաինայի, Մոլդովայի օրենքների համաձայն: ՀՀ օրենքում տեղ գտած, այն է՝ *բնապահպանության վիճակի մասին տեղեկություն* ձևակերպումն օգտագործվում է Ռուսաստանի Դաշնության «Պետական գաղտնիքի մասին» օրենքում:

8/ Լատվիայի, Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության օրենքներով արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել **մարդու և քաղաքացու իրավունքների խախտման վերաբերյալ տվյալները**:

Առաջարկություններ

1/ Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ընդլայնել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ պետական գաղտնիք հանդիսանալու հիմքով սահմանափակման ոչ ենթակա տեղեկությունների ցանկը՝ դրանում ներառելով.

- բնությանն ու շրջակա միջավայրին սպառնացող վտանգների մասին տեղեկությունները և **Ա** կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը, բնությանը և շրջակա միջավայրին սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները»,
- պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի և հանցավոր գործողությունների վերաբերյալ տեղեկությունները,
- հանցավորության մակարդակի մասին տեղեկությունները,
- բնակչության կենսամակարդակի մասին տեղեկությունները,
- ժողովրդագրական վիճակի/ցուցանիշների մասին տեղեկությունները,
- բարձրաստիճան պաշտոնատար անձանց առողջական վիճակի մասին տեղեկությունները,
- բնակչության առողջության, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի իրական վիճակի մասին տեղեկությունները և **Բ** կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «տնտեսության, բնության և շրջակա միջավայրի, բնակչության առողջության վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները»:

2/ Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և Օրենքի 10-րդ հոդվածի **Գ** կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները»:

Խնդիր 8

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ.

ա/ (...) «Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են

տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը» (...),

բ/ (...) «Գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման՝ **բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական կամ ծառայողական գաղտնիք**»: (...)

Վերլուծություն

Օրենքի մեջբերված վերջին դրույթը սահմանվել է Սահմանադրական դատարանի 06.03.2012 թ.-ի թիվ ՍԴՈ-1010 որոշման կայացման արդյունքում, որով Սահմանադրական դատարանը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի նախկին խմբագրությամբ գործող 12-րդ հոդվածի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթն այնքանով, որքանով այն չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանը գտել է, որ գերատեսչական ցանկերի գաղտնագրումը դուրս է տեղեկությունների գաղտնագրման՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, և դրանց ոչ հրապարակային բնույթն այնքանով, որքանով չի վերաբերում **գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության**, չի հետապնդում պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ և խնդիրներ է հարուցում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Սահմանադրական դատարանի դիրքորոշումից ակնհայտորեն բխում է, որ իրավաչափ կարող է համարվել ցանկում ներառված կոնկրետ տեղեկության, սակայն ոչ ամբողջ ցանկի իմպերատիվ գաղտնագրումը: Եվ չնայած նշված որոշման կայացումից հետո օրենսդիրը նախաձեռնել է փոփոխություն օրենքում, փոփոխված դրույթի ներկայիս խմբագրությունը կրկին համահունչ չէ Սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշմանը, ինչպես նաև չի համապատասխանում որոշակիության չափանիշին՝ գործնականում հնարավորություն ստեղծելով գերատեսչական ցանկում գոնե մեկ անուն պաշտպանված տեղեկության առկայության պարագայում գաղտնագրել ոչ թե այդ տողը, այլ ցանկն ամբողջությամբ, ինչն էլ տեղեկատվություն տնօրինող պետական մարմինների մեծամասնությունը գործնականում իրականացնում է⁵¹: Արդյունքում հանրությունը հասանելիություն չի ունենում այն նորմատիվ-իրավական ակտին և այն չափանիշներին, որոնց հիման վրա

⁵¹ Հարցված մարմիններից 26-ը հրաժարվել է տրամադրել ընդլայնված գերատեսչական ցանկերը (այդ թվում՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, մարզպետարանները, Ֆինանսների, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Քննչական կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, Կենտրոնական բանկը, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, Կադաստրի պետական կոմիտեն, Քաղաքաշինության պետական կոմիտեն, Պետական գույքի կառավարման վարչությունը), ընդհանրապես չեն պատասխանել Էկոնոմիկայի, Արդարադատության, Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարությունները, Գիտությունների ազգային ակադեմիան, Վիճակագրական կոմիտեն, Պետական վերահսկողության ծառայությունը:

իրականացվում է տեղեկատվության գաղտնագրումը, ինչը հակասում է նաև միջազգային չափորոշիչներին (տե՛ս հաջորդ ենթաբաժնում): Նշված խնդրին առաջնային լուծում տալու համար անհրաժեշտ է գաղտնագրե՞լ բոլոր գաղտնագրված ընդլայնված գերատեսչական ցանկերը՝ ինքնին պետական գաղտնիք պարունակող տողերի բացառությամբ:

Ինչ վերաբերում է պետական մարմինների՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի մշակման՝ օրենքով սահմանված իրավասությանը, կարծում ենք, որ այն խիստ խնդրահարույց է: Առաջին հերթին՝ նման իրավասությամբ փաստացի բոլոր գործադիր մարմիններին օժտելը մեծացնում է տեղեկատվության չարդարացված գաղտնագրման հնարավորությունը, հատկապես ներկայիս օրենքով սահմանված բովանդակությամբ ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների մասով և ներկայիս օրենքով սահմանված՝ այդ ցանկերը գաղտնագրելու իրավական հնարավորության պայմաններում: Մինևույն ժամանակ նման իրավակարգավորումը չի ապահովում պետական գաղտնիքի պահպանության ոլորտում պետության միատեսակ և համաչափ (տեղեկատվության ազատության սահմանափակման համաչափության տեսանկյունից) քաղաքականություն վարելու իրական հնարավորությունը: Յուրաքանչյուր գործադիր մարմին իրականացնում է պետության քաղաքականությունն ու գործառույթներն իրեն վերապահված ոլորտում, իսկ ազգային անվտանգության ապահովման, այդ թվում՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանությունը այս մարմինների ճնշող մեծամասնության համար ֆակուլտատիվ պարտականություն է, որի քաղաքականության մշակումը (այդ թվում՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկերի մշակումը) նպատակահարմար չէ թողնել յուրաքանչյուր այդպիսի մարմնի հայեցողությանը՝ անկախ նրանից, որ այդ քաղաքականությունը մշակելիս գերատեսչությունները այնուամենայնիվ պետք է առաջնորդվեն օրենքով և Կառավարության որոշմամբ նախանշված սահմաններով:

Պետական մարմինների կողմից պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների ընդլայնված ցանկեր կազմելու, այդ գործընթացում լիազորությունները չարաշահելու, այդ ցանկերն ինքնին գործնականում գաղտնագրելու խնդիրների արդիականության մասին է խոսում թե՛ դատական և թե՛ իրավակիրառ պրակտիկան, մասնավորապես.

- **Թիվ ՎՂ/1401/05/10** գործով հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ վերջինիս սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ մատակարարող կազմակերպությունների ցանկը տրամադրելու պահանջով, սակայն մերժվել է նշված տեղեկատվության գաղտնի լինելու պատճառով և ներկայացրել հայցադիմում Վարչական դատարան՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը նշված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու պահանջով: Դատարանը բավարարել է հայցը՝ գտնելով, որ պահանջվող տեղեկությունը պատասխանողը պարտավոր էր տրամադրել հայցվոր կազմակերպությանը: Վճիռը վերադաս աստիանների կողմից թողնվել է անփոփոխ:

- **Թիվ ՎԴ5/0066/05/18** գործով հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզպետարան՝ պահանջելով տրամադրել ՀՀ Շիրակի մարզպետարանի սահմանած գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենը, ինչին ի պատասխան ստացել է մերժում այն հիմնավորմամբ, որ ընդլայնված գերատեսչական ցանկը բացահայտում է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների վերտառություններ (անվանումներ) և գաղտնագրված է: Հայցվոր կազմակերպությունը դիմել է Վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Շիրակի մարզպետարանին տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Դատարանը բավարարել է հայցը՝ արտահայտելով դիրքորոշում առ այն, որ ներկա ընթացակարգով գերատեսչական ցանկերի գաղտնագրումը դուրս է տեղեկությունների գաղտնագրման «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, և հայցվորի ներկայացրած հարցման՝ Շիրակի մարզպետարանի մերժումը չի բխում օրենքի պահանջներից: Շիրակի մարզպետարանը բողոքարկել է Վարչական դատարանի վճիռը և Վերաքննիչ դատարանը բավարարել է բողոքը՝ բեկանել Վարչական դատարանի վճիռն ու մերժել Շիրակի մարզպետարանին՝ հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցը:
- **Թիվ ՎԴ/0936/05/18** գործով հայցվոր «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը առողջական վիճակի հիմքով տարկետում ստացած զորակոչիկների թվի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որի տրամադրումը մերժվել է դրա գաղտնի լինելու պատճառաբանությամբ: Այնուհետև հայցվորը պահանջել է ներկայացնել իրավական հիմքը (ընդլայնված գերատեսչական ցանկը), որով պահանջված տեղեկատվությունը համարվել է գաղտնի. վերջինիս տրամադրումը մերժվել է նույնպես գաղտնի լինելու պատճառաբանությամբ: Հայցվոր կազմակերպությունը դիմել է Վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրել հայցված տեղեկատվությունը, սակայն դատարանը հայցը մերժել է և գտել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը իրավաչափորեն մերժել է Հայցվորին տրամադրել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը հաստատելու մասին» 09.07.2015 թվականի թիվ 9-Ն հրամանի 2-րդ հավելվածը այն գաղտնագրված լինելու պատճառաբանությամբ և դրա իրավաչափ լինելու կանխավարկածի շրջանակներում: Վարչական դատարանի այս որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, որը վճիռը թողել է անփոփոխ:

- **Թիվ ՎԴ/11915/05/17** գործով հայցվոր «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն առ այն, թե Հայաստանի Հանրապետությունում հաշվառված տրանսպորտային միջոցներից քանի տոկոսն է աջակողմյան դեկով: Տեղեկատվության տրամադրումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցների մասին տեղեկությունները համարվում են գաղտնի՝ մերժելով նաև տրամադրել մերժման հիմք հանդիսացած իրավական ակտերը կամ դրանց համապատասխան մասերը՝ կրկին պատճառաբանելով, որ դրանք ևս պետական գաղտնիք են պարունակում: Դատարանը բավարարել է ՃՈ դեմ ներկայացված հայցադիմումը՝ ոչ իրավաչափ ճանաչելով վիճարկվող որոշումը և պատճառաբանելով, որ համապատասխան գերատեսչական ցանկի 27-րդ կետում ընգրկված «Տվյալներ ՀՀ-ում հաշվառված և փաստացի առկա տրանսպորտային միջոցների մասին» տողում խոսքը ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկության մասին է և ոչ մի կերպ չի կարող վերաբերել հայցվորի կողմից պահանջվող տեղեկությանը: Դատարանը փաստարկել է նաև, որ ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը այլ դեպքերում հրապարակվել է կամ տրամադրվել է որոշ ՁԼՄ-ների՝ այդ կերպ փաստելով իրավական ակտի կամայական կիրառման հանգամանքը: Ոստիկանությունն այժմ նշված դատական ակտը բողոքարկում է Վերաքննիչ վարչական դատարանում:

Գերատեսչությունների կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակում ընդլայնված ցանկեր մշակելիս լիազորությունները չարաշահելու իրական վտանգը գործնականում փաստվում է նաև որոշ հասանելի ցանկերի ուսումնասիրությամբ, որը ցույց է տալիս, որ դրանցում հաճախ ընդգրկվում են այնպիսի տեղեկություններ, որոնք կամ որևէ կերպ հնարավոր չէ տեղավորել օրենքով և Կառավարության որոշմամբ սահմանված գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկում ընդգրկված տեղեկությունների տեսակների սահմաններում, կամ հնարավոր է տեղավորել դրանց չափազանց լայն և ոչ ազգային անվտանգության ապահովման նպատակի համատեքստում մեկնաբանման արդյունքում: Օրինակ՝ Ոստիկանության պետի հրամանով հաստատված ընդլայնված գերատեսչական ցանկերում ընդգրկված են այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են տեղեկությունները քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ֆինանսավորման մասին (պետք է հասկանալ ցանկացած ֆինանսական տեղեկություն), Ոստիկանության օպերատիվ փնտրողական վարչության կառուցվածքի և գործունեության մասին, Ոստիկանության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի ցուցակային թվաքանակի մասին, հանդերձանքի, սննդի ձեռքբերման, ոստիկանության պահպանման ծախսերի և տնտեսագիտական դասակարգման մասին, անձնագրային ծառայության օգնությամբ հանցագործությունների կամ այլ փնտրվող անձանց բացահայտման մասին,

Ոստիկանության ծառայողների քանակի վերաբերյալ, Ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների կողմից իրականացվող հատուկ միջոցառումների արդյունքների մասին, տեղեկություններ, որոնք կարող են բացահայտել ոստիկանության զորքերի զարգացման թիվը, մարտական կազմը կամ քանակը, ընդհանրացված տեղեկություններն անձնակազմի կողմից զինվորական կարգի խախտումների և նրանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ, Ոստիկանության զորքերի պահպանման ծախսերի ամփոփ նախահաշիվները, տարեկան ամփոփ տեղեկությունները և հաշվետվությունները ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման-վերստուգման կատարված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ⁵²: Պաշտպանության նախարարի հրամանով հաստատված ընդլայնված գերատեսչական ցանկում ընդգրկված են այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են հաշվետու տվյալներն ընթացիկ ապահովման սննդամթերքի, իրային ունեցվածքի վերաբերյալ, հաշվետու տվյալներն ընթացիկ ապահովման դեղորայքի և բուժսարքավորումների առաքումների մասին, տեղեկությունները զորքերի բնակավորման՝ պլանային կամ հաշվետու տվյալներ հիմնական ֆոնդերի վերաբերյալ (առանց որևէ որոշակիացման), զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները, ինչպես նաև այդ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները (առանց որևէ նախապայմանի), ֆինանսական հաշվետվությունները (առանց որևէ տարբերակման), տեղեկությունները և հայտերը պահպանման ծախսերի առանձին հոդվածների վերաբերյալ (կրկին առանց որևէ որոշակիացման)⁵³:

Վերոգրյալի հետ մեկտեղ գործնականում տեղեկություն հայցողները բախվում են նույնիսկ գերատեսչական ցանկերում ընդգրկված տեղեկությունների շրջանակից դուրս տեղեկություններ գաղտնագրելու դեպքերի: Օրինակ՝ գաղտնի լինելու պատճառաբանությամբ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին ՀՀ պաշտպանության նախարարությունը հրաժարվել է տրամադրել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են իրավական ակտերը, որոնցով կարգավորվում են զինվորական հոսպիտալներում բժշկական օգնության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները, հիվանդության պատճառով վաղաժամ զորացրված զինծառայողների թիվը և տեղեկատվությունն այն մասին, թե նրանցից քանիսն է անհամատեղելի հիվանդությունը ձեռք բերել ծառայության ընթացքում, զինված ուժերում հոգևոր սպասավորների թիվը:

Մարդու իրավունքների պաշտպանն իր հերթին 2018 թ.-ի տարեկան հաղորդման մեջ արձանագրում է տեղեկատվության ակնհայտ ոչ իրավաչափ գաղտնագրման մի շարք դեպքեր: Մասնավորապես հաղորդման մեջ նշվում է, որ Պաշտպանության

⁵² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր (այսուհետ՝ ՀՀԳՏ) 2016.04.06/8(551) Հոդ.86, 29.02.2016 թ.:

⁵³ Տե՛ս ՀՀԳՏ 2015.08.03/20(532).1 Հոդ.208.2, 09.07.2015 թ.:

նախարարությունից պահանջված՝ պարտադիր ժամկետային զինծառայողների գորակոչման ժամանակ ախտորոշված հիվանդության պատճառով ժամկետից շուտ արձակվելու դեպքերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը չի տրամադրվել դասակարգված լինելու պատճառաբանությամբ, ինչն առերևույթ խնդրահարույց է հատկապես հաշվի առնելով այն, որ 2017 թ.-ին նույն հարցման կապակցությամբ տեղեկություն տրամադրվել էր, բացի դրանից՝ նման տեղեկությունը չի բացահայտում պետական կամ ծառայողական գաղտնիք: Նույն կերպ Պաշտպանն արձանագրում է նաև հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողության և տեղափոխման կարգի վերաբերյալ տեղեկությունների՝ ոչ իրավաչափորեն գաղտնագրված լինելու խնդիրը (գաղտնագրված է պաշտպանության նախարարի հրամանով, քանի որ պարունակում է գործառնաբերի տեղակայման վայրերի և կարգայնության հետ կապված տվյալներ)՝ առաջարկելով հրապարակել այն առանց գործառնաբերի տեղակայման և կարգայնության վերաբերյալ տեղեկությունների:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Տեղեկատվության գաղտնագրման չափանիշների, իրավակարգավորումների մատչելիության չափանիշը ամրագրվում է «Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 12-րդ սկզբունքով: Այն մասնավորապես սահմանում է. «(ա) Նախքան տեղեկատվության գաղտնիացման ընթացակարգերի և չափանիշների կիրառումը հանրությունը պետք է հնարավորություն ունենա մեկնաբանություններ անելու դրանց վերաբերյալ: (բ) Հանրությունը պետք է հասանելի լինեն տեղեկատվության գաղտնիացման գրավոր ընթացակարգերը և չափանիշները»:

Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում, անդրադառնալով պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տեսակների՝ մի դեպքում օրենսդրի և կառավարության, մյուս դեպքում պետական մարմինների սահմանման հարաբերակցությանը, նշել է, որ վերջին եղանակի հիմնական խնդիրներն են իրավական անվտանգությունը, այն է՝ գաղտնի տեղեկությունների հստակ ցուցակների գործնականում հնարավոր անհասանելիությունը, ինչպես նաև ինքնին պետական գաղտնիքի ընդհանուր քաղաքականության պատվիրակումը՝ անպատասխանատու պաշտոնյաներին, ինչն առաջացնում է անհրաժեշտություն ունենալու ուժեղ և օբյեկտիվ հսկողություն դասակարգման գործընթացի նկատմամբ: Եվրոպական տարածաշրջանի երկրների ոլորտային օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը որոշելու հարցի կապակցությամբ առկա են մի շարք մոտեցումներ, մասնավորապես պետական և/կամ ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների տեսակները և ցանկերը կամ միայն տեսակները.

1/ սահմանվում են ոլորտային օրենքով, և նախատեսված չէ հնարավորություն այդ ցանկերն ընդլայնելու կամ մանրամասնելու կառավարության որոշմամբ կամ գերատեսչական ցանկով (Էստոնիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Ալբանիա, Լեհաստան, Բուլղարիա, Նորվեգիա, Սլովակիա, Սլովենիա, Բելգիա).

2/ սահմանվում են ոլորտային օրենքով, և նախատեսված է հնարավորություն այդ

ցանկերն ընդլայնելու կամ մանրամասնելու կառավարության որոշմամբ (Վրաստան, Լատվիա, Չեխիա, Սերբիա, Ռումինիա (վերջինի դեպքում գերատեսչությունների ներկայացմամբ)։

3/ սահմանվում են ոլորտային օրենքով, և նախատեսված է հնարավորություն այդ ցանկերն ընդլայնելու կամ մանրամասնելու կառավարության կամ հատուկ մարմնի որոշմամբ և գերատեսչական ցանկով (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Մոլդովա, Լիտվա)։

Այդպիսով, միջազգային լավագույն փորձը վկայում է այն մասին, որ պետությունների մեծամասնությունը որդեգրել է պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների տեսակների առումով առավել միասնական քաղաքականություն վարելու մոտեցումը՝ այդ ոլորտը կարգավորելով օրենսդրությամբ և կառավարության որոշումների միջոցով։

Առաջարկություններ

1/ Կառավարությանը՝ օգտվելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված լիազորությունից՝ ընդունել որոշում գերատեսչությունների ղեկավարների կողմից գաղտնագրված ընդլայնված գերատեսչական ցանկերը (բացառությամբ ինքնին պետական գաղտնիք պարունակող տողերի) գաղտնազերծելու մասին։

2/ Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել գործող օրենքում փոփոխությունների կատարում, մասնավորապես առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենքի այն դրույթները, որոնցով սահմանվում է պետական մարմինների իրավասությունը՝ մշակելու գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը և դրանից բխող հարակից դրույթները։ Նախատեսել, որ պետական մարմինները տեղեկություններ գաղտնագրելիս պետք է հիմք ընդունեն այդ տեղեկությունների համապատասխանությունը Կառավարության սահմանած գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկին։ Միննույն ժամանակ Կառավարության սահմանած՝ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկը պետք է շարունակի մնալ հրապարակային **ամբողջությամբ**, իսկ դրանում առկա տեղեկությունների վերնագրերը չպետք է հասցվեն այն աստիճան մանրամասնության, որ ինքնին պարունակեն այնպիսի տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը։

Խնդիր 9

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում պաշտոնատար անձանց հստակ պարտականությունը՝ նշելու տեղեկությունները գաղտնիքի շարքին դասելիս տեղեկատվությունը գաղտնիացնելու պատճառ հանդիսացող հիմքերը, ինչպես նաև դրա գաղտնազերծման հստակ ժամանակը կամ պայմանը։

Վերլուծություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկությունները գաղտնագրվում են օրինականության, հիմնավորվածության և ժամանակին կատարելու սկզբունքներին համապատասխան: (...) Գաղտնագրման **հիմնավորվածությունը** փորձագիտական գնահատման միջոցով յուրաքանչյուր տեղեկության **գաղտնագրման նպատակահարմարության պարզումն է՝** ելնելով Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման շահերից»: Թեև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ընդհանրական կերպով սահմանում է պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պարտականությունը՝ **հիմնավորելու տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու անհրաժեշտությունը** (հոդված 12, 2-րդ պարբերություն), մինևույն ժամանակ չի ամրագրում պաշտոնատար անձանց հստակ պարտականությունը՝ տեղեկությունները գաղտնիքների շարքին դասելիս **նշելու տեղեկատվությունը գաղտնագրելու և հատկապես կոնկրետ ժամանակահատվածով գաղտնագրելու պատճառ հանդիսացող հիմքերը**: Մասնավորապես նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությամբ սահմանվում է միայն, որ տեղեկությունների գաղտնագրումն արտահայտվում է Կառավարության կողմից սահմանված կարգով⁵⁴, յուրաքանչյուր առանձին տեղեկության **գաղտնիության աստիճանը որոշելու**, և համապատասխան տեղեկակրին **գաղտնիության որոշմագիր տալու** ձևով՝ գործող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկերին համապատասխան: Պաշտոնատար անձի կողմից տեղեկությունը գաղտնագրելը խիստ մեխանիկորեն՝ ուղղակի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկերին համապատասխանության ստուգման միջոցով, այդ գործընթացում որևէ ուղեկցող հիմնավորում նշելու պարտականության բացակայությունը անառարկելիորեն նպաստում է կամայականության և տեղեկությունները գաղտնի պահելու չափից շատ դեպքերի թվի մեծացմանը: Հակառակը, նման պարտականության սահմանման դեպքում տեղեկությունը պետական գաղտնիքի շարքին դասելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձը պարտավորված կլինի յուրաքանչյուր առանձին դեպքում իրապես գնահատել **կոնկրետ տեղեկատվության կոնկրետ ժամանակահատվածում կամ մինչև կոնկրետ պայմանի վրա հասնելը** հրապարակման հետևանքով որոշակի վնասի առաջացման հնարավորությունը: Նման պարտականության սահմանման անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային չափորոշիչներից և միջազգային լավագույն իրավաստեղծ փորձից (տե՛ս հաջորդ ենթաբաժնում):

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 11-րդ սկզբունքի համաձայն՝
«(ա) Այն հանգամանքից անկախ, թե արդյո՞ք տվյալ պետությունում գործում է

⁵⁴ Վարչապետի աշխատակազմ կատարված հարցմանն ի պատասխան, թե արդյո՞ք ՀՀ կառավարությունը մշակել է նշված կարգը, հղում է կատարվել Կառավարության «ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 173 որոշմանը, որով նման կարգ չի սահմանվում:

տեղեկատվության գաղտնիացման ֆորմալ գործընթաց, թե ոչ, պետական մարմինները պարտավոր են **նշել տեղեկատվությունը գաղտնիացնելու պատճառ հանդիսացող հիմքերը**: (...) (դ) Տեղեկատվությունը գաղտնիացնելու դեպքում i) գրառմանը պետք է ավելացվի պաշտպանիչ նշում, որը պետք է սահմանի գաղտնիացման մակարդակը, եթե այդպիսին առկա է, և տեղեկատվությունը գաղտնի պահելու ժամկետի առավելագույն տևողությունը, և (ii) գրառման մեջ պետք է ներառվի **հիմնավորում՝ տվյալ մակարդակով և տվյալ ժամանակահատվածում տեղեկատվությունը գաղտնիացնելու անհրաժեշտությունը**:

Պարզաբանում. խրախուսվում է ներկայացնել տեղեկատվությունը գաղտնիացնելու մասին յուրաքանչյուր որոշումը հիմնավորող նշում, քանի որ դրա շնորհիվ պաշտոնյաներն ուշադրություն են դարձնում տեղեկատվության հրապարակման հետևանքով որոշակի վնասի առաջացման հնարավորությանը, և, բացի այդ, նման հիմնավորման առկայությունը դրսևացնում է տեղեկատվության գաղտնագերծման և հրապարակման գործընթացը: Պարբերություն առ պարբերություն նշումն էլ ավելի է նպաստում փաստաթղթերի չգաղտնիացված հատվածների հրապարակման հետևողականությանը»:

Փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝

«(...) բ) Տեղեկատվությունը գաղտնիացնող պաշտոնյան պետք է նշի գաղտնիացման ամսաթիվը, պայմանները կամ գաղտնագերծման պայմանը (...)»:

Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում, անդրադառնալով տեղեկությունները գերատեսչական ցանկերին համապատասխանելու հիմքով գաղտնագրելու եղանակին, նշել է, որ չնայած օրենքում տեղեկությունները գաղտնագրելու հիմնավորվածության սկզբունքի և իրավասու պաշտոնյաների տեղեկությունները գաղտնագրելը հիմնավորելու պարտականության ամրագրմանը, վերը նշված եղանակով տեղեկությունների գաղտնագրումն ըստ էության գաղտնագրման առանձին այլընտրանքային եղանակ է, որը մարմնի ղեկավարի ձեռքերում ուժեղ գենք է իր ղեկավարած մարմինը քննադատությունից պաշտպանելու համար (այլ կերպ ասած՝ գաղտնագրելու ցանկացած ոչ ցանկալի տեղեկատվություն):

Գաղտնագրման հիմնավորումը նշելու պարտականությունը կարևորվել է նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն շարժում» կազմակերպության հրապարակած և 15 երկրների և Եվրոպական միության օրենսդրության ուսումնասիրության վրա հիմնված «Դասակարգված տեղեկատվություն» զեկույցում⁵⁵: Տեղեկությունները պետական կամ ծառայողական տեղեկությունների շարքին դասելիս պաշտոնատար անձանց՝ գաղտնագրումը հիմնավորելու պարտականությունը սահմանված է ԱՄՆ-ի, Սլովենիայի, Բուլղարիայի, Էստոնիայի և Ուկրաինայի ոլորտային օրենսդրությամբ, իսկ գաղտնագրման հստակ տևողությունը և/կամ գաղտնագերծման ժամանակը կամ պայմանը նշելու

⁵⁵ St' u Classified Information /A review of current legislation across 15 countries and the EU/, <https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/140911-Classified-Information.pdf>:

պարտականությունը սահմանված է ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Չեխիայի, Վրաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Մոլդովայի, Սերբիայի, Սլովենիայի և Ուկրաինայի ոլորտային օրենսդրությամբ:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխության և լրացման կատարում, մասնավորապես Օրենքի 13-րդ հոդվածում սահմանել, որ տեղեկություններ գաղտնագրելիս պաշտոնատար անձինք պարտավոր են յուրաքանչյուր տեղեկատվության մասով նշել գաղտնագրման տևողությունը, գաղտնագրեման հստակ ժամանակը կամ պայմանը, ինչպես նաև տեղեկությունը գաղտնագրելու (այդ թվում՝ գաղտնիության այդ աստիճանի շնորհման և տևողության մասով) անհրաժեշտության հիմնավորումը: ՀՀ կառավարությանը առաջարկվում է նաև մշակել և ընդունել գաղտնագրման հիմնավորումը յուրաքանչյուր գաղտնագրված տեղեկության կրիչին կցելու կարգը:

Խնդիր 10

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում իրավասու պաշտոնատար անձանց՝ տեղեկությունները գաղտնագրեծելու իմպերատիվ պարտականությունը՝ պայմանավորված որոշակի պայմանի վրա հասնելով կամ տեղեկատվության հետագա գաղտնի պահպանության անհրաժեշտությունը բացառող հանգամանքների ի հայտ գալով (հոդված 16):

Վերլուծություն

Օրենքը, որպես տեղեկությունները գաղտնագրեծելու հիմք նախատեսելով *օբյեկտիվ հանգամանքների փոփոխությունը, որի հետևանքով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետագա պահպանությունը և պաշտպանությունը դառնում է աննպատակահարմար*, չի նախատեսել այդ հիմքով տեղեկությունները գաղտնագրեծելու պատասխանատու պաշտոնատար անձանց **իմպերատիվ** պարտականությունը: Ստեղծվում է իրավիճակ, երբ օբյեկտիվ հանգամանքի փոփոխությամբ տեղեկությունը գաղտնի պահելու անհրաժեշտության վերացման դեպքում պաշտոնատար անձն ունի ընդամենը այն գաղտնագրեծելու իրավասություն, հայեցողություն, սակայն ոչ իմպերատիվ պարտականություն:

Նույն կերպ, պայմանավորված օրենքում տեղեկությունները մինչև որոշակի պայմանի (իրադարձության) վրա հասնելը գաղտնագրելու հնարավորության բացակայությամբ (սրա մասին խոսվեց նախորդ խնդրի շրջանակում), նախատեսված չէ նաև այդպիսի պայմանի վրա հասնելով պայմանավորված՝ տեղեկությունները գաղտնագրեծելու՝ պետական մարմինների և պատասխանատու պաշտոնատար անձանց պարտականությունը:

Գործնականում իրավիճակն այնպիսին է, որ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություն ունեցող մարմիններից

շատերն ուղղակի չեն իրականացնում գաղտնագերծում, որոշները տեղեկությունները գաղտնագերծում են սահմանված ժամկետից ուշ⁵⁶, իսկ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության արդյունքում տեղեկություններ գաղտնագերծելու ընթացակարգն առհասարակ չի կիրառվում⁵⁷: ՀՀ-ում տեղեկությունները գաղտնագերծելու մշակույթի փաստացի բացակայությունը փաստում են նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի տարեկան հետազոտությունները⁵⁸: Այս իրավիճակի հիմնական պատճառներից հաստատապես կարելի է նշել անկախ վերահսկող մարմնի բացակայությունը:

Նշվածը հիմք ընդունելով՝ անհրաժեշտ է գործող օրենքում գաղտնագրման ժամկետը վրա հասնելու պայմանի հետ մեկտեղ նախատեսել տեղեկությունները թե՛ գաղտնագրման պայմանը վրա հասնելու և թե՛ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքերով գաղտնագերծելու՝ պատասխանատու պաշտոնատար անձանց իմպերատիվ պարտականությունը՝ այդ կերպ սահմանելով տեղեկատվության ազատության իրավունքի չհիմնավորված երկարատև սահմանափակման դեմ լրացուցիչ երաշխիք:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվությունը կարող է գաղտնի պահվել ազգային անվտանգության հիմքով միայն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է ազգային անվտանգության իրավաչափ շահը պաշտպանելու համար:

Տեղեկատվությունը որոշակի պայմանի վրա հասնելու (իրադարձության տեղի ունենալու) կամ տեղեկատվության հետագա գաղտնի պահելու անհրաժեշտությունը բացառող հանգամանքների ի հայտ գալու հիմքով գաղտնագերծելու իմպերատիվ պահանջ սահմանված է ԱՄՆ-ի, Չեխիայի, Էստոնիայի, Վրաստանի, Լատվիայի, Սերբիայի, Սլովենիայի, Ղազախստանի ոլորտային օրենսդրությամբ:

Վենետիկի հանձնաժողովը ևս Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում նշել է, որ տեղեկատվության ավտոմատ գաղտնագերծման պայմանը պետք է հստակ ամրագրում ստանա օրենքում:

⁵⁶ Կատարված հարցումներին ի պատասխան՝ Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արտաքին գործերի, Արտակարգ իրավիճակների, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու Ֆինանսների նախարարությունները, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետարանները, Նախագահի աշխատակազմը, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Կադաստրի պետական կոմիտեն, Կենտրոնական բանկը, Ոստիկանությունը, Գլխավոր դատախազությունը և Քննչական կոմիտեն հայտնել են, որ երբևէ գաղտնագրված տեղեկություններ չեն գաղտնագերծել: Միևնույն ժամանակ ԱԱԾ-ն հայտնել է որ տեղեկությունները որոշ դեպքերում գաղտնագերծում է սահմանված ժամկետից ուշ:

⁵⁷ Հարցված բոլոր մարմինները (նախարարություններ, մարզպետարաններ և այլ գերատեսչություններ) հարցումներին պատասխանելու դեպքում հայտնել են, որ նման հիմքով գաղտնագերծում երբևէ չեն իրականացրել:

⁵⁸ Տե՛ս <http://www.foi.am/en/research/item/1447/>, <http://www.foi.am/en/news/item/1719/>:

Առաջարկություն

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն, լրացում. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը լրացնել որոշակի պայմանի վրա հասնելով կամ տեղեկատվության հետագա գաղտնի պահպանության անհրաժեշտությունը բացառող հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված՝ տեղեկությունները գաղտնագերծելու՝ իրավասու պաշտոնատար անձանց իմպերատիվ պարտականությունը սահմանող դրույթով:

Խնդիր 11

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում գաղտնագերծված տեղեկությունները նախաձեռնողական կերպով հրապարակելու՝ պետական մարմինների պարտականությունը:

Վերլուծություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (հոդված 16) սահմանում է, որ օրենքով նախատեսված պահպանման ժամկետները լրանալուց հետո գաղտնիք կազմող տեղեկությունները սահմանված կարգով գաղտնագերծվում և **համարվում են ծանոթանալու համար բաց կամ ոչնչացվում են սահմանված կարգով**: Այս կարգավորումը, սակայն, չի ապահովում գաղտնագերծված տեղեկատվության լիարժեք մատչելիությունը հանրության համար: Խնդիրն առաջին հերթին այն է, որ հասարակությունը հնարավորություն չունի հանրամատչելի կերպով (այդպիսին կարող է լինել համացանցով հրապարակելու եղանակը) տեղեկանալու տեղեկատվության գաղտնագերծման մասին: Երկրորդ խնդիրը վերը մեջբերված դրույթի ուժով գաղտնագերծված տեղեկությունների անհետ ոչնչացման հնարավորությունն է, մասնավորապես տեղեկությունները 3-ամսյա ժամկետում փորձագիտական գնահատում իրականացնելու արդյունքում կարող են հանձնվել արխիվ (եթե համապատասխանում են արխիվային օրենսդրությամբ սահմանված արժեքավորության չափանիշներին) կամ ոչնչացվել, իսկ նշված 3-ամսյա ժամկետում տեղեկությունների հասանելիությունը գործնականում ապահովելը դառնում է անհնար, առավել ևս եթե դրանք արդեն փոխանցված են գնահատող փորձագիտական հանձնաժողովին⁵⁹: Վերջապես, գաղտնագերծված տեղեկություններն առերևույթ ունեն հանրային նշանակություն արդեն միայն այն հանգամանքի ուժով, որ եղել են այնչափ կարևոր, որ ժամանակին գաղտնագրվել են: Ուստի ընդհուպ 30 կամ 10 տարի հանրության համար անմատչելի

⁵⁹ Նշված պայմաններում տեղեկությունների մատչելիությունը գործնականում ապահովելու կապակցությամբ կատարված հարցումներին ի պատասխան՝ գերատեսչությունները հայտնել են, որ նման դեպքեր չեն ունեցել, կամ հրաժարվել են պատասխանել, իսկ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ տեղեկությունները հասանելի են դարձվում օրենքով սահմանված ընթացակարգն անցնելուց հետո, ինչն ինքնին ևս վկայում է բարձրացված խնդրի արդիականության մասին:

տեղեկությունները միայն գաղտնագերծելն ու մինչև դրանց ճակատագրի հարցի լուծումը (հնարավոր է ոչնչացումը) ծանոթանալու իրական և ողջամտորեն բավարար ժամանակ և հնարավորություն չընձեռելը չի ապահովում տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացումը:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 17-րդ սկզբունքի համաձայն՝ գաղտնագերծված փաստաթղթերը պետք է հրապարակվեն նախաձեռնողական (պրոակտիվ) կերպով կամ որևէ այլ կերպ հասանելի դառնան հանրությանը:

Գաղտնագերծված տեղեկությունների՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ պրոակտիվ հրապարակման և հանրության համար հասանելիության ապահովման առաջարկություն է արվում նաև «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն շարժում» կազմակերպության «Դասակարգված տեղեկատվություն» զեկույցում (էջ 33, 60)⁶⁰:

Առաջարկություն
Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը լրացնել՝ դրանում նախատեսելով 1/ տեղեկություններ գաղտնագերծելիս պետական մարմնի՝ հրապարակային ծանուցման միջոցով հանրության իրազեկման պարտականություն և 2/ գաղտնագերծումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում՝ մինչև արժեքավորումն ու փաստաթղթերի ճակատագիրը լուծելը, դրանց ծանոթանալու հնարավորություն սահմանող դրույթ:

Խնդիր 12

Խնդրի նկարագրություն
«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում.
1/ պետական մարմնի պարտականությունը՝ պարբերաբար վերանայելու տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունը.
2/ տեղեկությունները գաղտնագերծելու հնարավորություն՝ հիմք ընդունելով կոնկրետ հանգամանքներում հանրության տեղեկացվածության գերակայող շահը՝ առանց քրեական հետապնդման ենթարկվելու մտավախության.
3/ հնարավորություն՝ դիմելու տեղեկատվությունը գաղտնիքի շարքին դասած մարմնին՝ այն գաղտնագերծելու առաջարկությամբ.
4/ տեղեկությունը հիմնավորված առաջարկության հիման վրա չգաղտնագերծելու բողոքարկման հնարավորություն:

⁶⁰ St' u Classified Information /A review of current legislation across 15 countries and the EU/, <https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/140911-Classified-Information.pdf>:

Վերլուծություն

1/ Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է, որ պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, պարտավոր են ոչ ուշ, քան 5 տարին մեկ անգամ, վերանայել պետական մարմիններում գործող գաղտնագրման ենթակա գերատեսչական **ցանկերում ընդգրկված** տեղեկությունների հիմնավորվածությունը և այդ տեղեկություններին նախկինում տրված գաղտնիության աստիճանների համապատասխանությունը: Այդպիսով, փաստացի օրենքը վերանայման պարտականությունը սահմանել է գերատեսչական ցանկերում ընդգրկված և ոչ կոնկրետ գաղտնագրված տեղեկությունների մասով, այնինչ առավել կարևոր է հենց կոնկրետ տեղեկությունները շարունակական գաղտնի պահելու անհրաժեշտության պահպանման պարբերական վերանայումը: Այսպես, հնարավոր է և նույնիսկ առավել հավանական, որ գերատեսչական ցանկերում ընդգրկված գաղտնագրման ենթակա տեղեկատվության կոնկրետ տեսակը 5 տարվա ընթացքում կորցրած չլինի ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից այն գաղտնի պահելու արդիականությունը, սակայն այդ արդիականությունն այլևս չպահպանի այդ տեսակի մեջ մտնող կոնկրետ տեղեկատվությունը:

2/, 3/ Օրենքի 16-րդ հոդվածը որպես տեղեկատվության գաղտնագրման հիմքեր սահմանում է միայն տեղեկությունների բաց փոխանակման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները և օբյեկտիվ հանգամանքների փոփոխությունը, որոնց հետևանքով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետագա պահպանությունը և պաշտպանությունը դառնում է աննպատակահարմար: Այլ կերպ ասած՝ օրենքում նախատեսված չէ տեղեկատվություն տիրապետողի՝ տեղեկությունները գաղտնագրծելու լիազորությունը՝ հիմք ընդունելով կոնկրետ հանգամանքներում հանրության տեղեկացվածության գերակայող շահը՝ առանց գաղտնագրծող պաշտոնատար անձի՝ քրեական հետապնդման ենթարկվելու մտավախության: Նախատեսված չէ նաև պետական մարմնի պարտականությունը՝ քննարկելու կոնկրետ տեղեկատվության գաղտնագրծման հնարավորությունն այն տրամադրելու մասին պահանջ ստանալիս թե՛ վերը նշված հիմքով և թե՛ տեղեկատվությունը գաղտնի պահելու շարունակական անհրաժեշտության բացակայության հիմքով: Տեղեկատվության գաղտնագրծման նշված հիմքերի սահմանումը, սակայն, լիովին բխում է տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման համաչափության ապահովման անհրաժեշտությունից և միջազգային լավագույն փորձից:

4/ Օրենքում տեղեկատվության գաղտնագրծման առաջարկ/դիմումը մերժելու բողոքարկման հնարավորության սահմանումն անհրաժեշտ միջոց է տեղեկատվության գաղտնագրծման առաջարկ ներկայացնելու իրավունքի լիարժեք, ոչ ձևական իրացման, այդ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու համար:

Այսպիսով, հաշվի առնելով միջազգային կառույցների խորհրդատվական փաստաթղթերը, ինչպես նաև մի շարք այլ պետությունների իրավաստեղծ փորձը՝

կարող ենք փաստել, որ նկատի ունենալով հանրության տեղեկացվածության գերակայող շահը՝ առկա է օրենքում գաղտնագրված տեղեկությունների՝ գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման, ինչպես նաև պատճառաբանված առաջարկի դեպքում տեղեկատվության գաղտնագերծման, իսկ դիմումը մերժելու դեպքում՝ բողոքարկման իրավունքի վերաբերյալ կարգավորումներ սահմանելու անհրաժեշտություն:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

1/ «Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 16-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվությունը կարող է գաղտնի պահվել ազգային անվտանգության հիմքով միայն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է ազգային անվտանգության իրավաչափ շահը պաշտպանելու համար: Այս սկզբունքի պահպանումն ապահովելու համար **պետք է կանոնավոր կերպով վերանայել տեղեկատվությունը գաղտնի պահելու մասին որոշումները:**

Լավ գործելակերպ է համարվում նման որոշումները առնվազն ամեն հինգ տարին մեկ վերանայելու օրենսդրական պահանջը:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն շարժում» կազմակերպության «Դասակարգված տեղեկատվություն» զեկույցի համաձայն ևս խորհուրդ է տրվում օրենսդրությամբ սահմանել պետական մարմինների պարտականությունը՝ գնահատելու տեղեկատվության գաղտնիության պահպանության անհրաժեշտությունը առնվազն 5 տարին մեկ անգամ⁶¹: Նման պարտականություն չսահմանելը որպես թերություն ընդգծված է նաև ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի՝ Դրոգուտանի «Պետական գաղտնիքների պաշտպանության» մասին օրենքի վերաբերյալ հրապարակած մեկնաբանություններով⁶²:

Գաղտնագրված տեղեկությունների՝ գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման՝ պետական մարմինների պարտականությունը սահմանված է Խորվաթիայի, Չեխիայի (5 տարին մեկ անգամ), Հունգարիայի (5 տարին մեկ անգամ), Հնդկաստանի (5 տարին մեկ անգամ), Էստոնիայի (տարին մեկ անգամ), Վրաստանի (տարին մեկ անգամ), Սերբիայի (1-10 տարին մեկ անգամ), Հյուսիսային Մակեդոնիայի և ԱՄՆ-ի ոլորտային օրենսդրությամբ:

2/ Գաղտնի տեղեկատվության մասին ԱՄՆ նախագահի հրամանագիրը սահմանում է դրույթ, համաձայն որի՝ նույնիսկ գաղտնագրված տեղեկատվությունը պետք է բացահայտվի, եթե դրա բացահայտման հանրային շահը գերակայում է ազգային անվտանգությանը հասցվելիք վնասին. այդ հարցի քննարկումը պետք է փոխանցվի մարմնի ղեկավարին, որն էլ պետք է ընդունի որոշում: Տեղեկությունների՝ հանրային շահի գերակայության հիմքով բացահայտման հնարավորություն է սահմանում նաև Հնդկաստանի «Տեղեկատվության իրավունքի մասին» օրենքը: Նույն օրենքը սահմանում է նաև, որ տեղեկատվության մատչելիության սահմանափակումները չեն

⁶¹ St' u Classified Information /A review of current legislation across 15 countries and the EU/, <https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/140911-Classified-Information.pdf>:

⁶² St' u Комментарии к закону «О защите государственных секретов Кыргызской Республики», <https://www.osce.org/ru/fom/16843?download=true>:

կարող կիրառվել կոռուպցիային և մարդու իրավունքների խախտմանը վերաբերող հարցումների կապակցությամբ: Խորվաթիայի ոլորտային օրենքի համաձայն, երբ կա հանրային հետաքրքրություն, տեղեկատվություն սնօրինողը պետք է որոշի տեղեկատվության ազատության իրավունքի և պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության հարաբերակցությունը և որոշում կայացնի տեղեկատվության գաղտնիության աստիճանը պահպանելու, փոխելու կամ տեղեկությունը գաղտնագերծելու մասին: Նմանօրինակ կարգավորում նախատեսում է նաև Սերբիայի օրենքը՝ սահմանելով խորհրդարանի, հանրապետության նախագահի և կառավարության իրավասությունը՝ գաղտնագերծելու գաղտնի փաստաթղթեր՝ անկախ դասակարգման մակարդակից՝ ելնելով հանրային շահից կամ միջազգային պարտավորությունների կատարման նպատակից:

Նմանօրինակ կարգավորման առկայության անհրաժեշտությունն արձանագրել է նաև Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում՝ նշելով, որ կարող են լինել ծայրահեղ իրավիճակներ, երբ պաշտոնյաները պետք է կարողանան ՋԼՄ-ների համար բացահայտել նույնիսկ շատ գաղտնի տեղեկություններ՝ առանց քրեական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու մտավախության (օրինակ՝ անվտանգության գործակալության կատարած խոշոր իրավախախտումների դեպքերին առնչվող տվյալներ): Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ համաձայն է ԵԱՀԿ-ի փորձագիտական եզրակացությանը, որ նման պատասխանատվությունից պաշտպանությունը պետք է ներառվի հենց «Պետական գաղտնիքների մասին» օրենքում, որպեսզի լիովին պարզ լինի՝ նույնիսկ ազգային անվտանգության մասին տեղեկատվությունը կարող է հրապարակվել, եթե դա բխում է հանրային շահից:

Նշված, ինչպես նաև 2005 թ.-ին հրապարակված փորձագիտական եզրակացություններում («Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ մեկնաբանություններում) ԵԱՀԿ ՋԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը արձանագրում է, որ օրենսդրությամբ պետք է ճանաչվեն այն դեպքերը, երբ նույնիսկ պատշաճ դասակարգված տեղեկատվությունը պետք է հրապարակվի, քանի որ դրա բացահայտման հարցում կա հասարակական մեծ հետաքրքրություն, ինչը միջազգայնորեն ընդունված դրույթ է: Օրենքը պետք է այդ դեպքերում պարունակի նաև դրույթներ տեղեկատվությունը հրապարակողին որևէ պատժի ենթարկելու արգելքի մասին⁶³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Գուջան ընդդեմ Մոլդովայի» գործով կայացված որոշմամբ, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, ճանաչել է պաշտոնատար անձանց ազդարարման հիմնարար իրավունքը: Դատարանը նշում է, որ քաղաքացիական ծառայողին իր աշխատանքի ընթացքում կարող են հասանելի լինել ներքին, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ, որոնց հրապարակումը համապատասխանում է հասարակության մեծ հետաքրքրությանը, ուստի պետական

⁶³ St' u Comments on Draft Law on State Secret of the Republic of Moldova, <https://www.osce.org/fom/35114?download=true>, Comments on the Moldovan Draft Law on State and Official Secrets, <https://www.osce.org/fom/16548?download=true>:

ծառայողի՝ աշխատավայրում ապօրինի կամ ոչ իրավաչափ գործողությունների մասին ազդարարումը որոշ հանգամանքներում պետք է պաշտպանվի: Հանրային հետաքրքրությունը կարող է լինել այնքան մեծ, որ գերակայի նույնիսկ օրենքով սահմանված գաղտնիության պահպանման պարտականությանը⁶⁴:

ԵՆ Խորհրդարանական վեհաժողովը ևս 2007 թ.-ի թիվ 1792 բանաձևում արձանագրել է պետական գաղտնիքի մասին օրենսդրությամբ ազդարարների պաշտպանությունը երաշխավորելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ անդամ պետությունները պետք է ուժեղացնեն այն ազդարարների և լրագրողների պաշտպանության միջոցները, որոնք բացահայտում են կոռուպցիան, մարդու իրավունքների խախտումները, շրջակա միջավայրի քայքայումը կամ պետական իշխանության այլ չարաշահումները⁶⁵:

Կոռուպցիայի մասին տեղեկություններ հայտնող աշխատակիցների՝ պատժամիջոցների ենթարկվելու արգելքը սահմանվել է նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայում, որը 2005 թ.-ի վավերացրել է նաև Հայաստանի Հանրապետությունը⁶⁶:

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթում ևս (սկզբունք 37) կարևորվում է ազգային օրենսդրական ակտում պետական մարմինների՝ աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների՝ իրավական պատասխանատվություն չառաջացնող բացահայտման իրավասության սահմանումը, հատկապես արդեն կատարված, ներկայումս կատարվող կամ ապագայում հավանաբար կատարվելիք իրավախախտումների մասին տեղեկությունների: Նման բացահայտում արած անձը չպետք է ենթարկվի քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության:

3/ «Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 17-րդ սկզբունքի համաձայն՝ ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի փաստաթղթերի գաղտնագերծում հայցելու հասանելի և հրապարակային ընթացակարգ: Նույն փաստաթղթի 18-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվության գաղտնիացված լինելու հանգամանքը վճռորոշ դեր չի խաղում այդ տեղեկատվության հարցմանը պատասխանելու գործում. **հարցումները, միևնույնն է, պետք է քննվեն պետական մարմինների կողմից՝ հիմք ընդունելով նաև նույն փաստաթղթում ամրագրված համաչափության, նվազագույն սահմանափակման, տեղեկատվության տրամադրման հետևանքով պատճառվելիք վնասի ռիսկի՝ տեղեկատվության բացահայտման ընդհանուր հանրային շահի նկատմամբ գերակայության սկզբունքները:**

Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ոլորտային օրենսդրությամբ սահմանված է ֆիզիկական անձանց և կազմակերպությունների (Վրաստանի և Ռուսաստանի դեպքում՝ նաև հիմնարկների/պետական մարմինների) իրավունքը՝ տեղեկությունը գաղտնագրած պետական մարմին/պաշտոնյային ներկայացնելու

⁶⁴ St' u Case of Guja v. Moldova (Application no.14277/04), Strasbourg, 12 February 2008, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-85016%22%5D%7D>:

⁶⁵ St' u Recommendation 1792 (2007) Fair trial issues in criminal cases concerning espionage or divulging state secrets, §1.2:

⁶⁶ St' u Civil Law Convention on Corruption, <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/174>:

համապատասխան տեղեկությունը գաղտնագերծելու պատճառաբանված առաջարկություն: Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի օրենքների համաձայն՝ դիմումները պետք է քննարկվեն մեկամսյա ժամկետում, Ռուսաստանի Դաշնության օրենքի համաձայն՝ երեք ամսվա ընթացքում: Հանրային հետաքրքրության դեպքում տեղեկատվության գաղտնագերծման հնարավորություն սահմանված է նաև Խորվաթիայի օրենսդրությամբ, իսկ Գաղտնի տեղեկատվության մասին ԱՄՆ նախագահի հրամանագիրը նախատեսում է *պարտադիր գաղտնագերծման վերանայման ընթացակարգ* (MDR), որով սահմանվում է պետական մարմինների պարտականությունը՝ տեղեկատվության հարցում ստանալիս վերանայելու այն գաղտնի պահելու անհրաժեշտությունը:

Նշված հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության թերությանը անդրադարձել է Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպությունը Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մշտադիտարկման շրջանակում: Կազմակերպությունը նշում է, որ գաղտնագրված տեղեկատվության տրամադրման յուրաքանչյուր հարցման դեպքում պետք է ընդունվի առանձին որոշում՝ իրականացնելով այսպես կոչվող հանրային հետաքրքրության և հնարավոր վնասի միջև հավասարակշռության ստուգումը, այնինչ ՀՀ օրենսդրության մեջ առկա է դրույթ՝ ուղիղ հակասող այս տիպային դրույթին, որն առկա է մի շարք պետությունների առաջադեմ օրենսդրություններում, և նախատեսում է գաղտնագրված տեղեկությունների տրամադրման հասարակ մերժում⁶⁷:

Ուսումնասիրության շրջանակում տեղեկությունները գաղտնագրելու լիազորությամբ օժտված գերատեսչություններ կատարված հարցումներով պարզվել է, որ տեղեկատվության տրամադրման հարցումները երբևէ հիմք չեն հանդիսացել ընդլայնված գերատեսչական ցանկերի վերանայման կամ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքով կոնկրետ տեղեկատվության գաղտնագերծման համար:

4/ «Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 26-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվության հարցում ներկայացրած անձն իրավունք ունի դիմելու տեղեկատվությունը տրամադրելու մերժումը կամ հարցման հետ կապված հարցերն անկախ մարմնի կողմից արագ և ոչ մեծ վճարով վերանայելու համար:

Տեղեկությունների ոչ իրավաչափ գաղտնագրումը և/կամ գաղտնագերծելու առաջարկը մերժելը բողոքարկելու հնարավորություն սահմանված է մի շարք պետությունների օրենսդրությամբ (ԱՄՆ, Էստոնիա, Շվեդիա, Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա):

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և լրացումներ.

1/ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ գաղտնագրման ենթակա գերատեսչական ցանկերում ընդգրկված

⁶⁷ See Anti-corruption Reforms in ARMENIA, <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf>:

տեղեկությունների հիմնավորվածության պարբերական վերանայման պարտականությունը սահմանող դրույթի փոխարեն սահմանել մարմինների՝ գաղտնագրված տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության/հիմնավորվածության՝ առնվազն 5 տարին մեկ անգամ վերանայման պարտականությունը սահմանող դրույթ.

2/ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի պաշտոնատար անձանց իրավունքը՝ հրապարակելու այնպիսի տեղեկություններ, որոնց մասով հանրության տեղեկացվածության շահը գերակայում է գաղտնիքի պահպանության շահի նկատմամբ՝ սահմանելով նաև նրանց պատասխանատվության չենթարկվելու երաշխիքը.

3/ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի ֆիզիկական անձանց և կազմակերպությունների իրավունքը տեղեկությունը գաղտնագրած պետական մարմին/պաշտոնատար անձին ներկայացնելու այն գաղտնագրեթելու հիմնավորված առաջարկություն՝ սահմանելով այդ առաջարկությունը քննարկելու մեկամսյա ժամկետ.

4/ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի տեղեկությունները գաղտնագրեթելու առաջարկը մերժելը տեղեկատվության ազատության ոլորտը վերահսկող անկախ մարմին բողոքարկելու հնարավորություն:

Խնդիր 13

Խնդրի նկարագրություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում տեղեկությունները գաղտնագրելու, գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման, գաղտնագրեթման գործընթացների օրինականության նկատմամբ անկախ մարմնի կողմից վերահսկողության ընթացակարգեր:

Վերլուծություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ պետական և ծառայողական գաղտնիքի **պաշտպանության ապահովման նպատակով** սահմանվում է **միջգերատեսչական և գերատեսչական** վերահսկողություն: Նույն հոդվածի համաձայն՝ միջգերատեսչական վերահսկողությունն իրականացնում է ազգային անվտանգության բնագավառը կառավարող պետական մարմինը (այժմ դա Ազգային անվտանգության ծառայությունն է), իսկ գերատեսչական վերահսկողությունը՝ պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները տնօրինելու լիազորություններով օժտված հանրապետական գործադիր մարմինները: Նշված մարմինները պարտավոր են վերահսկել պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության արդյունավետությունը այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող իրենց ենթակա բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում:

Այլ կերպ ասած՝ վերահսկողությունն իրականացվում է բացառապես գաղտնիքի պաշտպանության ապահովման, այլ ոչ պետական գաղտնիքի հետ աշխատելու ամբողջ գործընթացի, այդ թվում՝ տեղեկությունները գաղտնագրելու, գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման, գաղտնագերծման գործընթացների օրինականության նկատմամբ: Միաժամանակ միջգերատեսչական վերահսկողությունն իրականացնող մարմինը Ազգային անվտանգության ծառայությունն է, որն **անկախ** մարմին համարվել չի կարող՝ հաշվի առնելով թե՛ Կառավարությանն ու անմիջականորեն վարչապետին ենթակայությունը⁶⁸ և թե՛ իր գործունեության բնույթն ու նպատակը, այն է՝ ազգային անվտանգության ապահովումը:

Նման պայմաններում, երբ գաղտնի տեղեկատվության հետ աշխատանքի ամբողջ գործընթացի նկատմամբ վերահսկողություն առհասարակ և անկախ վերահսկողություն մասնավորապես առկա չէ, անկասկած առաջանում է տեղեկատվության ազատության իրավունքի ու հանրային շահի և ազգային անվտանգության շահի ու, դրանով պայմանավորված, տեղեկատվության մատչելիության սահմանափակման միջև համաչափության ապահովման և հավասարակշռման անհնարություն: Տեղեկատվության մատչելիության հիմնարար կանխավարկածը խնդրո առարկա այնչափ զգայուն, միաժամանակ պոտենցիալ չարաշահումների դաշտ ստեղծող ոլորտում, ինչպիսին է պետական գաղտնիքի պահպանության ապահովումը, թելադրում է ամբողջ գործընթացը վերահսկող անկախ մարմնի անհրաժեշտություն՝ բնականաբար ամենախիստ գտման արդյունքում համալրված անձնակազմով: Գտնում ենք, որ այդպիսին կարող է լինել տեղեկատվության ազատության ոլորտը վերահսկող միասնական մարմինը (դրա ստորաբաժանումը), որի ձևավորումն արդեն իսկ առաջարկվում է սույն զեկույցի շրջանակում, և այս առաջարկը պայմանավորված է թե՛ ինստիտուցիոնալ հակասություններից խուսափելու և թե՛ պետական ռեսուրսները խնայելու անհրաժեշտությամբ:

Մարմինը պետք է վերահսկի պետական և ծառայողական գաղտնիքների հետ կատարվող աշխատանքների՝ առնվազն տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող մասը, այն է՝ տեղեկությունների գաղտնագրման իրավաչափությունը, տեղեկությունները գաղտնի պահելու (կամ համապատասխան գաղտնիության աստիճանի տակ պահելու) անհրաժեշտության պարբերական, ինչպես նաև գաղտնագերծման առաջարկությունների հիման վրա վերանայման իրականացումը և տեղեկությունների ժամանակին գաղտնագերծումը: Մարմնի իրավասության շրջանակը պետք է ներառի տեղեկությունների գաղտնագրումն իրականացնող մարմինների որոշումների վերանայումը, որոշակի գործողություններ անել պարտավորեցնելը, այլ կերպ ասած՝ այդ մարմինների համար պարտադիր կատարման ենթակա որոշումներ և ցուցումներ արձակելը: Հատկապես մարմինը

⁶⁸ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱԾ գործունեության ղեկավարումն իրականացնում են Կառավարությունը և վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ դրա ղեկավարը:

պետք է ունենա իրավասություն՝ 1/ վերանայելու և վերացնելու մարմնի կողմից տեղեկությունների գաղտնագրումը, եթե դրանք չեն համապատասխանում օրենքով և կառավարության որոշմամբ սահմանված ցանկերին՝ արդյունքում գաղտնագրեթելով դրանք, 2/ ստուգելու տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման գործընթացի իրականացման պատշաճությունը և այն ժամանակին չիրականացնելու դեպքում տալու պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, 3/ վերացնելու տեղեկությունները գաղտնագրեթելու պատճառաբանված և հիմնավոր առաջարկությունները մերժելու՝ մարմինների որոշումներն ու գաղտնագրեթելու տեղեկությունները, որոնց գաղտնի պահպանության անհրաժեշտությունը վերացել է, կամ դրա նկատմամբ գերակայում է հանրության տեղեկացվածության շահը, 4/ ստուգելու տեղեկությունների գաղտնագրեթման գործընթացի պատշաճությունը, այն ժամանակին չիրականացնելու դեպքում՝ տալու պարտադիր կատարման ենթակա ցուցումներ:

Օտարերկրյա պետությունների իրավաստեղծ փորձից բխում է, որ նման մարմինները համակարգում և վերահսկում են նաև գաղտնի տեղեկությունների պաշտպանության աշխատանքները, սակայն սույն առաջարկության շրջանակում այս տարբերակը չի քննարկվում՝ հաշվի առնելով ուսումնասիրության իրականացումը բացառապես տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 31-րդ սկզբունքի համաձայն՝ պետությունները պետք է հիմնեն ինստիտուցիոնալ, գործնական և ֆինանսական առումով անկախ վերահսկող մարմիններ, որոնք կոչված են վերահսկելու անվտանգության ոլորտում գործող հաստատությունները, այդ թվում՝ դրանց գործունեությունը, կանոնակարգերը, քաղաքականությունը, ֆինանսները և կառավարումը: Նշված մարմիններին պետք է հասանելի լինեն իրենց լիազորությունները կատարելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները գաղտնիության կամ դասակարգման աստիճանից անկախ՝ անվտանգության տեսանկյունից ողջամիտ պահանջները կատարելու պայմանով (32-րդ սկզբունք): Անկախ մարմինները պետք է ներկայացնեն թեմատիկ և հատուկ ուսումնասիրությունների վերաբերյալ իրենց հաշվետվությունների հրապարակման ենթակա տարբերակները և տրամադրեն հնարավորինս շատ տեղեկություններ հանրային շահի ոլորտների վերաբերյալ: Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է նյութեր հրապարակելու մասին վերջնական որոշում կայացնելու լիազորություն ունենան՝ նախապես հնարավորություն տալով վերահսկվող հաստատություններին արտահայտելու իրենց մտահոգությունները գաղտնի համարվող որևէ նյութ հաշվետվության մեջ ներառելու առնչությամբ (34-րդ սկզբունք): Օրենսդիր մարմինները պետք է որոշեն՝ արդյոք անկախ մարմինների ղեկավարները և աշխատակիցները պետք է անցնեն բարեհուսության ստուգում (35-րդ սկզբունք):

Փաստաթղթի 26-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվության հարցում ներկայացրած անձն իրավունք ունի դիմելու տեղեկատվությունը տրամադրելու մերժումն անկախ մարմնի կողմից արագ և ոչ մեծ վճարով վերանայելու համար:

Փաստաթղթի 36-րդ սկզբունքը սահմանում է, որ օրենսդիր մարմինը պետք է ունենա ցանկացած, այդ թվում՝ գործադիր ճյուղի մարմինների կողմից ազգային անվտանգության հիմքով գաղտնիացված տեղեկատվություն հրապարակելու լիազորություն, եթե իր սահմանած ընթացակարգերին համապատասխան ճիշտ է համարում նման տեղեկատվության հրապարակումը:

ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը Ղրղզստանի «Պետական գաղտնիքների պաշտպանության մասին» օրենքի վերաբերյալ մեկնաբանություններում արձանագրել է պետական գաղտնիքների պաշտպանության ոլորտի նկատմամբ անկախ և համարժեք վերահսկողության համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ գնալով՝ ավելի լայն ճանաչում է ստանում այն դիրքորոշումը, որ տեղեկությունների դասակարգման նկատմամբ հավասարակշռված քաղաքականություն վարելու ամենաարդյունավետ միջոցը անկախ մարմնի ստեղծումն է՝ այդ քաղաքականության մշակման, կայացվող որոշումների վերլուծության և իրավիճակին հետևելու համար⁶⁹: Նույն առաջարկությունը ներկայացուցիչն արել է նաև Մոլդովայի «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ մեկնաբանություններում՝ առաջարկելով ստեղծել անկախ մարմին, որը իրավասու կլինի քննելու տեղեկությունների անհիմն գաղտնագրման վերաբերյալ բողոքներն ու վերանայելու պետական գաղտնիքի ոլորտում կայացվող որոշումները, երաշխավորելու տեղեկատվության ազատության իրավունքը⁷⁰:

Վենետիկի հանձնաժողովը ևս Մոլդովայի «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2008 թ.-ին տված կարծիքում մտահոգություն է արտահայտել ազգային անվտանգության մարմնի՝ պետական գաղտնիքների տեղեկատվական ոլորտի նկատմամբ միջգերատեսչական վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ՝ փաստարկելով, որ խնդրի սեփականատեր հանդիսանալով՝ այդ մարմինը շահագրգիռ է գաղտնի պահել հնարավորինս շատ տեղեկատվություն: Հանձնաժողովն արձանագրել է, որ ցանկալի է ոլորտը վերահսկի կառավարությունից և հատկապես ազգային անվտանգության մարմնից իրական ինստիտուցիոնալ անկախություն ունեցող մարմին:

«Միջազգային ցանց՝ օրենքի գերակայությանը նպաստելու նպատակով» փորձագիտական միավորման մշակած «Անվտանգության համար դասակարգում և տեղեկատվության ազատության իրավունք. միջազգային չափանիշներ և լավագույն փորձ» մասնագիտական զեկույցում խորհուրդ է տրվում ապահովել վերահսկող և վերստուգող մարմնի (կոնկրետ ուսումնասիրությունն իրականացվել է հաջակցություն Աֆղանստանի իշխանությունների) իրավասությունը՝ պարտադրելու պետական մարմիններին գաղտնագրել տեղեկություններ և նշանակելու տույժեր օրենքի խախտման դեպքերում: Ըստ առաջարկության՝ վերահսկող մարմինը ոչ միայն պետք է ապահովի ընդհանուր վերահսկողություն, այլև վերանայի գաղտնագրման

⁶⁹ St' u Kommentarii k zakonu «O zashchite gosudarstvennykh sekretov Кыргызской Республики», <https://www.osce.org/fom/16843?download=true>:

⁷⁰ St' u Comments on Draft Law on State Secret of the Republic of Moldova, <https://www.osce.org/fom/35114?download=true>:

խնդիրները, գաղտնագրումը երկարացնելու պահանջները և իրականացնի բողոքների քննություն: Որպես վերահսկողական մեխանիզմ՝ առաջարկվում է սահմանել բոլոր գերատեսչությունների՝ վերահսկող մարմնին տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջ (Հնդկաստանի օրինակով)⁷¹:

ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Արխիվների ազգային վարչության ստորաբաժանումը՝ Տեղեկատվական անվտանգության վերահսկման վարչությունը, որն օժտված է լայն լիազորություններով, ինչպիսիք են ընդհանուր հսկողության և ստուգումների իրականացումը պետական մարմինների կողմից պետական գաղտնիքին վերաբերող օրենսդրության պահպանման նկատմամբ, դասակարգման վերանայումը, հրամայականների, ուղեցույցների և կանոնների մշակումը, պաշտոնատար անձանց և անհատների բողոքների քննությունը և դրա արդյունքում համապատասխան միջոցների ընդունումը, վիճակագրական տվյալների հավաքումը, վերլուծությունը և այդ արդյունքներով հաշվետվության կազմումը և այլն: Միաժամանակ ԱՄՆ օրենսդրության համաձայն՝ գործում է նաև մեկ այլ մարմին՝ Դասակարգման միջգերատեսչական բողոքարկման հանձնաժողովը (ISCAP), որն իր հերթին իրավասու է քննելու տեղեկատվության ոչ իրավաչափ գաղտնագրման կամ գաղտնագրման դիմումները մերժելու մասին որոշումների դեմ ներկայացվող բողոքները և վերջնական լուծում տալու դրանց:

Հնդկաստանում գործող Կենտրոնական և Նահանգների տեղեկատվական հանձնաժողովները օժտված են ընդհանուր ոլորտային հսկողություն իրականացնելու, բողոքները քննելու և տեղեկությունները գաղտնագրծելու ցուցում տալու լիազորություններով: Միաժամանակ տեղեկատվության ժամանակին գաղտնագրման նկատմամբ մարմինների կիսամյակային հաշվետվությունների հիման վրա հսկողություն է իրականացնում Պետական արխիվի ղեկավարը:

Կանադայում գործող տեղեկատվության անկախ հանձնակատարը իրավասու է քննելու տեղեկատվության մերժման կապակցությամբ բողոքներն ու պահանջել պետական մարմիններից գաղտնագրծել համապատասխան տեղեկատվությունը:

Մեքսիկայում գործում է Թափանցիկության, տեղեկատվության մատչելիության և տվյալների պաշտպանության ազգային ինստիտուտը, որն օժտված է բոլոր լիազորություններով՝ իրականացնելու ոլորտային վերահսկողություն, որոշումների վերանայում և բողոքների քննություն: Այս մարմնի որոշումները պարտադիր են կատարման համար, սակայն կարող են արգելակվել նախագահի իրավական հարցերով խորհրդականի կողմից:

Հունգարիայում տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության խորհրդարանական հանձնակատարը, իսկ Սլովենիայում տեղեկատվական հանձնակատարը իրավունք ունեն ստուգելու դասակարգման ճշգրտությունն ու փոխելու պետական գաղտնիքների դասակարգման աստիճանը:

Էստոնիայում գործող պետական գաղտնիքների պաշտպանության կոմիտեն թեև

⁷¹ St' u International Network to Promote the Rule of Law, Security classification and right to information: international standards and best practices:

ձևավորվում է գործադիր գերատեսչությունների կողմից և չունի վերջնական որոշումներ կայացնելու մանդատ, այնուամենայնիվ քննում է ոլորտային օրենսդրության սխալ կիրառման կապակցությամբ բողոքներն ու դրա արդյունքները կամ առաջարկությունները ներկայացնում Կառավարությանը կամ Պաշտպանական ուժերի հրամանատարին:

Սերբիայում գործող ազգային անվտանգության և գաղտնի տեղեկատվության պաշտպանության վարչությունը (ըստ էության գործադիր մարմին) վերահսկողական մանդատի, իսկ հանրային նշանակության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարը բողոքների քննության մանդատի շրջանակներում իրավասու են գաղտնագերծել գաղտնագրված տեղեկատվությունը:

Լիտվայում գործող գաղտնիքների պաշտպանության համակարգման հանձնաժողովը, որը ձևավորվում է նախագահի, կառավարության և խորհրդարանի նախագահի կողմից, սակայն ղեկավարվում է Պետական անվտանգության դեպարտամենտի տնօրենի կողմից, լիազորված է լուծելու տեղեկատվության գաղտնագրման և գաղտնագերծման կապակցությամբ գաղտնիքների սուբյեկտների միջև, ինչպես նաև սուբյեկտների և այլ անձանց միջև ծագած վեճերը:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում սահմանել տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող՝ սույն զեկույցով առաջարկվող մարմնի (տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին վերաբերող բաժինը) իրավասությունը՝ պետական գաղտնիքի պահպանության ոլորտում ևս իրականացնելու պետական մարմինների գործունեության վերահսկողություն՝ սահմանելով այդ մարմնի իրավասությունը՝ պահանջելու և ստանալու ցանկացած աստիճանի գաղտնիության տեղեկատվություն, և առնվազն սահմանելով լիազորություն՝ իրականացնելու ստուգումներ տեղեկությունների գաղտնագրման իրավաչափության, համաչափության, դրանց պահպանության անհրաժեշտության պարբերական վերանայման, գաղտնագերծման գործընթացի ժամանակին իրականացման կապակցությամբ, քննելու այս հարցերի կապակցությամբ ներկայացվող բողոքները, ինչպես նաև արդյունքում պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու պետական մարմիններին և կայացնելու որոշումներ, այդ թվում՝ ի սկզբանե ոչ իրավաչափորեն գաղտնագրված կամ գաղտնագերծման ենթակա տեղեկությունները գաղտնագերծելու կամ պահպանվող տեղեկատվության գաղտնիության աստիճանը փոխելու մասին: Միաժամանակ առաջարկվում է օրենքով սահմանել պետական մարմինների՝ տեղեկությունների գաղտնագերծման, ինչպես նաև տեղեկությունները գաղտնի պահպանելու անհրաժեշտության պարբերական վերանայման գործընթացների վերաբերյալ վերահսկող մարմնին տարեկան հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունը, ինչպես նաև վերահսկող մարմնի՝ օրենքի խախտում թույլ տված պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների համաձայն (տե՛ս խնդիր 14):

Խնդիր 14

Խնդրի նկարագրություն

Ո՛չ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ո՛չ Քրեական օրենսգիրքը չեն նախատեսում պատասխանատվություն տեղեկատվության չհիմնավորված, ապօրինի գաղտնագրման, անհրաժեշտից ավել ժամանակահատվածով գաղտնագրելու, ինչպես նաև օրենքի ուժով գաղտնագրեման ենթակա տեղեկությունները սահմանված ժամկետում չգաղտնագրեծելու համար:

Վերլուծություն

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ Պետական և ծառայողական գաղտնիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար մեղավոր անձինք, գործող օրենսդրության համապատասխան, կրում են քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվություն: Միննույն ժամանակ գործող օրենսդրությունը պատասխանատվություն է նախատեսում միայն պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ապօրինի բացահայտման (տարբեր եղանակներով) դեպքերում (ՀՀ քրեական օրենսգրքի 299, 302, 306 և 307 հոդվածներ): Այդպիսով, պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենսդրության տեղեկատվության ապօրինի բացահայտման հետ չկապված խախտումների և հատկապես գաղտնագրման լիազորության չարաշահումների, այդ թվում՝ տեղեկատվությունն ապօրինի գաղտնագրելու, անհրաժեշտից ավել ժամանակահատվածով գաղտնագրելու և գաղտնագրեման ենթակա տեղեկությունները սահմանված ժամկետում չգաղտնագրեծելու համար ո՛չ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ո՛չ Քրեական օրենսգիրքը չեն նախատեսում: Խիստ խնդրահարույց է այսչափ տարբերակված, չհավասարակշռված մոտեցումն այն պարագայում, երբ թե՛ միջազգային չափորոշիչների և թե՛ ՀՀ օրենսդրության («Տեղեկատվության ազատության մասին» օրենք) համաձայն՝ գործում է հենց տեղեկատվության ազատության կանխավարկածը, իսկ դրա սահմանափակումը կարող է տեղի ունենալ խիստ որոշակի դեպքերում, պետք է լինի համաչափ ու հիմնավորված: Այլ կերպ ասած, եթե պետությունը սահմանում է պատասխանատվություն դասակարգված տեղեկատվության ապօրինի բացահայտման համար, պետք է սահմանի պատասխանատվություն նաև տեղեկատվության ոչ իրավաչափ, չհիմնավորված գաղտնագրման և տեղեկատվությունը ժամանակին չգաղտնագրեծելու համար՝ այդ կերպ որոշակիորեն չեզոքացնելով պետական մարմինների՝ անձի տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու չարաշահման ռիսկը: Նման պատասխանատվության բացակայությունը ՀՀ օրենսդրությունում տրամաբանական և արդարացված չէ՝ հատկապես հաշվի առնելով այն, որ տեղեկատվության ազատության իրավունքի մի շարք այլ ոչ օրինական սահմանափակումների, խախտումների համար նույն օրենսդրությունը սահմանում է պատասխանատվություն (ՎԻՎՕ 189⁷, 97⁵, 97⁶ հոդվածներ):

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
 Տեղեկատվության չհիմնավորված, ապօրինի գաղտնագրման համար պատասխանատվություն սահմանվում է ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Մոլդովայի և Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ: Ուկրաինայի օրենսդրությունը այդ իրավախախտման համար սահմանում է պատասխանատվություն նվազագույն աշխատավարձի 30-100-ապատիկի, Մոլդովայի օրենսդրությունը՝ 2000-5000 լեյի (55000-137000 ՀՀ դրամ), իսկ Ղազախստանի օրենսդրությունը՝ 53020 տենգեյի (66800 ՀՀ դրամ) չափով: Գաղտնի տեղեկատվության մասին ԱՄՆ նախագահի հրամանագրի համաձայն՝ տեղեկատվության հակառակ հրամանագրի պահանջների գաղտնագրման կամ շարունակաբար այն գաղտնի պահելու համար, ինչպես նաև հրամանագրի այլ դրույթներ (այդ թվում նաև տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության պարբերական վերանայման պարտականություն սահմանող) խախտելու համար սահմանված է պատասխանատվություն նախագուշացման, վարձատրության կասեցման, գաղտնագրման լիազորության կասեցման, գաղտնի տեղեկություններին հասանելիության սահմանափակման և այլ տեսքով:

Առաջարկություններ
 Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նախատեսել դրույթ՝ տեղեկությունները ապօրինի կամ չհիմնավորված կերպով պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, անհրաժեշտից ակնհայտ ավել ժամանակահատվածով գաղտնագրելու, տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունն օրենքով սահմանված պարբերականությամբ չվերանայելու և տեղեկատվությունը սահմանված ժամկետում չգաղտնագրեժելու համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ: Որպես պատասխանատվություն՝ սահմանել տուգանք 30.000 – 150.000 ՀՀ դրամի չափով, իսկ արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար՝ 150.000-300.000 ՀՀ դրամի չափով (պատասխանատվության միջոցները համաչափ կլինեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդվածում տուգանքի առաջարկվող չափերին):

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ գաղտնիության աստիճաններ սահմանող 4-րդ հոդվածում սահմանել տեղեկությունները դրանց համաձայն դասակարգելու չափորոշիչները՝ մասնավորապես նախատեսելով, որ.

- «հատուկ կարևորության» աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է առանձնապես ծանր վնաս հասցնել կամ անդառնալի հետևանքներ ունենալ ՀՀ ազգային անվտանգության համար.
 - «հույժ գաղտնի» աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է ծանր կամ դժվար վերականգնելի վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը.
 - «գաղտնի» աստիճանին համապատասխան պետք է գաղտնագրվեն այն տեղեկությունները, որոնց չարտոնված բացահայտումը կարող է էական վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը:
- ✓ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը» դրույթը վերաշարադրել՝ դրանից հանելով *որպես կանոն* բառերը:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները որպես գաղտնիք պահպանելու ժամկետները փոփոխել՝ սահմանելով հետևյալ առավելագույն ժամկետները՝
- «հատուկ կարևորության» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 20 տարի,
 - «հույժ գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 10 տարի,
 - «գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկություններ՝ 5 տարի:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերության «Ելնելով անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նշված ժամկետից ավելի երկար ժամկետներ» դրույթը փոփոխել՝ սահմանելով Կառավարության լիազորությունը՝ երկարացնելու պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունը գաղտնի պահելու ժամկետը, սակայն ոչ ավել, քան նախորդիվ սահմանված ժամկետը:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել տեղեկությունները հնարավոր և իրապես անհրաժեշտ նվազագույն ժամկետով գաղտնագրելու պաշտոնատար անձանց պարտականությունը սահմանող դրույթով:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել տեղեկությունները մինչև որոշակի պայմանի (իրադարձության, հանգամանքի) վրա հասնելը գաղտնագրելու հնարավորություն սահմանող դրույթով:
- ✓ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 9 կետը վերաշարադրել՝ դրանում օգտագործվող *պաշտպանական պատվեր* բառերը փոխարինելով

սպառազինության և ռազմական նշանակության ապրանքների, օբյեկտների պատվերներ բառերով:

- ✓ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի **Դ** կետը վերաշարադրել՝ դրանից հանելով *կամ տնտեսական* բառերը (հնարավոր է փոխարենը որպես գաղտնագրման ենթակա տեղեկություն նախատեսել այժմ Կառավարության թիվ 173 որոշման 15-րդ կետում շարադրված դրույթը՝ պատերազմի ժամանակ ՀՀ տնտեսության կայուն գործունեության նախապատրաստումը բացահայտող ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները):
- ✓ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի **Ձ** կետը վերաշարադրել՝ դրանից հանելով *նրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից)* բառերը կամ դրանք փոխարինելով *ֆինանսական քաղաքականության նախապատրաստման մասին, որոնց վաղաժամ հրապարակումը կարող է վնաս հասցնել պետությանը կամ բացասաբար ազդել կապիտալի և ֆինանսական շուկաների վրա* բառերով:
- ✓ Հիդրոօդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների արդյունքները, ինչպես նաև հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտուրական աշխատանքների հետ կապված տեղեկությունների գաղտնագրման հնարավորությունը սահմանել օրենքով՝ **որպես պարտադիր պայման սահմանելով այդպիսի տեղեկության պետության անվտանգության ապահովման համար կարևոր նշանակություն ունենալը:**
- ✓ Ընդլայնել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ պետական գաղտնիք հանդիսանալու հիմքով սահմանափակման ոչ ենթակա տեղեկությունների ցանկը՝ դրանում ներառելով.
 - բնությանն ու շրջակա միջավայրին սպառնացող վտանգների մասին տեղեկությունները և **Ա** կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը, բնությանը և շրջակա միջավայրին սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները»,
 - պաշտոնատար անձանց կատարած ապօրինի և հանցավոր գործողությունների վերաբերյալ տեղեկությունները,
 - հանցավորության մակարդակի մասին տեղեկությունները,
 - բնակչության կենսամակարդակի մասին տեղեկությունները,
 - ժողովրդագրական վիճակի/ցուցանիշների մասին տեղեկությունները,
 - բարձրաստիճան պաշտոնատար անձանց առողջական վիճակի մասին տեղեկությունները,

- Բնակչության առողջության, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի իրական վիճակի մասին տեղեկությունները և Բ կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «տնտեսության, բնության և շրջակա միջավայրի, բնակչության առողջության վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները»:
- ✓ Օրենքի 10-րդ հոդվածի Գ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները»:
- ✓ Ուժը կորցրած ճանաչել Օրենքի այն դրույթները, որոնցով սահմանվում է պետական մարմինների իրավասությունը՝ մշակելու գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը և դրանից բխող հարակից դրույթները: Նախատեսել, որ պետական մարմինները տեղեկություններ գաղտնագրելիս պետք է հիմք ընդունեն այդ տեղեկությունների համապատասխանությունը Կառավարության սահմանած՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկին: Մինևույն ժամանակ Կառավարության սահմանած՝ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկը պետք է շարունակի մնալ հրապարակային **ամբողջությամբ**, իսկ դրանում առկա տեղեկությունների վերնագրերը չպետք է հասցվեն այն աստիճան մանրամասնության, որ ինքնին պարունակեն այնպիսի տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը:
- ✓ Օրենքի 13-րդ հոդվածում սահմանել, որ տեղեկություններ գաղտնագրելիս պաշտոնատար անձինք պարտավոր են յուրաքանչյուր տեղեկատվության մասով նշել գաղտնագրման տևողությունը, գաղտնագրեժման հստակ ժամանակը կամ պայմանը, ինչպես նաև տեղեկությունը գաղտնագրելու (այդ թվում՝ գաղտնիության այդ աստիճանի շնորհման և տևողության մասով) անհրաժեշտության հիմնավորումը: ՀՀ կառավարությանը առաջարկվում է նաև մշակել և ընդունել հիմնավորումը յուրաքանչյուր գաղտնագրված տեղեկության կրիչին կցելու կարգը:
- ✓ Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել՝ որոշակի պայմանի վրա հասնելով կամ տեղեկատվության հետագա գաղտնի պահպանության անհրաժեշտությունը բացառող հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված՝ տեղեկությունները գաղտնագրեժելու՝ իրավասու պաշտոնատար անձանց իմպերատիվ պարտականությունը սահմանող դրույթով:

- ✓ Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել՝ դրանում նախատեսելով 1/ տեղեկություններ գաղտնագերծելիս պետական մարմնի՝ հրապարակային ծանուցման միջոցով հանրության իրազեկման պարտականություն և 2/ գաղտնագերծումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում՝ մինչև արժեքավորումն ու փաստաթղթերի ճակատագիրը լուծելը, դրանց ծանոթանալու հնարավորություն սահմանող դրույթ:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ գաղտնագրման ենթակա գերատեսչական ցանկերում ընդգրկված տեղեկությունների հիմնավորվածության պարբերական վերանայման պարտականություն սահմանող դրույթի փոխարեն սահմանել մարմինների՝ գաղտնագրված տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության/հիմնավորվածության՝ առնվազն 5 տարին մեկ անգամ վերանայման պարտականությունը սահմանող դրույթ:
- ✓ Օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի պաշտոնատար անձանց իրավունքը՝ հրապարակելու այնպիսի տեղեկություններ, որոնց մասով հանրության տեղեկացվածության շահը գերակայում է գաղտնիքի պահպանության շահի նկատմամբ՝ սահմանելով նաև նրանց պատասխանատվության չենթարկվելու երաշխիքը:
- ✓ Օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի ֆիզիկական անձանց և կազմակերպությունների իրավունքը՝ տեղեկությունը գաղտնագրած պետական մարմնի/պաշտոնատար անձին ներկայացնելու այն գաղտնագերծելու հիմնավորված առաջարկություն՝ սահմանելով այդ առաջարկությունը քննարկելու մեկամսյա ժամկետ:
- ✓ Օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի տեղեկությունները գաղտնագերծելու առաջարկը մերժելը տեղեկատվության ազատության ոլորտը վերահսկող անկախ մարմին բողոքարկելու հնարավորություն:
- ✓ Օրենքում սահմանել տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող՝ սույն զեկույցով առաջարկվող մարմնի (տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին վերաբերող բաժինը) իրավասությունը՝ պետական գաղտնիքի պահպանության ոլորտում ևս իրականացնելու պետական մարմինների գործունեության վերահսկողություն՝ սահմանելով այդ մարմնի իրավասությունը՝ պահանջելու և ստանալու ցանկացած աստիճանի գաղտնիության տեղեկատվություն, և առնվազն սահմանելով լիազորություն՝ իրականացնելու ստուգումներ տեղեկությունների գաղտնագրման իրավաչափության, համաչափության, դրանց պահպանության անհրաժեշտության պարբերական վերանայման, գաղտնագերծման գործընթացի ժամանակին իրականացման կապակցությամբ, քննելու այս հարցերի կապակցությամբ ներկայացվող բողոքները, ինչպես նաև արդյունքում պարտադիր կատարման ենթակա

ցուցումներ տալու պետական մարմիններին և կայացնելու որոշումներ, այդ թվում՝ ի սկզբանե ոչ իրավաչափորեն գաղտնագրված կամ գաղտնագրածման ենթակա տեղեկությունները գաղտնագրելու մասին կամ պահպանվող տեղեկատվության գաղտնիության աստիճանը փոխելու մասին: Միաժամանակ առաջարկվում է օրենքով սահմանել պետական մարմինների պարտականությունը՝ տեղեկությունների գաղտնագրածման, ինչպես նաև տեղեկությունները գաղտնի պահպանելու անհրաժեշտության պարբերական վերանայման գործընթացների վերաբերյալ տարեկան հաշվետվություններ ներկայացնելու վերահսկող մարմին, ինչպես նաև վերահսկող մարմնի լիազորությունը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու օրենքի խախտում թույլ տված պաշտոնատար անձանց՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների համաձայն (տե՛ս խնդիր 14):

- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նախատեսել դրույթ՝ տեղեկությունները ապօրինի կամ չհիմնավորված կերպով պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, անհրաժեշտից ակնհայտ ավել ժամանակահատվածով գաղտնագրելու, տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունն օրենքով սահմանված պարբերականությամբ չվերանայելու և տեղեկատվությունը սահմանված ժամկետում չգաղտնագրելու համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ: Որպես պատասխանատվություն՝ սահմանել տուգանք 30.000 – 150.000 ՀՀ դրամի չափով, իսկ արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար՝ 150.000-300.000 ՀՀ դրամի չափով (պատասխանատվության միջոցները համաչափ կլինեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդվածում տուգանքի առաջարկվող չափերին):

Կառավարությանը՝ 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

- ✓ Որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի 19-րդ կետը վերաշարադրել՝ դրանում օգտագործվող *պաշտպանական պատվեր* բառերը փոխարինելով *սպառազինության և ռազմական նշանակության ապրանքների, օբյեկտների պատվերներ բառերով*:
- ✓ Որոշմամբ հաստատված՝ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի 16-րդ կետը վերաշարադրել՝ դրանից հանելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները (որոնք կարող են օգտագործվել սկզբունքորեն նոր արտադրանքի ստեղծման նպատակով՝ **տնտեսության տարբեր բնագավառների** տեխնոլոգիական գործընթացներում) գաղտնագրելու հնարավորություն տվող դրույթը:

- ✓ Որոշմամբ հաստատված ցանկի 21-րդ կետը վերաշարադրել՝ դրանից հանելով ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն ստեղծող դրույթը կամ այն փոխարինելով ռազմական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման վերաբերյալ տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն տվող դրույթով:
- ✓ Ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի «Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառի տեղեկությունները» բաժնի 18-րդ, 20-րդ և 25-րդ կետերի՝ հիդրոօդերևութաբանության և գեոֆիզիկայի բնագավառում աշխատանքների արդյունքները, հատուկ օբյեկտների շահերի համար կատարվող գիտահետազոտական, փորձարարական ստրուկտորական աշխատանքների հետ կապված ծախսերը և Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային կազմակերպումը բացահայտող տեղեկությունները գաղտնագրելու հնարավորություն տվող դրույթները:

Կառավարությանը

- ✓ Օգտվելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված լիազորությունից՝ ընդունել գերատեսչությունների ղեկավարների կողմից գաղտնագրված ընդլայնված գերատեսչական ցանկերը գաղտնագրելու որոշում՝ բացառությամբ ինքնին պետական գաղտնիք պարունակող տողերի:

Տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու լիազորությամբ օժտված բոլոր մարմիններին, դրանց ղեկավարներին

- ✓ Փոխել գործող մտտեցումն ու տեղեկատվությունը պետական և ծառայողական գաղտնիքների շարքին դասելիս առաջնորդվել ոչ միայն գաղտնագրման հիմնավորվածության, այլ նաև նվազագույն սահմանափակման սկզբունքով, այլ կերպ ասած՝ տեղեկությունները գաղտնագրել այն նվազագույն ժամկետով, որը բավարար է տեղեկատվության բացահայտման ոչ բարենպաստ հետևանքը չեզոքացնելու համար՝ բացառելով արձանագրված՝ հնարավոր առավելագույն ժամանակահատվածով տեղեկությունները գաղտնագրելու իրավակիրառ փորձը:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերհանում և վերլուծություն

Խնդիր 1

<p>Խնդրի նկարագրություն</p> <p>«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ընթացակարգ՝ ծանուցելու անձանց իրենց նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում կատարված լինելու մասին, իսկ իրենց նկատմամբ իրականացված միջոցառումների արդյունքում ստացված նյութերը պահանջելու իրավունք ունեն միայն արդարացված անձինք, այն էլ խիստ սահմանափակ ժամանակահատվածում:</p>
<p>Վերլուծություն</p> <p>«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իրավունք ունի յուրաքանչյուր անձ, որի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է արդարացման հիմքով (հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ է համարվել), կամ որի վերաբերյալ կայացվել է արդարացման դատավճիռ նշված որոշումները կայացնելուց հետո եռամսյա ժամկետում: Վերոգրյալի հիման վրա կարելի է փաստել, որ գործող օրենքը պարունակում է մի շարք խնդիրներ/թերություններ, մասնավորապես.</p> <p>1/ օրենքը իրավունք չի վերապահում օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը պահանջելու այն անձանց, որոնց նկատմամբ որևէ դատավարական որոշում չի կայացվել, կամ որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել/դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով, կամ որոնց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ.</p> <p>2/ օրենքը թույլ չի տալիս նշված նյութերը ստանալ մինչև դատական վարույթի ավարտը, հետևապես օգտագործել դրանք որպես հնարավոր արդարացնող ապացույց.</p> <p>3/ օրենքը չի նախատեսում իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու /post factum/ մասին անձին ծանուցելու որևէ ընթացակարգ, այլ կերպ ասած՝ անձն ուղղակի կարող է նույնիսկ երբեք չիմանալ իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու հանգամանքի մասին:</p> <p>Անդրադառնալով առաջին խնդրին՝ փաստում ենք, որ օպերատիվ-հետախուզական</p>

միջոցառումների արդյունքում ստացված նյութերը պահանջելու իրավունքից զրկելը բոլոր անձանց, բացի քրեական դատավարության կարգով արդարացվածներից, չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ, քանի որ նշված նյութերի տրամադրման հիմնական նպատակն է ապահովել անձի՝ իր անձնական կյանքին միջամտող գաղտնի միջոցառումների իրավաչափությունը, այնինչ սահմանափակելով այդ իրավունքը անձանց որոշակի խմբի նկատմամբ միայն այն հիմքով, որ վերջիններս չեն արդարացվել, կամ նրանց դեպքում գործը չի հասել քրեադատավարական ընթացակարգով որևէ որոշում կայացնելուն, ոչ այլ ինչ է, քան որևէ օբյեկտիվ հիմնավորում չունեցող խտրական վերաբերմունք: Այս առումով օրենքի քննարկվող դրույթը ուղղակի հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 14-րդ և թիվ 12 արձանագրության 1-ին՝ որևէ հիմքով խտրականությունն արգելող հոդվածներին: Դրույթը հակասում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ, Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ, Սահմանադրության 31-րդ և 61-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի ապահովում անձնական և ընտանեկան կյանքի՝ կամայական միջամտություններից պաշտպանվելու, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, այդ թվում՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ապա բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործը, որով որպես ապացույց են օգտագործվել կամ որի շրջանակներում կամ որի հարուցմանն ընդառաջ իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, դրանց հետևանքով ստացված նյութերը ստանալու անհրաժեշտությունը ծագում է արդեն գործը դատարանի վարույթ ընդունվելու ժամանակ, և որևէ կերպ արդարացված չէ դրանց տրամադրումը հետաձգելը մինչև դատավճիռ կայացնելը: Նշված անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձն արդեն դատական քննության ժամանակ պետք է հնարավորություն ունենա վիճարկելու իր նկատմամբ իրականացված միջոցառումների օրինականությունն ու դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը, ինչպես նաև տիրապետելու բոլոր այն նյութերին, որոնք վարույթ իրականացնող մարմինը քրեական գործի նյութերին չի կցել՝ պայմանավորված դրանց՝ առաջադրված մեղադրանքի տեսանկյունից ոչ պիտանի լինելով, քանի որ դրանց մեջ կարող են լինել նյութեր, որոնք հիմնավորում են մեղադրյալի անմեղությունը:

Քննարկվող խնդիրների արդիականության մասին է խոսում նաև իրավակիրառ/դատական պրակտիկան: Մասնավորապես թիվ ՎԴ/5231/05/15 գործով հայցվորներ Մեհդի Ալիասղարի Սոհրաբին և Մեյեղմոհամմադաթադի Մեյեղմոհամմադ Ռադմանեշը, որոնք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մեղավոր էին ճանաչվել մաքսանենգության նախապատրաստման համար, բախվել են վերը բարձրացվող խնդրին, և, ցավոք, դատական համակարգը առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում չի

լուծել նրանց իրավունքի վերականգնման խնդիրը: Նշված անձինք դիմել են ՀՀ ԿԱ ԱԱԾ՝ իրենց նկատմամբ իրականացված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումը թույլատրող դատարանի որոշումը և կատարված գաղտնալսումների ձայնագրությունները իրենց տրամադրելու պահանջով, սակայն տեղեկատվության տրամադրումը մերժվել է: Հայցվորները դիմել են ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ ԿԱ ԱԱԾ-ին տրամադրել հայցված տեղեկատվությունը, սակայն հայցը դատարանի կողմից մերժվել է 2 պատճառաբանությամբ.

1/ գործը ընդդատյա չէ Վարչական դատարանին, այլ ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին և ենթակա է քննության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով /օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոք/.

2/ հայցվորները դատապարտվել են, այնինչ այն տեղեկատվությունը, որը նրանք հայցել են ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի, իրենց կարող էր տրամադրվել միայն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվեր արդարացնող հիմքով, կամ նրանք արդարացվեին (հոդված 6, մաս 1): Վերաքննիչ դատարանը վերը նշված որոշման դեմ ներկայացված բողոքը մերժել է:

Երրորդ խնդիրն այն է, որ գործող օրենսդրական կարգավորումները չեն երաշխավորում այն անձանց անձնական և ընտանեկան կյանքին կամայական միջամտություններից պաշտպանվելու իրավունքը, որոնք չեն արդարացվել քրեական դատավարության կարգով: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները թույլ են տալիս օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնել նույնիսկ այն պայմաններում, երբ քրեական գործ հարուցված չէ, և նույնիսկ չի իրականացվում գործ հարուցելու հիմքերի ստուգում (նյութերի նախապատրաստում) անձի նկատմամբ «կասկածանքի» հիման վրա: Որպես հետևանք՝ նման դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումները չեն ավարտվում որևէ դատավարական որոշման կայացմամբ, ուստի այն անձինք, որոնց նկատմամբ իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կարող են պարզապես երբեք չիմանալ դրանց իրականացման մասին, հետևաբար զրկվել այդ իրավունքի նկատմամբ կամայական միջամտությունների դեմ պաշտպանության հնարավորություններից:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձինք, որոնց սահմանադրական իրավունքները սահմանափակվել են գաղտնի քննչական/հետախուզական գործողությունների հետևանքով, ինչպես նաև կասկածյալը, նրա պաշտպանը պետք է գրավոր տեղեկացվեն կիրառված սահմանափակման մասին (հոդված 253): Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքը ևս սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ավարտից հետո անձին անհապաղ այդ մասին տեղեկացնելու և դրանց բողոքարկման կարգը

պարզաբանելու պարտականությունը (հոդված 126): Նույնաբովանդակ կարգավորումներ են պարունակում նաև Լիտվայի քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 161) և Մոլդովայի «Հատուկ հետախուզական գործունեության մասին» օրենքը (հոդված 4): Կանադայի քրեական օրենսգիրքը սահմանում է դատախազի պարտականությունը կատարված գաղտնալսումների մասին տեղեկացնելու նախ այն անձին, որին գաղտնալսել են, ապա արդեն գաղտնալսման թույլտվությունը տված դատարանին (հոդված 196):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) ևս իր նախադեպային վճիռներով արձանագրել է մարդու անձնական կյանքին միջամտող գաղտնի միջոցառումների անցկացման մասին ծանուցման՝ օրենսդրորեն ամրագրված երաշխիքի անհրաժեշտությունը: Մասնավորապես Ռոման Զախարովն ընդդեմ Ռուսաստանի (գանգատ թիվ 47143/06, 04.12.2015 թ.) գործով կայացված վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների բողոքարկման արդյունավետությունը խաթարվում է այն հանգամանքի ուժով, որ դրանք հասանելի են միայն այն անձանց, որոնք կարող են ապացուցել, որ տեղի է ունեցել միջամտություն իրենց իրավունքներին (նշված դեպքում իրականացվել է հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում), **ինչը գրեթե անհնար է այդ միջոցառումների մասին ծանուցման համակարգի բացակայության պայմաններում:** Արդյունքում դատարանը եկել է հետևության, որ ՌԴ օրենսդրությունում բացակայում են համաչափ և արդյունավետ երաշխիքներ հեռախոսային և այլ խոսակցությունների գաղտնալսման հնարավոր չարաշահումների դեմ, և միայն այդ հիմքով էլ ճանաչել է դիմողի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքի խախտում:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

1/ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը պահանջելու իրավունք նախատեսել բոլոր անձանց համար, որոնց նկատմամբ դրանք իրականացվել են՝ անկախ արդարացված լինել-չլինելու հանգամանքից.

2/ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը պահանջելու հետևյալ ժամկետները՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, քրեական գործը կարճելու մասին որոշում, քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հետո՝ 3 ամիսը, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկվելու դեպքում՝ քրեական գործի նյութերը մեղադրյալին ծանոթացման ներկայացնելուց հետո՝ 3 ամիսը, իսկ քրեական դատավարության կարգով որևէ որոշում չկայացնելու, կատարված միջոցառումների արդյունքներին որևէ ընթացք չստանալու դեպքում՝ անձին՝ իր

նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացված լինելու մասին ծանուցելուց հետո՝ 3 ամիսը.

3/ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանել անձին՝ իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացված լինելու մասին ծանուցելու կարգ:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման օրինականությունը վիճարկելու որևէ ընթացակարգ՝ թե՛ դատական, թե՛ արտադատական:

Վերլուծություն

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի որոշումներն ու գործողությունները (290-րդ հոդված), ինչպես նաև առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու միջնորդությունները բավարարող դատարանի որոշումների (289-րդ հոդված) բողոքարկման հնարավորություն, այս կարգավորումները կարող ենք համարել ոչ վերաբերելի և չգործող քրեական դատավարությունից դուրս (**մինչև քրեադատավարական որևէ ընթացակարգի գործարկումը՝ մինչև նյութերի նախապատրաստումը և քրեական գործի հարուցումը**) կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների առնչությամբ:

Մասնավորապես, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է մինչև քրեական գործ հարուցելը կամ մինչև նյութերի նախապատրաստումը, և հատկապես, երբ այդ միջոցառման անցկացման արդյունքում հիմքեր ձևառվել են բերվել քրեադատավարական ընթացակարգը գործարկելու համար (արդյունքում քրեական վարույթ չի էլ հարուցվել), անձը, որի նկատմամբ իրականացվել է միջամտությունը, կարող է զրկվել իր՝ անձնական և ընտանեկան կյանքին կամայական միջամտությունից պաշտպանվելու իրավունքի իրացման հնարավորությունից (ընդ որում, թե՛ դատախազին, թե՛ դատարան բողոքարկելու միջոցով), քանի որ նշված իրավահարաբերությունները քրեական դատավարության օրենսգիրքը ուղղակի չի կարգավորում⁷²: Այս պնդման օգտին են խոսում նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, համաձայն որոնց՝ դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ **միայն նախաքննության և**

⁷² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է **քրեական գործերով** վարույթի կարգը (հոդված 1). (գործով վարույթ՝ քրեական դատավարական ընթացակարգ, որն **սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս** (...)). քրեական գործով մինչդատական վարույթ՝ քրեական գործով վարույթը **քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից** մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը (հոդված 6)):

հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս, և նրա կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Անձի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման բողոքարկման իրավունքը սահմանված է Ռուսաստանի, Վրաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի ոլորտային օրենսդրությամբ («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքներ): Բոլոր այս երկրներում գործողությունները հնարավոր է բողոքարկել վերադատության կարգով (դատախազին) կամ դատարան: Ընդ որում, դատախազի հսկողության իրավասությունը սահմանափակված չէ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելու շրջանակով, նման սահմանափակում չի գործում նաև Ուկրաինայի «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի համաձայն:

Առաջարկություններ
Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրել անձի իրավունքը՝ արտադատական (դատախազություն բողոք ներկայացնելու միջոցով) և դատական կարգով (ընդատությունը՝ ընդհանուր իրավասության դատարան) վիճարկելու իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման որոշումները, ՕՀԳ իրականացնող մարմինների գործողությունները, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը թույլատրելու մասին դատարանի որոշումների իրավաչափությունը:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը պահանջելու իրավունք նախատեսել բոլոր անձանց համար, որոնց նկատմամբ դրանք իրականացվել են՝ անկախ արդարացված լինել-չլինելու հանգամանքից:
- ✓ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը պահանջելու հետևյալ ժամկետները՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, քրեական գործը կարճելու մասին որոշում, քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հետո՝ 3 ամիսը, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկվելու դեպքում՝ քրեական գործի նյութերը մեղադրյալին

ծանոթացման ներկայացնելուց հետո՝ 3 ամիսը, իսկ քրեական դատավարության կարգով որևէ որոշում չկայացնելու, կատարված միջոցառումների արդյունքներին որևէ ընթացք չստանալու դեպքում՝ անձին՝ իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացված լինելու մասին ծանուցելուց հետո՝ 3 ամիսը:

- ✓ Օրենքով սահմանել անձին՝ իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացված լինելու մասին ծանուցելու կարգ:
- ✓ Օրենքով ամրագրել անձի իրավունքը՝ արտադատական (դատախազություն բողոք ներկայացնելու միջոցով) և դատական կարգով (ընդդատությունը՝ ընդհանուր իրավասության դատարան) վիճարկելու իր նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման որոշումները, ՕՀԳ իրականացնող մարմինների գործողությունները, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը թույլատրելու մասին դատարանի որոշումների իրավաչափությունը:

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերհանում և վերլուծություն

Խնդիր 1

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն արխիվային օրենսդրության պահանջների խախտման համար անհրաժեշտ պատասխանատվության մեխանիզմները:

- Արխիվի համալրման աղբյուր հանդիսացող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝ արխիվային բնագավառի պարտականությունների չկատարման, օրենքով սահմանված պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Հետևաբար «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված՝ պատասխանատվության վերաբերյալ դրույթը զուտ հռչակագրային բնույթ ունի:
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը տարածվում է բացառապես ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա՝ իր կարգավորման շրջանակից դուրս թողնելով Հայաստանի արխիվային հավաքածուի համալրման աղբյուր հանդիսացող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների լայն շրջանակը:

Վերլուծություն

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ արխիվի համալրման աղբյուր են հանդիսանում պետական կամ համայնքային արխիվներին արխիվային փաստաթղթեր և նյութական կրիչով այլ տեղեկություններ հանձնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:

Արխիվային գործի բնագավառում այս մարմինների ու կազմակերպությունների պարտականությունները սահմանված են ինչպես «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով⁷³, այնպես էլ մի շարք այլ օրենքներով և իրավական ակտերով, որոնք կազմում են արխիվային օրենսդրության բաղկացուցիչ մասը: Նշված մարմինների և կազմակերպությունների պարտականությունների կատարումը պատշաճ կարգով ապահովված չէ, քանի որ բացակայում են համապատասխան անձանց պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ օրենսդրական

⁷³ Այդպիսիք մասնավորապես նախատեսված են «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ հոդվածներով, 17-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով, 22-րդ, 23-րդ հոդվածներով:

կարգավորումներն ու ընթացակարգերը, ինչի պարագայում «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված դրույթը (իրավաբանական և ֆիզիկական անձինք արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն) հոչակագրային բնույթ ունի: Մասնավորապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը չի պարունակում արխիվային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն սահմանող որևէ դրույթ: ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածով սահմանված նորմը (Պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելը կամ վնասելը) ևս չի ներառում արխիվային օրենսդրության խախտման բոլոր դեպքերը:

Ավելին, արխիվային օրենսդրության խախտման համար, ըստ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի, պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական և իրավաբանական անձինք, մինչդեռ արխիվային գործի բնագավառում, մասնավորապես արխիվների համալրման գործում մեծ է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարումը: Խոսքը հատկապես վերաբերում է իրենց գործունեությամբ այնպիսի արխիվներ ստեղծող մարմիններին, որոնք կարող են փակ լինել մինչև օրենքով սահմանված ժամկետների լրանալը (գաղտնագերծվելը) և Ազգային արխիվ հանձնվելը:

Նշված ժամկետների կամ առհասարակ գաղտնագերծման ընթացակարգերի խախտման համար, բաց արխիվների՝ օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրման կարգը խախտելու, ինչպես նաև արխիվների կանոնակարգման և պահպանման պայմանները խախտելու համար պատասխանատվություն չնախատեսելը կարող է հանգեցնել ընդհուպ տեղեկատվության պաշարների կորստի կամ ոչնչացման և, որպես հետևանք, արխիվների անհասանելիության: Ըստ էության, միայն եզակի հնչեղություն ստացած դեպքերում համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ կարող են իրականացվել ծառայողական քննություններ, որոնց արդյունքում նրանք կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության, որն ինքնին արխիվային օրենսդրության խախտման համար սահմանվող պատասխանատվություն չէ, այլ ցանկացած աշխատանքային/ծառայողական պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար գործատուի կողմից աշխատակցի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց:

Նշված պնդման հիմքում այն փաստն է, որ Ազգային արխիվը, ուր պետք է հանձնվեն համապատասխան արխիվային փաստաթղթերը, չունի լիազորություն վերահսկելու կամ հանձնող սուբյեկտից պահանջելու արխիվային օրենսդրության պահանջների պահպանում: Թեև բոլոր փաստաթղթերի ընդունման-հանձնման գործընթացը պետք է տեղի ունենա ղեկավարվելով համապատասխան ցանկերով (յուրաքանչյուր մարմին պետք է ունենա պահպանման ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի ցանկերը)⁷⁴, սակայն որևէ հսկողություն չկա նրա

⁷⁴ Տե՛ս «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի մարտի 9-ի N 351-Ն

նկատմամբ, թե արդյոք կան գործեր, որոնք ինչ-ինչ պատճառներով «չեն պահպանվել» կամ հանձնվել:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Արխիվների մասին համընդհանուր հոչակագրի համաձայն (ընդունված ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի կողմից, 10.11.2011)՝ «Արխիվների կառավարումն ու դրանց պահպանումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվի նրանց իսկությունը (վավերականությունը), վստահելիությունը, ամբողջականությունն ու օգտագործման հնարավորությունը: (...) իրենց գործունեության ընթացքում արխիվներ ստեղծող և օգտագործող բոլոր պետական ու մասնավոր կազմակերպություններում այդ (արխիվների) կառավարումը պետք է իրականացվի կոմպետենտ»:

Արխիվների միջազգային խորհրդի տարեկան ընդհանուր ժողովի կողմից 2012 թ.-ին ընդունված «Արխիվների մատչելիության սկզբունքներ»-ի⁷⁵ համաձայն՝ «Հանրությունն իրավունք ունի ծանոթանալու պետական մարմինների արխիվներին: Թե՛ պետական, թե՛ մասնավոր կազմակերպությունները հնարավորինս մեծ չափով պետք է բացեն իրենց արխիվները»:

Այս սկզբունքի իմաստով պետական արխիվների մատչելիությունն առանցքային դեր ունի տեղեկացված հասարակության համար: Ժողովրդավարությունը, հաշվետվողականությունը, լավ կառավարումը և քաղաքացիական մասնակցությունը պահանջում են իրավական երաշխիք առ այն, որ անհատների համար հասանելի կլինեն պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային գործառույթներ իրականացնող և հանրային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, միջկառավարական կառույցների արխիվները:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը⁷⁶ մի շարք քաղաքացիաիրավական, վարչական և քրեական պատասխանատվություն նախատեսող նորմեր է սահմանում արխիվային օրենսդրության խախտումների, այդ թվում՝ արխիվային փաստաթղթերի պահպանման, կոմպլեկտավորման, հաշվառման կամ օգտագործման կանոնները խախտելու համար:

Ուկրաինայի Հանրապետությունում արխիվային օրենսդրության խախտման համար ներկայումս սահմանված է վարչական պատասխանատվություն⁷⁷

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 397-Ն որոշում, կետ 2:

⁷⁵ St' u Principles of Access to Archives Adopted by the AGM on August 24, 2012, https://www.ica.org/sites/default/files/ICA_Access-principles_EN.pdf:

⁷⁶ St' u Гражданский кодекс Российской Федерации, ст. 240, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/, Кодекс Российской Федерации об административных правонарушениях, ст. 13.20, ст. 15.11, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/, Уголовный кодекс Российской Федерации, ст. 325, ст. 199, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/:

⁷⁷ St' u Кодекс Украины об административных правонарушениях, http://continent-online.com/Document/?doc_id=30418317#pos=3294;-43, статьи 92-1, 212-3:

(քրեական պատասխանատվություն նախատեսող դրույթի հանցակազմը ապաքրեականացվել է): Ուկրաինայում արխիվային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են համապատասխան արխիվային հաստատությունները պլանային և ոչ պլանային ստուգումների միջոցով: Մասնավորապես պատասխանատվություն է սահմանվում արխիվային փաստաթղթերի անփույթ պահպանման, փչացման, անօրինական ոչնչացման, թաքցնելու և այլ գործողությունների համար:

Վրաստանի Հանրապետությունում սահմանվում է պատասխանատվություն կոնկրետ դրույթների խախտման համար⁷⁸, ինչպես նաև հստակ սահմանվում է արխիվային գործի կանոնների պահպանման և «Արխիվի մասին» օրենքի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու Ազգային արխիվի լիազորությունը: Սահմանվում է նաև Ազգային արխիվի՝ դատարան դիմելու հնարավորությունը:

Դանիայի Թագավորությունում օրենքով ամրագրվում է արխիվային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն⁷⁹: Տարբեր խախտումների համար նախատեսվում է պատասխանատվություն տուգանքի կամ 6 ամիսը չգերազանցող ազատազրկման տեսքով:

Լատվիայի Հանրապետությունում օրենքով սահմանվում է արխիվային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն, որը վերաբերելի է և՛ պաշտոնատար, և՛ այլ (ֆիզիկական ու իրավաբանական) անձանց: Պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն ապահովված է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան նորմերով⁸⁰, ինչպես նաև քրեական օրենսգրքի նորմով⁸¹:

Իսլանդիայի արխիվի մասին օրենքը⁸² ընդհուպ ազատազրկում է նախատեսում առանձին խախտումների համար: Ընդ որում, պատասխանատվությունը սահմանված է այդ թվում ազգային արխիվի կատարած խախտումների համար:

Լիտվայի Հանրապետության արխիվի մասին օրենքը նախատեսում է պատասխանատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց համար. պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն ապահովված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով⁸³ միայն արխիվային փաստաթղթերը չհանձնելու համար:

⁷⁸ Տե՛ս Law of Georgia on the National Archival Fund And the National Archives, <https://matsne.gov.ge/en/document/download/22420/16/en/pdf>, article 15:

⁷⁹ Տե՛ս Danish Archives Act, <https://www.sa.dk/wp-content/uploads/2014/12/Danish-Archives-Act.pdf>, article 10:

⁸⁰ Տե՛ս Latvian Administrative Violations Code (Extracts from the Law), <http://latvijasarhivi.lv/index.php?&1806>:

⁸¹ Տե՛ս The Criminal Law (Extracts from the Law), <http://latvijasarhivi.lv/index.php?&1849>:

⁸² Տե՛ս Public Archives Act, Section XI, <https://skjalasafn.is/files/docs/ThePublicArchivesAct-in-Iceland-No-77-2014.pdf>:

⁸³ Տե՛ս The Republic Of Lithuania, Code Of Administrative Offences, http://europam.eu/data/mechanisms/PF/PF%20Laws/Lithuania/Lithuania_Code%20of%20administrative%20offences_1985_amended2016_eng.pdf, article 50⁷:

Խորվաթիայի արխիվային նյութերի մասին օրենքով ևս սահմանված է պատասխանատվություն (առանձին գլխով) օրենքի կոնկրետ հոդվածների խախտման համար:

Մոլդովայի Հանրապետության արխիվային ֆոնդի մասին օրենքով օրենսդրության խախտման համար պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար սահմանվում է պատասխանատվություն, որն ամրագրված է իրավախախտումների մասին օրենսգրքում⁸⁴:

Սլովակիայի Հանրապետության արխիվների և ռեգիստրների մասին օրենքով նախատեսված են վարչական տույժեր արխիվային օրենսդրության կոնկրետ խախտումների համար⁸⁵:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն սահմանել արխիվային օրենսդրության պահանջների խախտումների համար.
2. արխիվային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ սահմանել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի վերահսկողությունը՝ ապահովելով վերջինիս այն իրականացնելու համար անհրաժեշտ մեխանիզմներով, այդ թվում՝ լիազորությունների ընդլայնման (պարբերական ստուգումների անցկացում, զեկույցների պահանջ և այլն), անհրաժեշտ ռեսուրսների և գործիքների տրամադրման միջոցով:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ.-ի մարտի 21-ի թիվ 17-Լ հրամանով հաստատված՝ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ ձեռնարկատիրական գործունեությամբ իրականացվող ծառայությունների դիմաց վճարման կարգը հակասում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին թե՛ տեղեկատվության տրամադրման ժամկետների, թե՛ սահմանված վճարների պահանջների մասով:

⁸⁴ Ст' у Кодекс о правонарушениях, Nr. 218 от 24.10.2008, <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/ru/md/md098ru.pdf>, статьи 72, 328, 329:

⁸⁵ Ст' у Act on archives and registries and on the amendments of certain acts, https://zh.unesco.org/sites/default/files/sk_actarchivesregistramdmts2002_engtof.pdf, article 15:

Խնդրի վերլուծություն

- ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ.-ի մարտի 21-ի N 17-Լ հրամանի (2017 թ.-ի հունվարի 9-ի N 1-Լ հրամանի փոփոխություններով) հավելված 1-ով հաստատված «ՀԱԱ ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեությամբ իրականացվող ծառայությունների դիմաց վճարման կարգ»-ը (այսուհետ նաև՝ Կարգ)⁸⁶ հակասում է ոլորտը կարգավորող հատուկ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ SU մասին օրենք) պահանջներին⁸⁷:

Այսպես, Կարգի 7-րդ կետի համաձայն՝ «Հարցումի պատասխանը տրամադրվում է յոթից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, բարդ և փնտրում պահանջվող հարցման դեպքում՝ տասնհինգից երեսուն օրվա ընթացքում, իսկ կարճ ժամկետում՝ մեկից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմողի գրավոր պահանջի դեպքում: Եթե դիմողը գրավոր պահանջ է ներկայացնում, ապա բացառիկ դեպքերում հարցումը կարող է կատարվել նույն օրը՝ արխիվի տնօրենի, մասնաճյուղի կամ ներկայացուցչության վարիչի համաձայնությամբ»: Պահանջի դեպքում կարճ ժամկետում տեղեկատվության տրամադրման համար նախատեսված է լրացուցիչ վճար: Հակառակ վերոգրյալ կարգավորման՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրամադրելու ընդհանուր ժամկետը 5 օր է, իսկ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դիմումը ստանալուց հետո 30 օր:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի համաձայն՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս: Օրենքն այս առումով որևէ բացառություն չի նախատեսում, մինչդեռ Կարգով որոշակիացված են տեղեկատվության կոնկրետ տեսակների տրամադրման համար հստակ գանձումներ՝ ծառայությունների համար վճարների տեսքով:

Այսպիսով, Կարգով նախատեսված բոլոր դեպքերում (այդ թվում՝ աշխատանքային ստաժի, սոցապ վճարի, կրթության, ներկայացուցչական մարմիններում ընտրվելու վերաբերյալ)⁸⁸ տեղեկատվության տրամադրումը վճարովի է՝ անկախ այն

⁸⁶ ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ.-ի մարտի 21-ի N 17-Լ հրամանը (2017 թ.-ի հունվարի 9-ի N 1-Լ հրամանի փոփոխություններով), հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.armarchives.am/UserFiles/File/1Dzernark.cara.vshar%20kajqi%20hamar.doc>:

⁸⁷ SU մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է (...) պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների (...) վրա:

⁸⁸ Ըստ Կարգի 11.1 կետի՝ սոցիալ-իրավական բնույթի հարցումների (աշխատանքային ստաժի, սոցապ վճարի, կրթության, ներկայացուցչական մարմիններում ընտրվելու) վերաբերյալ արխիվային տեղեկանքը և՛ հայերեն, և՛ ռուսերեն տրամադրելու համար, անկախ պատրաստման ժամկետից, գանձվում է վճար, ընդ որում, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատելու մասին տեղեկությունը՝ սկսած տվյալ կազմակերպությունում աշխատանքի ընդունվելուց մինչև ազատվելը, հաշվարկվում է առանձին, յուրաքանչյուր կազմակերպությունը՝ 2000 դրամ: Եթե աշխատանքային ստաժի մասին տեղեկանքում, աշխատանքի ընդունվելու և ազատվելու մասին տեղեկությունից բացի,

հանգամանքից՝ այն գերազանցում է SU մասին ՀՀ օրենքով սահմանված 10 էջի սահմանաչափը, թե ոչ:

Ստորև բերվող միջազգային չափորոշիչներից ևս բխում է, որ տեղեկատվության տրամադրման համար վճար չգանձելը ընդհանուր կանոն է, իսկ գանձելու դեպքում այդ վճարը պետք է լինի ողջամիտ՝ ներառելով բացառապես պատճենահանման ծառայության համար կատարված ծախսի ինքնաձախսածածկման արժեքը, ընդ որում, ծախս չի կարող համարվել կազմակերպության աշխատակիցների կատարած աշխատանքը⁸⁹: Այլ կերպ ասած՝ տեղեկատվության տրամադրման համար վճարի գանձումը չի կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակ, մինչդեռ քննարկվող ոլորտում փաստացի դրությունն այլ է՝ հատկապես հաշվի առնելով Կարգով սահմանված վճարների չափը, դրանց գոյացման սկզբունքները, ինչպես նաև օգտվողի՝ սեփական սարքավորումներով արխիվային նյութերի պատճենահանման դեպքում ընդհանուր հիմունքներով վճարելու պարտավորությունը կամ այդ եղանակով պատճենահանումն արգելելը⁹⁰: Օրինակ՝ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակի տրամադրման մեկ էջի համար նախատեսված է վճար՝ 200-2000 ՀՀ դրամ՝ կախված փաստաթղթի ստեղծման տարեթվից, թղթային տարբերակով յուրաքանչյուր էջի համար՝ 500-4000 դրամ, սոցիալ-իրավական բնույթի տեղեկանքների՝ աշխատելու, սովորելու, ներկայացուցչական մարմնում ընտրվելու տեղեկության համար յուրաքանչյուր կազմակերպության վերաբերյալ՝ 2000 դրամ (եթե աշխատանքային ստաժի մասին տեղեկանքում, աշխատանքի ընդունվելու և ազատվելու մասին տեղեկությունից բացի, տրամադրվում է նաև աշխատանքի բնույթի, պաշտոնի փոփոխության մասին տեղեկություն, յուրաքանչյուր տեղեկության համար գանձվում է լրացուցիչ 500 դրամ, 3 օրում պատասխանի դեպքում՝ 1000 դրամ, 2 օրում պատասխանի դեպքում՝ 1500 դրամ, 1 օրում պատասխանի դեպքում՝ 2000 դրամ, նույն օրը պատասխանի դեպքում՝ 2500 դրամ: Մոցայ վճարի կամ աշխատավարձի չափի մասին տեղեկանքի պատրաստման համար յուրանքանչյուր տարվա դիմաց գանձվում է 1000 դրամ: Անշարժ գույքի (կալվածք, հողամաս, գործարան, տուն, բնակարան, ավտոտնակ և այլն), բնակարանի կամ հողամասի սեփականաշնորհման պահին

տրամադրվում է նաև աշխատանքի բնույթի/պաշտոնի փոփոխության մասին տեղեկություն, յուրաքանչյուր տեղեկության համար գանձվում է լրացուցիչ 500 դրամ: Կարճ ժամկետներում պատասխանների համար սահմանված է նշվածից ավելի բարձր վճարման չափ՝ կախված էջերի քանակից:

⁸⁹ ԵԽ Վենետիկի հանձնաժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2008 թ.-ի նախագծի վերաբերյալ կարծիքով (65-րդ կետ) արձանագրել է՝ օրենքի նախագծում պետք է հստակ պարզաբանվի, որ վճարները կարող են գանձվել միայն պատճենման իրական ծախսերի, այլ ոչ թե տեղեկություն տնօրինողի աշխատակազմի աշխատանքի համար, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL\(2009\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2009)019-e):

⁹⁰ ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Վիրաբյանի պնդմամբ՝ անձնական սարքավորումներով պատճենահանումն արգելվում է նյութերում ենթադրաբար առկա անձնական կամ ընտանեկան գաղտնիքի բացահայտման հնարավորությունը կանխելու, այդ գործընթացը վերահսկելու համար, մինչդեռ Կարգով սահմանված են այդ միջոցով պատճենահանման համար վճարներ ընդհանուր պատճենահանման համար նախատեսված չափերով:

գրանցված անձերի քանակի կամ իրավական այլ փաստի (օրենսդիր, գործադիր և դատական մարմինների որոշումներ, վճիռներ) մասին արխիվային տեղեկանքի կամ քաղվածքի կամ վավերացված քսերոպատճենի պատրաստման համար գանձվում է 5000 դրամ, մինչև 5 էջ քսերոպատճենը տրամադրվում է սահմանված սակագնով, 5 էջից ավելի լինելու դեպքում յուրաքանչյուր էջի համար լրացուցիչ սահմանվում է 200 դրամ (A-4 ձևաչափի), շտապի դեպքում գործում է 3, 2, 5 և 2 գործակիցը)⁹¹:

▪ **Կարգը չի համապատասխանում նաև «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 13.07.2017 թ.-ի թիվ 884-Ն որոշման պահանջներին:**

Այսպես, «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքն ապահովում է արխիվային փաստաթղթերից սահմանված կարգով օգտվողի համար սոցիալական ապահովությանը վերաբերող արխիվային փաստաթղթերի մատչելիությունը, այդ թվում՝ դրանց պատճենները կամ համապատասխան տեղեկանքն անվճար տրամադրելու միջոցով (հոդված 23)⁹²: Հակառակ վերոգրյալ պահանջին՝ Կարգի 9-րդ կետի համաձայն՝ «Եթե տեղեկությունը հայտնաբերել է օգտվողը (ընթերցասրահում), ապա տեղեկանք տրամադրելիս կատարվում է 50 տոկոս զեղջ», ինչը նշանակում է, որ ցանկացած դեպքում արխիվային փաստաթղթերից սահմանված կարգով օգտվողի համար գործում է տեղեկատվության ստացման վճարովի կարգ:

Ըստ Կարգի՝ սոցիալ-իրավական բնույթի հարցումների շարքին են դասվում աշխատանքային ստաժի, սոցապ վճարի, կրթության, ներկայացուցչական մարմիններում ընտրվելու, պարգևատրման, պատվավոր կոչումների, գինվորական ծառայության, պարտիզանական և դիմադրության շարժումներին մասնակցելու, համակենտրոնացման ճամբարներում գտնվելու, բռնադատված լինելու վերաբերյալ հարցումները: Ընդգծված հարցումների մասով տեղեկատվության տրամադրումը, համաձայն ՀՀ Կառավարության 13.07.2017 թ.-ի թիվ 884-Ն որոշման, պետք է լինի անվճար, սակայն Կարգը դրանց տրամադրման համար ևս սահմանում է վճարներ, օրինակ՝ հարցման բացասական պատասխանի, կարճ ժամկետում տեղեկատվությունը տրամադրելու դեպքերում:

Համաձայն Կարգի՝ տեղեկատվության անվճար տրամադրման հնարավորություն է սահմանված միայն Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Արցախի պաշտպանության մասնակիցների, նրանց հավասարեցված անձանց և հաշմանդամների համար, այն էլ *բացառիկ դեպքերում՝ ՀԱՍ տնօրենի հանձնարարությամբ*: Դրա հետ միասին դեպքերի բացառիկությունը որոշելու վերաբերյալ որևէ չափորոշիչ Կարգով նախատեսված չէ:

Այսպիսով, թեև ՀՀ օրենսդրությամբ հստակ նախատեսված են տեղեկատվությունը անվճար տրամադրելու դեպքերը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից տեղեկատվության տրամադրումն իրականացվում է ծառայության վճարի դիմաց

⁹¹ ՀԱՍ ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ.-ի մարտի 21-ի N 17-Լ հրամանը (2017 թ.-ի հունվարի 9-ի N 1-Լ հրամանի փոփոխություններով), հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.armarchives.am/UserFiles/File/1Dzernark.cara.vshar%20kajqi%20hamar.doc>:

⁹² Տե՛ս ՀՀՊՏ 2004.07.14/38(337) Հոդ.862, 08.06.2004 թ.:

(որպես ձեռնարկատիրական գործունեություն), իսկ հնարավոր բացառությունների սահմանումը առանձին դեպքերում հնարավոր է ՀԱԱ ՊՈԱԿ-ի ղեկավարի հայեցողությամբ⁹³:

▪ **Կարգը ոչ իրավաչափ է նաև ՀՀ Սահմանադրությանը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին հակասելու հիմքով:**

Արխիվային բնագավառում վճարների սահմանված չափերը բազմաթիվ անգամ գերազանցում են ծառայության ինքնաձախսաձածկման արժեքը, իսկ Կարգով սահմանված վճարումները չկատարելու դեպքում տեղեկատվության տրամադրումը մերժվում է՝ մի շարք դեպքերում հանգեցնելով տեղեկատվության ազատության իրավունքի խախտմանը: Ակնհայտ է, որ ներքին (լոկալ) իրավական ակտով չեն կարող սահմանվել նման իրավական հետևանքներ առաջացնող դրույթներ: Ավելին, որպես ներքին իրավական ակտ ընդունված քննարկվող Կարգը ոչ իրավաչափ է Հայաստանի ազգային արխիվի տնօրենի՝ տեղեկատվության ազատության իրավունքի վերոգրյալ սահմանափակումները նախատեսելու լիազորությունների բացակայության հիմքով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում է. «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: 3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»⁹⁴:

Հետևաբար արխիվային նյութերից տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ կոնկրետ իրավաչափ նպատակ հետապնդելու շրջանակում:

Արձանագրենք նաև, որ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությամբ իրականացվող ծառայությունների դիմաց վճարման Կարգն ունի ներքին իրավական ակտի կարգավիճակ, սակայն իր բնույթով նորմատիվ իրավական ակտ է, քանի որ վարքագծի պարտադիր կանոններ է սահմանում անորոշ թվով անձանց համար՝ ներառելով տեղեկատվության ազատության իրավունքի մի շարք սահմանափակումներ նախատեսող դրույթներ: Բացի այդ, այն ուղղակիորեն հակասում է նաև «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության 13.07.2017 թ.-ի թիվ 884-Ն որոշման պահանջներին:

⁹³ Բացառություն են ԱՊՀ երկրներից փոստով ստացված հարցումները:

⁹⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 06.12.2015 թ.:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ⁹⁵

Արխիվների հասանելիության եվրոպական քաղաքականության մասին թիվ R(2000)13 հանձնարարականը⁹⁶ սահմանում է.

«(...) 3. Հանրային արխիվներին վերաբերող իրավական ակտերն ու կանոնները պետք է համակարգված լինեն և ներդաշնակեցված այն օրենքների հետ, որոնք վերաբերում են հարակից ոլորտներին, հատկապես հանրային մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկատվության մատչելիությանը և տվյալների պաշտպանությանը»:

Հանձնարարականի 6-րդ կետի համաձայն՝ «Արխիվների հասանելիությունը պետական արխիվային ծառայությունների գործառնություններից է, որի համար, որպես այդպիսին, վճարներ չպետք է գանձվեն»:

Արխիվների միջազգային խորհրդի տարեկան ընդհանուր ժողովի կողմից 2012 թ.-ին ընդունված «Արխիվների մատչելիության սկզբունքներ» փաստաթղթի⁹⁷ 8-րդ սկզբունքն ամրագրում է՝ արխիվներ պահող կառույցները պետք է երաշխավորեն, որ գործառնական սահմանափակումները չեն խոչընդոտի արխիվների մատչելիությունը: Այս սկզբունքով, ի թիվս այլնի, սահմանվում է. «...Արխիվային հաստատություն հաճախող կամ դրանից հեռու ապրող օգտվողները պետք է հնարավորություն ունենան ձեռք բերելու արխիվային նյութերի պատճեններն արխիվային հաստատության տեխնիկական կարողություններին համապատասխան՝ տարբեր ձևաչափերով: Հաստատությունները կարող են ողջամիտ գումարներ գանձել պահանջվող պատճենահանման ծառայության դիմաց...»:

Ուկրաինայի Հանրապետության «Ազգային արխիվային ֆոնդի և արխիվային հաստատությունների մասին» օրենքով⁹⁸ որոշակիացված են արխիվի վճարովի ծառայությունների տեսակները, ինչպես նաև այն ծառայությունները, որոնք չեն կարող իրականացվել վճարի դիմաց (այդ թվում՝ սոցիալ-իրավական բնույթի տեղեկանքների տրամադրումը, ընթերցասրահում արխիվային նյութերի ուսումնասիրումը, դատարաններին, պետական վերահսկողական մարմիններին, իրավապահ մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից

⁹⁵ Նկատի ունենալով, որ մի շարք միջազգային փաստաթղթեր և միջազգային կառույցների պաշտոնական դիրքորոշումներ (Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ N Rec(2002)2 հանձնարարական, «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2008 թ.-ի նախագծի կապակցությամբ) արդեն իսկ մանրամասն քննարկվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին վերաբերող բաժնում, այստեղ կանդիդատանք բացառապես արխիվների մատչելիության հարցերին վերաբերող փաստաթղթերին:

⁹⁶ St u Recommendation No. R (2000) 13 of the Committee of Ministers to member states on a European policy on access to archives (Adopted by the Committee of Ministers on 13 July 2000, at the 717th meeting of the Ministers' Deputies), <https://rm.coe.int/16804cea4f>:

⁹⁷ St u Principles of Access to Archives, <https://www.ica.org/en/principles-access-archives>:

⁹⁸ St u https://kodeksy.com.ua/ka/o_natsionalnom_arhivnom_fonde_i_arhivnyh_uchrezhdeniyah.htm:

արխիվ հանձնված նյութերից տեղեկանքների տրամադրումը):

Ղազախստանի Հանրապետության օրենքով⁹⁹ արխիվային նյութերի օգտագործումն անվճար է, պետական և վարչական արխիվները, որոնք գործում են պետական բյուջեի միջոցներով, կարող են կատարել իրենց աշխատանքները, ծառայությունները, որոնց դիմաց վճարումը չի կրում պարտադիր բնույթ և կարգավորվում է փոխադարձ համաձայնության հիման վրա կնքված պայմանագրերով:

Համակարգող նախարարի հրամանով սոցիալ-իրավական բնույթի, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումն անվճար է¹⁰⁰:

Մոլդովայի Հանրապետությունում կառավարության համապատասխան որոշումը նախատեսում է աշխատավարձի, սեփականության իրավունքի, քաղաքական հետապնդումներից տուժածների վերաբերյալ տեղեկանքների անվճար տրամադրում¹⁰¹:

Բելառուսի Հանրապետությունում սոցիալ-իրավական բնույթի տեղեկանքների տրամադրումը կառավարության որոշման հիման վրա ևս անվճար է¹⁰²:

Ռուսաստանի Դաշնությունում չկա միասնական սկզբունք արխիվային ծառայությունների վճարի վերաբերյալ: Սոցիալ-իրավական բնույթի տեղեկանքները կախված տեսակից, կարող են տրամադրվել թե՛ անվճար, թե՛ որոշակի վճարի դիմաց. այնուամենայնիվ, դրա չափը չի գերազանցում միջին աշխատավարձի 1.49%-ը¹⁰³:

Հունգարիայի օրենքով սահմանվում է արխիվից անվճար օգտվելու, սեփական միջոցներով պատճենահանելու հնարավորությունը: Եթե փաստաթղթերը, ֆիզիկական վիճակով պայմանավորված, չեն կարող տրամադրվել հետազոտողին, պետական արխիվները կարող են բավարարել հայտը՝ իրենց միջոցներով համապատասխան պատճենահանման աշխատանքները կատարելով, եթե այդ աշխատանքի արժեքը չի գերազանցի սովորական պատճենահանման համար կատարվող ծախսի հնգապատիկը: Այնուամենայնիվ, եթե հետազոտողը պատրաստակամություն է հայտնել վճարելու լրացուցիչ ծախսը, ապա պետական

⁹⁹ Ст'у Закон Республики Казахстан от 22 декабря 1998 года № 326-І О Национальном архивном фонде и архивах, https://online.zakon.kz/document/?doc_id=1011878#pos=238;-51:

¹⁰⁰ Ст'у Institute for Development of Freedom of Information (IDFI), Assessment of the Openness of State Archives, http://open-archives.org/uploadimages/countryfiles/Kazakhstan_Central_Archives_En-2019.pdf:

¹⁰¹ Ст'у Institute for Development of Freedom of Information (IDFI), Assessment of the Openness of State Archives, [http://open-archives.org/uploadimages/countryfiles/Moldova_The_Archive_of_the_Social-Political_Organizations\(AOSPRM\)_En.pdf](http://open-archives.org/uploadimages/countryfiles/Moldova_The_Archive_of_the_Social-Political_Organizations(AOSPRM)_En.pdf):

¹⁰² Ст'у Institute for Development of Freedom of Information (IDFI), Assessment of the Openness of State Archives, <http://open-archives.org/uploadimages/countryfiles/Belarus%20-%20KGB%20Archive%20-%20ENG%20-%202019.pdf>:

¹⁰³ Ст'у Institute for Development of Freedom of Information (IDFI), Assessment of the Openness of State Archives, http://open-archives.org/uploadimages/countryfiles/Russia_Central_Archive_FSB_En_2018.pdf:

արխիվները պարտավոր են կատարել պատճենահանումը և տրամադրել նյութերը դիմողին¹⁰⁴:

Խորվաթիայի օրենքը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արխիվներից և տեղեկատվական միջոցներից օգտվելն անվճար է: Պատճենների, հրատարակությունների և հանրային արխիվների օգտագործման այլ եղանակների համար կարող է գանձվել վճար՝ արխիվներից օգտվելու համապատասխան կարգի հիման վրա:

Անդրադառնալով օգտվողի սեփական սարքավորումներով արխիվային նյութերի պատճենահանման հնարավորությանը՝ նշենք, որ նման կարգ սահմանված է մասնավորապես Ֆինլանդիայի ազգային արխիվի¹⁰⁵, Բելառուսի ազգային արխիվի¹⁰⁶, Ռուսաստանի Դաշնության¹⁰⁷ և այլ երկրների¹⁰⁸ արխիվների կողմից, այդ թվում՝ արխիվից օգտվելու ընդհանուր կանոններում:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1. օրենքով հստակ ամրագրել արխիվի կողմից մատուցվող հնարավոր վճարովի ծառայությունների տեսակները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին.
2. վճարովի տրամադրվող ծառայությունների ցանկը և վճարի գոյացման սկզբունքները սահմանել նորմատիվ իրավական ակտով՝ նախատեսելով ողջամիտ վճարներ, որոնք կուղղվեն տրամադրված ծառայությունների ինքնածախսածածկմանը.
3. բացառել սոցիալ-իրավական բնույթի ծառայությունների, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը վճարովիության հիմունքներով:

¹⁰⁴ Տե՛ս Act LXVI of 1995 on Public Records, Public Archives, and the Protection of Private Archives, <https://www.legislationline.org/documents/action/popup/id/6756>, article 22:

¹⁰⁵ Տե՛ս <https://arkisto.fi/ru /впервые-в-архиве/информация-о-фотографировании-документов>:

¹⁰⁶ Տե՛ս Инструкция о порядке пользования архивными документами в читальных залах государственных архивов Республики Беларусь, http://www.narb.by/rus/reading_room/rules:

¹⁰⁷ Տե՛ս Порядок использования архивных документов в государственных и муниципальных архивах Российской Федерации, <http://statearchive.ru/391>:

¹⁰⁸ Տե՛ս

https://www.nationalarchives.gov.uk/legal/?fbclid=IwAR0ORUD6opYmpwA86_rYh137pn8rsGFMb78HO8Ect7NYVwJlzymWu1tCKI,

<https://www.archives.gov/research/order/scanning.html?fbclid=IwAR2QbKBGHvJBHG6Oxrrv7DbPOVKlxNUG91sSME1FiHBRdEyTn60bV4Hkj4Y>:

Խնդիր 3

Խնդրի նկարագրությունը

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ընտրության չափորոշիչները, ինչը կարող է հանգեցնել արխիվային նյութերի մատչելիության անհիմն սահմանափակումների:
- Բռնադատվածների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում արխիվային նյութերից օգտվելու հատուկ կարգ ներկայումս չի գործում, ինչի պարագայում իրավական առումով այդ և արխիվային հավաքածուի այլ նյութերի օգտագործման կարգի միջև տարբերակում առկա չէ: Գործնականում այդ նյութերը դիմողներին (բացառությամբ հետազոտողների) տրամադրվում են հատուկ անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող նյութերում համապատասխան էջերը փակելու ձևով:
- Ծառայողական կամ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնագերծումը և արխիվ հանձնելը շատ դեպքերում փաստացի չի վերացնում այդ նյութերի մատչելիության սահմանափակումը, քանի որ դրանք շարունակում են պաշտպանվել անձնական և ընտանեկան գաղտնիքով, և արխիվային նյութերի մատչելիության սահմանափակումը երկարացվում է այն ժամկետով, որում կլրանա այդ փաստաթղթի ստեղծման հարյուր տարին:

Վերլուծություն

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի օգտագործման մատչելիությունը սահմանափակվում է դրանց ստեղծման ժամանակից 100 տարի ժամկետով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Մարդու, իսկ վերջինիս մահվանից հետո նրա ժառանգների գրավոր թույլտվության կամ դատարանի որոշման հիման վրա մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը կարող են մատչելի լինել ավելի վաղ, քան դրանց ստեղծման ժամանակից 100 տարվա ժամկետը»:

Նշված սահմանափակումը կոչված է ապահովելու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, սակայն հատկապես ո՞ր տվյալները և ի՞նչ չափորոշիչներով կարող են համարվել անձնական կամ ընտանեկան գաղտնիք և արդյունքում դառնալ ոչ մատչելի, մնում է Արխիվի հայեցողությանը, քանի որ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթը բավականաչափ հստակ չէ (մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր՝ ֆիզիկական անձի առողջական վիճակի, ընտանեկան և նեղ անձնական հարաբերությունների, ծննդյան, որդեգրման, ամուսնության և ամուսնալուծության հանգամանքների, անձնական տվյալների, անձնական գրագրության և թղթակցության, նոտարական գործարքների, գույքային իրավունքի, եկամտի

աղբյուրների մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր): Այլ կերպ ասած՝ չկա որևէ իրավական ակտ, որը կսահմանի Հայաստանի ազգային արխիվի նյութերից օգտվելու, այդ թվում՝ օգտվելու սահմանափակումների վերաբերյալ հստակ կանոնները: Հարցը լիարժեք կարգավորում չի ստացել նաև 13.07.2017 թ.-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշմամբ: Մասնավորապես նշված որոշման համաձայն՝ «193. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի օգտագործման թույլտվությունը ձևակերպվում է օգտվողի դիմումի կամ գրության հիման վրա, որում նշվում են օգտվողի ազգանունը, անունը, ուսումնասիրման նպատակը: Դիմումի կամ գրության հետ միաժամանակ ներկայացվում է օգտվողի անձը հաստատող, իսկ մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություն պարունակող փաստաթղթերից օգտվելու դեպքում՝ նաև ազգակցական կապի վերաբերյալ (ընտանիքի անդամ, օրինական ժառանգորդ և այլն) փաստաթուղթ»: Դրա հետ միասին որոշմամբ դարձյալ սահմանված չեն մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ընտրության չափորոշիչները:

Ինչ վերաբերում է կարգավորման այն մասին, ըստ որի՝ «Մարդու, իսկ մահվանից հետո նրա ժառանգների գրավոր թույլտվության հիման վրա մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը կարող են մատչելի լինել ավելի վաղ, քան դրանց ստեղծման ժամանակից 100 տարվա ժամկետը», ապա դրա փաստացի իրագործման հնարավորությունը վիճելի է, քանի որ կոնկրետ անձը կարող է ունենալ ժառանգներ, որոնք տեսականորեն կարող են թույլատրել հայցվող նյութերի մատչելիությունը, սակայն նրանց գտնվելու վայրն անհայտ լինի, կամ նրանց հետ կապվելու գործնական հնարավորություն չլինի, կամ, ի վերջո, անհասկանալի է, թե ինչպես կարող է պարզ լինել, թե անձը քանի ժառանգ ունի, ու ինչպես է կարգավորվում իրավիճակը, եթե ժառանգներից մեկն է թույլտվություն տալիս, իսկ մյուսները, տեղեկացված չլինելով, որևէ դիրքորոշում չեն հայտնում:

Հատկանշական է, որ գործնականում որպես անձնական կամ ընտանեկան գաղտնիք պարունակող գնահատվում է փաստաթղթերի 4 կատեգորիա: Դրանք են դատական գործերը, առողջապահական բնույթի փաստաթղթերը, նոտարական գործերը, անշարժ գույքի վերաբերյալ գործերը¹⁰⁹:

Իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ

Ինչպես նշվեց, *մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք* հասկացությունը որպես այդպիսին չի մասնավորեցվում, միաժամանակ սահմանվում է անձնական և

¹⁰⁹ Այս պնդման համար հիմք է հանդիսանում ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրենի հայտնած տեղեկությունը:

ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող հնարավոր փաստաթղթերի շարք, որը ներառում է նաև *անձնական տվյալներ* պարունակող փաստաթղթերը, ինչը վերջնականապես անորոշ է դարձնում քննարկվող հասկացությունը՝ հաշվի առնելով նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները:

Նման պայմաններում համապատասխան արխիվային հաստատությունը լայն հայեցողություն ունի հայցվող նյութերը դիմողին տրամադրելու կամ դրանց տրամադրումը մերժելու հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում կայուն իրավակիրառ պրակտիկա այս հարցի վերաբերյալ դեռևս ձևավորված չէ¹¹⁰, հարկ ենք համարում անդրադառնալ ՌԴ-ում մեծ հնչեղություն ստացած Միխայիլ Սուպրունի գործին¹¹¹՝ հաշվի առնելով այն, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդրական կարգավորումներն այս հարցի վերաբերյալ կարող ենք նույնական համարել ՀՀ-ում գործող իրավակարգավորումներին այն տարբերությամբ, որ ՌԴ օրենսդրությունն ընդհանրապես չի մասնավորեցնում *անձնական կամ ընտանեկան գաղտնիք* հասկացությունը:

Այսպես, պատմաբան Մ. Սուպրունը հետազոտության շրջանակներում հավաքել է տուժողների (ՌԴ-ում բռնադատված գերմանացիների) մինչպատերազմյան ժամանակահատվածում բնակվելու վայրի, նրանց ԽՍՀՄ-ից վտարելու և ազատագրվելու տարեթվի, ԽՍՀՄ վերադառնալու տարեթվի և Արխանգելսկի շրջանի հատուկ բնակության վայր տեղափոխվելու և ապրելու ժամանակահատվածի, ինչպես նաև նրանց արդարացման վերաբերյալ տվյալներ: Նշվածի համար Սուպրունը մեղադրվել է ՌԴ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով (որը նախատեսում է ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված համարժեք հանցակազմ՝ «Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով...»): Մ. Սուպրունը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան, և գործը դեռևս քննության փուլում է: ՄԻԵԴ-ը հարցում է ուղղել կողմերին Կոնվենցիայի 7-րդ և 10-րդ հոդվածների առնչությամբ, մասնավորապես պահանջել է պարզաբանել հետևյալ հարցերը՝ ո՞ր օրենսդրական ակտն է բովանդակում *անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիք* հասկացությունը, օրենսդրությամբ այդպիսի սահմանման բացակայության դեպքում արդյո՞ք առկա է բավականաչափ կայուն և հետևողական դատական պրակտիկա ՌԴ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ:

Այս գործով ՄԻԵԴ-ը վճիռ դեռ չի կայացրել, սակայն բարձրացված հարցերից կարելի է ենթադրել քննարկվող խնդրի կարևորությունը:

¹¹⁰ Տե՛ս <https://hetq.am/hy/article/89244>, <https://www.iragir.am/2018/05/21/176846/>:

¹¹¹ Տե՛ս Mikhail Nikolayevich SUPRUN against Russia (Application no. 58029/12), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22fulltext%22%3A%2258029/12%22%2C%22itemid%22%3A%22001-140706%22%7D>:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև Հայաստանում բռնադատվածների մասին տեղեկատվության մատչելիության առկա սահմանափակումներին:

Այսպես, ներկայումս բռնադատվածների վերաբերյալ արխիվային նյութերից օգտվելու հատուկ կարգ ՀՀ-ում չի գործում, ինչի պարագայում իրավական առումով այդ և արխիվային հավաքածուի այլ նյութերի օգտագործման կարգի միջև տարբերակում առկա չէ: Սակայն սույն վերլուծության շրջանակում, մեր բանավոր հարցմանն ի պատասխան, ՀԱԱ ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Վիրաբյանը հայտնել է, որ այդ նյութերը քաղաքացիներին տրամադրվում են հատուկ կարգով (անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող նյութերում համապատասխան էջերը ծածկելու ձևով), իսկ հետազոտություն իրականացնող գիտնականներին տրամադրվում է ամբողջական նյութը, ընդ որում, նկատի ունենալով ոչ թե վերջիններիս գործունեության բերումով տեղեկատվության իրավունքի ապահովման հարցը, այլ «ավելի բարձր վստահության մակարդակը»: Նկատենք, որ անձնական տվյալների ապօրինի օգտագործման մասին խոսելիս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակում պատասխանատվության կարող է ենթարկվել ՀԱԱ ՊՈԱԿ-ը, ինչպես նաև արխիվային նյութեր տիրապետող այլ հաստատություն, ինչը ևս կաշկանդում է արխիվային նյութերի մատչելիության հարցը որոշելիս, քանի որ օրենսդրական ընդհանրական հասկացությունների հետևանքով որոշման հիմքում համապատասխան պաշտոնատար անձի հայեցողությունն է:

Քննարկվող փաստաթղթերում անձնական տվյալները ծածկելու համար շարունակում է հիմք հանդիսանալ մեծ տարածում ունեցած այն դիրքորոշումը, ըստ որի՝ այդ նյութերում առկա են մատնիչների տվյալներ, որոնք իրենց հարազատներին կամ նրանց գործողություններից տուժածներին հասու դառնալու դեպքում կարող են հանգեցնել անուղղելի հետևանքների: Արձանագրենք, որ համապատասխան կարգը, որի հիմքում այդ գաղափարն է, ուժը կորցրած է ճանաչվել¹¹²:

Ավելին, բռնաճնշումների, բռնությունների վերաբերյալ արխիվային նյութերը մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին տեղեկություններ են և բովանդակում են փաստեր պետական մարմինների և պաշտոնատար անձանց՝ օրինականությունը խախտելու մասին, ուստի չեն կարող դասվել օրենքով պահպանվող որևէ գաղտնիքի շարքին: Բռնաճնշումներից տուժածների արդարացման գործընթացն ինքնին հրապարակայնություն է ենթադրում և պետք է թափանցիկ լինի՝ հաշվի առնելով դրա հանրային նշանակությունը: Այդպիսի նյութերը չեն կարող հանդիսանալ անձնական կամ ընտանեկան գաղտնիք:

Հարկ է նշել, որ բռնադատվածների ազգականների համար համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում կարող է հասանելի դառնալ միայն կոնկրետ

¹¹² ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի 01.04.2003 թ.-ի թիվ 153-Ն հրամանը «ՀՀ պետական արխիվին հանձնված բռնադատվածների վերաբերյալ խորհրդային իշխանության 1917-1987 թթ.-ի ժամանակաշրջանի փաստաթղթերի օգտագործման կարգը հաստատելու մասին» ուժը կորցրել է 27.01.2005 թ.-ին (ՀՀԳՏ 2003.05.15/12(130) Հոդ.212):

անձի արխիվային գործը, որը, որպես կանոն, չի բովանդակում ամբողջական տեղեկատվություն այդ անձի հետ կատարվածի մասին: Ամբողջական տեղեկատվություն ստանալու համար, ինչպես նշում են հետազոտողները, անհրաժեշտ է ուսումնասիրել բազմաթիվ այլ գործեր, որոնք փաստացի հասանելի չեն դարձվում բռնադատվածների հարազատներին¹¹³: Սրանով խախտվում է վերջիններիս՝ ճշմարտությունն իմանալու ճանաչված իրավունքը¹¹⁴:

Արխիվային նյութերի անձնական և ընտանեկան գաղտնիքով պաշտպանվածության պրակտիկան հատկապես անտրամաբանական է պատկան մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակում գաղտնազերծված նյութերի մասով: Այսպես, օրինակ, ծառայողական կամ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնազերծումը և արխիվ հանձնելը փաստացի մի շարք դեպքերում չի վերացնում այդ նյութերի մատչելիության սահմանափակումը, այն երկարացվում է այնքան ժամանակով, որում կլրանա այդ փաստաթղթի ստեղծման հարյուր տարին:

Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ տվյալների սուբյեկտի մահվան դեպքում նրա անձնական տվյալները կարող են մշակվել առանց համաձայնության, եթե մշակվող տվյալները պետք է լինեն մահացած անձի անունը, սեռը, ծննդյան և մահվան տարին, ամիսը, ամսաթիվը: Մշակույթի, արվեստի, գիտության, կրթության, սպորտի, կրոնի և հանրային այլ բնագավառների գործչի մահվան դեպքում նրա անձնական կյանքի տվյալները կարող են մշակվել առանց համաձայնության, եթե մահվան օրվանից անցել է հիսուն տարի, հանրային բնագավառի գործչի մահվան դեպքում նրա անձնական կյանքի տվյալները կարող են մշակվել, նրա վերաբերյալ արխիվային նյութերից օգտվելու հնարավորություն կարող է ընձեռվել առանց համաձայնության, եթե մահվան օրվանից անցել է հիսուն տարի: Ստացվում է, որ անձնական տվյալների (այդ թվում՝ անձնական և ընտանեկան գաղտնիք) պաշտպանությունն ապահովող հատուկ օրենքը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, կոնկրետ դեպքում այդպիսի տվյալների պաշտպանության կրկնակի քիչ ժամկետ է նախատեսում, քան «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը, ինչն արդարացված չէ: Բացի այդ, առկա զուգահեռ կարգավորումները հնարավոր են դարձնում մի իրավիճակ, երբ կոնկրետ անձի անձնական կամ ընտանեկան գաղտնիքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը կարող են մնալ ոչ մատչելի նույնիսկ այն դեպքում, երբ փաստաթղթերի ստեղծման օրվանից անցել է 100 տարի, սակայն չի լրացել անձի մահվան 50 տարին:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Ըստ «Արխիվի մատչելիության սկզբունքներ»-ում ամրագրված 2-րդ սկզբունքի՝ «Արխիվներ պահող հաստատությունները տեղեկացնում են արխիվների գոյության մասին, այդ թվում՝ փակ նյութերի, և բացահայտում են արխիվների մատչելիության վրա ազդող սահմանափակումները»: Նշված սկզբունքը սահմանում է, որ

¹¹³ Այս մասին հայտնել է ազգագրագետ, «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում: Պատմություն, հիշողություն, առօրյա» գրքի հեղինակ Հ. Խառատյանը:

¹¹⁴ Մանրամասն տե՛ս հաջորդող «Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ» մասում:

արխիվարհուսները պետք է առաջնորդվեն բաց լինելու կանխավարկածով. եթե պահանջվում են մատչելիության սահմանափակումներ, նրանք երաշխավորում են, որ այդ սահմանափակումները գրված են հստակ, ըստ այդմ, հասկանալի են հանրությանը և մեծացնում են դրանց կիրառման հետևողականությունը:

«Արխիվներ պահող կազմակերպությունները երաշխավորում են, որ, ըստ միջազգային իրավունքի, լուրջ հանցագործությունների գոհերի համար հասանելի են նրանց իրավունքները հաստատող և դրանց խախտումները փաստագրող ապացույցները, նույնիսկ երբ այս արխիվները փակ են ընդհանուր հանրության համար: Այս սկզբունքի հիմքում դրված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ընդունած «Մարդու իրավունքների խթանումն ու պաշտպանությունը անպատժելիության դեմ պայքարի միջոցով սկզբունքների թարմացված ժողովածու»-ի¹¹⁵ այն արձանագրումը, որի համաձայն՝ լուրջ խախտումների գոհերը պետք է իմանան խախտումների մասին ճշմարտությունը: Սկզբունքների ժողովածուն կարևորում է այն դերը, որ ունեն արխիվները ճշմարտությունն իմանալու, մարդու իրավունքների խախտումների համար անձանց պատասխանատվության ենթարկելու, փոխհատուցում պահանջելու և մարդու իրավունքների խախտումների մեղադրանքներից պաշտպանվելու գործում:

Օտարերկրյա փորձ անձնական կամ ընտանեկան գաղտնիք պարունակելու հիմքով մատչելիության սահմանափակումների մասով

Լիտվայի Հանրապետությունն օրենքով սահմանում է մարդու անձնական կյանքի մասին տեղեկություն պարունակող փաստաթղթերի, ինչպես նաև անձնական տվյալների հասանելիության սահմանափակումը մինչև մարդու մահը, իսկ եթե հնարավոր չէ պարզել նրա մահվան օրը, ապա ծննդյան օրից 100 տարից անց: Եթե հայտնի չէ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ապա հասանելիությունը պետք է սահմանափակվի փաստաթղթերի ստեղծման պահից 70 տարի ժամկետով: Այս նորմից բացառություն են կազմում բռնադատվածների վերաբերյալ գործերը, որոնց մատչելիությունը, որպես կանոն, սահմանափակված չէ: Օրենքը սահմանում է նաև արխիվային փաստաթղթերից օգտվելու կանոնները, օրինակ՝ սահմանափակ օգտագործման թույլտվություն ունեցող տեղեկությունների օգտագործումը, արխիվային նյութերի օգտագործումը կոմերցիոն, ոչ կոմերցիոն և այլ նպատակներով:

Դանիայի Թագավորությունում օրենքով¹¹⁶ մասնավոր անհատների մասին անձնական, այդ թվում՝ ֆինանսական բնույթի տեղեկություններ պարունակող արխիվային հաշվառման միավորները հասանելի են 75 տարին լրանալուց հետո: Անձնական տվյալների պաշտպանության օրենքի առարկա նյութերի համար 75 տարուց կարճ հասանելիության ժամկետ սահմանելը կարող է այնուամենայնիվ տեղի ունենալ միայն Դանիայի անձնական տվյալների պաշտպանության գործակալության կարծիքից հետո, եթե նյութը փոխանցել են պետական

¹¹⁵ St' u Updated Set of principles for the protection and promotion of human rights through action to combat impunity, 8 February 2005, <http://www.derechos.org/nizkor/impu/principles.html>:

¹¹⁶ St' u Danish Archives Act, <https://www.sa.dk/wp-content/uploads/2014/12/Danish-Archives-Act.pdf>:

մարմինները կամ Դանիայի դատարանները: Ցանկացած անձ կարող է սահմանափակ հասանելիության նյութերն օգտագործելու դիմում ներկայացնել:

Ֆինլանդիայի օրենքով՝ անձնական տվյալների մատչելիությունը սահմանափակված է անհատի մահից հետո 50 տարվա ընթացքում¹¹⁷:

Ռուսաստանի Դաշնությունում օրենքով անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի օգտագործման մատչելիությունը սահմանափակված է դրանց ստեղծման ժամանակից 75 տարի ժամկետով: Մարդու, իսկ մահվանից հետո նրա ժառանգների գրավոր թույլտվության հիման վրա մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը կարող են մատչելի լինել ավելի վաղ: Միաժամանակ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՌԴ օրենքը չի տարածվում արխիվային օրենսդրության վրա:

Վրաստանի Հանրապետության օրենքով սահմանափակվում է քաղաքացիների համար անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի մատչելիությունը՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք բովանդակում են տվյալներ քաղաքացիների սեփականության իրավունքի մասին: Այլ անձանց համար սահմանափակված է նաև քրեական գործով նյութերի մատչելիությունը, երկու դեպքում էլ մինչև 75 տարի ժամկետով:

Ուկրաինայի Հանրապետության օրենքով՝ անձին վերաբերող կոնֆիդենցիալ տեղեկատվությունը, ինչպես նաև այդ անձի անվտանգությանը կամ նրա բնակարանի անձեռնմխելիությանն առնչվող տեղեկություն բովանդակող փաստաթղթերի մատչելիությունը սահմանափակված է 75 տարով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Նշված ժամկետից շուտ փաստաթղթի մատչելիությունը կարող է ապահովվել քաղաքացու թույլտվությամբ, նրա մահվան դեպքում՝ ժառանգի համաձայնությամբ, ինչպես նաև այն դեպքերում, երբ տեղեկատվությունը հանրորեն անհրաժեշտ է, կամ դրա նկատմամբ մատչելիության սահմանափակումն արգելված է օրենքով (օրինակ՝ օրենքով արգելված է բռնադատվածների մասին արխիվային նյութերի մատչելիության սահմանափակումը):

Բելառուսի Հանրապետությունում անձնական գաղտնիք պարունակող փաստաթղթերի մատչելիությունը սահմանափակված է այդ փաստաթղթերի ստեղծման պահից 75 տարվա ընթացքում: Նշված ժամկետից շուտ փաստաթղթի մատչելիությունը կարող է ապահովվել քաղաքացու թույլտվությամբ, նրա մահվան դեպքում՝ ժառանգորդի համաձայնությամբ: Այդպիսի փաստաթղթերի օգտագործման կարգը սահմանվում է արխիվային գործը համակարգող հանրապետական մարմնի կողմից:

Մոլդովայի Հանրապետությունում անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի ապահովմամբ պայմանավորված՝ ազգային արխիվային հավաքածուի փաստաթղթերից օգտվելու մատչելիությունը սահմանափակվում է 75 տարի ժամկետով:

¹¹⁷ St' u The Archives Act,

<https://www.legislationline.org/download/id/1244/file/d79f42a78c20ace1b22935d4971e.pdf>:

Լատվիայի Հանրապետությունում օրենքով անձի մահից հետո 30 տարի ժամկետով սահմանափակված է այն նյութերի նկատմամբ մատչելիությունը, որոնք բովանդակում են կոնֆիդենցիալ անձնական տվյալներ կամ անձի անձնական կյանքին վերաբերող տեղեկություն (ներառյալ որդեգրման և նոտարական գործունեությամբ զբաղվելու մասին տեղեկությունը), եթե այդպիսի տեղեկությունների օգտագործումը կարող է էապես խախտել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Եթե մահվան ամսաթիվը հայտնի չէ, ապա սահմանափակումը պետք է գործի անձի ծննդից հետո 110 տարով, իսկ եթե հայտնի չեն ո՛չ ծննդյան, ո՛չ էլ մահվան ամսաթվերը, ապա սահմանափակումը պետք է գործի 75 տարի ժամկետով:

Խորվաթիայի «Արխիվային նյութերի և արխիվների մասին» օրենքով¹¹⁸ պետական արխիվներում անձնական տվյալներ պարունակող նյութերը հասանելի են տվյալների սուբյեկտի ծննդյան կամ մահվան օրից 100 տարի անց, իսկ եթե այդ օրերից որևէ մեկը հայտնի չէ, ապա նյութի ստեղծումից 70 տարի անց:

Պետական արխիվներում անձնական տվյալներով տեղեկությունները կարող են հասանելի դառնալ մինչև վերջնաժամկետի լրանալը, եթե.

- այն նախատեսված է եղել հանրային օգտագործման համար իր ստեղծման պահից.
- եթե սուբյեկտի անձնական տվյալներն արդեն հասանելի են դարձել հանրությանը կամ ընդհանուր առմամբ հայտնի են.
- եթե տվյալների սուբյեկտը համաձայն է.
- եթե այն անձը, որին վերաբերում են տվյալները, անմիջապես կամ մեկ ուրիշի միջոցով հրապարակել է այդ տեղեկությունները:

Իսլանդիայի օրենքով՝ ընդհանուր կանոնն այն է, որ փաստաթղթի 30 տարին լրանալուց հետո այն պետք է հասանելի դառնա: Անձանց ֆինանսականին և անձնականին վերաբերող տեղեկությունները կարող են չտրամադրվել դիմողին. դրանք պետք է պահվեն գաղտնի, եթե, իհարկե, անձն իր համաձայնությունը չի տվել: Այս, ինչպես նաև իրավապահների նյութերում նշված անձանց, օրինակ՝ վկաների, զոհերի մասին նյութերը պետք է տրամադրվեն փաստաթղթերի ստեղծումից 80 տարի անց: Առողջության մասին տվյալները կարող են չտրամադրվել մինչև 100 տարին լրանալը: Կարող են չտրամադրվել 110 տարին չլրացած այն նյութերը, որոնք վերաբերում են դեռևս կենդանի մարդու անձնական կյանքին, կամ էլ առկա է հանրային շահի գերակայություն:

Հետաքրքրական է **Հունգարիայի** օրենքով սահմանված դրույթը, ըստ որի՝ հետազոտողների համար սահմանված է հայտարարագիր ստորագրելու պարտականությունը, որով վերջիններս ընդունում են իրենց հայտնի դարձած անձնական տվյալների մշակման և օգտագործման սահմանափակումը՝ համաձայն DPA 32-րդ հոդվածի¹¹⁹, ընդ որում, հայտարարագրում նշվում է տվյալների մշակման վայրը:

¹¹⁸ Տե՛ս https://narodne-novine.nn.hr/clanci/sluzbeni/full/2018_07_61_1265.html:

¹¹⁹ Տե՛ս u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

Օտարերկրյա փորձը բռնադատվածների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության սահմանափակումներն արգելելու մասով

Ըստ Լիտվայի Հանրապետության «Փաստաթղթերի և արխիվների մասին» օրենքի¹²⁰՝ փաստաթղթերի ազգային ֆոնդի հատուկ մասի փաստաթղթերի մատչելիությունը չպետք է սահմանափակվի: Այն պետք է կարգավորվի համապատասխան նորմերով, որոնք վերաբերում են ԽՍՀՄ հետախուզական գործողություններից տուժած կամ նրանց հետ համագործակցելու մասին խոստովանած անձանց: Եթե այդ անձինք ցանկացել են, որ այդ տվյալների հասանելիությունը սահմանափակվի, ապա օրենքը սահմանում է այդ ցանկության կատարման հնարավորությունը՝ դա վերապահելով կառավարությանը և այլ օրենքներին:

Ուկրաինայի Հանրապետությունում գործում է առանձին օրենք՝ «1917-1991 թթ.-ի կոմունիստական տոտալիտար ռեժիմի պատժիչ մարմինների արխիվների մատչելիության մասին»¹²¹, որով արգելվում է նշված արխիվների գաղտնագրումը կամ մատչելիության սահմանափակումը: Բոլոր բացառությունները հստակ սահմանված են օրենքով, ընդ որում, այդ բացառությունների ուժով սահմանափակման են ենթակա տեղեկատվության հստակ սահմանված տեսակներ, իսկ հնարավոր սահմանափակումների համար նախատեսված առավելագույն ժամկետը 25 տարի է:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում հստակեցնել *անձնական կամ ընտանեկան գաղտնիք* հասկացությունները՝ այդպիսի տվյալները որոշակի և սպառիչ նշելու միջոցով՝ բացառելով *անձնական տվյալներ* եզրույթի կիրառումը:
2. Սահմանել օրենսդրական հնարավորություն դիմողի համար՝ մինչև համապատասխան ժամկետների լրանալը բոլոր տեսակի սահմանափակումներով արխիվային նյութերից օգտվելու թույլտվություն ստանալու նպատակով՝ այդ թվում, ըստ անհրաժեշտության, ներգրավելով կոնկրետ մարմինն և ստանալով վերջինիս եզրակացությունը յուրաքանչյուր դեպքով մատչելիության սահմանափակման հիմքի առկայության/բացակայության մասին:
3. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ կրճատելով անձնական կամ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող նյութերի մատչելիությունը սահմանափակող ժամկետը՝ այն սահմանելով մինչև մարդու մահը, իսկ եթե հնարավոր չէ պարզել նրա մահվան օրը, ապա սահմանափակումը հաշվարկել ծննդյան օրից 75 տարի ժամկետով: Եթե հայտնի չէ ծննդյան կամ մահվան ժամանակը,

¹²⁰ St' u Republic of Lithuania Law on documents and archives, <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.436564?jfwid=-lrklxcxem>:

¹²¹ St' u <https://zakon.rada.gov.ua/laws/show/316-19>:

ապա համապատասխան նյութերի հասանելիությունը կարող է սահմանափակվել փաստաթղթերի ստեղծման պահից 70 տարի ժամկետով:

4. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ սահմանելով դրույթ, ըստ որի՝ կբացառվի ՀԱԱ ՊՈԱԿ-ի պատասխանատվությունն այլ անձանց՝ արխիվային նյութերի ուսումնասիրման ընթացքում իրենց հասանելի դարձած անձնական տվյալներն ապօրինի օգտագործելու համար (Հունգարիայի օրինակով կարելի է նախատեսել համապատասխան հայտարարություն ստորագրելու պարտականությունը):
5. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ բռնադատվածների վերաբերյալ արխիվային նյութերի մատչելիության նկատմամբ բացառություն սահմանելու նպատակով՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառելիության տեսանկյունից, ինչպես նաև արգելք նախատեսել բռնադատվածների մասին արխիվային նյութերը գաղտնագրելու վերաբերյալ: Օրենքով այս արխիվային նյութերի մատչելիությունը սահմանափակելու իրավունք վերապահել միայն բռնաճնշումներից տուժածներին (բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք հանդիսացել են բռնաճնշումներ իրականացրած մարմինների հաստիքային և արտահաստիքային աշխատակիցներ)՝ նշելով սահմանափակման ենթակա տեղեկատվության տեսակը, բնույթը, մատչելիության սահմանափակման ժամկետը, իսկ բռնադատվածների ընտանիքի անդամներին, ազգականներին և այլ անձանց՝ իրենց մասին տեղեկությունների մասով մասնակի՝ միայն էթնիկ պատկանելության, քաղաքական կամ աշխարհայացքային կողմնորոշման, կրոնի, ինչպես նաև այն տվյալների մասով, որոնք վերաբերում են նրանց առողջությանը և սեռական կյանքին (ցանկացած դեպքում սահմանափակման ժամկետը չի կարող գերազանցել 25 տարին):
6. ՀՀ կառավարությանը՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի հիման վրա 13.07.2017 թ.-ին ընդունված թիվ 884-Ն որոշմամբ սահմանել անձնական կամ ընտանեկան գաղտնիք և այլ սահմանափակ մատչելիության տեղեկություններ պարունակող նյութերից օգտվելու կարգ:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

- ՀՀ կառավարության թիվ 1896-Ն որոշմամբ սահմանված կարգը թվով 14 պետական մարմինների և կազմակերպությունների թույլ է տալիս իրականացնել Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (այսուհետ նաև՝ ՀՀԱՀ) փաստաթղթերի ավանդատվական պահպանություն,

ինչը թույլ է տալիս այդ մարմիններին օրենքով սահմանված ժամանակավոր պահպանման ժամկետները¹²² լրանալուց հետո լրացուցիչ մինչև 40 տարի պահպանել հիշյալ փաստաթղթերը, իսկ գաղտնազերծված փաստաթղթերի դեպքում ավանդատվական պահպանությունն իրականացնել դրանց գաղտնազերծումից հետո՝ փաստաթղթերի ստեղծման պահից սկսած մինչև 50 տարի ժամկետով, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ կարգ սահմանված չէ:

- Նշված դեպքում այդ փաստաթղթերի ՀԱԱ ՊՈԱԿ-ին փաստացի հանձնումը հետաձգվում է, և դրանք օգտվողին ուսումնասիրության համար կարող են տրամադրվել միայն փաստաթղթերը տիրապետող համապատասխան մարմնի ղեկավարի թույլտվությամբ՝ այդ մարմինների ընթերցասրահներում/այդ նպատակով հարմարեցված սենյակներում:
- ՀՀ կառավարության թիվ 1896-Ն որոշումը, չսահմանելով փաստաթղթերի ավանդատվական պահպանության հանձնելու նպատակը և հիմքերը, կոնկրետ մարմինների համար նախատեսում է անսահմանափակ հայեցողություն «պահպանության ենթակա» փաստաթղթերի ընտրության հարցում:

Վերլուծություն

ՀՀ կառավարությունն իր 20.10.2005 թ.-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի ավանդատվական պահպանության կարգը սահմանելու և ավանդատվական պահպանությունն իրականացնող պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 1896-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ ՀՀ կառավարության թիվ 1896-Ն որոշում)¹²³, հղում անելով «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին, սահմանել է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի ավանդատվական պահպանության կարգը և հաստատել ավանդատվական պահպանությունն իրականացնող պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների ցանկը:

Նշված որոշմամբ թվով 14 պետական մարմինների և կազմակերպությունների¹²⁴ թույլատրվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ավանդատվական պահպանություն:

¹²² Արխիվ ստեղծող մարմնում մինչև այդ փաստաթղթերը ՀԱԱ ՊՈԱԿ-ին մշտական պահպանության հանձնելը սեփական արխիվներում ժամանակավոր պահպանության ժամկետն է:

¹²³ Տե՛ս ՀՀՊՏ 2005.11.30/74(446) Հոդ.1416, 20.10.2005 թ.:

¹²⁴ ՀՀ նախագահի աշխատակազմին, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին, ՀՀ կառավարության աշխատակազմին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Երկրաբանական գործակալությանը, ՀՀ կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին, ՀՀ բնապահպանության նախարարության «Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին, ՀՀ բնապահպանության նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները¹²⁵ լրանալուց հետո կոնկրետ կազմակերպության և պետական արխիվի կողմից կազմվում են ակտեր ՀՀԱՀ փաստաթղթերը պետական արխիվի կողմից մշտական պահպանության ընդունելու և դրանք պետական արխիվի կողմից կազմակերպությանն ավանդատվական պահպանության հանձնելու մասին, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ կարգ սահմանված չէ¹²⁶:

Միաժամանակ, ըստ այս կարգի, կազմակերպություններում ՀՀԱՀ փաստաթղթերն օգտագործվում են առանձնացված և այդ նպատակով կահավորված ընթերցասրահում, իսկ ՀՀԱՀ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կազմակերպման գիտամեթոդական աջակցությունն իրականացնում է ՀԱԱ ՊՈԱԿ-ը, որին կազմակերպությունները պետք է ներկայացնեն ՀՀԱՀ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման մասին ամենամյա վարչական-վիճակագրական հաշվետվություն:

Այսպիսով, վերը նշված կարգավորումների պայմաններում հետաձգվում է ՀՀԱՀ փաստաթղթերի փաստացի հանձնումը Ազգային արխիվ, և դրանք օգտվողին ուսումնասիրության համար կարող են տրամադրվել միայն փաստաթղթերը տիրապետող համապատասխան մարմնի ղեկավարի թույլտվությամբ՝ տվյալ մարմիններում այդ նպատակով առանձնացված տարածքներում¹²⁷, ինչը կարող է հանգեցնել այս փաստաթղթերի մատչելիության սահմանափակման հետևյալ պատճառներով.

1. ՀՀ կառավարության թիվ 1896-Ն որոշումը, չնախատեսելով փաստաթղթերն ավանդատվական պահպանության հանձնելու նպատակը և հիմքերը, կոնկրետ մարմինների համար նախատեսում է անսահմանափակ հայեցողություն *պահպանության ենթակա* փաստաթղթերի ընտրության հարցում, ինչը կարող է հանգեցնել այդ մարմինների կողմից չարաշահումների, այդ թվում՝ համապատասխան փաստաթղթերից օգտվելու թույլտվություն տալու հարցում¹²⁸.

2. արխիվային օրենսդրության պահանջների խախտման համար ՀՀ օրենսդրությամբ պատասխանատվություն չի նախատեսվում¹²⁹, ինչը նշանակում է, որ բացակայում է նաև պատշաճ վերահսկողությունը ավանդատվական

«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

¹²⁵ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետները:

¹²⁶ ՀՀ կառավարության 20.10.2005 թ.-ի թիվ 1896-Ն որոշման 5-րդ կետ:

¹²⁷ ՀՀ կառավարության 884-Ն որոշում, կետեր 191, 192:

¹²⁸ Այս առումով գտնում ենք, որ պատահական չէ նաև ավանդատվական պահպանություն իրականացնող իրավասու մարմինների և կազմակերպությունների ընտրությունը:

¹²⁹ Մանրամասն տե՛ս Խնդիր 2. «Արխիվային օրենսդրության խախտման համար պատասխանատվության բացակայությունը՝ որպես տեղեկատվական պաշարների հասանելիության խոչընդոտ» բաժնում:

պահպանության՝ սահմանված կարգով իրականացման նկատմամբ: Այս համատեքստում հարկ ենք համարում մեջբերել «Հետկոնֆլիկտային պետությունների համար իրավունքի գերակայության ապահովման մեխանիզմները. արխիվներ» աշխատությունում (2015 թ., ՄԱԿ-ի հրատարակություն, HR/PUB/14/4) առկա հետևյալ դիտարկումը. «Մշակույթի կամ կրթության նախարարությունների կազմում գործող ազգային արխիվները կարող են դժվարությունների բախվել ուժային կառույցներից վերջին ժամանակների փաստաթղթեր ստանալու գործընթացում, քանի որ գերակայում է կարծիք, ըստ որի՝ այդ արխիվները մեծապես հետաքրքրված են պատմության և մշակույթի հարցերով և ի վիճակի չեն բավարար չափով ապահովելու ազգային անվտանգությանն առնչվող տեղեկատվության պահպանումը: Այս պատճառաբանությամբ զինվորական գերատեսչությունները, ազգային անվտանգության ծառայությունները և արտաքին գործերի նախարարությունները հաճախ իրենք են պահպանում իրենց սեփական արխիվները և վերահսկում դրանց հասանելիությունը...»¹³⁰:

Նշված խնդիրը կարող է առավել սրվել համապատասխան մարմինների ընթերցասրահներից օգտվելու առումով գործնական խոչընդոտների առկայության դեպքում, օրինակ, եթե այդ պայմանները մատչելիության առումով էականորեն զիջեն ՀԱԱ ՊՈԱԿ-ի ընթերցասրահից օգտվելու պայմաններին:

Նույնական օրենսդրական կարգավորումների պայմաններում այս հարցը բազմիցս բարձրացվել է Ռուսաստանի Դաշնությունում՝ հաշվի առնելով հետազոտողների և արխիվարիուսների դժգոհությունը գերատեսչությունների՝ փաստաթղթերի ավանդատվական պահպանության դեպքում դրանցից օգտվելու անհնարինության համատեքստում¹³¹:

Մեր հարցումներին ի պատասխան՝ ավանդատվական պահպանություն իրականացնելու լիազորություն ունեցող մարմիններից ՀՀ արտաքին գործերի նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ նախարարությունն արխիվային նյութերի ավանդատվական պահպանություն իրականացնում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 20.10.2005 թ.-ի 1896-Ն որոշմամբ սահմանված կարգի: Քաղաքացիներն արխիվային նյութերին կարող են ծանոթանալ հատուկ կահավորված սենյակում՝ համապատասխան դիմումի հիման վրա, որտեղ նշվում են անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը և ուսումնասիրվող թեման: Դիմումը քննարկվում է մեկօրյա ժամկետում¹³²: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ իր տիրապետման ներքո ավանդատվական պահպանության նյութեր առկա չեն¹³³: ՀՀ կադաստրի կոմիտեի հայտնած տեղեկատվության համաձայն՝ վերջինս հիշյալ կարգի ուժով հանդիսանում է

¹³⁰ St' u Rule of Law Tools for Post-Conflict States: Archives, UN, 2015, <https://www.refworld.org/docid/5566e0a64.html>, p. 11:

¹³¹ St' u <https://zona.media/article/2016/26/12/archive>, <https://polit.ru/article/2008/06/03/memorial/>, <http://old.memo.ru/d/2284.html>:

¹³² Հիմք՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ 31.01.2020 թ.-ի պատասխանը:

¹³³ Հիմք՝ ՀՀ ԱԱԾ հաշվառման և արխիվային ֆոնդերի վարչության պետի՝ 15.01.2020 թ.-ի պատասխանը:

ավանդատվական պահպանություն իրականացնող մարմին, պահպանվող նյութերն (կադաստրային գործերը) անձանց տրամադրվում են՝ ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով¹³⁴:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ «Արխիվների մատչելիության սկզբունքներ»-ը սահմանում են, որ «1. Հանրությունն իրավունք ունի ծանոթանալու պետական մարմինների արխիվներին: Թե՛ պետական, թե՛ մասնավոր արխիվները պետք է հնարավորինս մեծ չափով բացեն իրենց արխիվները»: Պետական մարմինների բոլոր արխիվները պետք է բաց լինեն հանրության համար, քանի դեռ դրանք օրենքով սահմանված բացառությունների շարքին չեն դասվում: Սկզբունքները ենթադրում են, որ արխիվարիուսները պետք է նախաձեռնողաբար ներգրավված լինեն արժեքավոր արխիվները դրանք ստեղծած գրասենյակից մշտապես արխիվային պահպանության ընդունելու գործում. հանրության համար արխիվներում այդ փաստաթղթերն ավելի մատչելի են, քան այն գրասենյակներում, որտեղ ստեղծվել են դրանք:

Ուկրաինայի օրենքով՝ ավանդատվական պահպանության կամ այլ կերպ պահպանման ժամկետները երկարաձգելու հնարավորություն արխիվի համալրման աղբյուր հանդիսացող սուբյեկտների համար չի նախատեսվում:

Ղազախստանի Հանրապետությունը ևս փաստաթղթերն արխիվ հանձնելու ժամկետների երկարաձգման հնարավորություն չի նախատեսում:

Բելառուսի օրենքով նախատեսված է համակարգող նախարարության և պետական արխիվի լիազորությունը՝ պայմանագրի հիման վրա երկարաձգելու պետական մարմինների կողմից ստեղծվող արխիվային ֆոնդի փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետները, ինչն էլ իր տրամաբանությամբ նույնանում է ավանդատվական պահպանության հետ: Մինևույն ժամանակ Բելառուսի օրենքով նման երկարաձգման ժամկետային միջակայքեր սահմանված չեն:

Վրաստանի օրենքով սահմանվում է մարմինների ցանկը, որոնք կարող են իրականացնել արխիվային հավաքածուի փաստաթղթերի մշտական պահպանություն: Այդպիսի մարմին կարող է սահմանվել նաև ներքին գործերի նախարարի որոշմամբ:

Մոլդովայի Հանրապետության օրենքը չի նախատեսում ավանդատվական պահպանության հնարավորություն քննարկվող համատեքստում:

Լատվիայի օրենքը ևս չի նախատեսում ավանդատվական պահպանություն, սակայն այն ղեկավարում, երբ մարմիններն անհրաժեշտություն ունեն օգտագործելու փաստաթղթերը ժամանակավոր պահպանման ժամկետից ավելի երկար ժամանակով, ապա ազգային արխիվի թույլտվությամբ և կառավարության որոշմամբ փաստաթղթերի պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել, եթե առկա են պահպանությունն իրականացնելու համար համապատասխան պայմանները:

¹³⁴ Հիմք՝ հարցմանը ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 31.01.2020 թ.-ի պատասխանը:

Դանիայի օրենքով՝ փաստաթղթերն արխիվ փոխանցելու կանոնները մանրամասն սահմանում է մշակույթի նախարարը: Օրենքով ամրագրվում է փոխանցման ժամկետը հետաձգելու հնարավորություն:

Իսլանդիայի օրենքը հատուկ պայմանների առկայության դեպքում սահմանում է պետական արխիվի տնօրենի լիազորությունը՝ նյութերն իրեն հանձնելու ժամկետը երկարաձգելու կամ կրճատելու մասին որոշում կայացնելու համար:

Լիտվայի օրենքով՝ պետական և համայնքային կառույցները, գործակալությունները և հիմնարկները կարող են պահպանել մշտական պահպանության փաստաթղթերը մինչև 20 տարի՝ դրանց գրանցման փաստաթուղթ դառնալուց հետո: Այս ընթացքում նշված մարմինները պետք է փաստաթղթերը հանձնեն պետական արխիվի մշտական պահպանությանը: Գլխավոր արխիվարիուսը կարող է երկարաձգել մշտական պահպանության փաստաթղթերը պետական կամ համայնքային կառույցում պահելու ժամկետը, եթե կան հիմնավոր պատճառներ, բայց ոչ ավելի, քան մինչև 40 տարին:

Խորվաթիայի օրենքով՝ պետական մարմինները որոշում են իրենց գործունեությամբ ստեղծած արխիվների պահպանման ժամկետների նշումով ցանկերը և դրանք ներկայացնում պետական արխիվի հաստատմանը: Պահպանման ժամկետները կարող են փոխվել համապատասխան որոշմամբ, որը ենթակա է բողոքարկման:

Հունգարիայի օրենքով սահմանված առավելագույն ժամկետները կարող են երկարաձգվել մինչև հինգ տարի՝ առանց հատուկ թույլտվության, եթե մարմինը դեռևս վարչարարության տեսանկյունից այդ փաստաթղթերի կարիքն ունի, կամ եթե արխիվը չունի անհրաժեշտ տարածք դրանց պահպանման համար: Պահպանման ժամկետի հինգ տարուց ավելի երկարաձգումը կարող է թույլատրվել մշակութային ժառանգության նախարարի կողմից միայն մեկ անգամ, սակայն տասը տարուց ոչ ավել ժամկետով: Դրանից ավելի պահպանումը հնարավոր է սահմանել միայն նորմատիվ իրավական ակտով:

Սլովենիայի օրենքը փաստաթղթերի կոնկրետ տեսակների համար (պետական մարմինները պետք է շարունակեն օգտագործել դրանք ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալուց հետո դրանց անփոխարինելի լինելու պատճառով) բացառիկ դեպքերում սահմանում է հնարավորություն՝ երկարաձգելու պահպանման նախատեսված ժամկետն առավելագույնը տասը տարով: Նման իրավունք ստանալու համար համապատասխան մարմիններն արխիվ հասցեագրված դիմումին կից պետք է ներկայացնեն երկարաձգման ենթակա բացառիկ փաստաթղթերի ցանկը:

Ռուսաստանի Դաշնությունում արխիվային ֆոնդի փաստաթղթերի ավանդատվական պահպանությունն իրականացվում է համապատասխան դաշնային գործադիր մարմինների և կազմակերպությունների ու արխիվային գործը համակարգող իրավասու մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, ՀՀ կառավարությանը՝ նաև թիվ 1896-Ն որոշման փոփոխություն և.

1. վերանայել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 20.10.2005 թ.-ի 1896-Ն որոշումը՝ հստակորեն սահմանելով ավանդատվական պահպանության հիմքերը, նպատակը, մատչելիության ապահովման պայմանները, ինչպես նաև կրճատելով ավանդատվական պահպանության առավելագույն ժամկետները.
2. ավանդատվական պահպանություն իրականացնելու հնարավորություն ստանալու համար նախատեսել հատուկ ընթացակարգ, որով կքննվի այդպիսի պահպանության անհրաժեշտությունը և կտրվի թույլտվություն (որպես վերահսկող մարմին կարող է սահմանվել ՀԱԱ ՊՈԱԿ-ը):

Խնդիր 5

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությունը չի սահմանում ի սկզբանե բաց արխիվային նյութերի գաղտնագրման կամ ոչնչացման արգելք, ինչը տեսականորեն թույլ է տալիս բաց նյութերի գաղտնագրման/ոչնչացման հնարավորություն: Նշված արգելքի սահմանման անհրաժեշտությունը հատկապես կարևորվում է անցումային փուլերում արդարադատության վերականգնման, ճշմարտության բացահայտման, գոհերի իրավունքների պաշտպանության, ապագայում նույն խախտումների կանխարգելման նպատակով՝ ավտորիտար ռեժիմի ժամանակահատվածին առնչվող գաղտնագրված տեղեկատվության բացահայտման տեսանկյունից:

Վերլուծություն

Բաց նյութերի ոչնչացման հնարավորությունը բխում է հետևյալ կարգավորումներից: «Արխիվային գործի մասին» 3-րդ հոդվածը բովանդակում է դրույթներ, որոնց համաձայն՝ մշտական պահպանության ենթակա են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը: Միաժամանակ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերն ընդգրկվում են փորձաքննության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահպանության ժամկետների նշումով՝ արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկին համապատասխան: (...) 5. Փաստաթղթերի ոչնչացումն արգելվում է, եթե դրանք փորձաքննությամբ չեն արժեքավորվել»:

Այսպիսով, օրենքն արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերի ընգրկումը, ուստի և դրանց մշտական պահպանելու պարտականությունը պայմանավորում է Կառավարության որոշմամբ սահմանվող արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով, որը պարբերաբար կարող է փոփոխվել (այդ թվում՝ ցանկից կարող են հանվել պահպանման ենթակա առանձին փաստաթղթերի տեսակներ):

Այսինքն՝ առկա կարգավորումներով օրենքը թույլ է տալիս փաստաթղթերի դուրսբերումը արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցանկից արժեքավորման փորձաքննության հիման վրա (փորձաքննական հանձնաժողովի կազմի և գործառույթների խնդրին կանդրադառնանք հաջորդիվ)՝ այդպիսով վերացնելով

դրանց մշտական պահպանության ենթակա լինելու կարգավիճակը, ինչն էլ կարող է հանգեցնել արխիվային հավաքածուում նախկինում ընդգրկված լինելու ուժով պահպանված և հանրության համար մատչելի եղած փաստաթղթի ընտրովի ոչնչացման՝ կախված դրա բովանդակության նկատմամբ կոնկրետ գերատեսչության հետաքրքրվածությունից: Նմանապես որևէ արգելք սահմանված չէ բաց նյութերի գաղտնագրման համար:

Արդյունքում հնարավոր են ոչնչացման կամ գաղտնագրման եղանակով այդպիսի նյութերի մատչելիության սահմանափակումը կամ վերացումը: Նման դեպքեր արձանագրվել են, օրինակ, Ուկրաինայի Հանրապետությունում¹³⁵, Ռուսաստանի Դաշնությունում¹³⁶, երբ իշխող քաղաքական ուժի փոփոխությամբ պայմանավորված՝ փակվել են նախկինում գաղտնագրված նյութերը¹³⁷:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ «Արխիվների մատչելիության սկզբունքների» համաձայն՝ արխիվները հասանելի են դառնում հավասար և արդար պայմաններով: Այս սկզբունքը, ի թիվս այլնի, ամրագրում է, որ «արխիվարիուսները խրախուսում են այն օրենսդրական կարգավորումներն ու գործողությունները, որոնք միտված են նյութերը պատասխանատվությամբ բացելուն, և չեն աջակցում նախկինում հանրության համար հասանելի դարձած տեղեկությունները գաղտնագրելուն կամ ոչնչացման հրամանի միջոցով գաղտնագրելուն»:

Ուկրաինայի օրենքով սահմանվում է, որ արխիվային հավաքածուի կազմից փաստաթղթեր դուրս բերելու մասին որոշումները կայացվում են՝ փորձագիտական հանձնաժողովների կողմից արխիվային գործի ոլորտը համակարգող գործադիր իշխանության համապատասխան մարմնի հետ համաձայնեցնելով: **Արգելվում է** ազգային արխիվային հավաքածուի կազմից փաստաթղթերի դուրսբերումը կոնֆիդենցիալության կամ գաղտնի տեղեկատվություն պարունակելու պատճառով, ինչպես նաև քաղաքական կամ գաղափարական նկատառումներով:

Ղազախստանի օրենքը ևս արգելում է քաղաքական կամ գաղափարական

¹³⁵ Ուկրաինայում 2007 թ.-ին քաղաքական որոշում էր ընդունվել բացել Ազգային անվտանգության կոմիտեի արխիվային նյութերը, սակայն 2010 թ.-ին, երբ նախագահ ընտրվեց Վ. Յանուկովիչը, դրանք կրկին գաղտնագրվեցին: 2015 թ.-ի ապրիլին Գերագույն ռադան ի վերջո ընդունեց «Կոմունիստական տոտալիտար ռեժիմի ռեպրեսիվ մարմինների՝ 1917-1991 թթ.-ի արխիվների մատչելիության մասին» օրենքը,

https://kodeksy.com.ua/ka/o_dostupe_k_arhivam_repressivnyh_organov_kommunisticheskogo_totalitarnogo_r_ezhima_1917-1991_godov.htm:

¹³⁶ Բ. Ելցինի կառավարման ժամանակ 23.06.1992 թ.-ին ստորագրվել է «Մասսայական բռնաճնշումների և ոտնձգությունների համար հիմք հանդիսացած օրենսդրական և այլ ակտերի մատչելիությունը սահմանափակող դրոշմագրերի վերացման մասին» հրամանը: 12.03.2014 թ.-ին ՌԴ համապատասխան լիազորություններով օժտված միջգերատեսչական փորձաքննական հանձնաժողովի կողմից ընդունվել է որոշում, ըստ որի՝ խորհրդային ժամանակաշրջանի ազգային անվտանգության մարմինների՝ 1917-1991 թթ.-ի փաստաթղթերի գաղտնիության ժամկետը երկարաձգվել է մինչև 2044 թ., <https://tass.ru/info/5936863>:

¹³⁷ Նախորդ իշխանությունները հեռանալուց առաջ ԱԱԾ-ից նյութեր են ոչնչացրել, <https://www.azatutyun.am/a/29928489.html>:

նկատառումներից ելնելով ազգային արխիվային հավաքածուի կազմից փաստաթղթերի դուրսբերումը:

Վրաստանի օրենքը չի սահմանում արխիվային հավաքածուից փաստաթղթերի դուրսբերման ընթացակարգ, սակայն փաստաթղթերի ընդգրկումն արխիվային հավաքածուի կազմում իրականացնում է Ազգային արխիվի փորձագիտական-վերստուգիչ հանձնաժողովը՝ արժեքավորման փորձաքննության եզրակացության հիման վրա:

Ռուսաստանի Դաշնության օրենքով քննարկվող հարցի վերաբերյալ կարգավորումները նույնական են Հայաստանի Հանրապետության կարգավորումներին և արխիվային հավաքածուից փաստաթղթերի դուրսբերման հետ կապված որևէ արգելք չեն նախատեսում:

Լատվիայի օրենքով սպառիչ սահմանված են ազգային արխիվային ֆոնդից փաստաթղթերի դուրսբերման հնարավոր դեպքերը, իսկ կարգը վերապահված է կառավարության որոշմանը:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

1. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում սահմանել բաց (գաղտնագերծված) նյութերի գաղտնագրումը արգելող դրույթ.
2. նախատեսել պատասխանատվություն վերոգրյալ արգելքը խախտելու համար:

Խնդիր 6

Խնդրի նկարագրություն

- Փորձաքննական արժեքավորում իրականացնող հանձնաժողովների կազմում չի ապահովվում կոմպետենտ մասնագետների ներգրավումը, հանձնաժողովների գործունեությունը դուրս է հանրային վերահսկողությունից:
- Փորձաքննական արժեքավորում իրականացնող հանձնաժողովներին է վերապահված կազմակերպությունների արխիվներում պահպանման ենթակա փաստաթղթերի ցանկի սահմանումը, հետագայում դրանք (ներառյալ գաղտնագերծված նյութերը) Ազգային արխիվ հանձնելու կամ ոչնչացնելու վերաբերյալ որոշում կայացնելը: Այս լիազորությունն առկա կարգավորումների շրջանակում վերջիններս կարող են իրականացնել՝ կոնկրետ պետական մարմնի/կազմակերպության գերատեսչական շահերից ելնելով:

Վերլուծություն

«Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու

լրացում կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն որոշման համաձայն՝ «Արխիվային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկվում են փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման որոշակի չափանիշների՝ փաստաթղթերի պահպանության ժամկետները որոշելու և մշտական պահպանության համար առանձնացնելու նպատակով դրանց ուսումնասիրության հիման վրա: Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերն ընդգրկվում են համաձայն փաստաթղթերի 1) ծագման՝ փաստաթուղթ ստեղծող համալրման աղբյուրի պետական կառավարման համակարգում կամ որոշակի բնագավառում ունեցած դերի և տեղի, նրա իրականացրած գործառույթների նշանակության, փաստաթղթի ստեղծման ժամանակի ու վայրի, անձնական ծագում ունեցող փաստաթղթերի դեպքում՝ հասարակական կյանքում ֆիզիկական անձի կարևորության, 2) բովանդակության՝ փաստաթղթում արտացոլված իրադարձության (երևույթի) նշանակության, դրանում արտացոլված տեղեկության կարևորության, փաստաթղթի տեսակի (տարատեսակի), իսկության (ստորագրությունների, կնիքների, թվագրման և այլ անհրաժեշտ վավերապայմանների առկայության), 3) արտաքին առանձնահատկությունների՝ փաստաթղթի բովանդակության գրառման և հաղորդման ձևի, վավերացման ու ձևակերպման եղանակի (այդ թվում՝ փաստաթղթի գեղարվեստական, հնագրագիտական, լեզվական և այլ առանձնահատկությունների), ֆիզիկական վիճակի չափանիշների համալիր կիրարկման հիման վրա: Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերն ընդգրկվում են նաև դրանց տեսակների կամ խմբերի ընտրովի համալրման ձևով»:

Ինչպես տեսնում ենք, փաստաթղթերի արժեքավորման չափանիշները բավական ընդարձակ են ձևակերպված և որոշակի մասնագիտական գիտելիքներ են պահանջում, այդ թվում՝ պատմության, քաղաքագիտության, գեղարվեստի, հնագրագիտության, լեզվական և այլ բնագավառներում:

Թեև փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում դրանց ընդգրկման, ինչպես նաև վերջինիս կազմում առկա առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթղթերի ճանաչման հետ կապված գիտամեթոդական հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է պետական արխիվի մեթոդական-փորձագիտական հանձնաժողովը՝ տնօրենի հաստատմամբ, սակայն փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելը կազմակերպելու համար ստեղծվում են փորձագիտական հանձնաժողովներ յուրաքանչյուր մարմնում առանձին:

Փորձաքննական արժեքավորում իրականացնող հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 13.03.2017 թ.-ի «Պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների փորձագիտական հանձնաժողովների և արխիվների օրինակելի կանոնակարգերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով (այսուհետ նաև՝ 03-Ն հրաման)¹³⁸:

¹³⁸ Տե՛ս ՀՀԳՏ 2017.04.03/12(581) Հոդ.145, 13.03.2017 թ.:

03-Ն հրամանի 9-րդ կետի համաձայն՝ «Հանձնաժողովն իրավասու է 1) քննարկել և եզրակացություն տալ ա. կազմակերպության գործունեությամբ առաջացած փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկին, բ. կազմակերպության յուրաքանչյուր տարվա գործերի անվանացանկին, գ. փաստաթղթերի պահպանության ժամկետների կամ դրանց փոփոխման վերաբերյալ առաջարկություններին, դ. մշտական պահպանության գործերի ցուցակներին, ե. անձնակազմին վերաբերող գործերի ցուցակներին, գ. երկարաժամկետ պահպանության գործերի ցուցակներին, է. պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի գործերի առանձնացման մասին ակտերին (...):»:

Վերոգրյալ լիազորություններով օժտված հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարներ, մասնագետներ և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ: Հանձնաժողովի նախագահ նշանակվում է կազմակերպության ղեկավարի տեղակալներից մեկը, քարտուղար՝ համապատասխան մարմնի արխիվային գործի մասնագետը: Այսպիսով, վերը նշված հատուկ գիտելիքներ պահանջող փաստաթղթերի փորձագիտական արժեքավորում իրականացնելու համար կոմպետենտ մասնագետներ հանձնաժողովներում ի սկզբանե չեն ներգրավվում:

Գործնականում փաստաթղթերը (անկախ Կառավարության սահմանած օրինակելի ցանկում ներառված լինելու հանգամանքից) փորձաքննությամբ արժեքավորվում են ամեն տարի կազմակերպության արխիվային գործի մասնագետների կողմից, արդյունքում կազմվում են մշտական, երկարաժամկետ պահպանության ու անձնակազմին վերաբերող գործերի ցուցակներ, ինչպես նաև պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտ, որոնց հավանություն է տալիս տվյալ կազմակերպության փորձաքննական հանձնաժողովը¹³⁹: Այստեղ է, որ հանձնաժողովների կազմում առանձնապես անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձինք, քանի որ որոշ դեպքերում, ինչպես նշում են ՀԱԱ ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցները, լինում են փաստաթղթեր, որոնք իրենց բովանդակությամբ ակնհայտորեն ենթակա են մշտական պահպանության, սակայն ընդգրկված չեն օրինակելի ցանկում, և հակառակը՝ ներառված են ցանկում, սակայն կարող են չունենալ մշտական պահպանության համար անհրաժեշտ արխիվային արժեք: Նման դեպքերում հնարավոր է երկու իրավիճակ. եթե փորձաքննական արժեքավորում իրականացնող հանձնաժողովը խորհրդակցում է ՀԱԱ ՊՈԱԿ-ի մեթոդական փորձաքննական հանձնաժողովի անդամի հետ, ապա կա հավանականություն, որ այդ փաստաթուղթը կարող է մշտապես պահպանվել տվյալ մարմնում: Խորհրդատվության չդիմելու դեպքում ամենայն հավանականությամբ այդ փաստաթուղթը կոչնչացվի ցանկով սահմանված պահպանման ժամկետի լրացած լինելու հիմքով:

¹³⁹ ՀՀ կառավարության 13.17.2017 թ.-ի թիվ 884-Ն որոշում, կետ 17, 19:

Սկստենք, որ հիշյալ ցանկում ներառված չեն նաև այնպիսի մարմիններ, ինչպիսիք են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, այլ ենթակառուցվածքների ոլորտային մարմիններ, հանքարդյունաբերությամբ զբաղվող սուբյեկտներ և այլ հաստատություններ, որոնց գործունեությամբ ստեղծված արխիվները վերաբերում են Հայաստանի Հանրապետության տնտեսությանը, տնտեսական քաղաքականությանը (հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանի տնտեսության գլխավոր շարժիչ ուժերից է)¹⁴⁰, ինչպես նաև այն հաստատությունները, որոնց գործունեությունն առնչվում է պետության հոգևոր-մշակութային կյանքին: Այս տեսակ փաստաթղթերի նկատմամբ պետական հսկողության բացակայությունը զրկում է հետագա սերունդներին և պատմաբաններին հասարակության համար պատմական նշանակության տեղեկությունների մի զգալի հատվածից:

Փորձաքննական հանձնաժողովների գործունեության հանրային վերահսկողության խնդրի վերաբերյալ

Հանձնաժողովների կազմավորման վերը նշված պայմանները չեն ապահովում նաև դրանց գործունեության հանրային վերահսկողության անհրաժեշտ մակարդակը:

Մասնավորապես կազմով պայմանավորված՝ հանձնաժողովներն հնարավորություն ունեն անխոչընդոտ ղեկավարվելու համապատասխան մարմնի գերատեսչական շահերով, որի դեպքում արխիվային հավաքածուի կազմում ընդգրկվող գործերի հաստատված ցանկը (իսկ դրա վերաբերյալ եզրակացությունը դարձյալ տալիս է հանձնաժողովը) չի կարող ապահովագրել կոնկրետ փաստաթղթերի հնարավոր «կորստից», քանի որ հանձնաժողովի աշխատանքի և փաստաթղթերի ընտրության նկատմամբ որևէ անկողմնակալ վերահսկողություն չկա: Այս եզրակացությանը հանգում ենք՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ փաստաթղթերը պետական կամ համայնքային արխիվներ հանձնվում են ըստ գործերի ցուցակների՝ գործերը մեկ առ մեկ, իսկ առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթղթերը թերթ առ թերթ ստուգվելուց հետո (...)¹⁴¹: Հիշյալ գործերի ցուցակներում կոնկրետ գործի ներառված լինելու կամ ցուցակում ընդգրկված գործի առանձին փաստաթղթի ներառված լինելու հանգամանքները դուրս են որևէ վերահսկողությունից: Այլ կերպ ասած՝ բացառված չէ իրավիճակ, երբ փորձաքննական հանձնաժողովները, ունենալով իրենց մարմնի գործունեությամբ ստեղծված մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի ցանկը, այդ ցանկին համապատասխանող առանձին գործեր չներառեն արխիվ հանձնվող գործերի ցուցակում կամ ներառեն դրանք պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտերում և ոչնչացնեն դրանք մշտական

¹⁴⁰ Տե՛ս «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում կայուն և ռազմավարական որոշումների կայացում և Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և սոցիալական կայունության բարելավում» համառոտագիր,

<http://documents.worldbank.org/curated/en/239481468206070547/pdf/884680v20ARMENIAN0Box385316B00PUBLIC0.pdf>:

¹⁴¹ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն որոշում, կետ 34:

պահպանության փաստաթղթերի ցանկը հաստատելուց հետո: Խնդիրն առավել առարկայական է դառնում գաղտնագերծվող փաստաթղթերի դեպքում:

Առաջարկություններ

1. Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և սահմանել յուրաքանչյուր տարվա փորձաքննության արդյունքներով կազմվող և համապատասխան մարմնի ղեկավարի կողմից հաստատվող ցանկերը (մշտական պահպանության հանձնվող փաստաթղթերի ցանկը, երկարաժամկետ պահպանության, ինչպես նաև ոչնչացման համար առանձնացված փաստաթղթերի ցանկը) հրապարակելու պահանջ: Վերը նշված բոլոր ցանկերի կազմման նկատմամբ սահմանել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մեթոդական-փորձագիտական հանձնաժողովի վերահսկողական պարտադիր գործառույթը՝ վերջինիս վերապահելով այդ ցանկերի հաստատման լիազորությունը, բացառելով մշտական պահպանության փաստաթղթերի ցանկը հաստատելուց հետո կազմակերպության կողմից պահպանման ոչ ենթակա փաստաթղթերի ոչնչացման հնարավորությունը:

2. Կառավարությանը՝ վերանայել 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ հաստատված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը՝ դրանում ներառելով արխիվային արժեք ներկայացնող որոշ տեսակի (օրինակ՝ կոռուպցիոն, մարդկության դեմ ուղղված, սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ, պատմական և սոցիալական նշանակություն ունեցող) կարճված քրեական գործերի նյութերը (առնվազն թվայնացված ձևաչափով), քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ ավարտված գործերի նյութերը (առնվազն թվայնացված ձևաչափով), պետության տնտեսության (Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, հանքարդյունաբերության, այլ ենթակառուցվածքների) և հոգևոր-մշակութային նշանակության հաստատությունների գործունեությամբ ստեղծված փաստաթղթերը:

3. Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան արխիվային հավաքածուի համալրման աղբյուր հանդիսացող մարմինների արժեքավորման փորձաքննական հանձնաժողովների գործունեության նկատմամբ ապահովել հանրային վերահսկողության հնարավորություն (օրինակ՝ նիստերի դիտարկումը), ինչպես նաև հանձնաժողովի կազմում համապատասխան մասնագետների (օրինակ՝ համապատասխան մասնագիտական ուղղվածության կրթական հաստատությունների ներկայացուցիչների) ընդգրկվելու պահանջը:

Խնդիր 7

Խնդրի նկարագրություն

Մինչ օրս սահմանված չեն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հայտարարագրերի արխիվացման կարգն ու պայմանները: Հայտարարագրերի պահպանման վերաբերյալ որևէ նշում առկա չէ նաև ՀՀ

կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկում:

Վերլուծություն

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվել է, որ հայտարարագրի արխիվացման կարգն ու պայմանները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Հայտարարագրի արխիվացման կարգի սահմանման լիազորությունն ամրագրվել է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով: Մակայն մինչ օրս հայտարարագրերի արխիվացման կարգ մշակված չէ: Մեր՝ 19.03.2020 թ.-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով կատարած հարցմանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ հայտարարագրերի արխիվացման կարգը մշակման փուլում է:

Հարկ է նշել, որ մինչ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը հայտարարագրերի արխիվացման լիազորությունը սահմանված է եղել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի համար, սակայն նման կարգ այս հանձնաժողովի կողմից նույնպես չի մշակվել, ինչի հետևանքով անորոշ են մնացել հայտարարագրերի արխիվացման կարգը, պայմանները և ժամկետները:

ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով նախատեսվել է, որ պետական կառավարման համակարգի մարմինների, հանրապետական նշանակության կազմակերպությունների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարզևների, մրցանակների, զինվորական, դիվանագիտական, գիտական, բարձրագույն, պատվավոր կոչումների արժանացած անձանց անձնական գործերը (դիմումներ, ինքնակենսագրություններ, հրամանների պատճեններ և քաղվածքներ, անձնական փաստաթղթերի պատճեններ, բնութագրեր, որակավորման թերթիկներ, կադրերի հաշվառման թերթիկներ, աշխատանքային գրքույկներ) պահպանվում են մշտապես, իսկ պետական (այդ թվում՝ քաղաքացիական, համայնքային ծառայության, քաղաքացիական, համայնքային ծառայության ռեզերվներում գրանցված և ռեզերվներից հանված) և մասնավոր ոլորտների աշխատողների, ինչպես նաև քաղաքացիական ծառայության համակարգից դուրս եկած, աշխատանքից ազատված ծառայողների, դատական ծառայության պաշտոնից ազատված դատական ծառայողների (բացառությամբ աշխատանքային գրքույկի) անձնական գործերը պահպանվում են 50 տարի ժամկետով: Թեև Կառավարության որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի սահմանված ցանկով անձնական գործում առկա փաստաթղթերի շարքում չեն մատնանշվում հայտարարագրերը, ըստ Հայաստանի ազգային արխիվի հայտնած տեղեկությունների՝ հայտարարագրերը, որպես կանոն, պահպանվում են անձնական գործերում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ եթե անգամ ելնենք այն կանխավարկածից, որ պետական կառավարման համակարգի մարմինների, պետական (այդ թվում՝ քաղաքացիական, համայնքային ծառայության, քաղաքացիական, համայնքային ծառայության ռեզերվներում գրանցված և ռեզերվներից հանված) աշխատողների, քաղաքացիական ծառայության համակարգից դուրս եկած, աշխատանքից ազատված ծառայողների, դատական ծառայության պաշտոնից ազատված դատական ծառայողների անձնական գործերում առկա են վերջիններիս լրացրած բոլոր հայտարարագրերը, ակնհայտ է, որ այս ցանկից դուրս են մնում մի շարք պետական պաշտոն զբաղեցնող անձինք, այդ թվում՝ ԱԺ պատգամավորներ, դատավորներ, դատախազներ և այլն:

Իսկ եթե անգամ կրկին ելնենք այն կանխավարկածից, որ ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկում մատնանշված *պետական աշխատող* եզրույթը և *պետական պաշտոն զբաղեցնող անձ* եզրույթը նույնական են, ապա այս ցանկից դուրս են մնում 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարները, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք և այլք¹⁴²:

Այսպիսով, փաստ է, որ ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված ցանկում ներառված չէ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց ամբողջական շրջանակը, բացի այդ, վերոնշյալ ցանկով հաստատված անձնական գործում պահպանվող փաստաթղթերի շարքում առհասարակ նշված չեն հայտարարագրերը, հետևաբար բացակայում են հայտարարագրերի արխիվային պահպանության պահանջների, պայմանների և ժամկետների վերաբերյալ օրենսդրական հիմքերը:

Մինչդեռ անհերքելի է հայտարարագրերի ինստիտուտի նշանակությունը ապօրինի ծագում ունեցող գույքը վերադարձնելու, ինչպես նաև պետական կառավարման հաշվետվողականության ապահովման գործում, հետևաբար բավարար ժամանակահատվածով, իսկ առանձին դեպքերում՝ առանց ժամկետային սահմանափակումների, համապատասխան փաստաթղթերի պահպանությունը պետք է ապահովված լինի անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներով:

Օտարերկրյա փորձ հայտարարագրերի արխիվացման վերաբերյալ

Հայտարարագրման գործող բոլոր համակարգերում հայտարարագրերը պահպանվում են կոնկրետ ժամանակահատվածով: Հայտարարագրերի ժամկետները տարբեր երկրներում խիստ տարբեր են (սկսած 4 տարուց (Բոսնիա և Հերցեգովինայում) մինչև 99 տարի հայտարարագրերի որոշ տեսակների համար

¹⁴² Եթե վերջիններս Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարզևներ, մրցանակներ, զինվորական, դիվանագիտական, գիտական, բարձրագույն, պատվավոր կոչումների արժանացած անձինք չեն:

(Լիտվայում), առավել տարածված է 10-15 տարվա պահպանության ժամանակահատվածը): Որոշ երկրներում պահպանման ժամկետի որոշումը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են որոշակի իրավախախտումների համար վաղեմության ժամկետները (օրինակ՝ Ղազախստանում) կամ հայտարարատու անձանց պաշտոնավարման ժամկետը (Կատալոնիայում բարձրաստիճան պաշտոնատար անձանց անձնական տվյալները ոչնչացվում են նրանց պաշտոնավարման դադարից հետո երեք ամիս անց): Պահպանման ժամկետների ավարտամաբ հայտարարագրերը կա՛մ ոչնչացվում են, կա՛մ փոխանցվում են արխիվներ: Էստոնիայի Հանրապետությունում հայտարարագրերի պահպանության ժամկետները տարբեր են՝ ըստ պաշտոնատար անձանց կատեգորիայի: Այսպես, բարձրաստիճան պաշտոնատար, քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց հայտարարագրերը պահպանվում են 5 տարի, որից հետո փոխանցվում են արխիվ: Այլ անձանց հայտարարագրերը ևս ենթակա են պահպանման 5 տարի, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո դրանք ոչնչացվում են, եթե իրենցից արխիվային արժեք չեն ներկայացնում¹⁴³: Ուկրաինայի Հանրապետությունում միասնական պետական հայտարարագրման ռեեստրում պետական և տեղական ինքնակառավարման գործառույթներ իրականացնող անձանց տվյալները պահպանվում են նրանց պաշտոնավարման ամբողջ ընթացքում, իսկ պաշտոնավարումից հետո՝ 5 տարի՝ բացառությամբ ներկայացրած վերջին հայտարարագրի, որը պահպանվում է մշտապես¹⁴⁴: Լատվիայի Հանրապետությունում հայտարարագրերի պահպանման ժամկետները սահմանվում են կառավարության որոշմամբ¹⁴⁵: Որոշման 26-րդ կետի համաձայն՝ բոլոր հայտարարագրերի պահպանման ժամկետը 30 տարի է: Ալբանիայում հայտարարագրերի պահպանումը սահմանված է օրենքով, որի համաձայն՝ հայտարարագրերն արխիվացվում են և պահպանվում 10 տարի ժամկետով¹⁴⁶: Ղրղզստանի Հանրապետությունում հայտարարագրերի արխիվացման կարգը սահմանված է կառավարության կողմից¹⁴⁷: Ըստ կարգի՝ քաղաքական և հատուկ

¹⁴³ Տե՛ս Կոռուպցիայի դեմ պայքարը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում. պետական ծառայողների ակտիվների հայտարարագրումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման գործիք, <https://www.oecd.org/daf/anti-bribery/48973261.pdf>, կետ 6.5:

¹⁴⁴ Տե՛ս Ուկրաինայի օրենքը կոռուպցիայի կանխարգելման մասին, <https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#Text>, հոդված 47, մաս 2:

¹⁴⁵ Տե՛ս Procedure for Completion, Submission, Registration and Keeping of Declarations of Public Officials and for Drawing up and Submission of Lists of Persons Holding the Office of a Public Official Republic of Latvia Cabinet, Regulation No. 478, <https://likumi.lv/ta/en/en/id/67750-procedure-for-completion-submission-registration-and-keeping-of-declarations-of-public-officials-and-for-drawing-up-and-submission-of-lists-of-persons-holding-the-office-of-a-public-official>:

¹⁴⁶ Տե՛ս Law On The Declaration And Audit Of Assets, Financial Obligations Of Elected Persons And Certain Public Officials, http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/Albania_Declaration_of_Assets_Law_9049_2003_EN.pdf, article 33:

¹⁴⁷ Տե՛ս Положение о порядке, условиях и сроках представления деклараций о полученных доходах, обязательствах и имуществе государственных служащих и их близких родственников, учете, хранении деклараций и публикации сведений, содержащихся в них,

պետական պաշտոններ զբաղեցնող անձանց հայտարարագրերը պահպանվում են 3 տարի՝ լիազոր մարմնում (Ղրղզստանի Հանրապետության պետական ծառայության գործերով գործակալությունում): Մյուս հայտարարատուների հայտարարագրերը պահպանվում են 3 տարի՝ տվյալ մարմնում:

Առաջարկություններ

Կառավարությանը՝ սահմանել հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հայտարարագրերի պահպանման/արխիվացման կարգ՝ առավել բարձր պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսելով հայտարարագրերի պահպանման առավել երկար ժամկետներ՝ առանձին դեպքերում սահմանելով դրանց արխիվային պահպանությունը առանց ժամկետային սահմանափակումների:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն սահմանել արխիվային օրենսդրության պահանջների խախտումների համար:
- ✓ Արխիվային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ սահմանել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի վերահսկողությունը ապահովելով վերջինիս այն իրականացնելու համար անհրաժեշտ մեխանիզմներով, այդ թվում՝ լիազորությունների ընդլայնման (պարբերական ստուգումների անցկացում, զեկույցների պահանջ և այլն), անհրաժեշտ ռեսուրսների և գործիքների տրամադրման միջոցով:
- ✓ Օրենքով հստակ ամրագրել «Հայաստանի ազգային արխիվ»-ի կողմից մատուցվող հնարավոր վճարովի ծառայությունների տեսակները՝ ապահովելով դրանց խիստ համապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
Վճարովի տրամադրվող ծառայությունների ցանկը և վճարի գոյացման սկզբունքները սահմանել նորմատիվ իրավական ակտով՝ նախատեսելով ողջամիտ վճարներ, որոնք կուղղվեն տրամադրված ծառայությունների ինքնաձախսաձածակմանը:

Բացառել սոցիալ-իրավական բնույթի ծառայությունների, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը վճարովի հիմունքներով:

- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում հստակեցնել *անձնական կամ ընտանեկան գաղտնիք* հասկացությունները՝ այդպիսի տվյալները որոշակի և սպառիչ նշելու միջոցով՝ բացառելով *անձնական տվյալներ* եզրույթի կիրառումը:
- ✓ Սահմանել օրենսդրական հնարավորություն՝ դիմողի համար մինչև համապատասխան ժամկետների լրանալը բոլոր տեսակի սահմանափակումներով արխիվային նյութերից օգտվելու թույլտվություն ստանալու նպատակով՝ այդ թվում, ըստ անհրաժեշտության, ներգրավելով կոնկրետ մարմինն և ստանալով վերջինիս եզրակացությունը յուրաքանչյուր դեպքով մատչելիության սահմանափակման հիմքի առկայության/բացակայության մասին:
- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ կրճատելով անձնական կամ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող նյութերի մատչելիության սահմանափակող ժամկետը՝ այն սահմանելով մինչև մարդու մահը, իսկ եթե հնարավոր չէ պարզել նրա մահվան օրը, ապա սահմանափակումը հաշվարկել ծննդյան օրից 75 տարի ժամկետով: Եթե հայտնի չեն ծննդյան կամ մահվան ժամանակը, ապա համապատասխան նյութերի հասանելիությունը կարող է սահմանափակվել փաստաթղթերի ստեղծման պահից 70 տարի ժամկետով:
- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ սահմանելով դրույթ, ըստ որի՝ կբացառվի ՀԱԱ ՊՈԱԿ-ի պատասխանատվությունն այլ անձանց արխիվային նյութերի ուսումնասիրման ընթացքում իրենց հասանելի դարձած անձնական տվյալներն ապօրինի օգտագործելու համար (Հունգարիայի օրինակով կարելի է նախատեսել համապատասխան հայտարարություն ստորագրելու պարտականությունը):
- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառելիության տեսանկյունից բռնադատվածների վերաբերյալ արխիվային նյութերի մատչելիության նկատմամբ բացառություն սահմանելու նպատակով, ինչպես նաև արգելք նախատեսել բռնադատվածների մասին արխիվային նյութերը գաղտնագրելու վերաբերյալ: Օրենքով այս արխիվային նյութերի մատչելիությունը սահմանափակելու իրավունք վերապահել միայն բռնաճնշումներից տուժածներին (բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք եղել են

բռնաճնշումներ իրականացրած մարմինների հաստիքային և արտահաստիքային աշխատակիցներ)՝ իրենց մասով նշելով սահմանափակման ենթակա տեղեկատվության տեսակը, բնույթը, մատչելիության սահմանափակման ժամկետը, իսկ բռնադատվածների ընտանիքի անդամներին, ազգականներին և այլ անձանց՝ իրենց մասին տեղեկությունների մասով մասնակի՝ միայն էթնիկ պատկանելության, քաղաքական կամ աշխարհայացային կողմնորոշման, կրոնի, ինչպես նաև այն տվյալների մասով, որոնք վերաբերում են նրանց առողջությանը և սեռական կյանքին (ցանկացած դեպքում սահմանափակման ժամկետը չի կարող գերազանցել 25 տարին):

- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում սահմանել բաց (զադոնազերծված) նյութերի զադոնագրումը արգելող դրույթ: Նախատեսել պատասխանատվություն վերոգրյալ արգելքը խախտելու համար:
- ✓ Սահմանել յուրաքանչյուր տարվա փորձաքննության արդյունքներով կազմվող և համապատասխան մարմնի ղեկավարի կողմից հաստատվող ցանկերը (մշտական պահպանության հանձնվող փաստաթղթերի ցանկը, երկարաժամկետ պահպանության, ինչպես նաև ոչնչացման համար առանձնացված փաստաթղթերի ցանկը) հրապարակելու պահանջ: Վերը նշված բոլոր ցանկերի կազմման նկատմամբ սահմանել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մեթոդական-փորձագիտական հանձնաժողովի վերահսկողական պարտադիր գործառույթը՝ վերջինիս վերապահելով այդ ցանկերի հաստատման լիազորությունը, բացառելով մշտական պահպանության փաստաթղթերի ցանկը հաստատելուց հետո կազմակերպության կողմից պահպանման ոչ ենթակա փաստաթղթերի ոչնչացման հնարավորությունը:
- ✓ Նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան արխիվային հավաքածուի համալրման աղբյուր հանդիսացող մարմինների արժեքավորման փորձաքննական հանձնաժողովների գործունեության նկատմամբ ապահովել հանրային վերահսկողության հնարավորություն (օրինակ՝ նիստերի դիտարկման միջոցով), ինչպես նաև հանձնաժողովի կազմում ընդգրկել համապատասխան մասնագետների (օրինակ՝ համապատասխան մասնագիտական ուղղվածության կրթական հաստատությունների ներկայացուցիչների):

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն, իսկ Կառավարությանը՝ նաև թիվ 1896-Ն որոշման փոփոխություն և.

- ✓ վերանայել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 20.10.2005 թ.-ի 1896-Ն որոշումը՝ հստակորեն սահմանելով ավանդատվական

պահպանության հիմքերը, նպատակը, մատչելիության ապահովման պայմանները, ինչպես նաև կրճատելով ավանդատվական պահպանության առավելագույն ժամկետները.

- ✓ ավանդատվական պահպանություն իրականացնելու հնարավորություն ստանալու համար նախատեսել հատուկ ընթացակարգ, որով կքննվի այդպիսի պահպանության անհրաժեշտությունը և կտրվի թույլտվություն (որպես վերահսկող մարմին կարող է սահմանվել ՀԱԱ ՊՈԱԿ-ը):

ՀՀ կառավարությանը

- ✓ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի հիման վրա 13.07.2017 թ.-ին ընդունված թիվ 884-Ն որոշմամբ սահմանել անձնական կամ ընտանեկան գաղտնիք և այլ սահմանափակ մատչելիության տեղեկություններ պարունակող նյութերից օգտվելու կարգ:
- ✓ Վերանայել 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ հաստատված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը՝ դրանում ներառելով արխիվային արժեք ներկայացնող որոշ տեսակի (օրինակ՝ կոռուպցիոն, մարդկության դեմ ուղղված, սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ, պատմական և սոցիալական նշանակություն ունեցող) կարճված քրեական գործերի նյութերը (առնվազն թվայնացված ձևաչափով), քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ ավարտված գործերի նյութերը (առնվազն թվայնացված ձևաչափով), պետության տնտեսության (Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, հանքարդյունաբերության, այլ ենթակառուցվածքների) և հոգևոր-մշակութային նշանակության հաստատությունների գործունեությամբ ստեղծված փաստաթղթերը:
- ✓ Սահմանել հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հայտարարագրերի պահպանման/արխիվացման կարգ՝ առավել բարձր պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսելով հայտարարագրերի պահպանման առավել երկար ժամկետներ, իսկ առանձին դեպքերում սահմանելով դրանց արխիվային պահպանությունը առանց ժամկետային սահմանափակումների:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդիր 1

Խնդրի նկարագրություն

1.1. Իրավակիրառ պրակտիկայում հաճախ հայցվող տեղեկատվության տրամադրումը անհիմն մերժվում է այն պատճառաբանությամբ, որ տեղեկատվությունը բովանդակում է անձնական տվյալ, հետևաբար ենթակա չէ տրամադրման մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելու հիմքով, ինչը տեղի է ունենում *անձնական տվյալներ* և *անձնական կյանքի գաղտնիք* հասկացությունները նույնացնելու հետևանքով:

1.2. Ըստ գործող իրավակարգավորումների՝ առանց անձի համաձայնության՝ փոխանցման ենթակա անձնական տվյալների շրջանակը որոշվում է ոչ թե տվյալների բնույթի, տեսակի, դրանց պահպանման առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ կախված որևէ այլ օրենքով նախատեսված լինելու (կամ չլինելու) հանգամանքից:

Վերլուծություն

1.1. Ուսումնասիրված դատական ակտերով տարբեր պետական մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև հենց դատարանների կողմից տեղեկատվության տրամադրումը մերժելու ամենահաճախ հանդիպող հիմքերը հետևյալն են.

– հայցվող տեղեկատվությունը բովանդակում է անձնական տվյալ¹⁴⁸,
հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվություն¹⁴⁹, միաժամանակ իրենից ներկայացնում է անձնական կյանքի գաղտնիք (այդ թվում՝ որպես գաղտնիք դիտարկվում է ցանկացած անձնական տվյալ)¹⁵⁰:

Նկատի ունենալով այն, որ թվարկված հանգամանքները տեղեկատվության տրամադրման սահմանափակման հիմնական հիմքերն են, կարող ենք փաստել, որ ուսումնասիրված դատական ակտերից եզակի բնույթ կրող գործերով է, երբ դատարանը չի պատճառաբանել տեղեկատվության տրամադրման մերժումը բացառապես հայցվող տեղեկատվության գաղտնիք հանդիսանալու հիմքով, այլ

¹⁴⁸ Դատական գործեր թիվ ՎԴ/1031/05/16, ՎԴ/1233/05/19, ՎԴ/4129/05/15, ՎԴ/4169/05/16:

¹⁴⁹ Դատական գործեր թիվ ՎԴ/4520/05/16, ՎԴ/12143/05/17:

¹⁵⁰ Դատական գործեր թիվ ՎԴ/1276/05/15, ՎԴ/1233/05/19, ՎԴ/4120/05/15 և այլն:

փորձել է գնահատել հայցվող տեղեկատվությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վեր հանված չափորոշիչների համատեքստում¹⁵¹: Մասնավորապես դատարանը գնահատել է հայցվող տեղեկատվության նպատակը (արդյո՞ք միտված է տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն իրացնելու հնարավորության ապահովմանը), հայցվող տեղեկության բնույթը (արդյո՞ք առկա է հանրային հետաքրքրություն), տեղեկություն հայցողի դերը (արդյո՞ք այն անձն է, որի գործունեությունն առնչվում է հանրային հետաքրքրության հարցերի)¹⁵²:

Հատկանշական է, որ բացառապես անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող պահանջով գործերը սակավաթիվ են, ինչը վկայում է այն մասին, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը գործնականում ըստ նշանակության կիրառում գրեթե չունի և հիմնականում իրավակիրառ մարմինների թյուրընկալման և մեկնաբանման հետևանքով ծառայում է որպես տեղեկատվության տրամադրումը սահմանափակող «հիմք»:

Այս կապակցությամբ, անդրադառնալով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վկայակոչմամբ տեղեկատվության տրամադրման մերժման հիմնավորումներին, հարկ է արձանագրել, որ կարգավորման առարկայի առանձնահատկությունների հաշվառմամբ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կոչված չէ ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ անձի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը: Այն նախ և առաջ կոչված է ապահովելու անձի գաղտնիության իրավունքը անձնական տվյալների պաշտպանության ոլորտում, որը չի կարող ամբողջությամբ նույնացվել մասնավոր կյանքի հետ:

Օրենքի նախագծի հիմնավորումներից հետևում է, որ դրա ընդունումն անհրաժեշտ է անձնական տվյալների մշակման ու պաշտպանության կարգավորման ներպետական մեխանիզմները եվրոպական ստանդարտներին համապատասխանեցնելու համար: Նախագիծը մշակվել է Եվրոպական Միության՝ 1981 թվականի հունվարի 28-ի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի և Եվրապառլամենտի ու Եվրախորհրդի՝ 1995 թվականի հոկտեմբերի 24-ի ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի դրույթների հիման վրա, ինչպես նաև Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի նախագծում առկա կարգավորումների հաշվառմամբ:

Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «...Կոնվենցիայի նպատակն է ապահովել յուրաքանչյուր Կողմի տարածքում յուրաքանչյուր անհատի, անկախ նրա

¹⁵¹ Դատական գործեր թիվ ՎԴ/10031/05/18, ՎԴ/11811/05/17:

¹⁵² Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Magyar Helsinki Bizottság v. Hungary գործով վեր հանած չափորոշիչների մասին մանրամասն տե՛ս սույն բաժնի 1.2-ի վերլուծություններում:

քաղաքացիությունից կամ բնակության վայրից, իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես նրա գաղտնիության իրավունքի նկատմամբ հարգանքը իրեն առնչվող անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասով (տվյալների պաշտպանություն)»:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունման պահին գործող ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի 1-ին հոդվածի համաձայն՝ նշված փաստաթղթի առարկան հետևյալն է. «Մասնակից պետությունները պաշտպանում են ֆիզիկական անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը անձնական տվյալների մշակման մասով»:

Եվրոպական պառլամենտի և Եվրամիության՝ 2016 թվականի ապրիլի 27-ի Անհատական տվյալների մշակման դեպքում ֆիզիկական անձանց պաշտպանության և այդպիսի տվյալների ազատ շրջանառության, ինչպես նաև 95/46/ԵՄ հրահանգի չեղյալ հայտարարելու մասին թիվ 2016/679 կանոնակարգի (General Data Protection Regulation/Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի, այսուհետ նաև՝ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ կամ Կանոնակարգ) 1-ին հոդվածի համաձայն՝ «1. Սույն կանոնակարգը նախատեսում է ֆիզիկական անձանց պաշտպանության կանոնները անձնական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ շրջանառության մասով: 2. Սույն կանոնակարգը պաշտպանում է ֆիզիկական անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները, հատկապես անձնական տվյալների պաշտպանության իրավունքը»¹⁵³:

Այսպիսով, ակնհայտ է, որ Օրենքի նպատակն է կոնկրետ սուբյեկտների կողմից անձի վերաբերյալ մշակվող անձնական տվյալների գաղտնիության ապահովումը, մշակվող տվյալների օրինականությունն ու դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը: Նշված եզրահանգման համար, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանված մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքից զատ, հիմք է հանդիսանում նաև 34-րդ հոդվածով անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ամրագրումը, ինչը թույլ է տալիս եզրահանգել, որ սահմանադիրը չի նույնացնում այդ իրավունքները:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (այսուհետ՝ նաև Գործակալություն) 25.02.2019 թ.-ի որոշմամբ (վարչական վարույթ, գործ N-006/01/19), հղում կատարելով ՀՀ Սահմանադրության դոկտրինալ մեկնաբանությանը, հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «(...) մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմը, որին մարդը, իր ազատության շնորհիվ, չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Այն արտացոլում է ամեն մի

¹⁵³ St' u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

մարդու բնական ձգտումը՝ ունենալու իր ինտիմ և գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը հեռու լինի ուրիշների միջամտությունից»։ Նաև փաստել է, որ «... ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, որը նախանշում է մասնավոր (անձնական) և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածը խոսում է ոչ թե գաղտնիքի, այլ տվյալների բարեխիղճ և (համաձայնության բացակայության պայմաններում) օրենքով սահմանված հիմքի առկայությամբ մշակելու վերաբերյալ։ **Հետևաբար օրենսդիրը չի շեղվել սահմանադրի կողմից իր համար նախանշված սահմաններից՝ անձնական տվյալների մշակման սկզբունքները և կանոնները սահմանող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում անձնական տվյալները չնույնացնելով գաղտնիքի հետ (այսպես, անձնական տվյալները կարող են լինել նաև հանրամատչելի)...**»¹⁵⁴։

Վերոնշյալ մոտեցումը էական նշանակություն ունի այնքանով, որ իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նշվեց, հաճախ անձնական տվյալը նույնացվում է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության հետ և որակվում որպես մասնավոր կյանքի գաղտնիք¹⁵⁵, մինչդեռ քննարկվող համատեքստում անձնական տվյալներին գաղտնիության, իսկ Օրենքի իմաստով՝ ոչ հանրամատչելի ռեժիմ տալը յուրաքանչյուր դեպքում կոնկրետ անձի կամահայտնության խնդիր է (եթե այդ համաձայնության անհրաժեշտությունը բացառող դրույթ ուղիղ նախատեսված չէ օրենքով), որը ենթակա է պարզման և գնահատման յուրաքանչյուր առանձին դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հարցը լուծելիս։

1.2. Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ»։

Նշված դրույթի պայմաններում գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ ըստ էության նույնական տեղեկատվություն բովանդակող անձնական տվյալի հրապարակումը, առանց տվյալների սուբյեկտի համաձայնության, մի դեպքում չի համարվի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտում՝ կախված այլ կոնկրետ օրենքի կարգավորումից, մյուս դեպքում կհամարվի։

Այլ կերպ ասած՝ առանց անձի համաձայնության փոխանցման ենթակա անձնական տվյալների շրջանակը որոշվում է ոչ թե տվյալների բնույթի, տեսակի, դրա պահպանման առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ կախված որևէ այլ օրենքով նախատեսված լինելու (կամ չլինելու) հանգամանքից, ինչը հաճախ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ։ Այս առումով պետք է արձանագրել այն խնդիրը, որ ներպետական օրենսդրությունը բավարար չափով համապատասխանեցված չէ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ

¹⁵⁴ Տե՛ս http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaghagapetaran.pdf։

¹⁵⁵ Տե՛ս թիվ ՎՂ/4129/05/15, ՎՂ/4169/05/15, ՎՂ/1031/05/16, ՎՂ/1233/05/19 վարչական գործեր։

օրենքին: Միևնույն ժամանակ Օրենքում անհնար և աննպատակահարմար է թվում փոխանցման ոչ ենթակա տվյալների սպառիչ ցանկ նախատեսելը¹⁵⁶: Նշված խնդիրն արտացոլված է նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության 25.02.2019 թ.-ի որոշման (վարչական վարույթ, գործ N-006/01/19) մեջ¹⁵⁷: Որոշմամբ քննարկվող՝ Երևանի քաղաքապետի կարգադրությունը ներառել է համայնքային ծառայող չհանդիսացող աշխատողների խրախուսում, ինչը դուրս է Երևանի քաղաքապետի իրավասությունից, և այդ անձանց տվյալների մշակման առումով Գործակալությունն արձանագրել է քաղաքապետարանի կողմից անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի խախտում՝ միաժամանակ փաստելով, որ չկա որևէ իրավական ակտ, որը կկարգավորեր Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայող չհանդիսացող աշխատողների խրախուսման կարգը, որի արդյունքում էլ պարզ կլիներ նշված անձանց խրախուսելու և նրանց անձնական տվյալները մշակելու (հրապարակելու) իրավասու մարմինը: Արդյունքում խնդրո առարկա կարգադրության մեջ, համայնքային ծառայողներից գատ, ներառված են եղել այդպիսիք չհանդիսացող այլ աշխատակիցներ: Քաղաքապետարանը, օրենքի ուժով պարտավոր լինելով հրապարակել իր կարգադրությունը, միաժամանակ լիազորություն չի ունեցել դրանով անդրադառնալու, հետևաբար հրապարակելու համայնքային ծառայող չհանդիսացող, սակայն ըստ էության նույն հիմունքներով քաղաքապետարանի բյուջեից վարձատրվող/խրախուսվող աշխատակիցների տվյալները, ինչը միանշանակ արդարացված չէ:

Նկատի ունենալով անձնական տվյալների մշակում (հրապարակում) նախատեսող օրենսդրության լայն կարգավորման դաշտը և տարբեր իրավիճակներում առանձին օրենքների դրույթների միմյանց անխուսափելիորեն հակասելու հանգամանքը՝ անհրաժեշտ է մի շարք երկրների օրինակով¹⁵⁸ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում սահմանել հանրային շահի թեստի պահանջը, որը իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռի հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները (այդ թվում՝ անձնական կյանքի գաղտնիքի հիմքով) սահմանող նորմերը տվյալների փոխանցման (տեղեկատվության տրամադրման) գործընթացում:

¹⁵⁶ Նույնական կարգավորում սահմանում են Ուկրաինայի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 16-րդ, Մոլդովայի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 29-րդ, ՌԴ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 7-րդ, Շվեյցարիայի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» դաշնային օրենքի 10a¹ հոդվածները: Գերմանիայի Դաշնության (Federal Data Protection Act (BDSG), Section 25), Շվեյցարիայի Համադաշնության (Federal Act on Data Protection) օրենքներով նախատեսված են անձնական տվյալները փոխանցելու դեպքերի և պայմանների առանձնահատկությունները:

¹⁵⁷ Տե՛ս http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaghagapetaran.pdf:

¹⁵⁸ Մանրամասն տե՛ս 1.2 կետում՝ «Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ» բաժնում:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի (Magyar Helsinki Bizottság v. Hungary գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը առանձնացրել է չափանիշներ, որոնց միջոցով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվում է, թե արդյոք պետության /պետական մարմինների/ կողմից պահվող տեղեկությունների մատչելիության մերժումը միջամտություն է անձի արտահայտվելու ազատության իրավունքին, թե ոչ: Այդ չափանիշներն են՝

1) **տվյալ տեղեկությունը հայցելու նպատակը** (հարցումը պետք է հետապնդի ազատորեն արտահայտվելու իրավունքի իրացման, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու նպատակ)¹⁵⁹.

2) **հայցվող տեղեկության բնույթը** (այն պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի, որպեսզի առկա լինի դրա բացահայտման անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունն առկա է, եթե, ի թիվս այլնի, նման բացահայտումն ապահովում է հանրային կառավարման և հանրության շահերին առնչվող հարցերի թափանցիկությունը և այդպիսով հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցելու պետական կառավարմանը)¹⁶⁰.

3) **տեղեկություն հայցողի դերը** (կոնկրետ անձի կողմից համապատասխան տեղեկատվության հայցումը պետք է միտված լինի ստացված տեղեկատվությունը հասարակությանը փոխանցելուն՝ ի սկզբանե նպատակ ունենալով պաշտպանելու հասարակության շահը)¹⁶¹.

4) **պատրաստի տեղեկությունների առկայությունը** (տեղեկատվության տրամադրման մերժումը որպես «տեղեկատվության ստացման և տարածման ազատության» իրավունքի իրացման «միջամտություն» գնահատելու համար կարևոր չափանիշ է տեղեկատվության պատրաստի լինելը)¹⁶²:

Հանրային շահի թեստի պահանջի սահմանման մասով օտարերկրյա փորձը տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին առնչվող հիմնախնդիրներ» բաժնում:

Շվեյցարիայի Համադաշնության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային մարմինները կարող են բացահայտել նաև անձնական տվյալներ լայն հասարակության համար նախատեսված պաշտոնական տեղեկատվության շրջանակում կա՛մ ի պաշտոնե, կա՛մ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված դեպքերում, եթե.

ա) համապատասխան անձնական տվյալները կապված են հանրային

¹⁵⁹ Տե՛ս case of Magyar Helsinki bizottság v. Hungary (application no. 18030/11), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-167828%22%7D>, կետ 159:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում՝ կետ 161:

¹⁶¹ Տե՛ս նույն տեղում՝ կետ 168:

¹⁶² Տե՛ս նույն տեղում՝ կետ 170:

պարտականությունների կատարման հետ.

բ) հանրային շահը գերակայում է¹⁶³:

Հունգարիայի Հանրապետության «Տեղեկատվական ինքնորոշման և տեղեկատվության ազատության մասին» օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է հանրային հետաքրքրություն ներկայացնող տվյալների մատչելիության ընդհանուր կանոնները: Նշված հոդվածով նախատեսված դրույթի համաձայն՝ պետական մարմնի լիազորությունների շրջանակում գործող հանրային պարտականություններ կատարող անձի անունը, ինչպես նաև նրա գործառույթները և պարտականությունները, մանդատը, նրա այլ անձնական տվյալները, որոնք վերաբերում են նրա կողմից իրականացվող հանրային պարտականություններին, և անձնական տվյալները, որոնց մատչելիությունն ապահովված է օրենքով, որակվում են որպես հասարակական հիմունքներով մատչելի տվյալներ¹⁶⁴:

Ֆինլանդիայի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 23-րդ հոդվածով նախատեսվում է, որ օրենքի սահմանափակող դրույթները չեն խոչընդոտում տվյալների փոխանցումը, եթե դա անհրաժեշտ է կամ պահանջվում է հանրային շահի ապահովման կամ դատական հայց կամ պատասխան ներկայացնելու կամ դատական պահանջով որոշում կայացնելու նպատակով¹⁶⁵:

Ուկրաինայի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ առանց անձնական տվյալների սուբյեկտի կամ նրա կողմից լիազորված անձի համաձայնության՝ տվյալների տարածումը թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում և միայն ազգային անվտանգության, տնտեսական բարեկեցության և մարդու իրավունքների ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված¹⁶⁶:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և ՀՀ օրենսդրությամբ սահմանել այն չափանիշները, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռեն հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները սահմանող նորմերը, այդ թվում՝ տվյալների փոխանցման (տեղեկատվության տրամադրման) գործընթացում՝ այսպիսով կանխելով անձնական տվյալների մշակման

¹⁶³ Տե՛ս Federal Act on Data Protection, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19920153/index.html#id-5>:

¹⁶⁴ Տե՛ս Act CXII of 2011 on the right to informational self-determination and on the freedom of information, http://njt.hu/translated/doc/J2011T0112P_20190426_FIN.pdf:

¹⁶⁵ Տե՛ս Personal Data Act, <https://www.finlex.fi/en/laki/kaannokset/1999/en19990523.pdf>:

¹⁶⁶ Տե՛ս Law of Ukraine on Protection of Personal Data, <https://cedem.org.ua/en/library/law-of-ukraine-on-protection-of-personal-data/>:

(հրապարակման) օրենսդրական դաշտի և տարբեր իրավիճակներում առանձին օրենքների դրույթների միջև առաջացող հակասությունները: Նկատի ունենալով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում առաջարկվող հանրային շահի թեստը վերաբերում է այն անձնական տվյալներին, որոնք բովանդակում են անձնական կյանքի գաղտնիք, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել հանրային շահով պայմանավորված անձնական կյանքի գաղտնիք չհանդիսացող, այլ ոչ հանրամատչելի անձնական տվյալներն առանց տվյալների սուբյեկտի համաձայնության հրապարակելու (այլ կերպ մշակելու) հնարավորությունը:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

Ըստ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ առանց անձի համաձայնության կատարված ձայնագրությունները չեն գնահատվում որպես թույլատրելի ապացույց, ուստի չեն կարող դրվել գործով կայացվող դատական ակտի հիմքում:

Վերլուծություն

Վարչական դատավարության օրենսգրքի նշված 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները: Եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել են առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ օրենքը թույլատրում է տվյալ լուսանկարումը, ձայնագրումը կամ տեսագրումը առանց անձի համաձայնության»: Նման կարգավորումն իրավաչափ չէ և ինքնաբերաբար հանգեցնում է տեղեկատվության մատչելիության և օգտագործման սահմանափակման՝ այդ թվում հաշվի առնելով մասնավոր անձի կատարած գաղտնի ձայնագրությունը որպես թույլատրելի ապացույց դիտելու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հստակ ձևավորված նախադեպային պրակտիկան:

Հատկանշական է, որ թեպետ քննարկվող սահմանափակումը ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված չէ, ՀՀ-ում նույնպես ձևավորվել է մասնավոր անձի կատարած գաղտնի ձայնագրությունը որպես թույլատրելի ապացույց դիտարկելու դատական պրակտիկա (օրինակ՝ քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/4518/02/14, քրեական գործ թիվ ԱԲԴ/0058/01/14, ԼԴ/0002/01/18), ինչի պարագայում առավել անհասկանալի է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ապացույցի թույլատրելիության նշված սահմանափակումը՝ նկատի ունենալով նաև վարչական դատավարության սուբյեկտների կազմը (վարչական մարմին, որն իր գործունեության ընթացքում չի կարող օգտվել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքից):

«Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքով սահմանված՝ անձից մասնավոր կյանքի մասին տեղեկություններ պահանջելու կամ նման տեղեկություններ նրա կամքից անկախ ստանալու արգելքին (օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետ), ապա ՌԴ Գերագույն դատարանն արձանագրել է, որ նշված իրավական արգելքը չի տարածվում քննարկվող դեպքի վրա, քանի որ ձայնագրությունը կատարվել է հեռախոսային խոսակցության մասնակիցներից մեկի կողմից, և այն վերաբերում է կողմերի պայմանագրային հարաբերություններին»¹⁷²:

Մեծ Բրիտանիայում աշխատանքային վեճերով տրիբունալի ձևավորած դիրքորոշման համաձայն՝ մի շարք կոնկրետ հանգամանքներ հաշվի առնելով՝ ձայնագրությունները համարվել են թույլատրելի ապացույցներ¹⁷³, հատկապես երբ գործատուն պետական մարմին է¹⁷⁴:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և վերացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա սահմանափակումները մասնավոր անձանց իրականացրած ձայնագրությունների, տեսագրությունների թույլատրելիության վերաբերյալ:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությամբ բավարար չափով ապահովված չեն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի գործունեության անկախության երաշխիքները: Մասնավորապես խնդրահարույց է.

- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ նան՝ Գործակալություն) կարգավիճակը՝ որպես ՀՀ արդարադատության նախարարության առանձնացված ստորաբաժանում.
- Գործակալության ֆինանսական անկախության, սեփական միջոցների կառավարման հնարավորության բացակայության հարցը.

¹⁷² Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի 06.12.2016 թ.-ի թիվ 35-ԿԴ16-18 որոշում, https://vsrf.ru/stor_pdf.php?id=1502686:

¹⁷³ Տե՛ս Phoenix House Ltd v. Stockman գործը՝ <https://bateswells.co.uk/2019/07/can-covert-recordings-made-by-employees-amount-to-gross-misconduct/>, Ms. Gosain (Claimant) and Punjab National Bank (International) Ltd and Others v Ms S Gosain UK EAT 0003 14 SM.pdf և Amwell View School v. Dogherty գործը՝ https://assets.publishing.service.gov.uk/media/59a7f93040f0b6616da84807/Punjab_National_Bank_International_Ltd_and_Others_v_Ms_S_Gosain_UKEAT_0003_14_SM.pdf և <https://www.thompsonstradeunion.law/news/lelr/weekly-issue-116-november-2006/admissible-evidence>:

¹⁷⁴ Տե՛ս <https://acitylawfirm.com/recorded-conversations/>:

- Գործակալության ղեկավարին ՀՀ վարչապետի նշանակելու կարգը.
- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Գործակալության ստեղծման, վերակազմակերպման և նրա գործունեության դադարեցման նախատեսումը:

Վերլուծություն

Տվյալների պաշտպանության մարմնի անկախ և արդյունավետ գործունեությունն ապահովող երաշխիքների հետ կապված հարցերը սույն ուսումնասիրության համատեքստում նշանակալից են այնքանով, որ այս մարմնի կողմից իրականացվող լիազորությունները հաճախ ընդգրկում են տեղեկատվության ազատության սահմանափակմանը վերաբերող հարցերի քննություն՝ կապված անձնական տվյալների պաշտպանության հետ:

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիային կից «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայի վերահսկիչ մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերահսկիչ մարմինները պետք է իրենց գործառույթներն իրականացնեն լիովին անկախ»:

Արձանագրության բացատրական գեկույցում մատնանշվել է, որ որպեսզի լիազոր մարմինները կարողանան տվյալների պաշտպանության համար իրավական պաշտպանության պատշաճ միջոցներ ապահովել, նրանք պետք է ունենան արդյունավետ լիազորություններ և իրենց պարտականությունները կատարելիս լինեն իրապես անկախ: Ընդգծվել է, որ մատնանշած պայմանները ժողովրդավարական հասարակությունում տվյալների պաշտպանության լիազոր մարմնի առանցքային բաղադրիչներն են¹⁷⁵: Որպես այդպիսիք՝ դիտարկվում են անկախության հետևյալ չափանիշները՝

1. տվյալների պաշտպանության մարմնի ղեկավարի կամ անդամների (կոլեգիալ մարմին լինելու դեպքում) նշանակման կարգ,
2. ղեկավարի, իսկ կոլեգիալ մարմին լինելու դեպքում՝ անդամների պաշտոնավարման ժամկետ,
3. լիազորությունների իրականացման համար բավարար ռեսուրսների առկայություն (ֆինանսական անկախություն),
4. արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայություն,
5. տվյալների պաշտպանության մարմնի գործունեության թափանցիկություն,
6. գործունեության իրականացման և դադարման պայմաններ¹⁷⁶:

¹⁷⁵ St´u Council of Europe Treaty Series - No. 223 Explanatory Report to the Protocol amending the Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data, <https://rm.coe.int/16808ac91a>, կետ 117:

¹⁷⁶ St´u Council of Europe Treaty Series - No. 223 Explanatory Report to the Protocol amending the Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data, <https://rm.coe.int/16808ac91a>, կետ 129:

Լիազոր մարմնի՝ արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների մասով

Եվրոպական երկրներում տվյալների պաշտպանության մարմինների նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում գործում են բազմաթիվ ինստիտուցիոնալ սխեմաներ՝ ամբողջովին անկախ մարմիններից (Միացյալ Թագավորությունում գործող տեղեկատվության հանձնակատարի գրասենյակ) մինչև որոշ անկախ գործառույթներով նախարարությանը կից գերատեսչություն (Լիտվայի տվյալների պաշտպանության պետական տեսչություն)¹⁷⁷: Միաժամանակ լիազոր մարմնի համար գերադասելի է համարվում կոլեգիալ մարմնի մոդելը¹⁷⁸: Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգով հատուկ ընդգծվում է, որ յուրաքանչյուր լիազոր մարմնի անդամ կամ անդամներ իրենց գործառույթներն իրականացնելիս և սույն Կանոնակարգին համապատասխան իրենց լիազորությունները իրականացնելիս չպետք է ուղղակի կամ անուղղակի գտնվեն արտաքին գործոնների ազդեցության տակ, ինչպես նաև չպետք է ձգտեն և որևէ մեկից ստանան հրահանգներ (52-րդ հոդվածի 2-րդ մաս)¹⁷⁹:

Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ արդարադատության նախարարության առանձնացված ստորաբաժանում է, ինչը նշանակում է, որ գործակալությունը կառավարվում է նախարարի կողմից, գործակալության ղեկավարը հաշվետու է վարչապետին, նախարարին, գործակալության գործունեությունը համակարգող՝ նախարարի համապատասխան տեղակալին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին: Ավելին, նկատի ունենալով այն, որ գործակալության աշխատակիցները քաղաքացիական ծառայողի կարգավիճակ ունեն, լիազոր մարմնի ղեկավարը չի նշանակում և ազատում իր աշխատակազմը¹⁸⁰: Բացի սրանից՝ չկա որևէ կարգավորում հնարավոր որևէ միջամտության դեպքում համապատասխան անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Հատկանշական է նաև, որ գործակալությունն անգամ օժտված չէ անմիջապես իր գործունեության ոլորտին վերաբերող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ: Այսպես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալների պաշտպանության

¹⁷⁷ Տե՛ս Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության ուղեցույց, http://www.osf.am/wp-content/uploads/2015/04/DataProPolicyGuide_arm_final.pdf:

¹⁷⁸ Տե՛ս CDL-AD(2012)023-e, Opinion on Act CXII of 2011 on informational Self-determination and Freedom of Information of Hungary, adopted by the Venice Commission at its 92nd Plenary Session (Venice, 12-13 October 2012), [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2012\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2012)023-e):

¹⁷⁹ Տե՛ս General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

¹⁸⁰ Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 02.07.2015 թ.-ի թիվ 736-Ն որոշում:

ქვაკორ მარამინრ ორენჰი ყახანზნერჰი ჰახათმან რეყრუმ კირათრუმ ლ ორენჰრ ოახმანლად ვარჯალან ყათასუხანათოქოქან მრეზნგნერ, ᰁს კარჯალან ᰁრავლახახათრუმნერჰი ვლერაქერქალ Ⴢღ ორენსაქრჰი 189.17-რე ჰრეკადრ Ꮑახმანრუმ ლ ყათასუხანათოქოქონ «ანდნალან თოქალნერჰი ყაღოყანოქოქან მასჰინ» Ⴢაქასოთანჰი Ⴢანრავლეთოქოქან Ꮑრენჰრ ჰახათლრო რეყრუმ: Ꮑალქან ᎁოქონ Ꮑრენსაქრჰი 223.1 ჰრეკადრ Ꮑახმანრუმ ლ, რ Ꮑრენსაქრჰი 189.17-რე ჰრეკადრ ᎁახათლეთად ვარჯალან ᰁრავლახახათრუმნერჰი ვლერაქერქალ კორდერ Ⴢაქასოთანჰი Ⴢანრავლეთოქოქან არეარარათოქოქან ᎁახარაროქოქან ანონჰგ **ჰნნლრო** ლ **ვარჯალან თოქოქერ ᎁღანალქლო ᰁრავლონჰ** ᎁონჰ Ⴢაქასოთანჰი Ⴢანრავლეთოქოქან არეარარათოქოქან ᎁახარაროქოქან აღახათალკადმჰ **ვლერახსკოქალან დათოქოქან ყლთრ**:

ღლთლარარ ანდნალან თოქალნერჰი ყაღოყანოქოქან ქვაკორ მარამინრ Ⴢჰ ᰁანრეჰსანრუმ ანდნალან თოქალნერჰი ყაღოყანოქოქან მასჰინ Ꮑრენჰი ყახანზნერჰი ჰახათმან რეყრუმ Ꮑახმანლად ვარჯალან ყათასუხანათოქოქან მრეზნგნერ კირათრე მარამინ, ავლერჰინ, «ვარჯალან ᰁრავლახახათრუმნერჰი ვლერაქერქალ» Ⴢღ Ꮑრენსაქრჰი კარკავლორუმნერჰიგ ლნლლო ᰁსოთალ ლ, რ ქვაკორ მარამინრ Ⴢჰ ᰁანრეჰსანრუმ ᎁან ᰁრავლახახათრუმნერჰი ვლერაქერქალ კორდერ **ჰნნლო** მარამინ¹⁸¹:

Աქსაქჰოთ, ალნჰაქო ლ, რე ჳორდალკლოქოქონრ, ქნლლო Ⴢღ არეარარათოქოქან ᎁახარაროქოქან აოანდნავლად Ꮑოორარაოანრუმ, Ꮑოთლად Ⴢლ ᰁნარავლორ აროთაქინ მრეღამოქოქონჰგ კლრდ მნალო ანრარაოლღო ლრაღჰჰნლლო:

შრეაოქაქინ ᰁრავლონჰ ლ Ꮑოთარერქრქა ვოორა

«ანდნალან თოქალნერჰი ავლორმათავლად მღალმან რეყრუმ ანრათნერჰი ყაღოყანოქოქან მასჰინ» კონვლენგჰაქინ კჰგ ሀრდანსაქრეოქოქან 1-ჰინ ჰრეკადჰი 3-რე მასჰი ᰁამადაქინ` «ვლერახსკჰ მარამინნლერ ლლთრ ლ ᰁრენგ კორდათოქოქონერ ᰁრალანსავნენ ქოქინ ანლახ»: ᰁროთაქინ დნოლმნერჰიგ ყაღოყანოქოქან ლრაღჰჰნლერ ჲალალან ქალ ამრავრვლ ლ **ვრასოთანრუმ**: «ანდნალან თოქალნერჰი ყაღოყანოქოქან მასჰინ»

ვრასოთანჰი Ꮑრენჰი 30-რე ჰრეკადრ ამრავრრუმ ლ *თლთოქჰ* ანდლენმრექოქოქან ᰁრავლონჰრ, ᰁს 31-რე ჰრეკადრ ᰁსოთალ Ꮑახმანლდრუმ ლ, რ *თლთოქ* ᰁრ ქვაკოროქოქონნერჰი ᰁრალანსავმან რნრავრრუმ ანლახ ლ ლ Ⴢჰ ლნრარკვლორ ᎁრლ ლაღოქოქოქან კამ მარამინ: Ꮑლთოქჰ ვრ განლკავად აკრეგოქოქონ კამ თლთოქჰ კორდონლეთოქოქანრ მრეღამლერ Ꮑრენჰრ არკლვლად ლ ლ ყათოქლ: ᎁოქონ ჰრეკადრ Ꮑახმანლად ლ ᎁან ყლთოქოქან ყაროთალანოქოქონრ` Ꮑოთეღლლო თლთოქოქან ᰁამარ ანრარაოლღო აღახათანჰაქინ ყაქმანნლერ¹⁸²:

¹⁸¹ Ⴢარლ ლ ᎁლ, რე ჳორდალკლოქოქან რლკლარჰი ᰁაქასოთამრ` ჳორდალკლოქოქონრ ᎁმან ᰁნრეჰი Ⴢჰ Ჲაქაქლ, Ჲანჰი რე მრეზ Ꮑო ანდნალან თოქალნერ მღალკოქნერჰი რეოქოქ Ꮑლად ᰁახათრუმნლერ ვლერავლ ლ, ლ ვარჯალან ყათასუხანათოქოქან ლნრარკლლო ანრარაოლღოქოქონ Ⴢჰ ლლ:

¹⁸² [სლ ᎁ Law of Republic of Georgia on Personal Data protection, https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf](https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf):

Արտաքին ճնշումից պաշտպանության հետաքրքիր երաշխիք է սահմանված **Հունգարիայի** օրենքում: «Տեղեկատվական ինքնորոշման և տեղեկատվության ազատության մասին» Հունգարիայի օրենքի 40-րդ հոդվածով՝ լիազոր մարմնի ղեկավարին ոչ միայն արգելվում է անդամակցել քաղաքական կուսակցություններին և քաղաքական գործունեություն իրականացնել, այլ նաև սահմանվում է պաշտոնների սպառիչ ցանկը (խորհրդարանի կամ Եվրախորհրդարանի պատգամավոր, հանրապետության նախագահ, նախարար, պետական քարտուղար, տեղական ինքնակառավարման մարմնի նախագահ, քաղաքապետ կամ փոխքաղաքապետ, մարզպետ կամ փոխմարզպետ, շրջանի ժողովի նախագահ կամ նախագահի տեղակալ, ազգային փոքրամասնության տեղական կառավարման խորհրդի անդամ, պաշտոնյա կամ քաղաքական կուսակցության աշխատող), որոնք լիազոր մարմնի ղեկավարը չի կարող զբաղեցնել պաշտոնաթող լինելուն հաջորդաձ 4 տարիների ընթացքում¹⁸³:

Մոլդովայի օրենսդրությունը սահմանում է, որ մարմնի ղեկավարը պաշտոնավարման ընթացքում իրավունք չունի կուսակցության կամ հասարակական-քաղաքական այլ կազմակերպության անդամ լինելու, իրականացնելու որևէ այլ գործունեություն՝ բացի դասավանդման, գիտական, հասարակական կամ մասնավոր գործունեությունից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետելու առևտրային ընկերությունների կամ ձեռնարկությունների արժեթղթերին, որոնց գործունեությունը վերաբերում է մարմնի իրավասությանը¹⁸⁴:

Լիազոր մարմնի լիազորությունների իրականացման բավարար ռեսուրսների (ֆինանսական անկախություն) մասով

Խոսելով լիազոր մարմնի ֆինանսական անկախության մասին՝ անհրաժեշտ է գնահատել՝ արդյո՞ք լիազոր մարմինն ունի իր գործունեության և լիազորությունների իրականացման համար բավարար ֆինանսական միջոցներ, արդյո՞ք օժտված է դրանք ինքնուրույն կառավարելու հնարավորությամբ, և բավարար են արդյո՞ք համապատասխան կադրային ռեսուրսները: Վերոգրյալ հանգամանքները՝ որպես լիազոր մարմնի ֆինանսական անկախությունը կազմող էական բաղադրիչներ, կարևորվել են նաև Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգով: Կանոնակարգը լիազոր մարմնի անկախության ֆինանսական չափանիշը դիտարկում է նշված առանձին բաղադրիչների ամբողջության մեջ՝ կարևորելով լիազոր մարմնի գործունեության լիարժեք ապահովման հնարավորությունը, ընդհուպ՝ փոխօգնության, համագործակցության ապահովման,

¹⁸³ St'u Act CXII of 2011 on informational Self-determination and Freedom of Information, https://www.naih.hu/files/Privacy_Act-CXII-of-2011_EN_201310.pdf:

¹⁸⁴ St'u Law of Republic of Moldova on Personal Data Protection, <http://www.datepersonale.md/file/Data%20Protection%20Law%20133.pdf>, article 22:

սեփական անձնակազմն ունենալու և ընտրելու, առանց անկախությանը միջամտելու ֆինանսական հսկողության և տարեկան բյուջեի նախահաշիվ ունենալու հնարավորությունը:

Հայաստանի Հանրապետությունում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մարմնի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից՝ առանձին տողով: Օրենքը լիազոր մարմնի ֆինանսական ինքնավարության մասին որևէ այլ դրույթ չի նախատեսում, և, որպեսզի հնարավոր լինի իրական գնահատական տալ առկա իրավիճակին, պետք է անդրադառնալ ՀՀ կառավարության 25.07.2015 թ.-ի թիվ 734-Ն որոշմանը և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին: ՀՀ կառավարության 25.07.2015 թ.-ի թիվ 734-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրության համաձայն՝ գործակալությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության առանձնացված ստորաբաժանում է: Կանոնադրությամբ նախատեսված է նաև, որ Գործակալության պետը հաշվետու է Հայաստանի Հանրապետության վարչապետին, նախարարին, գործակալության գործունեությունը համակարգող՝ նախարարի համապատասխան տեղակալին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին: Դրա հետ մեկտեղ հստակեցված է, որ Գործակալության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, որոնք պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նույն կանոնադրությամբ հստակեցված է, որ գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը: Հատկանշական է նաև, որ 2019 թվականին իր գործունեությունն իրականացնելու համար Գործակալությանը տրամադրվել է 40.571.900 ՀՀ դրամ, որը բացառապես Գործակալության աշխատակիցների վարձատրության համար նախատեսված գումար է¹⁸⁵:

Այսպիսով, ակնհայտ է, որ ՀՀ-ում գործող լիազոր մարմինը ներկայումս չի համապատասխանում ֆինանսական անկախության անհրաժեշտ չափանիշներին, քանի որ ինքը չի ընտրում իր անձնակազմը, իսկ լինելով Արդարադատության նախարարության ստորաբաժանում՝ իրեն վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ու քաղաքացիական

¹⁸⁵ Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, Հավելված 1, Աղյուսակ 2, տող 11003: 2019 թվականի պետական բյուջեով Գործակալությանը տրամադրված գումարի՝ միայն աշխատակիցների վարձատրության համար նախատեսված լինելու հանգամանքը փաստել է նաև Գործակալության պետը:

իրավահարաբերություններին նրա մասնակցությունը ապահովում է նախարարության աշխատակազմը: Ինչ վերաբերում է Գործակալությանը պետական բյուջեի առանձին տողով ֆինանսների տրամադրմանը, ապա այն որևէ էական նշանակություն չունի, քանի որ այդ միջոցների չափն առաջարկելու, դրանք անհրաժեշտ կերպով և սեփական հայեցողությամբ կառավարելու հնարավորությունը բացակայում է:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի 52-րդ հոդվածի համաձայն՝

- ԵՄ անդամ յուրաքանչյուր պետություն պետք է ապահովի, որ յուրաքանչյուր (լիազոր) մարմնի տրամադրվեն իր համար անհրաժեշտ մարդկային, տեխնիկական կամ ֆինանսական ռեսուրսներ, հնարավորություններ և ենթակառուցվածքներ իր առջև դրված խնդիրները արդյունավետ լուծելու և լիազորությունները պատշաճ կատարելու համար, ներառյալ փոխօգնության, համագործակցության և Խորհրդում մասնակցության շրջանակներում.
- ԵՄ անդամ յուրաքանչյուր պետություն պետք է ապահովի, որ յուրաքանչյուր լիազոր մարմին ինքն ընտրի և ունենա իր անձնակազմը, որն ուղղակիորեն ենթակա է լիազոր մարմնին.
- ԵՄ անդամ յուրաքանչյուր պետություն պետք է ապահովի, որ յուրաքանչյուր լիազոր մարմին ենթակա լինի ֆինանսական հսկողության, սակայն այդ հսկողությունը չպետք է ազդի մարմնի անկախության վրա, և լիազոր մարմինը պետք է ունենա իր առանձին տարեկան բյուջեի նախահաշիվը, որը կարող է լինել ամբողջ պետության բյուջեի մաս¹⁸⁶:

Հունգարիայում լիազոր մարմինը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին տողով: Լիազոր մարմնի գրասենյակային ծախսերի հետ կապված կրճատումները կարող է իրականացնել միայն խորհրդարանը: Նախատեսված է նաև, որ նախորդ տարվա ընթացքում մարմնին հատկացված և չծախսված միջոցների մի մասը կարող է օգտագործվել հետագա ժամանակահատվածի համար՝ իր առջև դրված խնդիրները լուծելու նպատակով¹⁸⁷:

Վրաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանվել է, որ անձնական տվյալների տեսուչի և նրա աշխատակազմի գործունեությունը ֆինանսավորվում է Վրաստանի պետական բյուջեից՝ առանձին տողով: Սահմանվել է, որ առաջիկա տարվա ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) օրենքով սահմանված կարգով ներկայացնում է տեսուչը (լիազոր մարմնի ղեկավարը): Նշվում է նաև, որ տեսուչն իր լիազորությունների

¹⁸⁶ St' u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

¹⁸⁷ St' u Act CXII of 2011 on informational Self-determination and Freedom of Information, https://www.naih.hu/files/Privacy_Act-CXII-of-2011_EN_201310.pdf, article 29:

կատարման համար Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու է ստանալու դրամաշնորհներ և նվիրատվություններ: Նշված հոդվածով («Տեսուչի ֆինանսական և կազմակերպչական գործունեության ապահովումը» վերտառությամբ) սահմանվում է, որ Տեսուչն իր իրավունքներն իրականացնում և պարտականությունները կատարում է գրասենյակի միջոցով, աշխատակազմի աշխատակարգով սահմանում է աշխատակազմի կառուցվածքը, գործունեության կարգը, ինչպես նաև բաշխում է աշխատակիցների լիազորությունները: Նախատեսված է նաև, որ աշխատակազմն ուղղակիորեն վերահսկվում է տեսուչի կամ նրա հանձնարարությամբ՝ տեսուչի տեղակալի կողմից¹⁸⁸:

Մոլդովայում անձնական տվյալների պաշտպանության ազգային կենտրոնի բյուջեն քննարկվում է համապատասխան խորհրդարանական հանձնաժողովում և դրական եզրակացությունից հետո հաստատվում խորհրդարանում («Անձնական տվյալների պաշտպանության մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 19-րդ հոդված): Նույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանված է, որ տնօրենն (լիազոր մարմնի ղեկավարը) իրականացնում է կենտրոնի ընդհանուր ղեկավարումը, պետական պաշտոնի և պետական ծառայողի կարգավիճակի մասին օրենքով սահմանված կարգով ընդունում և աշխատանքից ազատում կենտրոնի աշխատողներին, սահմանում վերջինների պարտականությունները, կազմակերպում տարեկան հաշվետվությունների նախապատրաստման աշխատանքները և նշված հաշվետվությունները ներկայացնում խորհրդարանին լիազուրկում նիստերի ընթացքում¹⁸⁹:

Ուկրաինայի Հանրապետությունում մարդու իրավունքների հանձնակատարի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի առանձին տողով, իսկ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Ուկրաինայի Հանրապետության օրենքը նաև սահմանում է, որ աշխատանքների ֆինանսավորումը և անհատական տվյալների պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են Ուկրաինայի պետական բյուջեի և տեղական բյուջեների, ինչպես նաև անձնական տվյալների հետ կապված հարաբերությունների սուբյեկտների միջոցների հաշվին¹⁹⁰:

Մլովենիայի Հանրապետությունում հանձնակատարի գործունեության համար անհրաժեշտ միջոցները տրամադրվում են պետական բյուջեից և հանձնակատարի առաջարկով հաստատվում ազգային պառլամենտի կողմից¹⁹¹:

Շվեյցարիայի Համադաշնության տվյալների պաշտպանության և տեղեկատվության

¹⁸⁸ Տե՛ս Law of Republic of Georgia on Personal Data Protection, <https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf>:

¹⁸⁹ Տե՛ս Law of Republic of Moldova on Personal Data Protection, <http://www.datepersonale.md/file/Data%20Protection%20Law%20133.pdf>:

¹⁹⁰ Տե՛ս Law of Ukraine on Personal Data Protection, <https://cedem.org.ua/en/library/law-of-ukraine-on-protection-of-personal-data/>, article 26:

¹⁹¹ Տե՛ս Information Commissioner Act, <https://www.ip-rs.si/en/legislation/information-commissioner-act/>, article 5:

հանձնակատարն իր լիազորություններն իրականացնում է ինքնուրույն, ենթակա չէ իշխանության որևէ մարմնի: Նա ունի մշտական աշխատակազմ և սեփական բյուջե, ինքն է նշանակում իր աշխատակազմը¹⁹²:

Մարմնի անկախության երաշխիքը ղեկավարի նշանակման կարգի մասով

Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի նշանակման, լիազորությունների դադարման պայմանները և նրան ներկայացվող պահանջները նախատեսված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով, որի համաձայն՝ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է հինգ տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ՝ իրավապաշտպան գործունեություն իրականացնող առնվազն հինգ հասարակական կազմակերպությունների համատեղ առաջարկությունների հիման վրա: Հասարակական կազմակերպությունների՝ թեկնածություններ առաջարկելու կարգը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 02.07.2015 թ.-ի թիվ 736-Ն որոշմամբ, ըստ որի՝ հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվող թեկնածուների ցուցակը հաստատվում է հինգ հասարակական կազմակերպության համատեղ արձանագրությամբ՝ թեկնածուի գրավոր համաձայնության հիման վրա: Նշված կարգավորումներից ակնհայտ է, որ հասարակական կազմակերպությունները կարող են ներկայացնել մեկից ավելի թեկնածուներ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության վարչապետը ձեռք է բերում իրեն ներկայացված թեկնածուներից որևէ մեկին ընտրելու և նշանակելու հնարավորություն: Այս կարգավորումը խնդրահարույց է անկախության երաշխիքների համատեքստում, քանի որ ընտրություն կատարելու հնարավորության սահմանումն ինքնին ռիսկեր է պարունակում:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի 53-րդ հոդվածով նախատեսվում է՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ լիազոր մարմնի¹⁹³ յուրաքանչյուր անդամ (մարմնի ղեկավարը) ընտրվի թափանցիկ ընթացակարգով խորհրդարանի, կառավարության, պետության ղեկավարի կամ

¹⁹² St' u Federal Act on Data Protection, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19920153/index.html#id-5>:

¹⁹³ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնագրքում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի համար օգտագործվում է համարժեք «supervisory authorities» (վերահսկող մարմին) եզրույթը: Նկատի ունենալով Կոնվենցիայում և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կիրառվող տարբերակը՝ սույն զեկույցում բոլոր դեպքերում կգործածվի *լիազոր մարմին* եզրույթը:

անկախ մարմնի կողմից, որին ներպետական օրենսդրությամբ վերապահված է համապատասխան լիազորությունը¹⁹⁴:

Վենետիկի Հանձնաժողովը Հունգարիայի Հանրապետության «Տեղեկատվական ինքնորոշման իրավունքի և տեղեկատվության ազատության մասին» օրենքի վերաբերյալ տված կարծիքում ևս անդրադառնում է համապատասխան մարմնի ղեկավարի նշանակման կարգին լիազոր մարմնի անկախության տեսանկյունից: Մասնավորապես նշվում է, որ օրենքով նախատեսված նշանակման կարգը, որը վերապահված է Նախագահին, նոր մարմնի անկախությունն ավելի քիչ է ապահովում՝ նկատի ունենալով պաշտամենտի մասնակցության բացառումը: Դրա հետ մեկտեղ Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ Հունգարիան թերևս միակ երկիրը չէ, որ նախընտրել է մարմնի ղեկավարի նշանակման կարգը վերապահել բացառապես կառավարությանը, ինչը չի հակասում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը¹⁹⁵:

Վրաստանում անձնական տվյալների պաշտպանության տեսուչը նշանակվում է խորհրդարանի կողմից՝ հատուկ մրցութային հանձնաժողովի ընտրած թեկնածուներից: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված են 1) կառավարության ներկայացուցիչը, 2) խորհրդարանի մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հարցերով հանձնաժողովի նախագահը, 3) Վրաստանի գերագույն դատարանի նախագահի տեղակալը, 4) Վրաստանի օմբուդսմենը կամ նրա ներկայացուցիչը, 5) Վրաստանի օմբուդսմենի կողմից ընտրված անհրաժեշտ փորձ ունեցող անձ, որը պետք է լինի անձնական տվյալների պաշտպանության ոլորտում փորձ ունեցող հասարակական կազմակերպության անդամներից¹⁹⁶:

Մոլդովայում անձնական տվյալների պաշտպանության ազգային կենտրոնի ղեկավարը (տնօրենը) նույնպես նշանակվում է խորհրդարանի կողմից: Խորհրդարանին թեկնածու առաջադրում է խորհրդարանի նախագահը, խորհրդարանական խմբակցությունը կամ առնվազն 15 պատգամավորները (ձայների մեծամասնությամբ ընտրված անձին)¹⁹⁷: Նմանատիպ կարգավորում է գործում նաև **Լեհաստանում**, որտեղ լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է Սեյմի կողմից՝ Լեհաստանի Հանրապետության Սենատի հաստատմամբ¹⁹⁸:

¹⁹⁴ St' u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

¹⁹⁵ St' u Opinion on act CXII of 2011 on informational self-determination and freedom of information of Hungary, adopted by the Venice Commission at its 92nd plenary session (12-13 october 2012), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad\(2012\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad(2012)023-e), point 36:

¹⁹⁶ St' u Law of Georgia on Personal Data Protection, <https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf>:

¹⁹⁷ St' u Law of Republic of Moldova on Personal Data Protection, <http://www.datepersonale.md/file/Data%20Protection%20Law%20133.pdf>, article 22:

¹⁹⁸ St' u Act on the Protection of Personal Data, <file:///D:/Downloads/Act%20on%20the%20Protection%20of%20Personal%20Data.pdf>, article 34:

Ուկրաինայում անձնական տվյալների պաշտպանության պաշտպանության պաշտպանության վերահսկողությունն իրականացնում է Ուկրաինայի մարդու իրավունքների հանձնակատարը, որին ընտրում է Ուկրաինայի Գերագույն ռադան՝ Գերագույն ռադայի խոսնակի կամ պատգամավորների մեկ քառորդի առաջադրմամբ¹⁹⁹:

Անկախության երաշխիքը Լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի մասով

Լիազոր մարմնի (մարմնի ղեկավարի) պաշտոնավարման ժամկետը անմիջականորեն կապ ունի վերջինիս անկախության երաշխիքների հետ, որի հիմքում ընկած է անփոփոխելիության և կայունության տրամաբանությունը:
Ինչպես նշվեց, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է հինգ տարի ժամկետով: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է երկու անգամ անընդմեջ նշանակվելու արգելքը (Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մաս), այսինքն՝ անձը չի կարող անընդմեջ նշանակվել լիազոր մարմնի ղեկավար, սակայն յուրաքանչյուր անգամ մեկ պաշտոնավարման ժամկետ «բաց թողնելով»՝ կարող է կրկին նշանակվել:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգով հստակեցված է, որ յուրաքանչյուր անդամ պետություն պետք է սահմանի լիազոր մարմնի պաշտոնավարման ժամկետ, որը չորս տարուց նվազ չի կարող լինել, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերը պետք է պարունակեն կարգավորումներ վերանշանակման հնարավորության կամ այդ հնարավորության բացակայության մասին (հոդված 54)²⁰⁰:

Վենետիկի հանձնաժողովը Հունգարիայի «Տեղեկատվական ինքնորոշման և տեղեկատվության ազատության մասին» 2011 թ.-ի CXII ակտի վերաբերյալ կարծիքում դրական է գնահատել լիազոր մարմնի ղեկավարի նշանակումը 9 տարի ժամկետով՝ նկատի ունենալով անփոփոխելիության և կայունության սկզբունքները²⁰¹:

Ընդհանուր առմամբ միջազգային փորձի ուսումնասիրմամբ կարող ենք փաստել, որ լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը տատանվում է 3-9

¹⁹⁹ St' u Law of Ukraine on Personal Data Protection, <https://cedem.org.ua/en/library/law-of-ukraine-on-protection-of-personal-data/>, article 22:

²⁰⁰ St' u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

²⁰¹ St' u CDL-AD(2012)023-e, Opinion on Act CXII of 2011 on informational Self-determination and Freedom of Information of Hungary, adopted by the Venice Commission at its 92nd Plenary Session (Venice, 12-13 October 2012), [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2012\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2012)023-e):

տարվա սահմանում՝ վերընտրման կամ առանց վերընտրման հնարավորության:
Վրաստանում լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է երեք տարի ժամկետով²⁰²:
Լեհաստանում լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է չորս տարի ժամկետով²⁰³,
 իսկ **Մոլդովայում**՝ հինգ տարի ժամկետով²⁰⁴:
Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում դաշնային հանձնակատարի
 լիազորությունների ժամկետը հինգ տարի է²⁰⁵:
Շվեյցարիայի Համադաշնության տվյալների պաշտպանության և տեղեկատվության
 հանձնակատարը նշանակվում է Դաշնային խորհրդի կողմից չորս տարի
 ժամկետով²⁰⁶:
Սլովենիայի Հանրապետությունում տեղեկատվության լիազորը (տեղեկատվության
 հանձնակատարը) նշանակվում է հինգ տարի ժամկետով և կարող է
 վերանշանակվել ևս մեկ անգամ²⁰⁷:

Անկախության երաշխիքը Լիազոր մարմնի գործունեության իրականացման ու գործառույթների դադարման պայմանների ամրագրման մասով

Խոսելով լիազոր մարմնի գործունեության իրականացման ու գործառույթների դադարման պայմանների մասին՝ անհրաժեշտ ենք համարում խնդիրը դիտարկել երկու ասպեկտով՝

- լիազոր մարմնի ղեկավարի լիազորությունների դադարման կարգ և
- լիազոր մարմնի գործունեության դադարման կարգ:

Այսպես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «Անձնական տվյալների պաշտպանության լիազորված մարմնի ղեկավարը պաշտոնից ազատվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝ 1) գրավոր դիմումի հիման վրա, 2) լրացել է նրա 65 տարին (պաշտոնավարման տարիքը), կամ լրացել է պաշտոնավարման ժամկետը, 3) ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի, 4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին 12 ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը, 5) ավելի քան հինգ օր անընդմեջ

²⁰² Տե՛ս Law of Georgia on Personal Data Protection, <https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf>, article 26.6:

²⁰³ Տե՛ս Act on the Protection of Personal Data, <file:///D:/Downloads/Act%20on%20the%20Protection%20of%20Personal%20Data.pdf>, article 34.6:

²⁰⁴ Տե՛ս Law of Republic of Moldova on Personal Data Protection, <http://www.datepersonale.md/file/Data%20Protection%20Law%20133.pdf>, article 22:

²⁰⁵ Տե՛ս Federal Act Governing Access to Information held by the Federal Government (Freedom of Information Act), http://www.gesetze-im-internet.de/englisch_ifg/englisch_ifg.html#p0072:

²⁰⁶ Տե՛ս Federal Act on Data Protection, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19920153/index.html#id-5>:

²⁰⁷ Տե՛ս Information Commissioner Act, <https://www.ip-rs.si/en/legislation/information-commissioner-act/>:

առանց հարգելի պատճառի չի ներկայացել աշխատանքի, 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած, 7) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում»:

Ինչ վերաբերում է Լիազոր մարմնի գործունեության դադարման կարգին, ապա ՀՀ կառավարության 02.07.2015 թ.-ի թիվ 734-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրության համաձայն՝ Գործակալությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Ակնհայտ է, որ լիազոր մարմնի գործունեության դադարման կարգի նման սահմանումը չի կարող դիտարկվել որպես անկախության բավարար երաշխիք և այն անհրաժեշտ է բարեփոխել:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի 53-րդ հոդվածի համաձայն՝ լիազոր մարմնի ղեկավարի/անդամի պարտականությունները պետք է ավարտվեն նրա լիազորությունների ժամկետի ավարտով, աշխատանքից ազատվելու կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան պարտադիր կենսաթոշակի անցնելու հիմքով: Միաժամանակ սահմանվել է, որ անդամը պետք է հեռացվի պաշտոնից միայն կարգապահական լուրջ խախտում թույլ տալու դեպքում կամ եթե այլևս չի պահպանում իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ պայմանները²⁰⁸:

Մլովենիայի Հանրապետությունում հանձնակատարի գործունեությունը կարող է դադարեցվել Ազգային ժողովի կողմից, օրենքով հստակ սահմանված դեպքերում: Այլ գործունեության հետ անհամատեղելիության մասով օրենքը սահմանում է անալոգիա մարդու իրավունքների պաշտպանի հետ²⁰⁹:

Վրաստանի Հանրապետությունում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է *տեսուչի* կարգավիճակի հետ անհամատեղելի գործունեությունը: Որպես այդպիսին՝ նշվում է անդամությունը պետական և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններին, պետական ծառայության ցանկացած աշխատանք կատարելը՝ բացառությամբ գիտական, մանկավարժական կամ արվեստի ոլորտում գործունեության: Տեսուչը չի կարող լինել որևէ քաղաքական կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքականությամբ: Ընտրվելուց հետո մեկամսյա ժամկետում *տեսուչը* պարտավոր է դադարեցնել իր կարգավիճակի հետ անհամատեղելի

²⁰⁸ Տե՛ս General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

²⁰⁹ Տե՛ս Information Commissioner Act, <https://www.ip-rs.si/en/legislation/information-commissioner-act/>:

գործունեությունը: Պահանջի չկատարումը հանգեցնում է լիազորությունների վաղաժամկետ դադարման:

Տեսուչի լիազորությունների վաղաժամկետ դադարման հիմք են նաև քաղաքացիության կորուստը, չորս ամսվա ընթացքում պարտականությունները մշտապես չկատարելը, դատապարտվելը, դատարանի կողմից անհայտ կորած կամ մահացած կամ որպես աջակցության շահառու ճանաչվելը, տեսուչի հրաժարականը, մահը:

Գերմանիայի Դաշնության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի²¹⁰ 12-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դաշնային հանձնակատարի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետի ավարտով կամ հրաժարական տալով: Պառլամենտի պահանջով դաշնային նախագահը պետք է ազատի հանձնակատարին զբաղեցրած պաշտոնից, եթե վերջինս էական խախտում է թույլ տվել կամ այլևս չի համապատասխանում այն պահանջներին, որոնք անհրաժեշտ են իր առջև դրված խնդիրների լուծման համար:

Շվեյցարիայի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի²¹¹ 26-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային խորհուրդը կարող է պաշտոնից վաղաժամ ազատել հանձնակատարին, եթե նա դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտում է իր ծառայողական պարտականությունները կամ մշտապես չի կարող իրականացնել դրանք:

Մարմնի գործունեության թափանցիկությունը՝ որպես անկախության երաշխիք

Լիազոր մարմնի լիարժեք անկախության ապահովման համար բավականին կարևոր նշանակություն ունի տվյալ մարմնի հրապարակայնության և թափանցիկության պայմաններում իրականացվող գործունեությունը, քանի որ շատ ավելի բարդ է ազդել մարմնի վրա, երբ վերջինիս գործունեությունը հրապարակային է: Միաժամանակ այդպիսի պայմանները ստեղծում են հնարավորություն, որ հասարակությունը վերահսկի լիազոր մարմնի գործունեությունը՝ թույլ չտալով, որ անկախությունը վերածվի ամենաթողության: Հրապարակային և թափանցիկ գործունեությունը մի կողմից ժողովրդավարական վարչարարության իրականացման կարևոր չափանիշ է, իսկ մյուս կողմից՝ սահմանադրորեն ամրագրված սկզբունքների յուրօրինակ վերահսկողության ձև հասարակության կողմից: Անդրադառնալով լիազոր մարմնի գործունեության թափանցիկության չափանիշի ապահովվածությանը Հայաստանի Հանրապետությունում՝ պետք է նշել, որ Օրենքն այս առումով մարմնի համար նախատեսում է տարեկան մեկ անգամ հրապարակային հաշվետվության

²¹⁰ St' u Federal Data Protection Act (BDSG), https://www.gesetze-im-internet.de/englisch_bdsge/englisch_bdsge.html#p0012:

²¹¹ St' u Federal Act on Data Protection, <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19920153/index.html#id-5>:

ներկայացում անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, սակայն չի նախատեսվում հրապարակային հաշվետվության ներկայացման կարգը (ում պետք է ներկայացվի, ինչ եղանակով)²¹²:

Միջազգային իրավունք և օտարերկրյա փորձ

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի 59-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ յուրաքանչյուր լիազոր մարմին նախապատրաստում է իր գործունեության տարեկան հաշվետվությունը, որը կարող է ներառել հայտնաբերված խախտումների տեսակները և իր լիազորության սահմաններում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն: Հստակեցված է նաև, որ այդ հաշվետվությունները պետք է ներկայացվեն Ազգային պառլամենտին, կառավարությանը և ներպետական օրենսդրությամբ սահմանված այլ մարմիններին²¹³:

Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան փոփոխող արձանագրության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի բացատրական զեկույցում²¹⁴ լիազոր մարմինների գործունեության թափանցիկությունը ևս դիտարկվում է որպես գործունեության անկախության բաղադրատարր, որը կարող է իրագործվել մասնավորապես լիազոր մարմնի գործունեության տարեկան զեկույցների հրապարակման ձևով, որը, ի թիվս այլնի, պետք է տեղեկատվություն բովանդակի մարմնի իրականացրած իրավակիրառ բնույթի գործողությունների մասին (հայտնաբերված խախտումներով պատասխանատվության ենթարկելու դեպքերը, տվյալների սուբյեկտի իրավունքների խախտման դեպքերով դատարան դիմելը և այլն):

Վրաստանում տեսուչը յուրաքանչյուր տարի մեկ անգամ (ոչ ուշ, քան հաշվետու տարվա մարտի 1-ը) Վրաստանի կառավարությանը և Վրաստանի խորհրդարանին ներկայացնում է զեկույց անձնական տվյալների պաշտպանության վիճակի և տեսուչի իրականացրած գործունեության մասին: Օրենքով հստակ սահմանված է, որ տեսուչի զեկույցը պետք է պարունակի ընդհանուր գնահատականներ, եզրակացություններ և առաջարկություններ երկրում տվյալների պաշտպանության իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն տարվա ընթացքում

²¹² Գործակալությունը իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունները սկսել է հրապարակել 2016 թվականից, մասնավորապես 2016 թվականի իր հաշվետվությունը հրապարակել է առանձին, իսկ 2017 և 2018 թվականների Գործակալության գործունեության վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվել են ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ժամանակաշրջանների գործունեության հաշվետվությունների հետ մեկ փաստաթղթով:

²¹³ St' u General Data Protection Regulation, <https://gdpr-info.eu/>:

²¹⁴ St' u Council of Europe Treaty Series - No. 223 Explanatory Report to the Protocol amending the Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data, <https://rm.coe.int/16808ac91a>:

հայտնաբերված էական խախտումների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ²¹⁵:

Ուկրաինայում մարդու իրավունքների հանձնակատարը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին իր տարեկան զեկույցում ներառում է նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտին վերաբերող հարցերը:

Մոլդովայում կենտրոնը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 15-ը, խորհրդարանին, Մոլդովայի Հանրապետության նախագահին և կառավարությանը ներկայացնում է նախորդ տարվա գործունեության վերաբերյալ զեկույց, որն անվճար տպագրվում է Մոլդովայի Հանրապետության պաշտոնական մոնիտորում և կենտրոնի համացանցային էջում²¹⁶:

Գերմանիայի Դաշնությունում դաշնային հանձնակատարը պարտավոր է տարեկան զեկույցով հանդես գալ խորհրդարանում և այն հասանելի դարձնել հանրության համար: Դրանում կարող են ներառվել հայտնաբերված խախտումները և դրանց վերացման համար ձեռնարկված միջոցները²¹⁷:

Առաջարկություններ

1. Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հանել ՀՀ արդարադատության նախարարության կազմից՝ ստեղծելով ինքնավար մարմին՝ ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածին համապատասխան²¹⁸: Ըստ այդմ.

- պահպանելով քաղաքացիական հասարակության մասնակցության կարգավորումները²¹⁹ Գործակալության ղեկավարի թեկնածուության առաջադրման հարցում՝ լիազոր մարմնի ղեկավարի նշանակումը վերապահել Ազգային ժողովին.
- երկարաձգել լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնավարման համար նախատեսված ժամկետը՝ բացառելով վերընտրման հնարավորությունը.
- օժտել լիազոր մարմնին արտաքին միջամտությունից զերծ մնալու անհրաժեշտ երաշխիքներով, այդ թվում՝ լիազոր մարմնի ղեկավարին տալ ինքնուրույն իր անձնակազմն ընտրելու և նշանակելու իրավասություն՝ սահմանելով Գործակալության գործունեությանը օրենքով չնախատեսված ցանկացած

²¹⁵ Տե՛ս Law of Republic of Georgia on Personal Data Protection, <https://matsne.gov.ge/en/document/download/1561437/5/en/pdf>, article 38:

²¹⁶ Տե՛ս Law of Republic of Moldova on Personal Data Protection, <http://datepersonale.md/file/Data%20Protection%20Law%20133.pdf>, article 21:

²¹⁷ Տե՛ս Federal Data Protection Act (BDSG), https://www.gesetze-im-internet.de/englisch_bds/englisch_bds.html#p0012, article 15:

²¹⁸ Ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով, որ թե՛ տեղեկատվության ազատության և թե՛ անձնական տվյալների պաշտպանության ոլորտները մշտապես բախվող և միմյանց հավասարակշռող իրավակարգավորումներ են պարունակում և գործակալությունն իր լիազորություններն իրականացնելիս հաճախ անդրադառնում է տեղեկատվության ազատության սահմանափակմանը վերաբերող հարցերին և նկատի ունենալով պետական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործելու հանգամանքը, գտնում ենք, որ կարող է քննարկվել տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության մեկ միասնական լիազոր մարմին ստեղծելու հնարավորությունը:

²¹⁹ Այս գործընթացին կարող է մասնակից դարձվել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

միջամտության համար քրեական պատասխանատվության, իսկ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, պարզաբանումներ չտրամադրելու համար՝ վարչական պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև հստակեցնել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքի պահանջների խախտման դեպքում սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու կարգավորումները: Լիազոր մարմնի լիակատար անկախության ապահովման համատեքստում անհրաժեշտ է նախատեսել ինչպես լիազոր մարմնի ղեկավարի, այնպես էլ աշխատակազմի գործունեության անձեռնխելիության երաշխիքներ:

- լիազոր մարմնին օժտել նաև իրական ֆինանսական անկախությամբ՝ նախատեսելով, որ լիազոր մարմնի ղեկավարը օրենսդրությամբ սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ներկայացնում է պետական լիազորված մարմնին պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: Ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) կառավարության կողմից ընդունվելու դեպքում պետք է ընդգրկվի պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվի Ազգային ժողով, ընդ որում, Կառավարությունն Ազգային ժողով և լիազոր մարմնին պետք է ներկայացնի բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը: Որպես լիազոր մարմնի գործունեության իրական երաշխիք՝ անհրաժեշտ է սահմանել նաև դրույթ, ըստ որի՝ ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

- անհրաժեշտ է նաև բարձրացնել լիազոր մարմնի թափանցիկության մակարդակը՝ սահմանելով, որ լիազոր մարմնին իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացնի ՀՀ Ազգային ժողովին՝ հստակ նախատեսելով յուրաքանչյուր տարվա համար հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը: Կարևորելով Գործակալության հրապարակային և թափանցիկ գործելու անհրաժեշտությունը՝ լիազոր մարմնի համար պետք է նախատեսվեն միջոցներ առանձին կայք ստեղծելու և իր գործունեությունն առավել հրապարակային դարձնելու ուղղությամբ:

- ամբողջությամբ վերանայել լիազոր մարմնի գործունեության դադարման կարգի հետ կապված իրավակարգավորումները՝ դրանք սահմանելով Օրենքով:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանել այն չափանիշները, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն կընձեռեն հավասարակշռելու տեղեկատվության ազատության և դրա սահմանափակումները նախատեսող

նորմերն այդ թվում տվյալների փոխանցման (տեղեկատվության տրամադրման) գործընթացում՝ այսպիսով կանխելով անձնական տվյալների մշակման (հրապարակման) օրենսդրական դաշտի և տարբեր իրավիճակներում առանձին օրենքների դրույթների միջև առաջացող հակասությունները: Նկատի ունենալով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում առաջարկվող հանրային շահի թեստը վերաբերում է այն անձնական տվյալներին, որոնք բովանդակում են անձնական կյանքի գաղտնիք, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել հանրային շահով պայմանավորված անձնական կյանքի գաղտնիք չհանդիսացող, այլ ոչ հանրամատչելի անձնական տվյալներն առանց տվյալների սուբյեկտի համաձայնության հրապարակելու (այլ կերպ մշակելու) հնարավորությունը:

✓ Վերացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա սահմանափակումները մասնավոր անձանց իրականացրած ձայնագրությունների, տեսագրությունների թույլատրելիության վերաբերյալ:

✓ Օրենսդրական կարգավորումների միջոցով Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հանել ՀՀ արդարադատության նախարարության կազմից՝ ստեղծելով ինքնավար մարմին՝ ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածին համապատասխան: Ըստ այդմ.

պահպանելով քաղաքացիական հասարակության մասնակցության կարգավորումները Գործակալության ղեկավարի թեկնածուության առաջադրման հարցում՝ լիազոր մարմնի ղեկավարի նշանակումը վերապահել Ազգային ժողովին.

երկարաձգել լիազոր մարմնի ղեկավարի պաշտոնավարման համար նախատեսված ժամկետը՝ բացառելով վերընտրման հնարավորությունը.

օժտել լիազոր մարմնին արտաքին միջամտությունից զերծ մնալու անհրաժեշտ երաշխիքներով, այդ թվում՝ լիազոր մարմնի ղեկավարին տալ ինքնուրույն իր անձնակազմն ընտրելու և նշանակելու իրավասություն, սահմանել Գործակալության գործունեությանը օրենքով չնախատեսված ցանկացած միջամտության համար քրեական պատասխանատվության, իսկ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, պարզաբանումներ չտրամադրելու համար՝ վարչական պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև հստակեցնել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման դեպքում սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու կարգավորումները: Լիազոր մարմնի լիակատար անկախության ապահովման համատեքստում անհրաժեշտ է նախատեսել ինչպես լիազոր մարմնի ղեկավարի, այնպես էլ աշխատակազմի գործունեության անձեռնմխելիության երաշխիքներ.

լիազոր մարմնին օժտել նաև իրական ֆինանսական անկախությամբ՝ նախատեսելով, որ լիազոր մարմնի ղեկավարը օրենսդրությամբ սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը

(նախահաշիվը) ներկայացնում է պետական լիազորված մարմինն պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: Ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) կառավարության կողմից ընդունվելու դեպքում պետք է ընդգրկվի պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում՝ պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվի Ազգային ժողով, ընդ որում, Կառավարությունն Ազգային ժողովին և լիազոր մարմնին պետք է ներկայացնի բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը: Որպես լիազոր մարմնի գործունեության իրական երաշխիք՝ անհրաժեշտ է սահմանել նաև դրույթ, ըստ որի՝ ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

բարձրացնել լիազոր մարմնի թափանցիկության մակարդակը՝ սահմանելով, որ լիազոր մարմնին իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացնի ՀՀ Ազգային ժողովին՝ հստակ նախատեսելով յուրաքանչյուր տարվա համար հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը: Կարևորելով Գործակալության հրապարակային և թափանցիկ գործելու անհրաժեշտությունը՝ լիազոր մարմնի համար պետք է նախատեսվեն միջոցներ առանձին կայք ստեղծելու և իր գործունեությունն առավել հրապարակային դարձնելու ուղղությամբ:

ամբողջությամբ վերանայել լիազոր մարմնի գործունեության դադարման կարգի հետ կապված իրավակարգավորումները՝ դրանք սահմանելով Օրենքով:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդիր 1

Խնդրի նկարագրությունը

Գործող Քրեական դատավարության օրենսգրքով չի սահմանվում *նախնական քննության տվյալ* հասկացությունը, և որոշակիացված չեն այն դեպքերը, երբ այդ տվյալները կարող են (կամ չեն կարող) հրապարակվել. միաժամանակ այս հարցի կապակցությամբ գործում է տեղեկատվության սահմանափակման, այլ ոչ ազատության կանխավարկածը: Գործող Քրեական օրենսգրքի կարգավորումները ևս խիստ թերի են, մասնավորապես քննության տվյալները հրապարակելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթի դիսպոզիցիան թույլ է տալիս, որ պատասխանատվությունը վրա հասնի քննության տվյալը հրապարակելու համար անկախ դրա մասին նախազգուշացված լինել-չլինելու հանգամանքից և անկախ տեղեկատվությունը 3-րդ աղբյուրից (ոչ վարույթ իրականացնող մարմնից) ստացած լինել-չլինելու հանգամանքից:

Վերլուծություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝
«1. Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:
2. Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերակներին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին»:
Մեջբերված իրավական նորմերից բխում է, որ օրենքը չի սահմանում, թե որ տվյալը պետք է համարվի նախնական քննության տվյալ, ինչպես նաև չկա որևէ հստակ չափանիշ, թե որ դեպքերում վարույթ իրականացնող մարմինը տվյալը կարող է գնահատել հրապարակման կամ այն հայցող կողմին տրամադրման ոչ ենթակա: Մինևույն ժամանակ աննպատակ է ըստ անհրաժեշտության տվյալները չհրապարակելու պարտականության մասին գրավոր նախազգուշացնելու ընթացակարգն այն դեպքում, երբ քրեական պատասխանատվությունը, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի, կարող է վրա հասնել նախաքննության տվյալը հրապարակելու համար՝ **անկախ նախազգուշացված լինել-չլինելու հանգամանքից:**
Քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները հաստատելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 28.12.2012 թ.-ի հրամանով որոշակի կարգով սահմանվում է

մինչդատական վարույթի ընթացքում տեղեկատվություն տրամադրելու կարգը, սակայն միայն դատախազի կողմից և միայն զանգվածային լրատվության միջոցներին: Ըստ այդ կարգի՝ «Մինչդատական վարույթի ընթացքում, դատախազությունը, հնարավորության դեպքում, պետք է աջակցի ՋԼՄ-ներին տեղեկություն տրամադրելու հարցում՝ արձանագրելով, որ տրամադրվող տեղեկությունը նախնական է՝ հիմնված այդ պահին վարույթն իրականացնող մարմնի ձեռք բերած փաստական տվյալների վրա: Դատախազությունը կարող է չհրապարակել ՋԼՄ-ների կողմից հարցվող տեղեկությունը, եթե դրա հրապարակումը կարող է վտանգել նախնական քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը, լրիվությունը, դատավարության մասնակիցների անվտանգությունը, անմեղության կանխավարկածը, խախտել այլ անձանց իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը, անձնական ու ընտանեկան կյանքը: Նախնական քննության ավարտի, որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի, մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին տեղեկությունը պետք է տրամադրվի կատարված հարցման հիման վրա՝ օրենքով սահմանված ժամկետում: Մինչդատական վարույթի փուլում դատախազությունը կարող է չհրապարակել կասկածյալի, մեղադրյալի անուն-ազգանունը (...):»:

Ակնհայտ է, որ ներկայիս օրենսդրության պայմաններում, երբ չկա սահմանված որևէ չափանիշ, որով առաջնորդվելով՝ վարույթ իրականացնող մարմինը պետք է որոշի, թե որ տվյալները կարող են հրապարակվել, և որոնք՝ ոչ, իսկ **օրենսդրությունը, որպես ընդհանուր կանոն, ամրագրում է տեղեկատվության գաղտնիության, այլ ոչ հրապարակայնության կանխավարկածը**, գոյություն չունի վարույթ իրականացնող մարմնի կամայականությունից զերծ մնալու որևէ երաշխիք:

Ինչ վերաբերում է տվյալները հրապարակելու համար սահմանված պատասխանատվությանը, ապա այն ամրագրող դրույթը ևս բավարար չափով որոշակի չէ այնքանով, որքանով չի նախատեսում հանցագործության հատուկ սուբյեկտների շրջանակ, մասնավորապես անձանց, որոնց անմիջականորեն նախաքննության մարմինն է հայտնի դարձրել նախնական քննության տվյալները: Այդ առումով առավել հստակ կարգավորում և ավելի մեծ երաշխիքներ էր պարունակում անգամ նախկին օրենսդրությունը՝ սահմանելով, որ Քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածով (ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդված) պատասխանատվություն է առաջ բերում **միայն** տվյալներ չհրապարակելու մասին **նախազգուշացված լինելու վերաբերյալ ստորագրության խախտումը**, ինչը ենթադրում է, որ քրեական պատասխանատվության կարող էր ենթակա լինել միայն այն սուբյեկտը, որն օրենքով սահմանված կարգով է ստացել հասանելիություն նախաքննական տվյալին:

Նշված խնդիրներով պայմանավորված՝ գործող կարգավորումների պայմաններում նախաքննական տվյալ կարող է համարվել ցանկացած տվյալ, որը հայտնվել է վարույթ իրականացնող մարմնի տնօրինության տակ, այլ ոչ այն տվյալը, որը վարույթի մասնակիցը, մասնակցող անձը և այլք ստացել են հենց վարույթ իրականացնող մարմնից, իսկ քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել ոչ միայն այն անձը, որը ստորագրել է տեղեկատվությունը

չիրապարակելու նախագուշացումը, կամ որի համար տվյալն անմիջապես հասանելի է դարձրել վարույթ իրականացնող մարմինը, այլն ցանկացած անձ, որին թեկուզև ոչ անմիջականորեն (3-րդ աղբյուրից) է հասու դարձել նախնական քննության տվյալը: Նման կարգավորումները ոչ միայն խախտում են անձի տեղեկատվության ազատության իրավունքը, այլ նաև չեն հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, հատկապես վերջին դեպքում, երբ սահմանվում է քրեական պատասխանատվություն այն անձանց համար, որոնք տեղեկատվության արտահոսքի աղբյուր չեն հանդիսացել, այլ հրապարակել են տվյալներ, որոնք ձեռք են բերել օրենքով չարգելված եղանակով 3-րդ աղբյուրից: Վերջին խնդիրը արձանագրել է նաև Մարդու իրավունքների պաշտպանը՝ անդրադառնալով գործնականում առաջացած խնդրին, երբ քրեական գործ էր հարուցվել ՋԼՄ-ի՝ արտահոսքի հետևանքով հասու դարձած տեղեկատվության հրապարակման դեպքի առթիվ²²⁰:

²²⁰ ««Ժողովուրդ» օրաթերթի հետ կապված իմ անհապաղ միջամտության անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ Հատուկ քննչական ծառայության կողմից քրեական վարույթ նախաձեռնելու հիմք է ծառայել, ըստ ծառայության պաշտոնական հաղորդագրության, հենց Ձեր լրատվամիջոցի կողմից նախաքննության գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման փաստն այն պարագայում, երբ այդ ցուցմունքների՝ որպես ոչ հանրամատչելի տեղեկության պաշտպանվածությունն արդեն իսկ խախտվել է այն մասով, որ դրանք երրորդ անձը լրատվամիջոցին արդեն հասանելի էր դարձրել: (...)

6. Նախաքննության մարմնի հրապարակային հայտարարությունն առերևույթ վկայում էր, որ նախաքննության գաղտնիքի հրապարակմանը՝ որպես արդարադատության դեմ ուղղված քրեորեն հետապնդելի արարքին պետական արձագանքը կոնկրետ դեպքում տրվում է ոչ թե տեղեկատվության սկզբնական կրողի՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի գործողություններին պատշաճ քրեաիրավական գնահատականով, այլ լրատվամիջոցին ուղղված եղանակով, ինչն անթույլատրելի է:

7. Այս նկատառումը որոշակիորեն ամրապնդվում է հենց Հատուկ քննչական ծառայության հայտարարությամբ խնդրո առարկա տեղեկությունների գաղտնիությունը խախտած անձի կամ անձանց արարքների ոչ քրեաիրավական բնորոշումներով՝ դրանք որակելով իբրև «դատավարության որոշ անբարեխիղճ մասնակիցների կողմից տեղեկությունների արտահոսք»: 8. Լրատվական գործունեություն իրականացնողին քրեական վարույթին ներքաշելու հնարավոր նման միտումները չեն կարող լինել ընդունելի՝ հաշվի առնելով նաև լրագրողական գործունեության պաշտպանվածությունն ու երաշխիքները հենց քրեական գործերով վարույթներում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է լրագրողի կողմից տեղեկատվության աղբյուրը չբացահայտելուն՝ բացառությամբ, երբ այդպիսի բացահայտումն անհրաժեշտ է «անձի կյանքի պաշտպանության», «ծանր հանցագործության կանխման», «ծանր հանցագործության մեջ մեղադրվող կամ դատապարտված անձի պաշտպանության» համար: 9. Ավելին՝ լրագրողի՝ որպես հատուկ պաշտպանության ենթակա մասնագիտական գործունեություն իրականացնողի գործոնից զատ՝ խնդրո առարկա վարույթի նախաձեռնումը կարող է չփարատված մտահոգություն թողնել՝ կապված նախաքննության գաղտնիքի հրապարակման քրեաիրավական եւ քրեադատավարական կարգավորումներին անհամապատասխանության առումով: 10. Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության կանխավարկածն ամրագրելով հանդերձ, միաժամանակ սահմանում է վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին եւ քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերակներին, պաշտպաններին եւ գործին մասնակցող այլ անձանց նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չիրապարակելու պարտականության մասին գրավոր նախագուշացնելու կառուցակարգը: Հետևաբար, քրեական օրենքի արգելքի շրջանակը պետք է կանխորոշվի քրեադատավարական կարգավորումներով: Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա հանցակազմի սուբյեկտ կարող է լինել միայն այն անձը, ով

Նույն խնդրին, ինչպես նաև *նախաքննության տվյալ* հասկացության խնդրին Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձել է դեռևս 2014 թ.-ին հրապարակված զեկույցում²²¹:

Խնդրի շուրջ իր դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 24.01.2012 թ.-ի թիվ ՍԴՈ-1008 որոշմամբ՝ քննելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը և արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ: Այս առնչությամբ հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրների (Էստոնիա, Սերբիա և այլն) քրեական դատավարության օրենսգրքերը հստակ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Այս ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում»:

Նախաքննության տվյալների հրապարակման կապակցությամբ առավել առաջադեմ և գրեթե բավարար երաշխիքներ է պարունակում շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը: Մասնավորապես Նախագծի 186-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Վարույթի մասնավոր մասնակիցները, վկան և նրա փաստաբանն իրավունք ունեն հրապարակելու պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրենց

նախաքննության տվյալներին հասանելիություն է ունեցել դատավարական կամ այլ՝ նախաքննության գաղտնիքին անմիջական ծանոթացում ենթադրող կարգավիճակի ուժով: Հակառակ մոտեցումը կհակասի ոչ միայն քրեադատավարական դրույթի տրամաբանությանը, այլև ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու ազատ գործելու իրավունքին, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:

²²¹ «Թերի օրենսդրական կարգավորումների արդյունքում նախնական քննության տվյալները բացահայտելու դեպքում անձինք, ներառյալ լրագրողները, կարող են պատասխանատվության ենթարկվել նույնիսկ այն դեպքում, երբ գրավոր չեն նախագուշակվել տվյալները չբացահայտելու մասին: Պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան կարգավորումները հնարավորություն են ստեղծում քրեական պատասխանատվության ենթարկել ցանկացած անձի, ով, առանց գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվության հրապարակել է նախաքննության կամ հետաքննության տվյալ հանդիսացող տեղեկությունը»:

հայտնի դարձած նախաքննության տվյալները, **եթե քննիչը** սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր **չի արգելել դրանց հրապարակումը**: Այս դեպքում **քննիչը պարտավոր է** վարույթի մասնավոր մասնակցին, վկային և նրա փաստաբանին **գրավոր նախազգուշացնել նախաքննության տվյալների հրապարակման համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին**:

2. Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝

1) խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին.

2) դառնալ հանցանքի կատարման պատճառ.

3) վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը.

4) հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման:

3. Նախաքննության տվյալների հրապարակման՝ սույն հոդվածով սահմանված արգելքները **չեն տարածվում փաստաբանի և նրա վստահորդի միջև տեղեկությունների փոխանակման վրա**»:

Հոդվածի 1-ին մասից բխում է, որ **նախաքննության տվյալը** հոդվածի իմաստով այն տվյալն է, որը հասանելի է դարձել վարույթի մասնավոր մասնակիցներին, վկային և փաստաբանին **վարույթի շրջանակում և ընթացքում, այլ ոչ դրանից դուրս**: Գործածվող ձևակերպումները ինքնաբերաբար հստակեցնում են նաև այն անձանց շրջանակը, որոնք կարող են պատասխանատվության ենթարկվել հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը հրապարակելու համար, այն է՝ **վարույթի մասնավոր մասնակիցները** (տուժող, մեղադրյալ և այլք), **վկան և նրա փաստաբանը**: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով նաև քննիչի՝ տվյալները չհրապարակելու պարտականության մասին վարույթի մասնակիցներին գրավոր նախազգուշացնելու օրենքի պարտադիր պահանջը, անհրաժեշտ ենք համարում փոփոխություն նախատեսել նաև գործող ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում և որպես հանցագործության սուբյեկտ հստակ սահմանել վարույթի՝ բացառապես գրավոր նախազգուշացված մասնակցին, վարույթին մասնակցող անձանց, իսկ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ ուժի մեջ մտնելու դեպքում՝ վարույթի մասնավոր և օժանդակող մասնակցին (կապված սուբյեկտների փոփոխության հետ):

Հոդվածի 2-րդ մասը պարունակում է բավարար երաշխիքներ տվյալը տնօրինողի՝ այն հրապարակելուց հրաժարվելու կամայականությունից զերծ մնալու համար՝ հաշվի առնելով այն, որ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է նաև ցանկացած դատավարական որոշման պատճառաբանվածության պահանջ:

Ինչ վերաբերում է 3-րդ մասին, ապա գտնում ենք, որ այն պետք է լրացվի և նախատեսի, որ սահմանված արգելքները **չեն տարածվում նաև այն դեպքերի վրա, երբ տվյալները հրապարակվում են նշված քրեական գործին առնչվող դատական նիստի, այդ թվում՝ դոմբաց դատական նիստի շրջանակում, օգտագործվում են նշված քրեական գործով կամ դրանից անջատված քրեական գործով միջնորդությունների, դիմումների, բողոքների և այլ դատավարական փաստաթղթերի բովանդակության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կամ միջազգային կառույցներին և դատական ատյաններին ուղղված փաստաթղթերում**:

Նշված կարգավորման անհրաժեշտության մասին է խոսում նաև այն, որ նման կարգավորումներն արդեն իսկ տեղ են գտել նման դատավարական օրենսդրություն և նախաքննության կառուցակարգ ունեցող օտարերկրյա օրենսդրություններում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 161):

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

1/ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (չսպասելով նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդունմանը) 201-րդ հոդվածը շարադրել այժմ շրջանառության մեջ դրված նախագծի 186-րդ հոդվածի բովանդակությամբ՝ դրա 3-րդ մասում կատարելով հետևյալ լրացումը՝ նախատեսել, որ սահմանված արգելքները չտարածվեն նաև այն դեպքերի վրա, երբ տվյալները հրապարակվում են նշված քրեական գործին առնչվող դատական նիստի, այդ թվում՝ դռնբաց դատական նիստի շրջանակում, օգտագործվում են նշված քրեական գործով կամ դրանից անջատված քրեական գործով միջնորդությունների, դիմումների, բողոքների և այլ դատավարական փաստաթղթերի բովանդակության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կամ միջազգային կառույցներին և դատական ատյաններին ուղղված փաստաթղթերում.

2/ Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում որպես հանցագործության սուբյեկտ հստակ սահմանել վարույթի՝ բացառապես գրավոր նախազգուշացված մասնակիցներին և վարույթին մասնակցող անձանց, իսկ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ ուժի մեջ մտնելու դեպքում (կապված սուբյեկտների փոփոխության հետ)՝ վարույթի մասնավոր և օժանդակող մասնակիցներին:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ (283-րդ հոդված, 289.4-րդ հոդված, 288-րդ հոդված) սահմանում են ձերբակալման դեմ ներկայացված բողոքների, որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների, դրանց կապակցությամբ կայացված որոշումների դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննարկման դռնփակ ռեժիմ, իսկ կայացված որոշումները չեն հրապարակվում դատական տեղեկատվական համակարգում, քանի որ դրանց հրապարակումը չի նախատեսվում Բարձրագույն դատական խորհրդի ընդունած որոշմամբ:

Վերլուծություն

Արդար դատաքննության իրավունքի երաշխիքները ամրագրող ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, **հրապարակային** և **նոջամիտ** ժամկետում քննության իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է դատական քննության հրապարակայնության սկզբունքից շեղումների պայմանները, այն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով: Այլ կերպ ասած՝ Սահմանադրության պահանջն է, որ յուրաքանչյուր անգամ դատական վարույթի հրապարակայնությունը սահմանափակելու համար պետք է առկա լինեն հետևյալ պայմանները՝ 1/ օրենսդրորեն սահմանված դեպքը, 2/ դատարանի որոշումը (վարույթը կամ դրա մի մասը դոմինանտ իրականացնելու մասին), 3/ Սահմանադրությամբ նշված նպատակներից մեկը, այդ թվում՝ արդարադատության շահը: Դատական քննության հրապարակայնության սահմանափակման մեծ մասով համընկնող հիմքեր է նախատեսում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 16-րդ հոդվածում՝ ի թիվս այլնի նման հիմք դիտարկելով նաև արդարադատության շահը:

Մինևույն ժամանակ, ինչպես նշվեց, օրենսգրքի մի շարք դրույթներ (283-րդ հոդված, 289.4-րդ հոդված և 288-րդ հոդված) սահմանում են ձեռքարկված դեմ ներկայացված բողոքների, որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների, դրանց կապակցությամբ կայացված որոշումների դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննարկման դոմինանտ ռեժիմ, իսկ կայացված որոշումները չեն հրապարակվում դատական տեղեկատվական համակարգում, քանի որ դրանց հրապարակումը չի նախատեսվում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված որոշմամբ: Թեև որոշ դեպքերում նշված գործերի քննության հրապարակայնության սահմանափակումն իհարկե հնարավոր է արդարացնել արդարադատության շահի, նշված դեպքում՝ նախաքննության գաղտնիքի պահպանման նպատակով, սակայն դատաքննության հրապարակայնությունը բացարձակապես սահմանափակող օրենսդրական կարգավորումների նման իմպերատիվ բնույթը չի ապահովում Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված՝ դատաքննության հրապարակայնության երաշխիքը: Նման իրավակարգավորման պայմաններում դատարանին այդ սահմանափակումը կիրառելու կամ չկիրառելու որևէ հայեցողություն չի թողնվում՝ զրկելով նրան յուրաքանչյուր դեպքում սահմանափակման անհրաժեշտությունը, դրա հիմքերի առկայությունը գնահատելու հնարավորությունից: Այս առումով հատկանշական է, որ օրենսդիրը Քրեական դատավարության օրենսգրքում չի սահմանել նույն ձեռքարկված որոշումների, կալանավորման և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունների քննության գործերով ներկայացված վճռաբեկ բողոքների քննության դոմինանտ ռեժիմ, ինչը ևս խոսում է հոգուտ այն փաստարկի, որ քննարկվող հիմքով քննության հրապարակայնության սահմանափակումները պետք է հիմնավորված և արդարացված լինեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, և սահմանափակման կիրառման որոշումը պետք է թողնված լինի դատարանի հայեցողությանը:

Ինչպես նախորդ խնդրի, այնպես էլ քննարկվողի դեպքում ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը արձանագրել է որոշակի առաջընթաց: Նախագծի 287-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննության դատական նիստը դռնբաց է, եթե վարույթ հարուցելու մասին դատարանի որոշման մեջ դատարանը չի որոշել անցկացնել դռնփակ նիստ: Նախագիծը չի պարունակում դրույթ նաև ձերբակալման որոշումների վիճարկման վարույթի դռնփակության մասին:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
 Խափանման միջոցի կիրառման միջնորդությունները դռնբաց դատական նիստում քննարկելու ընդհանուր կանոնն ամրագրված է Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 206), դրանց քննարկման նիստերը, ընդհանուր կանոնի համաձայն, դռնբաց են ըստ Էստոնիայի, Լեհաստանի և Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքերի:

Առաջարկություններ
 Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ, 289.4-րդ և 288-րդ հոդվածներից հանել դատական քննության դռնփակ լինելը սահմանող դրույթները՝ որպես ընդհանուր կանոն սահմանելով դատական քննության դռնբացությունը:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն
 «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով և Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշումներով, բացի ըստ էության քննվող քրեական գործերից, չի սահմանվում մյուս՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի, այդ թվում՝ ձերբակալման դեմ ներկայացված բողոքների, կալանավորման և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունների քննության գործերի, դրանց ընթացքի մասին տեղեկությունները, արդյունքում կայացված որոշումները՝ դատական իշխանության կայքում/դատական տեղեկատվական համակարգում լրացնելու և հրապարակելու կարգ:

Վերլուծություն
 «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը սահմանում է, որ դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը՝ եզրափակիչ դատական ակտերը, իսկ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում (11-րդ հոդվածի 6-րդ մաս): Բարձրագույն դատական խորհրդի՝ 2018 թ. -ի թիվ ԲԴԽ-36-Ո-95 որոշումը (2-րդ մաս, 2.16 կետ)²²² համակարգում հրապարակման ենթակա որևէ այլ դատական

²²² Տե՛ս <http://new.court.am/storage/uploads/files/bdx-decisions/pIMNyTopQc2e8SFN0exUYg9TNK8OCXi7vbrKMu9R.pdf>:

ակտ, քան սահմանում է Դատական օրենսգիրքը, չի նախատեսում, այդ թվում՝ չի սահմանում կալանավորման/դրա ժամկետը երկարացնելու/կալանքը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների քննության արդյունքներով կայացված որոշումների, ձերբակալման որոշումների, նաև նախաքննության, հետաքննության, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, դատախազության որոշումների, գործողությունների, անգործության դեմ ներկայացված բողոքների քննության, ինչպես նաև այդ գործերով ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության արդյունքում կայացված որոշումների հրապարակման պարտականություն:

Նույն կերպ թե՛ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, թե՛ Դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու մասին Բարձրագույն դատական խորհրդի՝ 06.09.2018 թ.-ի թիվ ԲԴԽ-36-Ո-95 և Դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը սահմանելու մասին 06.09.2018 թ.-ի թիվ ԲԴԽ-36-Ո-94 որոշումները²²³ հստակորեն չեն սահմանում այն գործերի շրջանակը, որոնց ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լրացվի դատական իշխանության պաշտոնական կայքում/դատական տեղեկատվական համակարգում: Միննույն ժամանակ թիվ ԲԴԽ-36-Ո-94 որոշման մի շարք դրույթներից անուղղակիորեն բխում է, որ դրանում խոսքն ըստ էության քննվող գործերի մասին է (տե՛ս 6-րդ և 10-րդ կետերը): Այլ կերպ ասած՝ դատական իշխանության www.court.am կայքում և «Դատալեքս» տեղեկատվական համակարգում²²⁴ հրապարակվում են 5 տեսակի՝ քաղաքացիական, քրեական (ըստ էության քննվող), վարչական, վճարման կարգադրությունների և սնանկության գործերի ու դրանց ընթացքի վերաբերյալ տվյալներ: Մինչդրաց և վարույթում դատական վերահսկողության շրջանակում ներկայացված (ձերբակալման, քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելը մերժելու և այլ որոշումների դեմ) բողոքների քննության, կալանավորման/դրա ժամկետը երկարացնելու/կալանքը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների քննության գործերի վերաբերյալ տվյալներ կայքը չի պարունակում, և չկա այդ գործերի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու պարտականություն սահմանող որևէ իրավական նորմ: Այս առումով առավել խնդրահարույց է հարցի կապակցությամբ ՀՀ դատական դեպարտամենտ կատարված հարցմանն ի պատասխան ներկայացված պարզաբանումը, համաձայն որի՝ նշված գործերը քննվում են դռնփակ ռեժիմով, և դրանք ու դրանցով ընդունվող ակտերը դատական տեղեկատվական համակարգում չեն հրապարակվում կարևորելով նախաքննության փուլի գաղտնիությունը, այնինչ բացի ձերբակալման դեմ ներկայացված բողոքների և կալանավորման/դրա ժամկետը երկարացնելու/այն գրավով փոխարինելու մասին միջնորդությունների քննության գործերից՝ մյուս քննարկվող գործերի քննությունը, ըստ օրենքի, իրականացվում է դռնբաց:

²²³ Տե՛ս <http://new.court.am/storage/uploads/files/bdx-decisions/pIMNyTopQc2e8SFN0exUYg9TNK8OCXi7vbrKMu9R.pdf>, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=96440>:

²²⁴ Տե՛ս <http://acts.court.am/?app=AppCaseSearch>:

Քննարկվող իրավիճակը խիստ խնդրահարույց է, քանի որ ինչպես մյուս գործերի, այնպես էլ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի վերաբերյալ հասանելի տեղեկատվություն ունենալու անհրաժեշտությունը ևս բխում է դատական քննության հրապարակայնության՝ սահմանադրորեն և օրենսդրորեն ամրագրված դատավարական սկզբունքից, որը ոչ միայն արդար դատաքննության երաշխիքներից է դատավարության կողմերի համար, այլ նաև տեղեկատվության մատչելիության ապահովման կարևոր երաշխիք է հանրության համար: Նշված տեղեկատվության հրապարակայնությունն ու հանրամատչելիությունը հանրության համար չափազանց կարևոր են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող, հետաքննության և նախաքննության մարմինների, դատախազության՝ հանցավորության դեմ պայքարի շրջանակում գործունեության արդյունավետության, օրինականության, մարդու իրավունքների խախտման դեպքերի, այդ օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության վերաբերյալ պատկերացում կազմելու տեսանկյունից, ինչպես նաև առհասարակ այս ոլորտում դատական համակարգի գործունեության նկատմամբ արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնելու նպատակով: Հատկապես կարևոր է ձեռքարկված որոշումների դեմ ներկայացված բողոքների, կալանավորման և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունների, ինչպես նաև կալանքն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների (գրավի անթույլատրելիության վերանայում) կապակցությամբ քննվող/քննված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության հանրամատչելիությունը, որի առավել մեծ կարևորությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ խափանման միջոց կալանավորումը որպես կանոն կիրառելու և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ կայացված բազմաթիվ վճիռներով փաստված արատավոր պրակտիկայի, այդ պրակտիկայի փոփոխության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով հանրության համար առավել լայն հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությամբ: Մինևույն ժամանակ, սակայն, հարկ է փաստել, որ վերջին խումբ գործերով (ձեռքարկված դեմ ներկայացված բողոքների, կալանավորման/դրա ժամկետի երկարացման/կալանքն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների քննության գործեր) կայացված որոշումների հրապարակայնությունը հնարավոր կլինի ապահովել միայն այն պայմաններում, երբ դրանց քննությունը ևս, որպես կանոն, իրականացվի դռնբաց դատական նիստերում²²⁵, այլ կերպ ասած՝ այս խնդիրն ուղղակիորեն փոխկապակցված է նախորդիվ արձանագրված՝ ձեռքարկված

²²⁵ Պարզաբանում. եթե որպես ելակետ ընդունենք նշված գործերի՝ դռնփակ ռեժիմով քննությունը, ապա նույնիսկ քրեական գործով նախաքննությունն ավարտվելուց հետո դատարանը չի կարող հրապարակել շատ որոշումներ այն պատճառով, որ դրանց հրապարակմանը կարող է խոչընդոտել պետական գաղտնիքի կամ մասնավոր կյանքի գաղտնիք հանդիսացող տեղեկությունների առկայությունը, որոնց հրապարակայնացման հարցը դատարանը կարող էր լուծել բացառապես գործի (միջնորդության կամ բողոքի) քննության ժամանակ:

որոշումների դեմ ներկայացված բողոքների և կալանքի միջնորդությունների քննության դատական նիստերի դոկումենտացիայի խնդրի հետ, ուստի և լուծում պետք է ստանա նշված խնդրի հետ միասին:

Առաջարկություններ

Բարձրագույն դատական խորհրդին՝ Դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու մասին և Դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը սահմանելու մասին որոշումներում լրացումներ կատարելու կամ նոր որոշում(ներ) ընդունելու միջոցով սահմանել պարտականություն՝ դատական իշխանության կայքում/դատական տեղեկատվական համակարգում լրացնելու և հրապարակելու:

1/ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետևյալ գործերի վերաբերյալ տեղեկատվությունը (նույն ծավալով և նույն սահմանափակումներով, ինչն ըստ էության քննվող գործերի դեպքում)՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների, դատախազության մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ գործեր, ձեռքարկված դեմ ներկայացված բողոքների, կալանավորման և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունների, կալանքը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների վերաբերյալ քննվող գործեր:

1.1/ ձեռքարկված դեմ ներկայացված բողոքների, կալանավորման/դրա ժամկետը երկարացնելու/կալանքը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների վերաբերյալ քննվող գործերով կայացված որոշումները հրապարակել ա/ գործը դոկումենտացիայի դատական նիստում քննվելու դեպքում՝ ընդհանուր կանոններով, բ/ նախաքննության տվյալների պաշտպանության հիմքով քննությունը դոկումենտացիայի անցկացվելու դեպքում՝ այն պահից սկսած, երբ ավարտված է գործով նախնական քննությունը (գործը նշանակվել է դատաքննության), գ/ օրենքով սահմանված որևէ այլ հիմքով քննությունը դոկումենտացիայի անցկացվելու դեպքում՝ եզրափակիչ մասը:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

Քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս դատարանի դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ ոչնչացնել որոշ իրեղեն ապացույցներ, մասնավորապես հանցագործության գործիքները, շրջանառությունից հանված առարկաները՝ արժեք չներկայացնելու դեպքում, արժեք չներկայացնող իրերը (հոդված 119). ոչնչացման կարգը սահմանված է գլխավոր դատախազի, ներքին գործերի նախարարի, ազգային անվտանգության նախարարի, պետական եկամուտների նախարարի, դատարանների նախագահների խորհրդի նախագահի և

Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահի 2002 թ.-ի համատեղ հրամանով (կետեր 39, 53)²²⁶: Օրենսգիրքը չի սահմանում նաև հետազոտման համար վերցված նմուշների պահպանության պարտականություն, ընթացակարգ (դրանք առհասարակ չեն համարվում ապացույցի տեսակ):

Վերլուծություն

Քննարկվող խնդրի արդիականությունն այն է, որ քրեական գործերով ձեռք բերված ապացույցների ոչնչացումն օրենքի ուժով, ինչպես նաև հետազոտման համար վերցված նմուշների պահպանության պարտականության բացակայությունը շատ դեպքերում ուղղակի կարող է բացառել գործերն ապագայում նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ուժով վերանայելու հնարավորությունը՝ չնայած նրան, որ դատապարտված անձի դիմումի հիման վրա այդ վերանայման հնարավորությունն օրենսդրորեն ամրագրված է (հոդված 426³, մաս 5): Խնդիրը հատկապես արդիական է առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, առավել ևս, երբ այն վերաբերում է ցմահ դատապարտյալների՝ իրենց գործերը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելուն:

Հատկանշական է և ողջունելի, որ ներկայումս շրջանառության մեջ դրված Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը նախատեսում է առանձնապես ծանր հանցագործությունների, ինչպես նաև կյանքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով իրեղեն ապացույցների անժամկետ պահպանությունը (դրանք ենթակա չեն ոչնչացման) (հոդված 100, մաս 2), ընդ որում, նաև վարույթը կարճված քրեական գործերով, ինչպես նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ ավարտված վարույթներով ձեռք բերված ապացույցները: Հարկ է նկատել, սակայն, որ Նախագծով, ինչպես և գործող Քրեական դատավարության օրենսգրքով *իրեղեն ապացույց* հասկացությունը չի ներառում հետազոտության նմուշները: Ուստի տվյալ դեպքում անհրաժեշտ է իրեղեն ապացույցների պահպանման տրամաբանությամբ քննարկել նաև նշված նմուշների պահպանման համար ընթացակարգ նախատեսելու հնարավորությունը: Իրավաչափ կլինի ապացույցների պահպանման պարտականություն նախատեսել նաև մյուս տեսակի հանցագործություններով՝ առնվազն դրանց վաղեմության ժամկետների ժամանակահատվածով (այս պահին՝ 2, 5, 10, 20 տարի):

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը (այս տեսակ ուսումնասիրությունների առումով մեծ է ԱՄՆ փորձը) ցույց է տալիս, որ թեև ապացույցների երկարաժամկետ պահպանումը կապված է մի շարք դժվարությունների և ծախսերի հետ, այդուհանդերձ դա արդարացված է անցյալում կատարված հանցագործությունների բացահայտման կամ, օրինակ, հատկապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց գործերը վերանայելու նպատակով: Այսպես, ԱՄՆ-ում 2012 թ.-ին իրականացվել է «Անմեղություն» նախագիծը, որի շրջանակում

²²⁶ Տե՛ս նաև ՀՀԳՏ 2002.09.02/21(107) Հոդ.140, 29.07.2002 թ.:

արդարացվել է ավելի քան 300 դատապարտյալ, ինչը հնարավոր է դարձել մոլեկուլյար-գենետիկ փորձաքննությունների ոլորտի զարգացման շնորհիվ²²⁷: Պահպանված ապացույցների՝ ժամանակակից մեթոդների կիրառմամբ իրականացված փորձաքննությունների արդյունքում հնարավոր է եղել պարզել, որ մի շարք դեպքերում անձանց նույնականացման հետ կապված փորձագիտական նմուշների նախորդ փորձաքննությունները սխալ են եղել:

Մեծ Բրիտանիայում «Անմեղության» ծրագրի նախաձեռնության հեղինակ, այս ոլորտում 15 տարվա փորձառություն ունեցող Բրիսթոլի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Նոթթոնը զարմանք է արտահայտել Հայաստանում ապացույցների ոչնչացման օրենքով սահմանված պահանջի վերաբերյալ²²⁸:

Վրաստանում իրեղեն ապացույցները, որոնք ենթակա չեն ոչնչացման կամ վերադարձման սեփականատիրոջը, պահպանվում են քրեական գործի պահպանման ժամանակահատվածում (Քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդված): Էստոնիայում վարույթ իրականացնողը կարող է պահպանել համեմատական նմուշները, եթե այլ բան օրենքից չի բխում (Քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդված, մաս 5), իսկ հանցանքի հետքեր պարունակող իրեղեն ապացույցը կարող է թողնվել և պահպանվել գործի նյութերի հետ կամ հատուկ իրեղեն ապացույցների պահպանման համար նախատեսված սենյակում կամ փորձագիտական կազմակերպությունում (Քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդված, մաս 3):

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և նախատեսել իրեղեն ապացույցների ու համեմատական նմուշների պահպանության հետևյալ բանաձևը՝ դիտավորությամբ կատարված հանցագործության գործիքները, շրջանառությունից հանված առարկաները և արժեք չներկայացնող իրերը, ինչպես նաև համեմատական նմուշները պահպանել նույնքան ժամանակ, ինչքան որ Կառավարության որոշման համաձայն պետք է պահպանվեն քրեական գործերի նյութերը՝ 5, 10 և 15 տարի, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների գործերով՝ անժամկետ:

Խնդիր 5

Խնդրի նկարագրություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բավարար չափով հստակեցված չեն դատաքննության հրապարակայնության սահմանափակման հիմքերը, իսկ օրենսգրքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթը՝ գործը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դոնփակ նիստում քննելու դեպքում տվյալ գործի

²²⁷ Ст'ю Проблемы хранения вещественных доказательств в уголовном судопроизводстве, <https://riorpub.com/ru/nauka/article/17457/view>:

²²⁸ Ст'ю Միջազգային փորձագետներն ապշած են՝ ՀՀ-ում ապացույցները ոչնչացվում են օրենքի պահանջով, <https://www.azatutyun.am/a/27535977.html>:

հետագա քննությունն այլ դատական ատյաններում դոնփակ անցկացվելու վերաբերյալ, անհամաչափ սահմանափակում է անձի արդար դատաքննության իրավունքը:

Վերլուծություն

ՀՀ Սահմանադրությունը (63-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանում է դատաքննության հրապարակայնության սահմանափակման հետևյալ հիմքերը՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է դատական քննության հրապարակայնությունը սահմանափակելու հնարավորություն տվող հետևյալ հիմքերը՝

- 1/ քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի պաշտպանության նպատակով,
- 2/ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով,
- 3/ անչափահասների շահերի պաշտպանության նպատակով,
- 4/ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով,
- 4/ պետական անվտանգության պաշտպանության նպատակով,
- 5/ հասարակական կարգի պաշտպանության նպատակով,
- 6/ բարոյականության պաշտպանության նպատակով,
- 7/ վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության նպատակով,

8/ օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Թվարկված հիմքերը, այդ թվում՝ ձևակերպումների առումով, հիմնականում կրկնօրինակված են Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունից և որոշակիորեն նաև չեն համապատասխանում գործող Սահմանադրությանը:

Գտնում ենք, որ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով գործի քննության հրապարակայնության սահմանափակումը, տրված լայն ձևակերպման շրջանակներում, հակասում է օրենքի որոշակիության պահանջին, տալիս է կամայական մեկնաբանման ամենալայն հնարավորությունը և հետևաբար պետք է հստակեցվի:

Մասնավորապես որպես արդարադատության շահից բխող սահմանափակման իրավաչափ նպատակ՝ կարող է ընդունվել հենց վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանությունը, որն արդեն իսկ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածում նշված է որպես դատաքննության հրապարակայնության սահմանափակման ինքնուրույն հիմք:

Ավելին, հաշվի առնելով այն, որ *դատավարության մասնակից* եզրը, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (տես 6-րդ հոդվածը), չի ընդգրկում դատավարության այնպիսի առանցքային կարևորություն ունեցող սուբյեկտներին, ինչպիսիք են վկան, փորձագետը, մասնագետը, իսկ նրանք, լինելով քննության համար կարևոր տվյալների կրողներ, գտնվում են պոտենցիալ ավելի ռիսկային խմբում, քան դատավարության ցանկացած այլ սուբյեկտ, առկա է անհրաժեշտություն նրանց ևս

ընդգրկելու այն սուբյեկտների շարքում, որոնց պաշտպանության շահից ելնելով՝ դատաքննության հրապարակայնությունը կարող է սահմանափակվել: Նշենք, որ նման օրենսդրական կարգավորում է գործում նաև ռումանագերմանական իրավական ընտանիքի այլ երկրներում, օրինակ՝ Գերմանիայի Դաշնությունում²²⁹:

Նույն կերպ պետք է օրենքից հանվի նաև «օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում» դրույթը, քանի որ դատական քննության հրապարակայնության սահմանափակման հիմքերը պետք է լինեն սպառիչ և բացառիկ ու բխեն Սահմանադրությամբ թվարկված սպառիչ հիմքերից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Գործը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դոնփակ նիստում քննելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դոնփակ»: Նույնաբովանդակ դրույթներ սահմանված են նաև այլ դատավարական օրենսգրքերով: Ակնհայտ է, որ նման իմպերատիվ բնույթ ունեցող կարգավորումը, որի արդյունքում վերադաս դատական ատյանները զրկվում են քննությունը դոնբաց անցկացնելու հարցը քննարկելու հնարավորությունից և այս հարցում որևէ հայեցողություն չունեն, չի կարող համարվել արդար դատաքննության իրավունքի համաչափ սահմանափակում: Ի թիվս այլ հիմնավորումների՝ վերադաս դատական ատյաններում հնարավոր է պարզապես վերացած լինեն գործի քննությունը դոնփակ անցկացնելու համար հիմք ծառայած հանգամանքները (օրինակ՝ պետական գաղտնիքի սահմանված կարգով գաղտնագերծման արդյունքում), ինչի պայմաններում դատաքննության հրապարակայնության սահմանափակումը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդելու: Հարկ ենք համարում այս համատեքստում վկայակոչել ԱՊՀ մոդելային քրեական դատավարության օրենսգրքը²³⁰, որի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում հրապարակայնության սահմանափակումը անպայմանորեն չի ենթադրում դոնփակ դատական նիստի անցկացում վերադաս դատարանում (հոդված 483):

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել արդարադատության շահի պաշտպանության նպատակով դատական քննության հրապարակայնության հիմքերը սահմանող դրույթները, ինչպես նաև «օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում» դրույթը:

Վարույթին մասնակցող անձանց՝ կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության մասին դրույթը՝ որպես վարույթի հրապարակայնության սահմանափակման հիմք, լրացնել նաև վկայի, փորձագետի, մասնագետի և նրանց մերձավոր ազգականների պաշտպանության հիմքով:

Ուժը կորցրած ճանաչել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը՝ վերացնելով հրապարակային դատաքննության իրավունքի անհամաչափ սահմանափակումը:

²²⁹ St' u Courts Constitution Act, https://www.gesetze-im-internet.de/englisch_gvg/englisch_gvg.html:

²³⁰ St' u Модельный уголовно-процессуальный кодекс для государств - участников Содружества Независимых Государств, <https://www.icrc.org/ru/doc/assets/files/other/ipa.pdf>:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (չսպասելով նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդունմանը) 201-րդ հոդվածը շարադրել այժմ շրջանառության մեջ դրված նախագծի 186-րդ հոդվածի՝ բովանդակությամբ՝ դրա 3-րդ մասում կատարելով հետևյալ լրացումը՝ նախատեսել, որ սահմանված արգելքները չեն տարածվում նաև այն դեպքերի վրա, երբ տվյալները հրապարակվում են նշված քրեական գործին առնչվող դատական նիստի, այդ թվում՝ դռնբաց դատական նիստի շրջանակում, օգտագործվում են նշված քրեական գործով կամ դրանից անջատված քրեական գործով միջնորդությունների, դիմումների, բողոքների և այլ դատավարական փաստաթղթերի բովանդակության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կամ միջազգային կառույցներին և դատական աստիճաններին ուղղված փաստաթղթերում:
- ✓ Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում որպես հանցագործության սուբյեկտ հստակ սահմանել վարույթի՝ բացառապես գրավոր նախազգուշացված մասնակիցներին և վարույթին մասնակցող անձանց, իսկ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ ուժի մեջ մտնելու դեպքում (կապված սուբյեկտների փոփոխության հետ)՝ վարույթի մասնավոր և օժանդակող մասնակիցներին:
- ✓ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ, 289.4-րդ և 288-րդ հոդվածներից հանել դատական քննության դռնփակ լինելը սահմանող դրույթները՝ որպես ընդհանուր կանոն սահմանելով դատական քննության դռնբացությունը:
- ✓ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել իրեղեն ապացույցների ու համեմատական նմուշների պահպանության հետևյալ բանաձևը/ժամկետները՝ դիտավորությամբ կատարված հանցագործության գործիքները, շրջանառությունից հանված առարկաները և արժեք չներկայացնող իրերը, ինչպես նաև համեմատական նմուշները պահպանել այնքան ժամանակ, ինչքան որ Կառավարության որոշման համաձայն պետք է պահպանվեն քրեական գործերի նյութերը՝ 5, 10 և 15 տարի, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների գործերով՝ անժամկետ:
- ✓ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել արդարադատության շահի պաշտպանության նպատակով դատական

քննության հրապարակայնության հիմքերը սահմանող դրույթները, ինչպես նաև «օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում» դրույթը:

Վարույթին մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության մասին դրույթը՝ որպես վարույթի հրապարակայնության սահմանափակման հիմք, լրացնել նաև վկայի, փորձագետի, մասնագետի և նրանց մերձավոր ազգականների պաշտպանության հիմքով:

Ուժը կորցրած ճանաչել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը՝ վերացնելով հրապարակային դատաքննության իրավունքի անհամաչափ սահմանափակումը:

Բարձրագույն դատական խորհրդին

- ✓ Դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու մասին և Դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը սահմանելու մասին որոշումներում լրացումներ կատարելու կամ նոր որոշում(ներ) ընդունելու միջոցով սահմանել պարտականություն՝ դատական իշխանության կայքում/դատական տեղեկատվական համակարգում լրացնելու և հրապարակելու.
 - մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետևյալ գործերի վերաբերյալ տեղեկատվությունը (նույն ծավալով, ինչն ըստ էության քննվող գործերի դեպքում)՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների, դատախազության մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ գործեր, ձերբակալման դեմ ներկայացված բողոքների, կալանավորման և դրա ժամկետը երկարացնելու միջնորդությունների վերաբերյալ քննվող գործեր.
 - ձերբակալման դեմ ներկայացված բողոքների, կալանավորման/դրա ժամկետը երկարացնելու/կալանքը այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունների վերաբերյալ քննվող գործերով կայացված որոշումները հրապարակել ա/ գործը դոնբաց դատական նիստում քննվելու դեպքում՝ ընդհանուր կանոններով, բ/ նախաքննության տվյալների պաշտպանության հիմքով քննությունը դոնփակ անցկացվելու դեպքում՝ այն պահից սկսած, երբ ավարտված է գործով նախնական քննությունը (գործը նշանակվել է դատաքննության),
 - օրենքով սահմանված որևէ այլ հիմքով քննությունը դոնփակ անցկացվելու դեպքում՝ եզրափակիչ մասը:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերհանում և վերլուծություն

Խնդիր 1

<p>Խնդրի նկարագրություն</p> <p>ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն գնումների բնագավառում հաշվետվողականության և թափանցիկության պահանջների կիրառման ապահովման համար անհրաժեշտ պատասխանատվության մեխանիզմները:</p>
<p>Վերլուծություն</p> <p>«Գնումների մասին» ՀՀ օրենքով նշվում են մի շարք տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք ենթակա են հրապարակման տեղեկագրում, այդ թվում՝ գնումների տարեկան հաշվետվությունը, հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, կնքված պայմանագրի մասին հայտարարություն, գնումների պլանը, ներառյալ փոփոխությունները, գնումների հայտարարությունը և հրավերը, նախատրակավորման հայտարարությունը, դրա վերաբերյալ մասնակցի պարզաբանումներ տալու հարցման և տրված պարզաբանման մասին պատվիրատուի հայտնած տեղեկատվությունը, այն ֆիզիկական անձի տվյալները, որը հայտարարվում է ընտրված մասնակից և որը ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 10 տոկոսը, մասնակցի՝ հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը, հայտերի գնահատման նիստի արձանագրությունը, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության մասին, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը և բողոքի վերաբերյալ կայացված որոշումը և այլն:</p> <p>Դրա հետ միասին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված չէ որևէ պատասխանատվության միջոց գնումների բնագավառում հաշվետվողականության և թափանցիկության պահանջների խախտման համար:</p> <p>Ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծին²³¹, ապա դրանով գնումների անցկացման կարգը խախտելու համար մեկ</p>

²³¹ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք և հարակից օրենքների փաթեթ, https://www.e-draft.am/projects/274/about?fbclid=IwAR3i8eORa1hjFj_wdLoa4hIB555JBIQnhEi4dRCMnn_Wr2qk3v9nEkno tc:

հողվածի շրջանակում սահմանված է վարչական պատասխանատվություն: Այսպես, համաձայն 341-րդ հոդվածի՝ հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելը կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալը, որի հետևանքով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կամ գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսվարող սուբյեկտի, անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվել է խոշոր չափի չհասնող գույքային վնաս, առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ տուգանքի ձևով:

Վերոնշյալ դրույթի բովանդակությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ տեղեկատվության կամ փաստաթղթի չհրապարակումը փոխկապակցված չէ խոշոր չափի չհասնող գույքային վնաս պատճառելու հետ, որն է պատասխանատվության միջոց վրա հասնել չի կարող: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի շրջանակներում ևս բացակայում են գնումների բնագավառում հաշվետվողականության և թափանցիկության պահանջների կիրառման ապահովման անհրաժեշտ մեխանիզմները, քանի որ վերը թվարկված փաստաթղթերի ցանկում առկա են մի շարք այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց հրապարակումը հետապնդում է բացառապես գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակ և փոխկապակցված չէ գույքային վնաս հասցնելու հնարավորության հետ:

Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված է պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմը, սակայն վերոնշյալ հոդվածի շրջանակներում որպես հանցագործության սուբյեկտ չեն կարող դիտարկվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով որպես պետական գնումների պատվիրատու ճանաչված հանրային կազմակերպությունների²³² համապատասխան պաշտոնատար անձինք: Սա նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումը գուցորդված կլինի պաշտոնեական լիազորությունների չարաշահման հետ, և նման գործողությունները կատարված կլինեն գնումների գործընթացին մասնակցող հանրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից, անկախ պատճառված վնասի չափից՝ նշված անձինք քրեական պատասխանատվության ենթակա չեն լինի:

²³² «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «ա. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ներառված անձինք, որոնք գործունեություն են իրականացնում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում, բացառությամբ այն անձանց, որոնք սույն պարբերության մեջ նշված ցանկում ներառվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրային ցանցի շահագործման շրջանակում մատուցվող ծառայությունների մասով գերիշխող դիրք ունենալու հանգամանքով պայմանավորված,

բ. հանրային ծառայությունների ոլորտի այլ կազմակերպություններ, որոնք հատուկ կամ բացառիկ իրավունքով իրականացնում են սույն հոդվածով սահմանված՝ մեկ կամ մեկից ավելի համապատասխան գործունեության տեսակ, եթե գնումը կատարվում է համապատասխան գործունեության տվյալ տեսակն իրականացնելու նպատակով»:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, հիմք ընդունելով 2008 թվականի պետական գնումների համակարգում էթիկական ստանդարտների բարձրացման վերաբերյալ ՏՀԶԿ հոչակագրի հիմնական սկզբունքները, իր հանձնարարականներով առաջարկել է գնումների գործընթացի մասնակիցների համար մշակել արդյունավետ և գործնականում կիրառելի պատժամիջոցների համակարգ, որը պետք է համաչափ լինի իրավախախտման ծանրությանը և ապահովի համարժեք կանխարգելիչ ազդեցություն, միաժամանակ պետական գնումների գործընթացում ներգրավված անձանց համար չառաջացնի հետևանքների կամ ռիսկերի շրջանցման անհարկի վախ²³³:

Հարկ ենք համարում անդրադառնալ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքին, որով մանրամասն անդրադարձ է կատարվել պետական գնումների ոլորտում հանցագործությունների համար պատասխանատվության սահմանմանը, այդ թվում՝ գնումների ոլորտում չարաշահումներ կատարելու, պատասխանատու անձանց կաշառք տալու և կեղծ փորձագիտական եզրակացություն կազմելու համար²³⁴: Ռուսաստանի Դաշնությունում բավական մանրամասն կարգավորվել են նաև գնումների բնագավառում վարչական իրավախախտումների համար համապատասխան պատասխանատվության սահմանները, այդ թվում՝ պետական գնումների կարգի, գնումների պլանավորման օրենսդրության խախտման, ինչպես նաև մատակարարին որոշելու եղանակի և պայմանների՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված պահանջները չպահպանելու համար²³⁵: Վրաստանի քրեական օրենսգրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետական գնումների մասնակցության կարգի խախտման համար, ընդ որում, իրավաբանական անձի համար որպես պատասխանատվության միջոց սահմանվել է գործունեություն իրականացնելու իրավունքից զրկում կամ լուծարում և տուգանք²³⁶: Պետական գնումների ոլորտում մանրամասն կարգավորումներ նախատեսված են նաև Ուկրաինայի վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով, այդ թվում՝ տեղեկատվության չիրապարակման կամ տեղեկատվության իրապարակման կարգի խախտման, օրենքով նախատեսված դեպքերում տեղեկատվություն, փաստաթղթեր և նյութեր չտրամադրելու համար²³⁷:

Էստոնիայում պետական գնումների օրենսդրության խախտումների ոլորտում հանցագործությունների շրջանակը սահմանվում է Էստոնիայի պետական գնումների

²³³ Տե՛ս OECD, Recommendation of the Council on Public Procurement, <https://www.oecd.org/gov/ethics/OECD-Recommendation-on-Public-Procurement.pdf>:

²³⁴ Տե՛ս ՌԴ քրեական օրենսգրքը, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/, հոդվածներ 200.4, 200.5, 200.6:

²³⁵ Տե՛ս ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/, հոդվածներ 7.29 – 7.32:

²³⁶ Տե՛ս Վրաստանի քրեական օրենսգրքը, <https://matsne.gov.ge/en/document/download/16426/157/en/pdf>, հոդված 195.1:

²³⁷ Տե՛ս Ուկրաինայի վարչական իրավախախտումների մասին օրենսգրքը, <https://zakon.rada.gov.ua/laws/show/80731-10>, հոդված 164.14:

մասին օրենքով և Էստոնիայի տնտեսական գործունեության օրենսգրքի ընդհանուր մասով²³⁸: Էստոնիայի պետական գնումների մասին օրենքի 10-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է պատասխանատվության խնդրին, և դրանում պատասխանատվություն է սահմանված, օրինակ, գնումների պայմանագրի փոփոխության պահանջների խախտման, առանց սահմանված ընթացակարգի իրականացման պայմանագրի կնքման համար և այլն²³⁹:

Պատասխանատվության միջոցների կիրառման բավականին մանրամասն, ըստ փորձագետների, սպառիչ կարգավորումներ են առկա Կանադայում, որտեղ 2016 թվականին թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման համար իրականացված համալիր փոփոխությունների արդյունքում սահմանվեցին նաև պատասխանատվության միջոցներ: Այսպես, օրինակ, պատասխանատվություն սահմանվեց սերտիֆիկացման, ֆինանսատնտեսական գործունեության մասին կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկատվության տրամադրման կամ հայտարարագրման համար: Վերոնշյալ գործողությունների կատարման համար մեծամասամբ նախատեսված պատասխանատվությունը 10 տարի ժամկետով պետական գնումների գործընթացին մասնակցելու արգելքն է²⁴⁰:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

1/ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով պատասխանատվություն նախատեսել գնումների բնագավառում օրենքով սահմանված հաշվետվողականության և թափանցիկության պահանջների խախտման համար.

2/ քրեականացնել գնումների գործընթացում պաշտոնեական դիրքի չարաշահումը հանրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերը, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ներառվում են պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում՝ առանց որևէ վերապահման, ծախսերի և ծառայությունների անհատականացման հնարավորության բացակայության պայմաններում:

Վերլուծություն

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական

²³⁸ Տե՛ս General Part of the Economic Activities Code Act, <https://www.riigiteataja.ee/en/eli/ee/Riigikogu/%20act/527032015008/consolide>:

²³⁹ Տե՛ս Public Procurement Act, <https://www.riigiteataja.ee/en/eli/505092017003/consolide>:

²⁴⁰ Տե՛ս Government of Canada's Integrity Regime, <https://www.tpsgc-pwgsc.gc.ca/ci-if/ci-if-eng.html>:

գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

Դրա հետ միասին «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական պահպանություն տրամադրվում է.

1) ՀՀ նախագահին.

2) վարչապետին.

3) Ազգային ժողովի նախագահին.

4) օրենքով նախատեսված դեպքերում՝ վարչապետի թեկնածուին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվելու ենթակա տեղեկությունների ցանկը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 9-րդ հոդվածների համադրումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի հետ (առնվազն օրենքների գործող խմբագրությամբ) վկայում է այն մասին, որ որևէ վերապահման կամ ծախսերի և ծառայությունների անհատականացման բացակայության պայմաններում համապատասխան պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ամբողջ ծավալով գաղտնագրումը գնումների գործընթացում հակասում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, քանի որ նշված տեղեկությունները չեն տեղավորվում գործող օրենքով սահմանված *պետական գաղտնիք* հասկացության շրջանակում:

Գտնում ենք, որ նշված կարգավորումը հակասում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նման ձևակերպմամբ բացարձակ սահմանափակման նախատեսումը չի համապատասխանում 10-րդ հոդվածից բխող իրավունքի սահմանափակման համաչափության պահանջին:

Ակնհայտ է, որ թվարկված ծախսերի, ինչպես նաև ապրանքների ու

ծառայությունների ամբողջ ծավալով գաղտնագրման գործընթացը բազմաթիվ դեպքերում որևէ աղերս չունի այնպիսի տեղեկությունների պահպանման անհրաժեշտության հետ, որոնք վերաբերում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սպառիչ թվարկված բնագավառներին, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Հետևաբար այս կարգավորումը ուղղակի հակասում է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներին, քանի որ սահմանում է տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքի անհամաչափ սահմանափակում, որը չի բխում սահմանափակմամբ հետապնդվող նպատակից, և, կոնկրետ փաստական հանգամանքներից ելնելով, չի նախատեսում այս տեղեկությունների մատչելիության նկատմամբ տարբերակված մոտեցում կիրառելու հնարավորություն:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Պետական գնումների գործընթացին առնչվող թափանցիկ միջոցառումների, գնումները թափանցիկ և անկողմնակալ իրականացնելու և շահերի բախումից և կոռուպցիոն գործելակերպից խուսափելու կարևորությունն ընդգծվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրով, և ամրագրվել է փաստաթղթերի վարման, հաշվետվությունների և էլեկտրոնային հետազոտելիության ապահովման անհրաժեշտությունը: Մասնավորապես սահմանվել է, որ յուրաքանչյուր պատվիրատու պետք է պայմանագիրը կնքելու օրվանից առնվազն երեք տարի ժամկետով պահպանի ա. մրցութային ընթացակարգերի փաստաթղթերը և հաշվետվությունները և նշված գնման առնչությամբ կնքված պայմանագրերը, այդ թվում՝ պահանջվող հաշվետվությունները, և բ. տվյալներ, որոնք ապահովում են նշված գնման իրականացման հետազոտելիությունը էլեկտրոնային եղանակով²⁴¹:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ նաև՝ ՏՀԶԿ) հանձնարարականներով, որոնք մշակվել են՝ հիմք ընդունելով 2008 թվականի պետական գնումների համակարգում էթիկական ստանդարտների բարձրացման վերաբերյալ ՏՀԶԿ հռչակագրի հիմնական սկզբունքները, առաջարկվել է գնումների բոլոր փուլերում ապահովել պետական գնումների համակարգի թափանցիկության անհրաժեշտ մակարդակ, կիրառել վերահսկողական և վերահսկման գործիքակազմ՝ գնումների ողջ ընթացքում հաշվետվողականության սկզբունքի իրագործման համար՝ այդ թվում ապահովելով ներքին հսկողության գործիքների (ներառյալ ֆինանսական հսկողությունը, ներքին աուդիտը և վարչական վերահսկողությունը), արտաքին հսկողության և աուդիտի պատշաճ մակարդակ²⁴²:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը մշակել է նաև հանրային բարեվարքության կանոններ և, որպես գործընթացի թափանցիկության և այդ գործընթացում շահագրգիռ անձանց մասնակցության

²⁴¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՏ 2015.10.21/3(33), 05.06.2015 թ.:

²⁴² Տե՛ս OECD, Recommendation of the Council on Public Procurement, <https://www.oecd.org/gov/ethics/OECD-Recommendation-on-Public-Procurement.pdf>:

ապահովման միջոցառում, առաջարկել է խթանել իրավասու մարմինների թափանցիկությունը, ապահովել տեղեկատվության և բաց տվյալների հասանելիությունը, ինչպես նաև տեղեկատվության հարցմանը ժամանակին պատասխանելը²⁴³:

Եվրոպական միության՝ պետական գնումների գործընթացը կարգավորող թիվ 2014/24/ԵՄ244, 2014/25/ԵՄ245, 2014/23/ԵՄ246 հրահանգներով (26.02.2014) հստակ ամրագրվում է գնման գործընթացները թափանցիկ և ոչ խտրական հիմունքներով իրականացնելու պահանջը: Մասնավորապես թիվ 2014/24/ԵՄ հրահանգով սահմանվել է, որ գնումների գործընթացում որոշումների կայացման ընթացքը և թափանցիկությունը անհրաժեշտ նախապայմաններ են ապահով ընթացակարգեր ունենալու, ներառյալ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար: Հետևաբար պատվիրատուները պետք է մշտապես իրենց մոտ ունենան կնքված պայմանագրերի պատճենները, որպեսզի, ըստ անհրաժեշտության, հասանելի դարձնեն շահագրգիռ անձանց՝ փաստաթղթերի հասանելիության վերաբերյալ գործող կանոնների համաձայն: Նախատեսված է նաև էլեկտրոնային համակարգերի բարելավում, որպեսզի առավել դյուրին լինի տվյալներ մուտքագրելը, հաշվետվություններից քաղվածքներ կատարելն ու համակարգերի միջև տվյալների փոխանակում իրականացնելը:

Եվրոպական երկրների շարքում որպես գնումների գործընթացի կազմակերպման առավել առաջադեմ համակարգ՝ մատնանշվում է բրիտանականը. դրա կարևորագույն ասպեկտներից է Միացյալ Թագավորության պետական գործերի գրասենյակի միասնական պետական քաղաքականությունը, որը ենթադրում է պատվերի տեղադրման գործընթացի, կնքված պայմանագրերի կառավարման, ինչպես նաև դրանց մշտադիտարկման և պայմանագրերի կատարման հիմնավորող գործընթացների ապահովումը²⁴⁷:

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական գնումների ազգային համակարգի ուղենշային բնութագրող պայմաններից մեկը մասնագիտացված տեղեկատվական ռեսուրսների կառավարման միջոցով պետական գնումների ողջ պայմանագրային գործընթացի և դրա արդյունքների հրապարակայնության և թափանցիկության ապահովումն է²⁴⁸:

²⁴³ Տե՛ս OECD, Recommendation of the Council on Public Integrity, <https://www.oecd.org/gov/ethics/OECD-Recommendation-Public-Integrity.pdf>:

²⁴⁴ Տե՛ս DIRECTIVE 2014/24/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 26 February 2014 on public procurement and repealing Directive 2004/18/EC, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32014L0024>:

²⁴⁵ Տե՛ս DIRECTIVE 2014/25/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 26 February 2014 on procurement by entities operating in the water, energy, transport and postal services sectors and repealing Directive 2004/17/EC, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32014L0025>:

²⁴⁶ Տե՛ս DIRECTIVE 2014/23/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 26 February 2014 on the award of concession contracts, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ%3AJOL_2014_094_R_0001_01:

²⁴⁷ Տե՛ս Public procurement policy, Guidance, <https://www.gov.uk/guidance/public-sector-procurement-policy>:

²⁴⁸ Տե՛ս <https://iclg.com/practice-areas/public-procurement-laws-and-regulations/usa>:

Ուկրաինայի գնումների ոլորտի օրենսդրության համաձայն՝ պատվիրատուն գնումների մասին տեղեկատվությունը մատչելի եղանակով հասանելի է դարձնում բոլոր մասնակիցների համար²⁴⁹: Ի կատարումն վերոնշյալ պարտավորությունների՝ Ուկրաինայի նախարարների կաբինետը ընդունել է որոշում, որով սահմանել է հրապարակման ենթակա տվյալների կարգը՝ բաց ձևաչափով²⁵⁰:

Պետական գնումների բոլոր փուլերում էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման ներդրման գործընթաց է նախատեսվում իրականացնել և ավարտին հասցնել 2020 թվականի դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնությունում²⁵¹: Եվրոպայի խորհրդի փորձագետները, գնահատելով Ռուսաստանի Դաշնությունում տեղական ինքնակառավարման մակարդակում իրականացվող գնումների գործընթացի կոռուպցիայի չափերը, ձևերն ու դրսևորումները, ընդգծել են, որ անհրաժեշտ է գնումների ողջ ընթացքում ապահովել առավելագույն թափանցիկություն, այդ թվում՝ պայմանագրի կատարման փուլում՝ հանրությանը տալով գնումների ավտոմատացված տեղեկատվական համակարգերի միջոցով անվճար տեղեկատվություն ստանալու հնարավորություն²⁵²:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և դրանից բխող այլ իրավակարգավորումները համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ բացառելով գնումների գործընթացում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակներից չբխող ծախսերին, ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին առնչվող որևէ տեղեկության գաղտնագրումը:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված փակ պարբերական մրցույթներով ձեռք բերվող ապրանքները, աշխատանքները և ծառայությունները իրենց բովանդակությամբ շատ դեպքերում անմիջականորեն չեն փոխկապակցվում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հնարավոր շրջանակի հետ:

Վերլուծություն

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

1. Փակ մրցույթը կիրառվում է, եթե գնման գործընթացը պարունակում է պետական գաղտնիք:

²⁴⁹ Տե՛ս <https://zakon.rada.gov.ua/laws/show/1197-18>, հոդված 5, մաս 2:

²⁵⁰ Տե՛ս https://zakon.rada.gov.ua/laws/show/835-2015-%D0%BF7fbclid=IwAR2LBa_re_5OvneoX6ITzprbUR1NSkwfPRO0XJfKf6b8JyqPLKvoblzgPK4:

²⁵¹ Տե՛ս <https://www.kommersant.ru/doc/4199348>:

²⁵² Տե՛ս Размеры, формы и проявления коррупции в процессе проведения закупок на муниципальном уровне в Российской Федерации, <https://rm.coe.int/eccd-precop-ii-tp4-procurement-final-rus/16809471e4>:

2. Փակ մրցույթը պարբերական է, եթե գնման առարկան ձեռք է բերվում պարբերաբար, և այն ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

Փակ պարբերական մրցույթներով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածով:

Նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում մատնանշված են այնպիսի ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ, ինչպիսիք են ծաղիկները, ծաղկեզամբյուղները, ծաղկեպսակը, հուշանվերները, գրքերը, սկավառակները, շախմատը, շաշկին, նարդին, կահույքը և մի շարք այլ ապրանքներ ու ծառայություններ:

Գտնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված փակ պարբերական մրցույթներով ձեռք բերվող ապրանքները, աշխատանքները և ծառայությունները իրենց բովանդակությամբ շատ դեպքերում անմիջականորեն չեն փոխկապակցվում պետական գաղտնիք պարունակող հնարավոր տեղեկությունների շրջանակի հետ:

Միաժամանակ չի բացառվում, որ առանձին դեպքերում նույն ցուցակում ներառված ապրանքները և ծառայությունները ձեռք բերվեն և օգտագործվեն այնպիսի նպատակների շրջանակներում, ինչպիսիք կենթադրեն դրանց վերաբերյալ տեղեկությունների չիրապարակման անհրաժեշտություն ազգային անվտանգության շահերի ապահովման նպատակով: Մինչդեռ վերոգրյալ տեղեկատվության գաղտնագրումը, բացառապես ապրանքների և ծառայությունների տեսակներից ելնելով, դրանք որևէ կերպ չփոխկապակցելով ձեռքբերման նպատակների հետ, ուղղակիորեն հանգեցնում է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով սահմանված պահանջների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների խախտմանը, քանի որ սահմանում է տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքի անհամաչափ սահմանափակում, որը չի բխում սահմանափակմամբ հետապնդվող նպատակից և, կոնկրետ փաստական հանգամանքներից ելնելով, չի նախատեսում այս տեղեկությունների մատչելիության նկատմամբ տարբերակված մոտեցում կիրառելու հնարավորություն:

Առաջարկություններ

Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

- վերանայել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածը՝ այն համապատասխանեցնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններին խոսքի ազատության, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման բնագավառում:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

ՀՀ օրենսդրությունում առկա չէ գնումների գործընթացում իրական սեփականատերերի բացահայտման արդյունավետ գործիքակազմ:

Վերլուծություն

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ²⁵³ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվել է իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը:

Որոշմամբ արձանագրվել է, որ էլեկտրոնային հարթակում իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը իրավասու պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից կօգտագործվի որպես վերահսկողության գործիք՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը բացառելու, պետական գնումների գործընթացի թափանցիկությունը ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1130-Լ որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրով (2018-2020 թվականներ) արձանագրվել է, որ «... թեև ՀՀ օրենսդրությունն արգելում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել նշված պահանջի խախտմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի կոռուպցիայի տարածմանը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են որոշակի կարգավորումներ գնման գործընթացում իրական սեփականատերերի բացահայտման նպատակով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, համաձայն որի՝ հայտով ներկայացնում են այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 10 տոկոսը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, սակայն համապատասխան գործիքակազմի, արդյունավետ վերահսկողության մեխանիզմների բացակայության պայմաններում առկա իրավակարգավորումները ձևական բնույթ ունեն:

Իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ

²⁵³ Տե՛ս ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1 Հոդ. 915.11, 10.10.2019 թ.:

սահմանված իրավակարգավորումների ոչ լիարժեքությանը և գործնականում իրավական հետևանքներ չառաջացնելու խնդրին անդրադարձ է կատարվել նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի չորրորդ փուլի զեկույցում, որով առաջարկվել է ապահովել բենեֆիցիար սեփականության մասին տեղեկատվության աստիճանական և արդյունավետ ներկայացումը, մասնավորապես.

ա. պահանջել իրավաբանական անձանց բենեֆիցիար սեփականության մասին տեղեկատվության ներկայացում,

բ. ստեղծել կենտրոնական ռեգիստր շահառու սեփականատերերի համար,

գ. տեղեկատվությունը հրապարակել առցանց՝ բաց տվյալների ձևաչափով՝ տվյալների և անձնական կյանքի պաշտպանության ներպետական և միջազգայնորեն ընդունված երաշխիքներին համապատասխան,

դ. ապահովել պատժամիջոցների կիրառում համապատասխան տեղեկատվության չբացահայտման դեպքում²⁵⁴:

Անկախ հաշվետվական մեխանիզմի նախապատրաստած զեկույցում ևս անդրադարձ է կատարվել գնումների գործընթացում իրական սեփականատիրոջ ինստիտուտը լիարժեք ներդնելու խնդրին՝ ի թիվս այլնի առաջարկելով էլեկտրոնային ռեգիստրում բոլոր ընկերությունների հիմնադիրների և ընթացիկ բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվության անվճար տրամադրումը²⁵⁵:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, հիմք ընդունելով պետական գնումների համակարգում էթիկական ստանդարտների բարձրացման վերաբերյալ ՏՀԶԿ հոչակագրի (2008 թվական) հիմնական սկզբունքները, առաջարկել է մշակել այնպիսի ներքին հսկողության պահանջներ, իրավական պահանջներին հետևելու մեխանիզմներ և մատակարարների համար հակակոռուպցիոն ծրագրեր, այդ թվում՝ մշտադիտարկման համապատասխան ընթացակարգեր, որոնք կպարունակեն պետական գնումների գործընթացում կոռուպցիայի բացառման երաշխիքներ, ինչպես նաև ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան ստուգելու մատակարարների կոռուպցիոն հարաբերությունների մեջ չլինելու վերաբերյալ տված երաշխիքների ճշտությունը: Նման ծրագրերը պետք է ներառեն մատակարարման շղթայի թափանցիկության համապատասխան մակարդակ ապահովելու պահանջ, որը հնարավորություն կընձեռի ենթապայմանագրերի մակարդակով պայքարելու կոռուպցիայի դեմ: Միաժամանակ, որպես էթիկայի չափանիշների պահպանման գործիքակազմ,

²⁵⁴ Տե՛ս Anti-corruption reforms in Armenia 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>:

²⁵⁵ Տե՛ս Անկախ հաշվետվական մեխանիզմ. Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2018/03/Armenia_Midterm_Report_2016-2018_for-public-comment_ARM.pdf:

առաջարկվել է սահմանել մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ շահերի բախման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը²⁵⁶:

Գնումների գործընթացում իրական սեփականատերերի բացահայտման խնդրին անդրադարձել է նաև Համաշխարհային բանկը՝ մատնանշելով գնումների գործընթացում թափանցիկության բարձրացման համապատասխան առցանց համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, որում կներառվի տեղեկատվություն համապատասխան ընկերությունների իրական սեփականատերերի մասին, այդ թվում՝ հայտարարագրերի ներկայացման միջոցով: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նախագծերին մասնակցող բոլոր ընկերությունները սկսեցին բացահայտել իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը, որը հրապարակվում է տվյալների բաց ձևաչափով՝ խթանելով գնումների գործընթացի թափանցիկությունը²⁵⁷:

Ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալներ հավաքել և համապատասխան ռեեստր ստեղծել են Մեծ Բրիտանիայում²⁵⁸:

Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը որպես պարտադիր պայման նախատեսված է նաև Սլովակիայում²⁵⁹: Բացի այդ, Սլովակիայի պետական գնումների գրասենյակը օժտված է ռեգիստրում գրանցված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու իրավասությամբ: Նույնատիպ իրավակարգավորումներ առկա են նաև Դանիայում, որտեղ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բիզնես ռեգիստրում (CVR) և հնարավորություն է ստեղծում տեսնելու, թե ովքեր են գրանցվել որպես իրական սեփականատերեր այդ ընկերություններում, ինչպես նաև, թե տվյալ անձինք զուգահեռաբար որ ընկերությունում են ներկայացված որպես սեփականատեր²⁶⁰:

Ուկրաինայում ստեղծվել է միասնական ռեգիստր և իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը մուտքագրվում է միասնական պետական ռեգիստրում և ինքնաբերաբար հրապարակվում առցանց՝ դառնալով մատչելի ցանկացած անձի համար: Ուկրաինան միացել է նաև Open Ownership գլոբալ ռեգիստրին, որը հնարավորություն է տալիս իրականացնելու խաչաձև ստուգումներ և մշակելու անհրաժեշտ տվյալները²⁶¹:

²⁵⁶ Տե՛ս OECD, Recommendation of the Council on Public Procurement, <https://www.oecd.org/gov/ethics/OECD-Recommendation-on-Public-Procurement.pdf>:

²⁵⁷ Տե՛ս World bank shifting policies to disclose the real owners of contract winners, https://www.globalwitness.org/en/blog/world-bank-shifting-policies-disclose-real-owners-contract-winners/?fbclid=IwAR3yJfTLerh4c4FbptbmSAMs_pBDelic1EhKqbPpjyULjLz4QvYKrDtJCZM:

²⁵⁸ Տե՛ս <https://researchbriefings.parliament.uk/ResearchBriefing/Summary/CBP-8259>:

²⁵⁹ Տե՛ս Using Slovakia's Beneficial Ownership Register for Impact, <https://www.opengovpartnership.org/stories/lessons-from-reformers-using-slovakias-beneficial-ownership-register-for-impact/>:

²⁶⁰ Տե՛ս <https://danishbusinessauthority.dk/beneficial-owners>:

²⁶¹ Տե՛ս Ukraine's National Beneficial Ownership Register Goes Global, <https://www.opengovpartnership.org/stories/lessons-from-reformers-ukraines-national-beneficial-ownership-register-goes-global/>:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունում, դրանց միջոցով՝ իրական սեփականատերերի բացահայտման նպատակով միասնական ռեգիստրի ստեղծում, լիազոր մարմնի համար ռեգիստրում գրանցված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով՝ անհրաժեշտ լիազորությունների սահմանում, իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահանջի սահմանում՝ բաց տվյալների ձևաչափով, համարժեք պատասխանատվության միջոցների սահմանում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության չհրապարակման, այդ տեղեկատվությունը թաքցնելու, ոչ ճշգրիտ տրամադրելու համար:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես.

- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով պատասխանատվություն նախատեսել գնումների բնագավառում օրենքով սահմանված հաշվետվողականության և թափանցիկության պահանջների խախտման համար:
- ✓ Քրեականացնել գնումների գործընթացում պաշտոնեական դիրքի չարաշահումը հանրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար:
- ✓ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և դրանից բխող այլ իրավակարգավորումները համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ բացառելով գնումների գործընթացում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակներից չբխող ծախսերին, ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին առնչվող որևէ տեղեկության գաղտնագրումը:

Կառավարությանը

- ✓ Նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և վերանայել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածը՝ համապատասխանեցնելով այն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ի ստանձնած

միջազգային պարտավորություններին խոսքի ազատության, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման բնագավառում:

Ազգային ժողովին և Կառավարությանը

- ✓ Նախաձեռնել օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի ընդունում, դրանց միջոցով՝ իրական սեփականատերերի բացահայտման նպատակով՝ միասնական ռեգիստրի ստեղծում, լիազոր մարմնի համար ռեգիստրում գրանցված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով՝ անհրաժեշտ լիազորությունների սահմանում, իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահանջի սահմանում՝ բաց տվյալների ձևաչափով, համարժեք պատասխանատվության միջոցների սահմանում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության չհրապարակման, այդ տեղեկատվությունը թաքցնելու, ոչ ճշգրիտ տրամադրելու համար:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդիր 1

<p>Խնդրի նկարագրություն</p> <p>Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների շրջանակը բավարար ընդարձակ չէ, ինչը կարող է խոչընդոտներ ստեղծել լիարժեք հանրային վերահսկողության իրականացման համար:</p>
<p>Վերլուծություն</p> <p>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանում է Կառավարությունը²⁶²: Միաժամանակ նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվում են մի շարք սահմանափակումներ, այսպես՝</p> <ul style="list-style-type: none">- անշարժ գույքի գտնվելու վայրը կարող է հրապարակվել՝ առանց դրա հասցեն և այն նույնականացնող տվյալները հրապարակելու,- անչափահասի հայտարարագրի տվյալները, բացառությամբ նրա անվան, հայրանվան և ազգանվան, հրապարակման ենթակա չեն (փաստացի նաև նրանց սեփականության վերաբերյալ տվյալները): <p>Օրենսդրությամբ հրապարակման ոչ ենթակա տվյալների պաշտպանության ապահովման գործառույթն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Ըստ այդմ, կարող ենք փաստել, որ հանրային վերահսկողության իրականացման համատեքստում հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալները բավարար չեն (կամ առնվազն խոչընդոտներ կարող են ստեղծել) անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար: Այսպես, օրինակ, հանրային վերահսկողություն իրականացնող անձը չի կարող պատկան մարմիններից լիարժեք տեղեկատվություն ստանալ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ հայտարարագրում նշված անշարժ և շարժական գույքի մասին, ինչի հետևանքով կզրկվի խաչաձև ստուգման և հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տրամադրած տեղեկատվության լիարժեքությունը ստուգելու հնարավորությունից:</p> <p>Հետևաբար անհրաժեշտ է ընդլայնել հայտարարագրում ներառված հրապարակման</p>

²⁶² Ներկայումս վերը նշված ցանկը սահմանված է Կառավարության 12.03.2020 թ.-ի թիվ 306-Ն որոշմամբ:

ենթակա տվյալների շրջանակը՝ ապահովելով հանրային վերահսկողության իրականացման համար լիարժեք մեխանիզմներ:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Այս ոլորտում հրապարակման ենթակա տվյալների ցանկը մշտապես բուռն քննարկման առարկա է եղել, ինչով էլ պայմանավորված է աշխարհում տարբեր մոտեցումների առկայությունը: Այսպես, օրինակ, **Միացյալ Թագավորությունում** գույքի և եկամուտների հայտարարագրման հետ կապված ընդհանուր պահանջներ չկան, ինչը պայմանավորված է անձնական կյանք չներխուժելու մոտեցմամբ, թեև խորհրդարանի անդամների (այդ թվում՝ վերջիններիս քարտուղարների ու ռեֆերենտների) և լորդերի ֆինանսական հետաքրքրությունների շրջանակին վերաբերող հայտարարագրերը բաց են հանրության համար: Իսկ, օրինակ, **Նորվեգիայում** տեղեկատվության հրապարակման լայն մեխանիզմ է գործում, քանի որ հրապարակվում են ոչ միայն պետական պաշտոնյաների ընդհանուր եկամուտների և բարեկեցության մասին տեղեկությունները, այլ նաև բոլոր հարկ վճարողներինը: Ընդ որում, այդ տեղեկատվությունը հասանելի է համացանցում և մատչելի է բոլորի համար: Հայտարարագրման ենթակա տվյալների ամբողջական հանրային բացահայտումը ենթադրում է, որ հայտարարագրերում պարունակվող բոլոր տեղեկությունները մատչելի են հանրային վերահսկողության համար: Այսպիսի մոտեցում որդեգրում են նաև այն երկրները, որոնց հայտարարագրերը պարունակում են համեմատաբար սահմանափակ քանակությամբ տեղեկատվություն և վերաբերում են միայն բարձրաստիճան պաշտոնյաների նեղ շրջանակին: Այդպես է, օրինակ, **Դանիայում**՝ խորհրդարանի անդամների և նախարարների շահերի հայտարարագրման դեպքում: Հայտարարագրերում առկա ամբողջական տեղեկատվությունը հանրության համար բաց է **Բոսնիա և Հերցեգովինայում և Չեռնոգորիայում** ընտրված պաշտոնյաների համար²⁶³:

Առաջարկություններ
1/ Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «Անշարժ գույքի գտնվելու վայրը կարող է հրապարակվել՝ առանց դրա հասցեն և այն նույնականացնող տվյալները հրապարակելու» դրույթը և նույն հոդվածի 3-րդ մասը:
2/ Կառավարությանը՝ կատարել լրացում 12.03.2020 թ.-ի թիվ 306-Ն որոշման մեջ և ընդլայնել հայտարարագրում ներառված հրապարակման ենթակա տվյալների շրջանակը՝ մասնավորապես ցանկում ընդգրկելով հայտարարագրվող անշարժ գույքերի գտնվելու վայրի հասցեները և դրանք նույնականացնող տվյալները, հայտարարատու պաշտոնատար անձանց անչափահաս զավակների սեփականության վերաբերյալ տվյալները:

²⁶³ See Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption, <http://www.oecd.org/corruption/anti-bribery/47489446.pdf>:

Խնդիր 2

Խնդրի նկարագրություն

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պահանջների խախտման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված վարչական և քրեական պատասխանատվության միջոցները բավարար չեն:

Վերլուծություն

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով երաշխավորված՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը ենթադրում է պետության պոզիտիվ պարտավորությունը՝ ապահովելու հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության մատչելիությունը, ինչն իրականացվում է, ի թիվս այլնի, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի հրապարակման միջոցով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանվել է վարչական պատասխանատվություն հայտարարագրերը սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել հայտարարագրերը դիտավորությամբ չներկայացնելու և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի բովանդակային համադրության արդյունքում կարող ենք փաստել, որ պատասխանատվության մեխանիզմների ապահովման բնագավառում առկա են ոչ լիարժեք իրավակարգավորումներ, որոնք որոշ դեպքերում հանգեցնում են պատասխանատվության միջոցի կիրառման անհնարինության կամ առաջացնում են իրավական որոշակիության խնդիր: Այսպես.

ա. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են հայտարարագրի դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու առերևույթ հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում»:

Սրա հետ մեկտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու համար՝ հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի

169.28-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Այսպիսով, առկա իրավակարգավորումների տրամաբանությամբ անձը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն, եթե հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ղիտավորությամբ չի ներկայացրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, մինչդեռ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասից բխում է, որ եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են հայտարարագիրը ղիտավորությամբ չներկայացնելու առերևույթ հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում:

Այսինքն՝ առկա իրավակարգավորումներն իրարամերժ են և պրակտիկայում կարող են առաջացնել կիրառման խոչընդոտներ, քանի որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի տրամաբանությամբ Հանձնաժողովը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում հետևություն կատարելով, որ կատարված արարքում առկա են հայտարարագիրը ղիտավորությամբ չներկայացնելու առերևույթ հատկանիշներ, պետք է ընդունի վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի տրամաբանությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ոչ թե պետք է վարչական վարույթը կասեցնի, այլ զանցանք թույլ տված անձին ենթարկի վարչական պատասխանատվության:

Հետևաբար անհրաժեշտ է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջներին և կարգավորումներին:

բ. Օրենսդրական բացի առկայության է հանգեցնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածով սահմանված հանցակազմի՝ միայն ղիտավորությամբ կատարման ամրագրումը: Առկա կարգավորման պայմաններում հայտարարատու անձը հայտարարագրերն անզուգուրությամբ սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում կենթարկվի վարչական պատասխանատվության, սակայն որևէ պատասխանատվություն չի կրի հետագայում նույն իրավախախտումը թույլ տալու համար, եթե չապացուցվի հայտարարատուի՝ արարքը ղիտավորությամբ կատարելու հանգամանքը:

Հետևաբար գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածով սահմանված արարքի կատարման համար անձը պետք է պատասխանատվության ենթարկվի՝ անկախ մեղքի ձևից:

գ. Ինչպես արդեն նշվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներով պատասխանատվություն է սահմանվել համապատասխանաբար հայտարարագրերը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար: Որպես ոչ պարտադիր լրացուցիչ պատիժ՝ նշված հոդվածներով նախատեսված է նաև որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ընդ որում, միայն ազատագրկման տեսքով հիմնական պատժի հետ փոխկապակցված, այնինչ նշված հոդվածները որպես հիմնական պատիժ նախատեսում են նաև տուգանքը:

Ելնելով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության այս տեսակի համար հանցագործությունների կանխարգելման նպատակին հասնելու առումով առավել համաչափ պատիժ սահմանելու անհրաժեշտությունից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ նախատեսել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ ենթակա կիրառման թե՛ տուգանքի, թե՛ ազատագրկման հետ փոխկապակցված:

դ. Խնդրահարույց են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված զանցանք դիտարկվող գործողությունները (անգործությունը), քանի որ առկա ձևակերպումները տարբերակայուն և նույն հանգամանքներում տարբեր սանկցիա կիրառելու հնարավորություն են ընձեռում: Մասնավորապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է պատասխանատվություն հայտարարատուի՝ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար: Սրա հետ մեկտեղ նույն հոդվածի 3-րդ մասում պատասխանատվություն է սահմանվել հայտարարատուի՝ հայտարարագիրը դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու համար: Ընդ որում, եթե մի դեպքում կիրառվող պատասխանատվության տեսակը նախազգուշացումն է (169.28-րդ հոդվածի 3-րդ մաս), ապա մյուս դեպքում նշանակվում է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով (169.28-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ակնհայտ է, որ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները չկատարելը և հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը կարող են նույնացվել, քանի որ հայտարարագրին ներկայացվող պահանջ է նաև հայտարարագիրն ամբողջությամբ և ճշգրիտ լրացնելը, իսկ նկատի ունենալով այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասում չի շեշտվում այդ զանցանքի կատարման դիտավորությունը, կարելի է եզրակացնել, որ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները չպահպանելը ենթադրում է նաև այդ զանցանքը անզգուշությամբ կատարելու հնարավորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, նույն արարքի համար տարբեր պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորության բացառման կարևորությունը՝ գտնում ենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցանքը պետք է

նախատեսել օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով որպես զանցանքի օբյեկտիվ կողմ՝ զանցանքի կատարման եղանակ (հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման եղանակ), միաժամանակ 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան խստացնել՝ որպես այդպիսին նախատեսելով 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված սանկցիան:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների սահմանման անհրաժեշտությանն անդրադարձել են մի շարք միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ **Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պետությունների խումբը (ԳՐԵԿՈ)**: Այսպես, 78-րդ լիագումար նիստում ընդունված զեկույցով շեշտվել է, որ ԳՐԵԿՈ-ն առաջարկել է գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողության և կատարման ապահովման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ, այդ թվում՝ հայտարարագրերի հետ կապված խախտումների դեպքերը ուսումնասիրելու, վարույթ հարուցելու և կանոնների խախտման դեպքում արդյունավետ, համաչափ և տարբերակված պատասխանատվության միջոցներ կիրառելու համար²⁶⁴: Գույքի հայտարարագրերի վերաբերյալ կարգավորումների խախտումների մասով վարչական և քրեական պատասխանատվության միջոցների սահմանման կարևորությունը ընդգծվել է նաև **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի չորրորդ փուլի զեկույցով²⁶⁵ և ՄԻԳՄԱ-ի՝ 2019 թ.-ի մարտին հրապարակված «Ելակետային գնահատման զեկույց»-ով²⁶⁶:**

Միջազգային փորձի ուսումնասիրությամբ կարող ենք փաստել, որ հայտարարագրեր ներկայացնելու հետ կապված խախտումները տարանջատվում են երկու կատեգորիաների: Կատեգորիաներից մեկը մասնավորապես վերաբերում է հայտարարագրեր ներկայացնելու պարտավորությանը, իսկ մյուսը՝ հայտարարագրերում պարունակվող տեղեկատվությանը: Ըստ այդմ, առաջին խմբին բնորոշ խախտումներն են.

- հայտարարագրեր չներկայացնելը,
- հայտարարագրերն ուշ ներկայացնելը:

Իսկ երկրորդ խմբին բնորոշ խախտումներն են.

- անհրաժեշտ տեղեկատվությունը թերի տրամադրելը,

²⁶⁴ Տե՛ս FOURTH EVALUATION ROUND, GrecoRC4(2017)1, <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680775f12>:

²⁶⁵ Տե՛ս Anti-corruption reforms in Armenia 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>:

²⁶⁶ Տե՛ս Baseline Measurement Report: The Principles of Public Administration, Armenia 2019, <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019.pdf>:

- չկանխամտածված կեղծ տեղեկություններ տրամադրելը,
 - գիտակցաբար կեղծ տեղեկություններ տրամադրելը:
- Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցներին, ապա կարելի է առանձնացնել.
- **քրեական սանկցիաներ.** նկատի ունենալով, որ պետական պաշտոնյաների հայտարարագրերի ներկայացման համակարգը հիմնականում ընկալվում է որպես կոռուպցիայի կամ այլ անօրինական գործողությունների կանխարգելման միջոց, որոշ պետություններ քրեական օրենսդրությամբ նախատեսում են խիստ պատժամիջոցներ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Իտալիա, Լեհաստան, Միացյալ Թագավորություն).
 - **վարչական սանկցիաներ.** պատասխանատվության այս տեսակը բավականին տարածված է և հիմնականում կիրառվում է տուգանքի տեսքով.
 - **կարգապահական սանկցիաներ.** կարգապահական տույժերը հիմնականում կիրառվում են պետական ծառայողների նկատմամբ, որոնք քաղաքական պաշտոնատար անձինք չեն: Կիրառվող պատժամիջոցներից են նկատողությունը, աշխատավարձի կրճատումը, աշխատանքից ազատումը և այլն.
 - **քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ.** պատասխանատվության միջոցի այս գործիքակազմը բավական հազվադեպ կիրառվող է և իր էության մեջ չի կապվում հայտարարագրման ենթակա տվյալները ներկայացնելու հետ: Լատվիայում, օրինակ, պետական պաշտոնյայի դեմ հնարավոր է վնաս պատճառելու վերաբերյալ հայցադիմում ներկայացնել, եթե վերջինս եկամուտ է ստացել այնպիսի գործունեությունից, որն անհամատեղելի է իր զբաղեցրած դիրքի հետ²⁶⁷:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

- 1/ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջներին և կարգավորումներին.
- 2/ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածով սահմանված արարքի կատարման համար պատասխանատվությունը նախատեսել անկախ մեղքի ձևից.
- 3/ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախատեսել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ ենթակա կիրառման թե՛ տուգանքի, թե՛ ազատազրկման հետ փոխկապակցված.

²⁶⁷ St' u Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption, <http://www.oecd.org/corruption/anti-bribery/47489446.pdf>:

4/ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցանքը նախատեսել օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասում՝ որպես զանցանքի օբյեկտիվ կողմ՝ զանցանքի կատարման եղանակ (հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման եղանակ), միաժամանակ 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան խստացնել՝ որպես այդպիսին նախատեսելով 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված սանկցիան:

Խնդիր 3

Խնդրի նկարագրություն

Գործնականում առկա են հանրային ծառայողներին, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերող տեղեկությունների, այդ թվում՝ վերջիններիս պարզևատրումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման/հրապարակման հետ կապված խոչընդոտներ, որոնք պայմանավորված են անձնական կյանքի գաղտնիք կամ պարզապես անձնական տվյալ հանդիսանալու պատճառաբանությամբ մերժելու դեպքերով:

Վերլուծություն

Գործնականում Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայողների վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ սահմանափակվում է՝ իրավասու մարմինների կողմից տեղեկատվության մերժումը պայմանավորելով անձնական կյանքի գաղտնիք կամ պարզապես անձնական տվյալ հանդիսանալու հանգամանքով: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նույն, հաճախ անհիմն դիրքորոշմանն են հետևում նաև դատարանները²⁶⁸: Սակայն համապատասխան անձանց հանրային-իրավական կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ 2019 թ.-ին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հրապարակվել են որոշումներ, որոնցում, ըստ էության, արտահայտվել է իրավական դիրքորոշում առ այն, որ խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության որպես անձնական տվյալներ:

Այսպես, թիվ ՎԴ/0243/05/15 վարչական գործի փաստերի համաձայն՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցները դիմել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը (այսուհետ նաև՝ Ծառայություն)՝ պահանջելով Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթի մասնակիցների բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ անձնական թերթիկները, հանձնաժողովի արձանագրությունները և գնահատման թերթիկները: Ծառայությունը մերժել է փաստաթղթերի տրամադրման պահանջը՝ պատճառաբանելով, որ դրանք «... չեն կարող տրամադրվել՝ պայմանավորված

²⁶⁸ Դատական գործեր թիվ ՎԴ/1276/05/15, ՎԴ/4129/05/15, ՎԴ/4169/05/16, ՎԴ/1031/05/16, ՎԴ/1233/05/19:

անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանման անհրաժեշտությամբ...»: Հիշյալ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «... դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում խոսքը նույնպես վերաբերել է պետական պաշտոն զբաղեցնել հավակնելուն, որի ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Ընդ որում, խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության որպես անձնական տվյալներ այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին»:

ՎԴ/4169/05/15 վարչական գործի փաստերի համաձայն՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը 09.07.2015 թ.-ին դիմել է ՀՀ քննչական կոմիտեին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը. 1. Կոմիտեի որակավորման հանձնաժողովի բոլոր նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ 16.06.2015 թվականի նիստի արձանագրությունը, 2. գրավոր քննության քննական տարբերակները (տոմսերի համարներն ու հարցաշարի հարցերը՝ ըստ բաշխման), 3. քանի հարցատոմս է եղել ընդհանուր առմամբ, 4. որ տոմսում ինչ հարցեր են ներառվել, 5. հավակնորդների գրած թեստերի ստուգված տարբերակները, գրված աշխատանքներն ստուգող անձանց տվյալները (անուն-ազգանուն): ՀՀ քննչական կոմիտեն 20.07.2015 թ.-ին թիվ 15/9-12-15 գրությամբ հայտնել է, որ Կոմիտեի որակավորման հանձնաժողովը քննարկել է Կազմակերպության 09.07.2015 թ.-ի դիմումը և միաձայն որոշել մերժել դիմումն այն պատճառաբանությամբ, որ հայցվող նյութերի տրամադրումը կհակասի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին: Վճռաբեկ դատարանը, 25.12.2019 թ.-ի որոշմամբ անդրադառնալով կազմակերպության և զանգվածային լրատվության միջոցների խախտված իրավունքներին, արտահայտել է վերը նշված գործով բերված իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) Կոմիտեն, ըստ էության, տեղեկություն ստանալու ազատության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջև առկա ենթադրական բախումը լուծել է՝ նախապատվությունը տալով երկրորդին: Մինչդեռ (...) տվյալ դեպքում խոսքը նույնպես վերաբերել է պետական պաշտոն զբաղեցնել հավակնելուն, որի ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Ընդ որում, խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության որպես անձնական տվյալներ այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե հավակնորդների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին»²⁶⁹:

Վերոնշյալ որոշումներին նախորդել է ՀՀ Սահմանադրական դատարանի 20.06.2017 թվականի թիվ ՄԴՈ-1374 որոշման ընդունումը, որով Դատարանն արձանագրել է

²⁶⁹ Սույն խնդրի հետ կապված հետաքրքրական են նաև ՎԴ/1329/05/11, ՎԴ/1169/05/15 գործերով դատական ակտերը, 20.06.2017 թ.-ի թիվ ՄԴՈ-1374 որոշումը:

հետևյալը. «Դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը և հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող (ստացվող) փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), 2015 թ.-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ: Դրանք պետք է վերաբերեն ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին: Ուստի նման տվյալները պետք է ներառվեն հավակնորդի, հետագայում դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի անձնական գործում, ենթակա լինեն տրամադրման հավակնորդներին, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպություններին: Նման տեղեկատվության տրամադրումն անհրաժեշտ է և ուղղված է դատական իշխանության ձևավորման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետության ապահովմանը, հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը»:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև Անձնական տվյալների պաշտպանության գործակալության արձանագրած այն փաստին, որ ՀՀ բազմաթիվ օրենսդրական ակտեր հարմարեցված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին: Հետաքրքրություն է ներկայացնում նաև ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության N-006/01/19 վարչական վարույթով կայացված որոշումը, որում քննարկվող՝ Երևանի քաղաքապետի կարգադրությունը ներառել է համայնքային ծառայող չհանդիսացող աշխատողների խրախուսում, ինչը դուրս է եղել Երևանի քաղաքապետի իրավասությունից, և այդ անձանց տվյալների մշակման առումով Գործակալությունն արձանագրել է քաղաքապետարանի կողմից անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի խախտում՝ միաժամանակ փաստելով, որ չկա որևէ իրավական ակտ, որը կկարգավորեր Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայող չհանդիսացող աշխատողների խրախուսման կարգը, որի արդյունքում էլ պարզ կդառնար նշված անձանց խրախուսելու և նրանց անձնական տվյալները մշակելու (հրապարակելու) իրավասու մարմինը:

Արդյունքում խնդրո առարկա կարգադրության մեջ, համայնքային ծառայողներից զատ, ներառված են եղել այդպիսիք չհանդիսացող այլ աշխատակիցներ: Քաղաքապետարանը, օրենքի ուժով պարտավոր լինելով հրապարակել իր կարգադրությունը («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 49), միաժամանակ լիազորություն չի ունեցել դրանով անդրադառնալու, հետևաբար հրապարակելու համայնքային ծառայող չհանդիսացող, սակայն, ըստ էության, նույն հիմունքներով քաղաքապետարանի բյուջեից վարձատրվող/խրախուսվող աշխատակիցների տվյալները, ինչը միանշանակ

արդարացված չէ: Իրավիճակն առավել անտրամաբանական է համայնքապետարանների դեպքում՝ նկատի ունենալով, որ ի տարբերություն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը որևէ դրույթ չի նախատեսում համայնքապետի ընդունած ակտերը հանրամատչելի դարձնելու պարտադիրության վերաբերյալ:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թիվ ՎԴ/10576/05/19 վարչական գործը, որի շրջանակներում 2020 թ.-ի մարտի 10-ին կայացված վճռով դատարանը անդրադարձել է Վարչապետի աշխատակազմի՝ նախարարների, նախարարների տեղակալների, նախարարությունների գլխավոր քարտուղարների և մարզպետների պարզևատրումների կանոնակարգման վերաբերյալ «գաղտնի նշագրում» պարունակող որոշման օրինակը տրամադրելու՝ «Իրավական ուղի» ՀԿ-ի հարցման մեթոման իրավաչափության հարցին: Դատարանն արձանագրել է, որ ինչպես հարցման պատասխանով, այնպես էլ հայցադիմումի պատասխանով պատասխանող կողմը չի հերքել նախարարների, նախարարների տեղակալների, նախարարությունների գլխավոր քարտուղարների և մարզպետների պարզևատրումների կանոնակարգման վերաբերյալ *գաղտնի* նշագրում պարունակող որոշման առկայությունը:

Դատարանն արձանագրել է, որ «տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, որի սահմանափակումը հնարավոր է միայն Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված սպառիչ հիմքերով: Դրանցից բացի՝ որևէ այլ հիմքով տեղեկատվություն չտրամադրելը խախտում է անձի տեղեկատվության ազատության իրավունքը:

Հայցադիմումի պատասխանով պատասխանողը հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու հիմքում դրել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ պնդելով, որ այն պարունակում է «գաղտնի» նշագրումը: Մինչդեռ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ոչ թե արգելում է «գաղտնի» նշագրում, այլ պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվություն տրամադրելը: Պետական պաշտոնատար անձանց պարզևատրումներին վերաբերող ակտը ակնհայտորեն չի կարող պարունակել բանկային և/կամ առևտրային գաղտնիք, իսկ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները ներկայացված են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածում, որում, բնականաբար, բացակայում են պետական պաշտոնատար անձանց պարզևատրումներին վերաբերող տվյալները: Նախարարների, նախարարների տեղակալների, նախարարությունների գլխավոր քարտուղարների և մարզպետների պարզևատրումներին վերաբերող տվյալները չեն կարող լինել պետական կամ ծառայողական գաղտնիք, քանի որ նշված պաշտոնյաների վարձատրությունը կարգավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, իսկ օրենքով նախատեսված վարձատրությունից զատ՝ նշված պաշտոնյաների պարզևատրումների մասին ևս հանրությունն իրավունք ունի տեղեկանալու, քանի որ նշված տեղեկատվության

սահմանափակումը չունի որևէ իրավաչափ նպատակ: Նման պայմաններում առերևույթ առկա չէ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հայցվող տեղեկատվությունը տրամադրելը մերժելու հիմքը: Թեև հայցադիմումի պատասխանով հայցվող տեղեկատվությունը տրամադրելը մերժելու այլ հիմք պատասխանողը չի մատնանշել, դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև հարցման պատասխանում նշված այն հանգամանքին, որ հայցվող փաստաթուղթը պարունակում է անձնական տվյալներ: **Այս կապակցությամբ դատարանը նախ նկատում է, որ անձնական տվյալների առկայությունն ինքնին տեղեկատվությունը տրամադրելը մերժելու հիմք չէ:** Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն արգելում է այնպիսի տեղեկատվության տրամադրումը, որի արդյունքում խախտվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը: Պատասխանողը չի պնդել, որ հայցվող փաստաթղթում կան այնպիսի տվյալներ, որոնք հայցվորին տրամադրելու հետևանքով կխախտվի որևէ մեկի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Նման տվյալներ հայցվող փաստաթուղթը ողջամտորեն չի էլ կարող պարունակել, քանի որ խոսքը, ինչպես նշվեց վերևում, նախարարների, նախարարների տեղակալների, նախարարությունների գլխավոր քարտուղարների և մարզպետների պարզևատրումների մասին է: Ուստի նման փաստաթուղթը պետք է պարունակի նշված պաշտոնյաների պաշտոնական դրությունից բխող, այլ ոչ թե անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տվյալներ: Ուստի Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հայցվող տեղեկատվությունը տրամադրելը մերժելու հիմքը ևս առերևույթ բացակայում է»:

Իրավակիրառի վերոնշյալ վերլուծությունների արդյունքում հանգում ենք եզրակացության, որ ցանկացած դեպքում, երբ պաշտոնավարման հետ կապված հայցվող տեղեկատվությունը վերաբերվում է հանրային պաշտոններ, հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող և այդ պաշտոններին հավակնող անձանց, այն չի կարող սահմանափակվել հայցվող տեղեկատվության՝ անձնական կյանքի գաղտնիք կամ առավել ևս անձնական տվյալ լինելու հիմքով:

Այնուամենայնիվ, հաճախ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների վերաբերյալ տեղեկություններ ստանալու հանրային շահը ստորադասվում է համապատասխան անձանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, իսկ պարզևատրման մասին տեղեկության փաստացի հրապարակումները, որոնք հատվածային բնույթ են կրում, չեն կարող գնահատվել որպես խնդրի լուծում, քանի որ դրանք իրականացվում են հայեցողաբար և մասնակի: Նույն խնդիրը վերաբերելի է համայնքային ծառայողների պարզևատրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությանը, ինչն առավել արդիական է դառնում համայնքային ծառայողների աշխատանքի գնահատման կարգերի բացակայության և պարզևատրման հարցում շատ ավելի լայն հայեցողության առկայության պայմաններում:

Գտնում ենք, որ նշված խնդրին համակարգային լուծում տալու նպատակով

անհրաժեշտ է վերոնշյալ անձանց պարզևատրման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կամ տրամադրման պահանջը սահմանել օրենքով՝ հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների պարզևատրումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման հանրային շահի գերակայությունը այլ պաշտպանվող իրավաչափ շահերի նկատմամբ:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ՀՀ օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց, համայնքային և պետական ծառայողների պարզևատրման վերաբերյալ տեղեկատվության հանրամատչելիության սկզբունքը՝ նշված տեղեկատվությունը հրապարակելու կամ հարցման դեպքում տրամադրելու պահանջ սահմանելու եղանակով:

Խնդիր 4

Խնդրի նկարագրություն

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հանրային ծառայության մյուս տեսակներին վերաբերող օրենքներով նախատեսված չեն թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով) մասնակցության երաշխիքները:

Այս երաշխիքները նախատեսված չեն նաև դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող մրցույթների և վերջիններիս ծառայողական առաջխաղացման նպատակով իրականացվող ատեստավորման դեպքում:

Վերլուծություն

ա/ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ գլխով սահմանվում են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների տեսակները, դրանց առանձնահատկությունները, վարկանիշային ցուցակների կազմման կարգը, վարկանիշային ցուցակներից պաշտոն զբաղեցնելու կարգը: Մրցույթների անցկացման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի թիվ 1554-Ն որոշմամբ²⁷⁰ (այսուհետ նաև՝ Որոշում):

Խնդրահարույց է այն, որ թե՛ Օրենքով և թե՛ Որոշմամբ չեն նախատեսվում մրցույթների՝ թեստավորման և հարցազրույցի անցկացման թափանցիկ ընթացակարգեր, չի նախատեսվում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների իրավունքը՝ ներկա գտնվելու և հետևելու

²⁷⁰ Տե՛ս ՀՀՊՏ 2018.12.27/95(1453).1 Հոդ.1292.15, 27.12.2018 թ.:

մրցույթների ընթացքին՝ ապահովելով հանրային վերահսկողությունը նշված գործընթացների նկատմամբ:

Նույն խնդիրը վերաբերում է նաև պետական ծառայության այլ տեսակներին (հարկային, մաքսային, փրկարար, ոստիկանական, հարկադիր կատարման, քրեակատարողական ծառայություն և այլն), ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող օրենսդրությանը: Համապատասխան օրենքներով հիմնականում սահմանվում է պաշտոններ զբաղեցնելու մրցութայնության սկզբունքը (բացառություն են կազմում ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, զինվորական ծառայությունը /բացառությամբ բարձր պաշտոնների/), սակայն օրենքներով չեն սահմանվում մրցույթներին զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (վերջինները՝ որպես դիտորդներ) մասնակցության երաշխիքները:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից բխում է, որ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող ոչ բոլոր մրցույթներն են եղել հասարակական կազմակերպությունների՝ որպես դիտորդների համար բաց և մատչելի այն պարագայում, երբ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է եղել հասարակական կազմակերպությունների՝ որպես դիտորդների՝ մրցույթները դիտարկելու իրավունքը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 18.11.2014 թ.-ի թիվ 1074-Ս որոշմամբ սահմանափակվել է հասարակական կազմակերպության՝ որպես դիտորդի՝ քաղաքացիական ծառայության մրցույթները դիտարկելու իրավունքը, որը ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/7305/05/14 վարչական գործով 20.07.2015 թ.-ին կայացված վճռով ոչ իրավաչափ է ճանաչվել այն հիմնավորմամբ, որ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, օրենսդրի կողմից օժտված չլինելով հասարակական միավորումների ներկայացուցիչներին մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին դիտորդի կարգավիճակով մասնակցելու իրավունքից զրկելու լիազորությամբ, խախտել է օրինականության սկզբունքը:

Մեկ այլ գործով (ՎԴ/0243/05/15), երբ հասարակական կազմակերպությունը դիմել էր ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման մրցույթին որպես դիտորդ մասնակցելու համար, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը մերժել էր դիմումը: Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հասարակական կազմակերպության խախտված իրավունքներին, նշել էր, որ խոսքը վերաբերել է պետական պաշտոն զբաղեցնել հավակնելուն, որի ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Ընդ որում, խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող որպես անձնական տվյալներ ենթակա լինել պաշտպանության այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանիությունը գնահատող որակներին:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է նաև, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը սահմանափակել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողի թափուր

պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացվելիք բաց մրցույթի նկատմամբ հասարակական կազմակերպության՝ դիտորդական առաքելություն իրականացնելու, անցկացվելիք մրցույթի վերաբերյալ խնդրարկված բոլոր փաստաթղթերը և յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքները (ըստ հանձնաժողովի առանձին անդամների) ստանալու, տեղեկություններ փնտրելու և ստանալու հիմնարար իրավունքները, անտեսել է տեղեկություն ստանալու ազատության՝ վկայակոչված իրավական ակտերով նախատեսված երաշխիքների իրացումը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ կազմակերպության՝ դիտորդական առաքելություն իրականացնելու մտադրությունը նույնպես նպատակ է ունեցել ստանալու համապատասխան տեղեկությունները:

Իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրների վերհանման նպատակով ծրագրի շրջանակում հարցումներ են կատարվել մի շարք նախարարություններ, մարզպետարաններ, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ պետական վերահսկողական ծառայություն հետևյալ հարցադրմամբ. «Արդյո՞ք զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների համար նախատեսված է հնարավորություն՝ ներկա գտնվելու քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին և հետևելու դրանց ընթացքին, եթե այո, ապա նշել իրավական հիմքը»:

Հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ նման ընթացակարգ օրենսդրությամբ նախատեսված չէ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ևս, ի պատասխան հարցադրմանը, տեղեկացրել է, որ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող թեստավորման փուլը տեսաձայնագրվում է, և յուրաքանչյուր անձ իրավասու է առցանց հետևելու քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների ընթացքին (ինչը հնարավոր է քաղաքացիական ծառայության միասնական տեղեկատվական հարթակի գործարկումից հետո):

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հայտնել է, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ նախկին օրենքի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները և զանգվածային լրատվության միջոցները ցանկության դեպքում մասնակցել են մարզպետարանի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ նոր օրենքով նման սահմանում չկա, քանի որ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը վարելու է տեղեկատվական հարթակ, որը հասանելի է բոլորին:

ՀՀ Լոռու մարզպետարանը հայտնել է, որ մրցույթի թեստավորման փուլը տեսանկարահանվում է և առցանց ուղիղ հեռարձակվում, իսկ մինչև առցանց ուղիղ հեռարձակման հնարավորությունը Լոռու մարզպետարանում անցկացվող թափուր պաշտոնի համար կազմակերպվող մրցույթին զանգվածային լրատվամիջոցները և հասարակական կազմակերպությունները կարող են ներկա գտնվել և հետևել ընթացքին:

ՀՀ Կոտայքի մարզպետարանը պատասխանել է, որ զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ հնարավորություն՝ ներկա գտնվելու քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին և հետևելու դրանց ընթացքին:

Մի շարք նախարարություններ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, հարցադրմանն ի պատասխան, հայտնել են, որ գործող օրենսդրությամբ զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների համար մրցույթներին ներկա գտնվելու հնարավորություն ընձեռող դրույթներ սահմանված չեն:

Հարկ ենք համարում նշել, որ 2001 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվում էր հասարակական կազմակերպությունների մասնակցության իրավունքը մրցութային գործընթացներին, ինչը անցկացվող մրցույթների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման երաշխիքներից մեկն էր:

Գործող «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների՝ դիտորդի կարգավիճակով մրցույթներին մասնակցելու իրավունքի վերաբերյալ կարգավորման բացակայությունը չի նպաստում քաղաքացիական ծառայության մրցույթների նկատմամբ հանրային վերահսկողության ապահովմանը, քաղաքացիական ծառայողների նշանակման գործընթացների թափանցիկությանն ու հաշվետվողականությանը:

բ/ Դատախազության պաշտոններում դատախազների թեկնածությունների ցուցակի և առաջխաղացման ցուցակի հիման վրա դատախազի նշանակման կարգավորումները սահմանվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով²⁷¹ (այսուհետ նաև՝ Օրենք), ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց և փակ մրցույթի կազմակերպման կարգը սահմանող 26.04.2018 թ.-ի թիվ 43 հրամանով²⁷² (այսուհետ՝ թիվ 43 հրաման) և դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանող 26.04.2018 թ.-ի թիվ 44 հրամանով²⁷³ (այսուհետ՝ թիվ 44 հրաման):

Բաց մրցույթը, ըստ օրենքի, ենթադրում է դրա մասին նախապես իրականացվող հրապարակային ծանուցում բոլոր հավակնորդների մասնակցության ապահովման նպատակով (Օրենքի հոդված 38, մաս 2), իսկ փակը նման ծանուցում չի ենթադրում և իրականացվում է դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար **մասնակցության հրավերներով** (թիվ 43 հրաման, կետ 32), ինչը նշանակում է, որ մրցույթի անցկացման և հավակնորդների մասին

²⁷¹ Տե՛ս ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ.1213, 17.11.2017 թ.:

²⁷² Տե՛ս <http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/43%20-%2026.04.18.pdf>:

²⁷³ Տե՛ս <http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/44%20-%2026.04.18.pdf>:

տեղեկատվությունն այս պարագայում հասանելի չէ նաև հանրությանը, ՁԼՄ-ներին, ինչն առաջին լուրջ խնդիրն է:

Վերոգրյալից բացի՝ մրցույթների անցկացման կարգը խիստ խնդրահարույց է դրանց հրապարակայնության և հասարակական վերահսկողության ապահովման տեսանկյունից, քանի որ, ըստ թիվ 43 հրամանի 40-րդ կետի, այդ մրցույթներին դիտորդների մասնակցությունը հնարավոր է միայն հրավերի առկայության դեպքում, ինչը համատեղելի չէ հանրային իշխանությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքի հետ: Ինչ վերաբերում է ծառայողական առաջխաղացման նպատակով ատեստավորման անցկացմանը, ապա այս գործընթացին ՁԼՄ-ների և դիտորդների ներկայության հնարավորություն առհասարակ նախատեսված չէ ո՛չ Օրենքով, ո՛չ դատախազի համապատասխան՝ թիվ 44 հրամանով:

Նախորդ պարբերությամբ մատնանշված խնդիրները վերաբերելի են նաև Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող մրցույթներին, ծառայողական առաջխաղացման նպատակով անցկացվող ատեստավորմանը, ինչպես նաև Հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ (քննիչներ, վարչության պետեր և նրանց տեղակալներ) զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին: Ավելին, ի տարբերություն դատախազության, Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող որակավորման ստուգմանը նախատեսված չէ նաև ՁԼՄ-ների և, հրավերի հիման վրա, դիտորդների մասնակցության հնարավորությունը (Քննչական կոմիտեի նախագահի 27.12.2014 թ.-ի N 18-Լ հրաման), իսկ Հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար բաց մրցույթի անցկացման կարգով թեև նախատեսվում է մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև **հրավիրված** դիտորդների մրցույթին ներկա գտնվելու հնարավորությունը, սակայն միայն **օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով**²⁷⁴, որը գոյություն չունի:

Իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները վեր հանելու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ քննչական կոմիտեի հետևյալ հարցադրումներով՝ արդյո՞ք զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցչի՝ որպես դիտորդի համար նախատեսված է հնարավորություն՝ ներկա գտնվելու դատախազների առաջխաղացման ցուցակում ներառվելու նպատակով անցկացվող ատեստավորման նիստերին, դատախազների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթին, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող մրցույթներին, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում ներառվելու նպատակով անցկացվող ատեստավորման նիստերին և հետևելու դրանց ընթացքին, եթե այո, ապա նշել իրավական հիմքը:

Հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը նշել է, որ «զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների

²⁷⁴ Տե՛ս <http://www.ccc.am/hy/1428579951/5120>:

ներկայացուցիչների մասնակցության հնարավորություն ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նիստերին նախատեսված չէ»:

ՀՀ քննչական կոմիտեն ի պատասխան հայտնել է, որ «կոմիտեի թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող քննությանը զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկա գտնվելու ընթացակարգ ինչպես «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված չէ»:

Հանրային իշխանությունների թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացումը ճանաչելով որպես առաջնահերթություն՝ անընդունելի պետք է լինի պետական պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների դիտարկման և լուսաբանման նպատակով համապատասխան իրավական հիմքեր չնախատեսելը, քանի որ դրանք չեն կարող հանգեցնել պետական ծառայողների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման, ինչպես նաև այդ մրցույթների/որակավորումների դիտարկումը, լուսաբանումը և դրանց հետ կապված տեղեկատվության հասանելիությունը ունի ավելի բարձր նպատակ պայմանավորված պետական ծառայություն իրականացնող անձանց ընտրության, պետական մարմինների գործունեության թափանցիկության հանրային շահով: Ուստի առկա է անհրաժեշտություն՝ ամրագրելու նշված թափանցիկության և հանրային վերահսկողության ապահովման երաշխիքները և, ցանկալի է, օրենսդրական մակարդակով:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Համաձայն **ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ (2000) 6 հանձնարարականի**՝ «(...) Հանրային ծառայողների ներգրավումը պետք է իրականացվի հանրային պաշտոնների հավասար հասանելիության և այնպիսի ընտրության պայմաններում, որն արժանիքահենք է, արդար, ոչ խտրական և բաց մրցույթով: Քաղաքացիական ծառայողների նշանակման ընթացակարգերը պետք է լինեն բաց և թափանցիկ, իսկ կանոնները և պահանջները՝ հստակ սահմանված: Դրանք պետք է լավագույն թեկնածուի նշանակման հնարավորություն ընձեռեն: Պետությունները պետք է ապահովեն դիմողների իրավական պաշտպանությունը՝ այդ թվում ապահովելով ընտրության ընթացակարգերի համատեքստում տրամադրված զգայուն տեղեկատվության պատշաճ գաղտնիություն և իրավասու մարմնի որոշման դեմ իրավական պաշտպանության միջոց: Առաջխաղացումները, որոնք ենթադրում են պատասխանատվության առավել բարձր աստիճան, պետք է հիմնված լինեն արժանիքների վրա: Պետք է բացառվի որևէ անարդարացի խտրականություն՝ այդ թվում՝ տարիքի, հաշմանդամության, սեռի, ամուսնական կարգավիճակի, սեռական կողմնորոշման, ռասայի, գույնի, էթնիկ կամ ազգային ծագման վրա հիմնված՝ հատկապես հանրային պաշտոնների մատչելիության և առաջխաղացման հետ կապված: (...)»²⁷⁵: Համաձայն «Աշխատանքի և պրոֆեսիոնալիզմի խթանումը

²⁷⁵ St' u Recommendation No. R (2000) 6 of the Committee of Ministers to member states on the status of public officials in Europe (Adopted by the Committee of Ministers on 24 February 2000 at the 699th meeting of the Ministers' Deputies), <https://rm.coe.int/09000016805e2d3b>:

հանրային ծառայությունում» հետազոտության՝ «(...) 10.4.1. Հանրությանը տեղեկություններ տրամադրելը իրավունքի գերակայություն հաստատելու և ղեկավարող անձնակազմի չեզոքությունը ապահովելու գլխավոր գործոններից մեկն է: Այնուամենայնիվ, համալրման մեթոդների և չափորոշիչների թափանցիկությունը ևս նպաստում է հանրային ծառայության պրոֆեսիոնալիզմին. մեծաթիվ մարդկանց, հատկապես պահանջված որակավորում ունեցողներին հնարավորություն տալով պատրաստվելու և դիմելու ապագայում համալրվելիք պաշտոնների համար ղեկավարող անձնակազմը մեծացնում է համալրման նման գործողությունների ընտրողականությունը: Տեղեկության տրամադրումը նախ վերաբերում է կիրառելի կանոնների մակարդակին. պայմանները, որոնց հավակնորդները պետք է համապատասխանեն (տարիքի, կրթական աստիճանի և այլնի առումով), ընտրության հստակ մեթոդները և չափանիշները համալրման ենթակա պաշտոնի տեսակի առումով, նշանակման գործընթացները և թափուր հաստիքի բովանդակությունը (աշխատանքի նկարագրության նպատակն է համապատասխանեցնել պահանջվող որակավորումները և կատարվելիք պարտականությունները), աշխատավարձի չափը, կարիերայի հեռանկարները: Ընդհանուր առմամբ թեկնածուների միջև անաչառության և հավասարության ապահովումը նպաստում է համալրման պայմանները կատարելագործելուն (...):»²⁷⁶:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

1/ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որով կերաշխավորվի զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների հնարավորությունը՝ մասնակցելու պետական և համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին՝ առանց որևէ նախապայմանի (հրավերի), և հետևելու դրանց ընթացքին, ինչպես նաև ծանոթանալու մրցույթն իրականացնող հանձնաժողովների տրամադրության տակ գտնվող՝ մրցույթին և դրա մասնակիցներին վերաբերող բոլոր փաստաթղթերին:

2/ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող զանգվածային լրատվության միջոցների, նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող բաց և փակ մրցույթներին ներկա գտնվելու իրավունքը, ինչպես նաև նախատեսել փակ մրցույթի անցկացման մասին հրապարակային իրազեկման պարտականություն: Նույն իրավակարգավորումը նախատեսել դատախազների ծառայողական առաջխաղացման նպատակով իրականացվող ատեստավորմանը ներկա գտնվելու հնարավորության սահմանման մասով:

3/ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող

²⁷⁶ Sté u Promoting Performance and Professionalism in the Public Service, SIGMA Papers No. 21, <https://www.oecd-ilibrary.org/docserver/5kml615rm5mv-en.pdf?expires=1597249349&id=id&accname=guest&checksum=9242081EB92D668B4CEF6F17AA3E2A32>:

զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող որակավորման ստուգմանը ներկա գտնվելու իրավունքը: Նույն իրավակարգավորումը նախատեսել ծառայողական առաջխաղացման նպատակով իրականացվող ատեստավորմանը ներկա գտնվելու համար:

4/ «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ Հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին ներկա գտնվելու իրավունքը:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

- ✓ Ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «Անշարժ գույքի գտնվելու վայրը կարող է հրապարակվել՝ առանց դրա հասցեն և այն նույնականացնող տվյալները հրապարակելու» դրույթը և նույն հոդվածի 3-րդ մասը:
- ✓ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի պահանջներին և կարգավորումներին:
- ✓ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածով սահմանված արարքի կատարման համար պատասխանատվությունը նախատեսել՝ անկախ մեղքի ձևից:
- ✓ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախատեսել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ ենթակա կիրառման փոխկապակցված թե՛ տուգանքի, թե՛ ազատազրկման հետ:

- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցանքը նախատեսել օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասում՝ որպես զանցանքի օբյեկտիվ կողմ՝ զանցանքի կատարման եղանակ (հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման եղանակ), միաժամանակ 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան խստացնել՝ որպես այդպիսին նախատեսելով 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված սանկցիան:
- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց, համայնքային և պետական ծառայողների պարզևատրման վերաբերյալ տեղեկատվության հանրամատչելիության սկզբունքը՝ նշված տեղեկատվությունը հրապարակելու կամ հարցման դեպքում տրամադրելու պահանջ սահմանելու եղանակով:
- ✓ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, համաձայն որի՝ կերաշխավորվի զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների հնարավորությունը՝ մասնակցելու պետական և համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին՝ առանց որևէ նախապայմանի (հրավերի) և հետևելու դրանց ընթացքին, ինչպես նաև ծանոթանալու մրցույթն իրականացնող հանձնաժողովների տրամադրության տակ գտնվող՝ մրցույթին և դրա մասնակիցներին վերաբերող բոլոր փաստաթղթերին:
- ✓ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող զանգվածային լրատվության միջոցների, նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող բաց և փակ մրցույթներին ներկա գտնվելու իրավունքը, ինչպես նաև նախատեսել փակ մրցույթի անցկացման մասին հրապարակային իրազեկման պարտականություն: Նույն իրավակարգավորումը նախատեսել դատախազների ծառայողական առաջխաղացման նպատակով իրականացվող ատեստավորմանը ներկա գտնվելու հնարավորության սահմանման մասով:
- ✓ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող որակավորման ստուգմանը ներկա գտնվելու իրավունքը: Նույն իրավակարգավորումը նախատեսել ծառայողական առաջխաղացման նպատակով իրականացվող ատեստավորմանը ներկա գտնվելու հնարավորության սահմանման մասով:

- ✓ «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում սահմանել դրույթ՝ ամրագրող զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (դիտորդի կարգավիճակով)՝ Հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին ներկա գտնվելու իրավունքը:

Կատավարությանը

- ✓ Կատարել լրացում 12.03.2020 թ.-ի թիվ 306-Ն որոշման մեջ և ընդլայնել հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների շրջանակը՝ մասնավորապես ցանկում ընդգրկելով հայտարարագրվող անշարժ գույքերի գտնվելու վայրի հասցեները և դրանք նույնականացնող տվյալները, հայտարարատու պաշտոնատար անձանց անչափահաս զավակների սեփականության վերաբերյալ տվյալները:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ԲԱԺԻՆ 1

Խնդիրների վերահանում և վերլուծություն

Խնդրի նկարագրություն

Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածման դեպքերը և այդ վարակի Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից պանդեմիա որակվելու հանգամանքը՝ 2020 թ.-ի մարտի 16-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը²⁷⁷, որով սահմանվեցին նաև զանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները: Մասնավորապես սահմանվեց, որ «... Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքներից դուրս վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, ինչպես նաև խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (այսուհետ՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ՝ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղում կատարելով...»²⁷⁸: Միաժամանակ սահմանվել է, որ վերոնշյալ հաղորդումները չպետք է հակասեն պաշտոնական տեղեկատվությանը և պետք է հնարավորինս վերարտադրեն այն: Այդ կերպ էականորեն սահմանափակվեց հանրության՝ տեղեկատվության ազատության իրավունքը:

Վերլուծություն

Արտակարգ դրության/իրավիճակի ռեժիմը, ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների իրավունքի համաձայն, պետական կառավարման հատուկ ռեժիմ է, ծայրահեղ միջոց, որի միջոցով պետությունը պետք է պաշտպանի մարդկանց,

²⁷⁷ Տե՛ս ՀՀՊՏ 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5, 16.03.2020 թ.:

²⁷⁸ Նշված արգելքները ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 13.04.2020 թ.-ի թիվ 543-Ն որոշմամբ:

հասարակությանը սահմանադրական կարգին սպառնացող վտանգներից, որոնք կարող են ունենալ տարբեր բնույթ (զանգվածային հանցավորություն, ահաբեկչություն, համաճարակներ, աղետներ և այլն): Միննույն ժամանակ այս միջոցի կիրառումը պետությանը թույլ է տալիս վերը նշված վտանգները և դրանց հետևանքները չեզոքացնելու նպատակով կիրառել նաև մարդկանց հիմնական իրավունքների սահմանափակումներ, այդ թվում՝ ազատ տեղաշարժման իրավունքի, հավաքների ազատության և այլն: Ակնհայտ է, որ մարդու հիմնարար իրավունքների սահմանափակման նման լայն հնարավորություն սահմանող ռեժիմի ժամանակ կտրուկ բարձրանում է նաև այդ սահմանափակումները պետության կողմից չարաշահելու ռիսկը: Իսկ նշված առանց այդ էլ բարձր ռիսկն ավելի է աճում, եթե նշված իրավունքների սահմանափակման հետ մեկտեղ օրենսդրությունը պետությանը թույլ է տալիս միջամտել նաև տեղեկատվության ազատության իրավունքին, որն առանցքային նշանակություն ունի հանրային արդյունավետ վերահսկողության ապահովման համար թե՛ արտակարգ դրության ժամանակ պետության կողմից իր գործառույթները պատշաճ իրականացնելու և թե՛ դրա ընթացքում օրենսդրությամբ իրեն վերապահված մարդու իրավունքների լայնածավալ սահմանափակման հնարավորությունն օգտագործելիս չարաշահումներ թույլ չտալու նկատմամբ:

Այս նկատառումներից է բխում արտակարգ դրության ժամանակ տեղեկատվության ազատության սահմանափակման իրավական հնարավորության առերևույթ խնդրահարույց լինելը: Անժխտելի է նաև այն, որ նման սահմանափակումը կարող է տեսականորեն օժանդակել կառավարություններին արտակարգ դրությունների ժամանակ իրենց առջև դրված խնդիրների լուծման հարցում, այդ թվում՝ մարդկանց մյուս իրավունքների պաշտպանության իրականացման նպատակով, սակայն նույնիսկ այս առումով հարկ է երկու վերապահում անել: Նախ՝ նման սահմանափակումը գործնականում արդիական կարող է լինել առավելապես բռնությամբ սահմանադրական կարգի տապալման, զանգվածային անկարգությունների, քաղաքացիական բախումների և նմանօրինակ այլ հիմքերով հայտարարված արտակարգ դրությունների ժամանակ, և երկրորդ՝ բոլոր դեպքերում տեղեկատվության մատչելիության հանրային շահին հակակշռող սահմանափակման նպատակին պետք է իրապես հնարավոր լինի հասնել առանց տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակում կիրառելու: Այս համատեքստում ակնհայտ է, որ, օրինակ, համավարակի, տարերային կամ տեխնոգեն աղետների հիմքով հայտարարված արտակարգ դրությունների ժամանակ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումը դժվար է համարել համապատասխան հետևանքների կանխարգելման կամ վերացման համար պիտանի միջոց (հնարավոր է պատկերացնել միայն բացառիկ դեպքեր, երբ, օրինակ, կեղծ տեղեկատվության տարածումն անմիջականորեն վտանգ կատարող մարդկանց կյանքի և առողջության կամ շրջակա միջավայրի համար), և խուճապի կանխումն առավել ևս ակնհայտորեն չի կարող արդարացնել տեղեկատվության ազատության սահմանափակումը հատկապես այն ծավալով, որով այն կիրառվել էր «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020 թ.-ի թիվ 298-Ն որոշմամբ:

Այս առումով հատկանշական է, որ օրեր անց Կառավարությունը վերանայեց նախնական սահմանափակումը՝ մեղմելով այն 19.03.2020 թ. -ի թիվ 310-Ն որոշմամբ ամրագրելով, որ նշված սահմանափակումները չեն կիրառվում օտարերկրյա պետությունների ղեկավարների, պետական մարմինների և (կամ) նրանց ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված և (կամ) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքերին, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերին կատարված հղումների նկատմամբ, իսկ 24.03.2020 թ. -ի թիվ 345-Ն որոշմամբ սահմանելով, որ օտարերկրյա զանգվածային լրատվամիջոցների կողմից նոր տիպի կորոնավիրուսի համավարակի վերաբերյալ հրապարակված տեղեկատվական կամ վերլուծական նյութերի ամբողջական կամ մասնակի արտատպման դեպքում ՋԼՄ-ները պետք է հրապարակեն նյութի սկզբնաղբյուրը՝ նյութի վերնագրում: Սահմանվեց նաև, որ զանգվածային լրատվության միջոցների համապատասխան հաղորդումներն առանց պաշտոնական տեղեկատվության հիմքի հրապարակելու դեպքում ՋԼՄ-ները պետք է հրապարակեն այդ հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունների վերաբերյալ պարետատան տրամադրած, հրապարակված հերքումը կամ պարզաբանումը:

Հարկ է նշել նաև, որ տեղեկատվության ազատության իրավունքի՝ ՀՀ-ում կատարված սահմանափակմանը անդրադարձել են նաև միջազգային կառույցները, մասնավորապես ԵԱՀԿ ՋԼՄ հարցերով ներկայացուցիչ Հադլեմ Դեգիրն այն համարել է ոչ համարժեք միջամտություն²⁷⁹, իսկ Եվրոպայի խորհրդի կողմից անդամ պետությունների համար մշակված գործիքակազմում և հրապարակված տեղեկատվական փաստաթղթերում շեշտվում է, որ պաշտոնական հաղորդագրությունները չեն կարող լինել տեղեկատվության միակ աղբյուրը, քանի որ **դա կարող է հանգեցնել գրաքննության և իրավաչափ մտահոգությունների նկատմամբ ճնշումների**: Հատուկ ընդգծվել է, որ լրագրողները, լրատվամիջոցները, առողջապահական ոլորտի մասնագետները, քաղաքացիական հասարակության ակտիվիստները և ընդհանրապես հասարակության ներկայացուցիչները պետք է կարողանան քննադատել իշխանություններին և հետևել նրանց արձագանքին ճգնաժամի պայմաններում²⁸⁰: Գրաքննության և տեղեկատվության մատչելիության սահմանափակման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի՝ խոսքի և մամուլի ազատության մշտադիտարկողների, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության մամուլի ազատության ներկայացուցչի համատեղ հայտարարությամբ: Մասնավորապես շեշտվել է, որ համակարծիք լինելով համաճարակի մասին կեղծ տեղեկատվության տարածման ռիսկերի վերաբերյալ հնչեցված մտահոգություններին՝ այնուամենայնիվ կարծում են, որ գրաքննությունը և բովանդակությունը հեռացնելը կարող են հանգեցնել հանրային առողջության համար կարևոր տեղեկատվության մատչելիության սահմանափակման, և այդպիսի միջոցներ

²⁷⁹ Տե՛ս <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/449098>:

²⁸⁰ Տե՛ս Respecting democracy, rule of law and human rights in the framework of the COVID-19 sanitary crisis (SG/Inf(2020)11 7 April 2020), <https://rm.coe.int/sg-inf-2020-11-respecting-democracy-rule-of-law-and-human-rights-in-th/16809e1f40>, p. 6-7:

կարող են ձեռնարկվել միայն այն դեպքում, երբ դրանք համապատասխանում են անհրաժեշտության և համաչափության չափանիշներին²⁸¹:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ
Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ և 19-րդ հոդվածով սահմանվում են արտակարգ դրության դեպքում մի շարք պայմաններից շեղումներ և համապատասխան երաշխիքներ.

- ✓ շեղումները հնարավոր են միայն այն ժամանակ, երբ արտակարգ դրության ժամանակ առկա է վտանգ մարդկանց կյանքի համար,
- ✓ համապատասխան իրավիճակի մասին պաշտոնապես հայտարարվել է,
- ✓ **շեղումները կարող են նվազեցնել իրավունքները միայն անհրաժեշտ չափով և երբեք չպետք է պարունակեն խտրականություն,**
- ✓ պարտականություններից շեղվող պետությունները այլ պետություններին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով տեղեկացնում են իրավունքների սահմանափակման, ստանձնած պարտավորություններից շեղումների և դրանց պատճառների մասին,
- ✓ ստանձնած պարտավորություններից շեղվող պետությունները պարտավոր են այլ պետություններին տեղեկացնել սահմանափակումները դադարեցնելու մասին:

Մարդու իրավունքների հանձնաժողովի պրակտիկան ցույց է տալիս, թե որքան դժվար է այս մարմինն ընդունում խաղաղ պայմաններում հայտարարված արտակարգ դրության լեգիտիմությունը²⁸²: Այսպես, Մարդու իրավունքների հանձնաժողովը, մեկնաբանելով Դաշնագրի 4-րդ հոդվածը, շեշտել է նաև, որ արտակարգ դրության մասին օրենքի կիրառումը, որը ենթադրում է շեղում ստանձնած միջազգային պարտավորություններից, պետք է լինի բացառիկ և սահմանափակ ժամանակահատվածով²⁸³:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի դրույթների սահմանափակումների և վերապահումների մեկնաբանման Սիրակուզյան սկզբունքներում ամրագրվում է, որ կիրառվող սահմանափակումներն առնվազն.

- ✓ պետք է սահմանվեն օրենքով և իրականացվեն օրենքին համապատասխան,
- ✓ **պետք է հետապնդեն օրինական նպատակ, որն անհրաժեշտ է հասարակությանը,**
- ✓ **պետք է խիստ անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության**

²⁸¹ Տե՛ս COVID-19: Governments must promote and protect access to and free flow of information during pandemic, say international media freedom experts, <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/448849>:

²⁸² Տե՛ս Ramirez v. Uruguay, Communication No. R. 1/4, UN Doc. Supp. No. 40 (A/34/40) at 121, UN Doc. CCPR/C/OP/1 at 49 (13 փետրվարի 1977թ.), Silva v. Uruguay, Communication No. 4/1977, UN Doc. CCPR/C/12/D/34/1978 (25 հուլիսի 1980թ.), Montejo v. Colombia, Communication No. 64/1979, UN Doc. CCPR/C/OP/1 at 127 (24 մարտի 1982թ.):

²⁸³ Տե՛ս նույն տեղում՝ կետ 2:

համար,

- ✓ նպատակին հասնելու համար պետք է կիրառվեն նվազագույն չափով,
- ✓ պետք է հիմնված լինեն գիտական փաստերի վրա, չլինեն կամայական կամ խտրական,
- ✓ պետք է սահմանափակված լինեն ժամանակով, ապահովեն հարգանքը մարդու արժանապատվության նկատմամբ և ենթակա լինեն ստուգման²⁸⁴:

2020 թ.-ին ապրիլի 1-ին Human rights watch-ը հրապարակեց «COVID-19 և մարդու իրավունքները» զեկույցը, որում, անդրադառնալով խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության ապահովման իրավունքին, ընդգծել է, որ «... մարդու իրավունքների համատեքստում, հաշվի առնելով COVID-19-ը, ենթադրվում է, որ ողջ բնակչությանը պետք է արժանահավատ և արդիական տեղեկատվություն ստանա վարակի, ծառայությունների մատուցման մատչելիության, ծառայությունների մատուցման դադարեցման և իշխանությունների՝ համաճարակին արձագանքելու այլ ուղղությունների մասին»²⁸⁵:

Միաժամանակ զեկույցում անդրադարձ է կատարվել տարբեր երկրներում առկա պրակտիկային և ընդգծվել, որ «... մի շարք երկրներում իշխանություններին չհաջողվեց ապահովել խոսքի ազատության իրավունքը՝ պատժամիջոցներ կիրառելով լրագրողների և առողջապահության ոլորտի աշխատողների նկատմամբ: Արդյունքում սա հանգեցրեց վարակի տարածման վերաբերյալ հանրությանը արդյունավետ տեղեկատվություն տրամադրելու սահմանափակմանը և խաթարեց կառավարության գործողությունների նկատմամբ վստահությունը»²⁸⁶:

Այս կապակցությամբ զեկույցում մատնանշվել են մի շարք առաջարկներ, մասնավորապես.

- իշխանությունները պետք է ամբողջությամբ հարգեն խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության իրավունքը՝ դրանք սահմանափակելով միայն միջազգային չափանիշներով թույլատրված չափով.
- իշխանությունները պետք է ապահովեն, որ հասարակությունը տեղեկացված լինի COVID-19-ի մասին՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան. սա կարևոր է կեղծ և սխալ տեղեկատվության տարածումը կանխելու համար.
- իշխանությունները պետք է ապահովեն, որ COVID-19-ի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը մատչելի և հասանելի լինի շատ լեզուներով, ներառյալ այն ձևաչափով, որ հասկանալի լինի ոչ գրագետ կամ քիչ գրագետ մարդկանց

²⁸⁴ Տե՛ս SIRACUSA PRINCIPLES on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights, <https://www.icj.org/wp-content/uploads/1984/07/Siracusa-principles-ICCPR-legal-submission-1985-eng.pdf>:

²⁸⁵ Տե՛ս Human Rights Dimensions of COVID-19 Response, <https://www.hrw.org/news/2020/03/19/human-rights-dimensions-covid-19-response>:

²⁸⁶ Տե՛ս նույն տեղում:

համար, ինչպես նաև հասանելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար²⁸⁷. տեղեկատվությունը պետք է հասանելի եղանակով տրամադրվի նաև երեխաներին, որպեսզի վերջիններս կարողանան պաշտպանվել վարակից.

- առողջության վերաբերյալ անհատական տվյալների օգտագործումը և շրջանառումը պետք է կարգավորվի մարդու իրավունքների վրա հիմնված երաշխիքներով.
- անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ ցածր եկամուտ ունեցող անձանց համար համացանցին անխափան հասանելիություն ապահովելու ուղղությամբ (այդպիսին է օրինակ, Միացյալ Նահանգների «Keep Americans Connected» ծրագիրը)²⁸⁸:

Ուսումնասիրության առարկա երկրներից շատերի օրենսդրությունը (Կանադա, Ֆինլանդիա, Էստոնիա, ԱՄՆ որոշ նահանգներ (օրինակ՝ Վաշինգտոն, Ֆլորիդա, Մեն) առհասարակ չի նախատեսում տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն արտակարգ դրության/արտակարգ իրավիճակների պայմաններում: Կանադայի օրենսդրությունը նույնիսկ սահմանում է դրա արգելքը, ըստ որի՝ **սահմանափակող լիազորությունները չպետք է օգտագործվեն տեղակատվության ազատության սահմանափակման, գրաքննության համար:** Ուկրաինայի օրենսդրությունը տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն սահմանում է բացառապես հասարակական կարգի զանգվածային խախտումների, Ղազախստանի օրենսդրությունը՝ սահմանադրական կարգի տապալման վտանգի, Ռուսաստանի օրենսդրությունը՝ այդ և համանման հիմքերով (զինված ապստամբությունների, ահաբեկչությունների) հայտարարված արտակարգ դրությունների պայմաններում, և չեն սահմանում նման հնարավորություն ադեոների, համավարակների և համանման հիմքերով հայտարարված արտակարգ դրությունների պայմաններում:

Նոր կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ եվրոպական երկրներից գրեթե ոչ մեկը չի կիրառել տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումներ (այդ թվում՝ Գերմանիան, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Ֆրանսիան, Լատվիան, Նիդեռլանդները, Շվեյցարիան, Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան և Ուկրաինան): Ավելին, այնպիսի կայացած ժողովրդավարական երկրներ, ինչպիսիք են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Կանադան, Նիդեռլանդները, ԱՄՆ-ն, Միացյալ Թագավորությունն ու Լատվիան, ապրիլի 7-ին կոչ են արել բոլոր պետություններին

²⁸⁷ Հաշմանդամություն ունեցող անձանց՝ տեղեկատվության մատչելիության խնդրին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը՝ ընդգծելով, որ վարակի տարածման պայմաններում խոցելի խմբերն առավել խոցելի են, <https://www.coe.int/en/web/commissioner/-/persons-with-disabilities-must-not-be-left-behind-in-the-response-to-the-covid-19-pandemic>:

²⁸⁸ Տե՛ս Human Rights Dimensions of COVID-19 Response, <https://www.hrw.org/news/2020/03/19/human-rights-dimensions-covid-19-response>:

շարունակել պաշտպանել ՁԼՄ-ների մատչելիությունը և տեղեկատվության ազատ փոխանցումը՝ նշելով, որ անհանգստացած են որոշ պետությունների՝ համաճարակային ճգնաժամն անկախ ՁԼՄ-ների նկատմամբ չհիմնավորված սահմանափակումներ կիրառելու նպատակով օգտագործելու ջանքերով: Համավարակով պայմանավորված՝ տեղեկատվության ազատության իրավունքը սահմանափակել է Հունգարիան, որի օրենսդրությամբ սահմանվել է քրեական պատասխանատվություն կորոնավիրուսի և դրա դեմ պայքարի վերաբերյալ սուտ տեղեկատվություն տարածելու համար: Հայաստանում կիրառված տեղեկատվության ազատության սահմանափակմանը բովանդակային առումով համանման սահմանափակում նախատեսվել էր Մոլդովայի Հանրապետությունում, որի Հեռարձակման համակարգող խորհուրդը պահանջել էր, որ վիրուսի տարածումը լուսաբանող լրագրողները հղում անեն «առավել հուսալի և կոմպետենտ» կառույցներին՝ առողջապահության նախարարությանը և արտակարգ իրավիճակների հանձնաժողովին, սակայն այդ սահմանափակմանն ընդդիմացան և քննադատեցին ոչ միայն քաղաքացիական հասարակության և ՁԼՄ ներկայացուցիչները, այլ նաև երկրի ղեկավարությունը, այդ թվում՝ նախագահը, ինչի արդյունքում սահմանափակումները ընդունվելուց երկու օր անց հանվեցին: Տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումներ չեն կիրառել նաև համաճարակի դեմ պայքարի բավականին հաջողված փորձ ունեցող այնպիսի պետություններ, ինչպիսիք են Իսրայելը, Նոր Զելանդիան, Թայվանը, Հարավային Կորեան և Մինգապուրը:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություն՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթը փոփոխել և սահմանել, որ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումը ծայրահեղ միջոց է և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ որևէ այլ միջոցով հնարավոր չէ կանխել մարդկանց կյանքին և առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

ԲԱԺԻՆ 2

Ամփոփ առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և.

- ✓ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթը փոփոխել և սահմանել, որ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումը ծայրահեղ միջոց է և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ որևէ այլ միջոցով հնարավոր չէ կանխել մարդկանց կյանքին և առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգը: